Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Utopiae.
1589

16

04 NOV 2009

ՀԱՅԵ

ԲԱՀԱՄԱՅ

ՀՐԱՄԱՆԵՐ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԵԱՅ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսարան
ՍԵՐՄԻՐԱՄԻՍ
Ս. Էջմիածին

1871
1320
551

1320

Ա 32

Ա. Պետ.

ՊՏԻ – 1871

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

18.06.2013

4515
41

1589-2014
№1582

Ա. Զ Դ.

Վերհատուած Հայրապետ և Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Գրիգոր Դ. Կոստանդնուպոլսեցի՝ որ յետ ընդունելոյ զՀայրապետական օծութիւնն՝ ի 14 Յուլիսի 1867 ամի դէմ եդ գնալ ի Ռուսաստան ներկայանալ Սորին Կայսերական Մեծութեանն Օգոստափառ Կայսերն ամենայն Ռուսաց Աղեքսանդրի Նիկողայոսեան, յանձն առ ի գընալն և ի վերադառնալն այց ելանել նաև ի բազում Հայաբնակ քաղաքս և ի գիւղաքաղաքս Ռուսիոյ վասն խնամք տանելոյ եկեղեցական և ուսումնական կարգադրութեանց ընդհանրութեան ազգիս :

Եղել քանզի չքնաղ այս գործ Սրբազնակատար Պահանայապետի մերոյ յիշատակաց արժանի դասել յազգայինն ոչինչ տարբերէպ թուի մեզ. որ ի բարձրութենէ անտի Հայրապետական Գահէ յիշելով զառ ի ՅԱստուծոյ եղեալն ի վերայ զբարձր պարտաւորութիւն առ ընդհանուր ազգս, անձնանուէր հանդիսացաւ դիտել անձամբ զտեղեաց տեղեաց զազգային կրօնական և քաղաքական հանգամանս՝ և խնամք տանել յառաջադէմս առնելոյ ամենայն իրօք զազգ մեր. վասնորոյ և մեք զանմահացեալս այս այցելութիւն ի սիրտ Ազգայնոց՝ անմահացուցանել կամելով և ընդ դարս ժամանակաց, արժան դատեցաք զառ ի մերոյս բանասիրաց ասացեալ ձառս արձակ և չափաւո-

ծոյ բանիւք առաջի Նորին Վեհափառութեան ի զանազան տեղիս՝ ի մի բովանդակելով ըստ կարգի տեղւոյն և ժամանակին՝ տպագրութեամբ ի լոյս տալ Ազգայնոց մերոց, երկուս ևեթ նպատակս ի մտի դնելով, առաջին՝ արդի ժամանակիս մերոցս բանասիրաց բնակելոցն ի Ռուսիա, որք ի զանազան Ռուսերոցս տարբեր ոճով և դաստիարակութեամբ ուսեալ են, աճել ի լոյս զչափ ուսման պերճախօսութեան և տաղանդոց և ըղձիցն։ Զի որք ուսուցանելն կամին հարք զորդիս իւրեանց, գիտասցեն զարժանաւորն ընտրել տեղի դասախօսակութեան։ Երկրորդն՝ զի լեցի իբրև զբօսարան ի ձեռս նորուս աշակերտաց, և որոց առեալ են փոքր ի շատէ զճաշակ գրականութեան՝ այկազեան լեզուիս, համեմատելով ընդ միմեանս զոճս ասացուածոց. և զիմաստս բանից, զհետ լեցին ընտրելագունից հեռանոցս լինել։ Ընդ ամին կցել արժան դատեցաք և զճառախօսութիւնս ոմանց տրճակ և հիւսուածոյ ոտաչափութեամբ, որք ընթերցեալ եղեն ի տեղիս տեղիս ի Տաճկաստան և ի Ռուսիա, յորժամ ընտրեալ Նորին Վեհափառութիւն յընդհանրութենէ ազգիս, և հրաւիրեցաւ ի Դահ Կաթողիկոսութեան ամենայն՝ այոց՝ և ի Պրուսայ քաղաքէ Առաջնորդութեան իւրոյ գալ ի սուրբ Էջմիածին ի 1867 ամի ի 12 յունվարի։

Զայս նպատակ մեր ակն յայտնի առնելով ամենայն ընթերցողաց, յուսամք եթէ անբասիր ունին արձակել զմեզ ամենայն աչք հեռաքրքիր և բծախնդիր իմաստասիրաց ազգի մերոյ։

ԵՐԳ

Ի ՎԵՐԱՑ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՅԱՋՈՐԴԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹԱԴԷՈՍԻ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ։

Եթերաց այսօր զի՞նչ ձիրք հրաշալեաց
Բոտեն գրաւեն զիմ՝ խորհուրդ մտաց.
Գեղեցիկ հանդէս բենական բարեաց
Ինձ ազդեն յորդոր ի խինդս հոգեզուարճ։
Վերին հաշտութեան
Երեւի նշան,
Բամբ ապա Հայկեան
Արի՛ք հնչել ձայն։
Յաթոռ իւր կեցցէ՛ կենօք բարեփառ
Կաթուղիկոս մեր ԳԷՈՐԳ ՎԵՀԱՓԱՌ։

Աղեղն հաշտութեան՝ որ ի Հայաստան
Թողցեր զիւր երբեմն երփնագեղ նշան.
Ո՞Հ՝ ահա դարձեալ վերալեալ ի ծածան՝
Վամբարէ զցոյց վերնոյն զմութեան։
Ի տես Հայորեա՛ր
Կացէ՛ք հեղաբար.
Որում՝ ի բարքառ
Միրոմ հնչել յար։ Յաթոռ իւր՝։

Ի Մասեաց բարձանց Նոյեան Աղաւնին
Այսօր երևի ի վերս ընդ ճղին՝

Մեծ զաւեռիս լի ի խնամից Էին
Եռանդիւ կարօտ ձօնել Հայ ազգէն։
Նորաղուարձ դի՛ք միտ
Ազգ Հայ բարեսիրտ,
Ցաճախեալ ի խինդ
Նուագելով միշտ։ Ցամ՞։

Հայեցէ՛ք ի Սիւնն ամպոյ և հրոյ,
Այս ևս է շնորհ մեծին Աստուծոյ՝
Ցաշխարհ լուսաւոր առաջնորդելոյ՝
Որոց ըղձանան սերտ սիրով հոգւոյ։
Ցնծութեամբ հապա՜
Արի՛ք զհետ նորա
Սերո՛ւնդք վեհ Հայկայ
Տենչմամբ ձայնեալ նմա։ Ցամ՞։

Ո՜, ո՛րպիսի ձիրք վերին Տեսչութեան՝
Սիւանն զբարիս առ Մայրն Հայաստան.
Անձրևեն առատ ի գութ քաղցրութեան,
Ծլարեն զմէգ խորին տրտմութեան։
Արի՛ք Հայկազո՛ւնք
Բամ ծաղկանց ի փունջ
Սեղեալ Ձեր ի գլուխ
Անել պտաբուղխ։ Ցամ՞։

Եւ՛ր ուրեմն ուրախ Մա՛յր մեր Հայաստան,
Տե՛ս գութք ո՛րպիսիք քեզ յերկնից տեղան.
Ե՛լ ի սիրուքն սգոյդ թախծութեան,
Ահա քեզ առիթ մխիթարութեան։
Ռաբունեոյն յերկինս
Նուիրեալ խնդիրս՝
Գեղգեղել ի նուագ
Ի քեզ յաւէժ պարտ։ Ցամ՞։

Ուրա՞խ լե՛ր հապա սուրբ Գահ Այրարատ,
Բնական խնամք՝ որք քեզ են առատ,
Գգուեաց ո՛չ անտէր եթող յարտօսր վատ.
Այլ ոյդ շնորհեաց Տէր մխիթարս առատ։

Յորմէ փառք պայծառ
Քան զնախնեաց դար՝
Երկրի Հայաստան
Ռոտեսցի միշտ յար։ Յաթ՞։

Թո՛ղ ի բաց այլ ևս զքօղ տրտմութեան,
Որ ի յոյժ բազմաց ի սուգ լալական
Ղօղեալ զերթ անյոյս կայիր ողբաձայն,
Ե՛լ արագ ի տես Փեսայեդ արժան։
Ա՛ռ ձայն ի բերան,
Լսեցո՛ հնչմամբ
Յերգս օրհնութեան
Ասելով զայս բան։ Յաթ՞։

Շնորհափայլ ի դէմս տեսլեամբ հոգեւոր՝
Ա՛յնպէս մերձենայ առ քեզ գեղաւոր,
Կերպ զՄովսիսի որպէս լուսաւոր
Երկնէ յերեսս իւր յոյժ ճաճանչաւոր։
Ռամից քոց որդւոց
Տալ բարիս հոգւոց.
Է ապա քեզ պարտ
Նուագել ի յար։ Յաթ։"

Ունին շողշողիլ ի քէն փառք և լոյս
Ռնեակեան շնորհաց ձիրքն հոգելոյս,
Ի հոգիս սփռել հաւատք՝ սէր և յոյս՝
Նորապերճ փառօք՝ ճգամբք բարեյոյս։
Սիրուն Հայրենեաց
Ռամից Հայկազանց՝
Բարիք հոգեձիրք
Աւետեն երկինք։ Յաթ՞։

Զի՞նչ մեծ նախատինք ի քերցդ կրէիր,
Նոցա առաջի անարդ կանգնէիր.
Որ քեզ զայ Փեսայ՝ արկեալ ջան ի կիր՝
Դիւսեսցէ քեզ թագ փառաց սիրալիր։
Թողով զնոսին
Երես ի գետին,

Աղդեալ և բարի
Նախանձ անձկալի։ Ցաթ՞։

Ի քեզ ծագեաց նոր, այո՛, ոսկեդար
Սիրատենչալի բարեաց հրաշափառ.
Տեսցես դու այլ ևս զորդւոցդ խումբ ի պար
Երջանիք աւուրց ի վայելս յար։
Փունջք ծաղկանց ի թաղ
Առցեն ի փափաք
Նուագ ի բերան
Որդիք քո համայն։ Ցաթ՞։

Իմամբ հապա՞ օ՞ն Դու ծաղկանց ի փունջ
Բաւէր փեսայիդ կարդա՛ սրտառուչ,
Արժան հանդիսիւ մեծ պերճապաճոյճ
Բենական ՅԱԹՈՌԴ ՔՐԻՍՏՈՍԱՇՈՒՔ։
Առեալ ի բերան
Կաթոգին հնչմամբ
Բամիւ Հայկազեան
Երգէ քաղցրաձայն։
Ցաթոռ իւր կերցէ՞ կենօք բարեփառ
Կաթուղիկոս մեր ԳԷՈՐԳ ՎԵՀԱՓԱՌ։

Ս. Ո. Մ.

1866. ՌՑԺԶ. Տրէ ԺԶ
30 Նոյեմբ.
Ի ՊՐՈՒՍԱ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Կ. Պոլսոյ Ազգային Երեսփոխանական ժողովը և ի Ս. Էջմիածին գումարեալ Համազգական Ընտրողական ժողովը զՁեր Սրբազնութիւն կոչելով ի Միածնէջ Գահ սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչի, Պրուսայու Ձեր սիրելի հօտին հովուութենէն կը բարձրացնէ յընդհանրական հովուութիւն բովանդակ Հայոց Ազգին. ուստի այսօր Մայրաքաղաքիս ժողովուրդը Դասք եկեղեցականաց և աշխարհականաց եկան դիմաւորելու զՁեզ, Վեհափառ Տէր, և Ձեր անձին և ընտրութեան վրայ խնդակցութիւն յայտնելով, Ձեր Բարձր Սրբազնութեան բարօրութիւն և բարեյաջողութիւն գործոց մաղթելու։

Գիտէք, Վեհափառ Տէր, օրչափ մեծ և բարձր է այդ կոչումը ու աստիճանը, առ որ Հոգին սուրբ առաջնորդեց զՁեզ, նոյնչափ մե՛ծ և ամենամե՛ծ է Ձեր պարտիքը. մանաւանդ այս ժամանակիս մէջ, յորում Հայոց Ազգը ընդ ոլորտս երկրի, իբրև ի միակ յոյս և ապաւէն առ Ձեզ դարձուցած է իր հայեցուածքը, և Ձեր փորձառութենէն ու կատարելութեան ճիրքերէն կախնկալէ.

Նախ՝ պահպանութիւն և ամբողջութիւն Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ, անխախտ և ամրապինդ պահելով Քրիստոսադիր կարգ ու կանոն, Առաքելական և Լուսաւորչական դաւանութիւնք և արարողութիւնք, որք ի Նախնեաց մերոց ի սրբոց Հարց և ի քաջարի Նահատակաց մեզի մնացած անգին ու անգիւտ սրտահատոր նշխարներ են, բազմաթիւ Հայերու արիւնովը շաղախուած և մեզի հասած. որք մեր Ազգութեան միմիայն կնիքը կրկրեն, և անոնցմով ենք այսօր Հայ Ազգ մը աշխարհի առջև. և ջնջելով ու վերցնելով այն ամեն նոր ու Եկեղեցւոյ և Ազգի ճնասակար կարգադրութիւնները, որոնք տգէտ և շահախնդիր ու թոյլ անձերու ձեռօք ներմուծուած և զօրութիւն գտած են։

Երկրորդ՝ երաշխաւորեալ պահպանութիւն Ազգիս, Ազգային և անհատական իրաւանց, ապահովութիւն իւրաքանչիւր բարեխնամ Կառավարութեանց ներքև, որոնց հպատակ կը գտնուին Հայ Ազգի զաւակները։ Վասն զի Ձեր Վեհափառութիւնը ոչ միայն Ռուսիաբնակ՝ այլ և Թուրքիաբնակ՝ այլ և Հնդկաբնակ և Պարսկաբնակ և Աւստրիաբնակ ազգայնոց վրայ ընդհանրական Տեսուչ է.ք ի Հոգւոյն, հովիւ է.ք Ազգէն ընտրուած, և անոր հայրենաւոր Նոր Ս. Կրօնին, Եկեղեցւոյն, աւանդութեանց, սովորութեանց, ազգային և անհատական ամեն իրաւանց պաշտպանը առաջի Ռուսիոյ ի Ռուսիա, առաջի Թուրքիոյ ի Թուրքիա, առաջի Անգղիոյ ի Հնդկաստան,

առաջի Պարսից ի Պարսկաստան, առաջի Աւստրիոյ յԱւստրիա։ Ուստի և այս ամեն կառավարութեանց հետ իբրև ընդհանրական Գլուխ և ներկայացուցիչ Ազգին՝ կարող է՛ք բանակցիլ, և Ձեր Հօտին ու Ձեր ժողովրդեան համար բարեխօսել, միջնորդել, և բարոյական նիւթական և մտաւորական զարգացման հոգ տանել։

Երրորդ՝ ըստ կարգի, բայց ըստ պիտոյից առաջին համարելի, Ազգային դաստիարակութեան ծաւալումը, այն է սրտով մտքով և հոգւով Հայեր պատրաստել։ Հայաստանեայց Ս. Եկեղեցին, և Հայոց Ազգը մեծ կարօտութիւն ունի քաջարթուն, հոգեւից, բանիւրուն՝ վերջապէս արժանաւոր եկեղեցականներու և աշխարհականներու։ Արժանաւոր եկեղեցականաց պիտոյքը Դուք ինքներն փորձիւ զգացած է՛ք, Ձեհաւատ Տէր. հովիւ պէտք է ոչ անձնդիւր, Գլուխ՝ ոչ ինքնասէր, այլ ժողովրդասէր, եկեղեցասէր, ազգասէր։ Այս պիտոյքը մեծ ու զգալի եղած է, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում անարժան եկեղեցականաց երեսէն Եկեղեցին նշաւակ, Ազգը յուսաբեկ, և մասնաւոր թեմեր ալ խայտառակ եղած են։ Զբաղենք վանքերուն մեծ մասին և ամենէն հոչակաւորներուն ողբալի վիճակը. թողունք առաջնորդաց մեծ մասին անպիտանութիւնը. այլ անպատմելի խայտառակութիւնք, քստմնելի սրբապղծութիւնք և անլուր և անխիղճ գայթակղութիւնք գործուեցան մօտ ատեններս երկու մասնաւոր կաթողիկոսութեանց թեմերուն մէջ յԱղթամար և ի Սիս, երկու անարժան և խպտառ անարժան եկեղեցականաց միջոցաւ։ Ազգը քստմնելով տեսաւ անոնց անվայել գործը, և վիճակային ժողովով այն ինքնընտիր, ինքնահրաւէր և ինքնակոչ անձանց անվաւերութիւնը և անարժանութիւնը վճռուեցաւ։ Ձեր Ձեհաւատութիւնը՝ այնպիսի սրբապղծութեանց և Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի կործանումն և աղէտ սպառնացող ոճրագործութեանց վրայ անշուշտ արժանաւոր սրտմտութեամբ կընայի. և տիրոջը այդին այնպիսի աղուէսներէ զերծ պահելու փոյթ պիտի ցուցնէ։

Այս երեք գլխաւոր պիտոյից մէջ, որոնք կակնկալէ Ազգը այսօր Ձեր Ձեհաւատութենէն, կը պարունակին և այլ ամենայն պիտոյք, զորոնք հարկ չենք համարիր մանրամասնել հոս։ Ձեր Ձեհաւատութիւնը այդ ամենը գիտէ ու կըզգայ. և արդէն Ազգը մեծ յոյսեր կընուցանէ իր սրտին մէջ, և վստահութեամբ կընայ ըսել թէ իր ընտրութեան մէջ վրիպած չէ։ Դուք ալ այն արժանաւորութիւնը ոչ միայն խօսքով՝ այլև գործքով պիտի ցուցընէ՛ք, Ձեր փառքը Հայաստանեայց Եկեղեցւոյ պահպանութեան և ամրոցչութեան մէջ փնտռելով, Ձեր պատիւը Ձեր հարազատ [illegible] կենդանի երախտագիտութեանը մէջ, և Ձեր յիշատակը ձեւ ի [illegible]

Յաջորդացը մէջ։ Դուք այսօր կը գահակալէք այն Ամոռը, զոր Ձեզմէ առաջ բազմաթիւ Կաթողիկոսներ ժառանգած են. բայց անոնցմէ մէկ մասը միայն իրենց անուանը հետ իրենց բարի առաքինի սիրելի և պաշտելի յիշատակը թողուցած է. մնացեալները միայն Անունն։ Անշուշտ Դուք ի շարս Կաթողիկոսաց՝ միայն անուն թողելու չէք, այլ արժանաւորաց օրինակին պիտի հետևիք, և մանաւանդ Ձեր նախորդին նախորդ Աշտարակեցի Հոգելոյս Ներսէս Կաթողիկոսին, այն անմահ յիշատակաց արժանի անձին, որուն համար Ազգը յաւիտեան երախտագէտ պիտի մնայ։ Կըտեսնէք, Վեհափառ Տէր, թէ ժողովուրդը՝ Ձեր սիրելի զաւակները՝ ինչ սիրալիր և որդիական զգուանօք զՁեզ շուրջ պատած են. այո՛, ոչ միայն զգուելի՝ այլև պաշտելի պիտի ըլլաք, երբ իրենց ակնկալութեանց կատարումը տեսնեն։ Իսկ եթէ զըկուին այս յոյսէն, ո՜հ և ոչ մէկը պիտի գտնէք Ձեր շուրջը։ Քիչ մը խիստ են այս խօսքերը, այո՛, բայց Ազգին այսօրուան աղետալի և վտանգաւոր վիճակին մէջ ի դիմաց ժողովրդեան այս ազգարարութիւնները պէտք է որ հոս ըլլան։ Ժողովուրդը արթնացած է, կը զգայ, կը մանայ, կը յուզի. ասանկ տեսարաններու վրայ շլամտութեամբ չնայիր. հոգևոր և կենսական հանդէսներու ու տեսարաններու կը բաղձայ. Դուք այս փառքին ու պատուոյն մէջ ոչ թէ հանգստութիւն խաղաղութիւն և երջանկութիւն գտնելու կուգաք, այլ դիշեր ցերեկ անքուն տքնութեան, Ազգային Եկեղեցւոյ, Հայրապետական կանոնաց, Ազգային յառաջադիմութեան և Ազգային ընդհանրական և անհատական իրաւանց պաշտպանութեան համար մինչև իսկ նահատակութեան։ Վտանգը մե՛ծ է, հարկաւ և Ձեր Վեհափառութեան աշխատութիւնն ալ մեծ պիտի ըլլայ. բայց աւելի փառք ու պարծանք պիտի գայ Ձեր անուան և յիշատակին. զի այսպիսի ալէկոծեալ և փոթորկալից ժամանակի մէջ նաւապետութեան կոչուեցաք. Ազգը պիտի չսխալի այս իր ընտրութեանը մէջ. Ձեր Վեհափառութեան փորձառութիւնը և ազգու բնաւորութիւնը կը խոստանայ մեզ ամեն բարեյաջողութիւն. կը ձայնակցինք ուրեմն այս խուռն բազմութեան՝ Ձեր սիրելի ժողովրդեան հետ գոչելով՝ կեցցէ՛ս Վեհափառ Տէր։

Ս՝նամբ Վեհափառ Հայրապետիդ ազնուախոնարհ որդիք

Ազգային խմբագիր ի Կ. Պոլիս
Կարապետ Զարհանեան
Կ. Ս. Խրիմեան
Մարկոս Ազարեանց
Ս. Փափազեան
Հ. Ս. Ալտունեան
Կարապետ Յ. Փանոսեան

16 յունվարի 1867

Ա.Ռ

ՎԵՀԱՊԵՏՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՏԷՐ ԳԷՈՐԳ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՒ

ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ՑԱՋՈՐԴ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՆՈՒԷՐ ՑԱՐԳԱՆԱՑ

ՀՐԱՇԵՇՏ

Ա.

Բարեաւ Երթ ի մէնջ, Հայր.

Հրեշտակ Հայոց Քեզ աջակից,
Հոգիք որդւոցդ վտարանդի
Հուրջանակի Քև առեալ պար՝
Ի թևս ուխտից ուղեկից.
Քև Նոր աւուր գեղեցիկ յոյս,
Ցետ ամպրոպաց ծագեալ լոյս.
Քեզ փառք՝
Եւ մեզ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ,

Բ.

Բարեաւ Երթ ի մէնջ, Հայր.

Օծեալ Տեառըն յերկիր սրգոյ
Եւ արտասուաց տալ աւետիս.
Եւ նստողացն ի խաւարի

Բանս բարբառել փարելիս.
Աւետաւոր խաղաղութեան,
Մերս աշխարհի ծիածան.
Քեզ փառք՝
Եւ մեզ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ.

Գ.

Բարեաւ երթ ի մէնջ, Հայր.

Ի մերձենալդ յաթոռ շնորհաց
Մանկունք հանցեն քեզ օրհնութիւնս,
Եւ մեռելոց սրբոց ոսկերք
Ի ցուրտ շիրիմն ցնծասցեն.
Զգեցցիս Դու, Տէր, պերճ ծիրանիս,
Եւ երկիր մեր դալարիս.
Քեզ փառք՝
Եւ մեզ ՓԱՌԱՆԵՐՈՒԹԻՒՆ.

Դ.

Բարեաւ երթ ի մէնջ, Հայր.

Ի քառակողմ տիեզերաց
Իբրև ի փայտ բևեռապինդ,
Եւ յԱյրարատ վէր կարեվէր,
Հայն ի կոտանս նահատակ.
Ընդ հետս Զրկչին, օն, Հայր, գընա,
Անդ՝ ուր մերս է Գողգոթա.
Քեզ փառք՝
Եւ մեզ ՆՈՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ.

՝Ն՞-էջէ
Ի. Ծ. Յ. Ոսկան.

Նրքէ՛ս ի Բէրս. 1867 Յունուար 16ն:

ԱՍՏՈՒԱԾԱՐՆԱԼ ՓԱՀԱՆԱՑԱՊԷՏ

Անհասանելի և անսահմանելի կամքն Աստուծոյ հրաւիրէ զՁեր Վեհափառութիւն ի Գահակալութիւն սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի մեծի Պարթևին՝ Լուսաւորչացն մերոց և Առաջնորդացն հաւատոյն Հայաստանի։

Ընտրեաց նա զՁեր Վեհափառութիւն ի գլուխ համօրէն Ազգի Հայոց և ի լոյս Հայաստանի. վասնորոյ զնոյն բանաւոր Հօտ ազատեալն ամբիծ արեամբ որդւոյ իւրոյ Միածնի յանձն առնէ ամենամեծ պաշտպանութեան Ձերոյին Վեհափառութեան առ ի վերականգնել զնա և ժառանգեցուցանել զժառանգութիւնս աւերակս, ասել կապելոց, թէ ելէ՛ք, և որք ի խաւարի իցեն, թէ յայտնեցարո՛ւք, հրաւիրէ զմեծ Քահանայապետդ՝ զօրացուցանել զտկարս, բժշկել զհիւանդս, յանձանձել զչարչարեալս, դարձուցանել զմոլորեալս, խնդրել զկորուսեալս, և սրբել միանգամայն յաչացն նորա զդառն արտասուս, բնակեցուցանելով զնոսա ի վայրի դալարոջ, և սընուցանելով առ ջուրն կենաց և հանգստեան. և թէպէտ այսոքիկ ամենածանր գործողութիւնք տառապանք են և բաժակ չարչարանաց մեծի Քահանայապետիդ, սակայն լրութեան ազգիս հանգիստ և հսկայաքայլ յառաջադիմութիւն։

Արդ Մայր մեր Սուրբ Էջմիածին ընկալեալ զսոյն երկնառաք շնորհլիապատար խնդութեամբ բերկրի զաւակովք հանդերձ. զի Տէր ողորմեցաւ մեծին Հայաստանի, պարգևելովն զՁեր Վեհափառութիւն մեծ Խնամակալ, արթուն Հովուապետ և սուրբ աւանդապահ իւրոյ գոյութեան. վասնորոյ տարածեալ զբազուկ իւր սուրբ կոչէ ասելով "Արի՛ ե՛կ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, արի՛ ե՛կ առ պատուարաւ պարսպիս, երևեցո՛ զերեսս քո ի մեզ, զի քեզ անցցէ ձմեռն ցրտաշունչ. ծաղիկք գիտութեանց և բարոյականութեանց ծաղկեսցին ի մեզ. տատրակք արձակեսցեն զձայնս իւրեանց ի մեր նաստանաց, շիւղաբարձ աղաւնիք ելցեն ընդ առաջ ի նշան բերկրութեան, և ամենայն ուրէք ուսումնարանք մեր փթթեսցին բուրելով զհոտ անուշից ի ցնծութիւն և ի բերկրութիւն լրութեան ազգիս, և եղիցին նոքա իւրև զգետ յորդեալ փառաւոր ի ծարաւուտ երկրի։

Իսկ մեք համախմբեալ բազմութեամբ ի տրիտուր սոյնպիսի գերօրինակ երկնառաք պարգևաց զբաժակ փրկութեան Տեառն ընկալցուք և զանուն նորա յաւէտ կարդասցուք գեռնամած ծնրադրութեամբ և պաղատանաւն արտասուօք. զի որպէս ընտրեաց նա զՁեր Վեհափառութիւն պաշտպան Հայրենեաց, պաշտպանեսցէ նոյնպէս երկնային իմն զօրութեամբ առ ի տա-

նել զամենամեծ և զվսեմ ազգային ամենակարևոր պաշտօնն յարուցանելով ի քարանց Հայաստանի լայնածաւալ կառավարութեան մեծի Քահանայապետիդ զՀաւատարիմ օժանդակ անդամն եկեղեցւոյ որդիս Արրահամ։ Ծաղկեսցի յաւուրս Ձեր արդարութիւն, բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին. և մեծ Քահանայապետդ կացցէ և մնասցէ ընդ առաւել դարս շնորհօք սուրբ Աստուածութեան նորա ի պերճազարդ պայծառութիւն և ի փառս պարծանաց լրութեան ազգիս։

ՆՍԻԱՍՏ ԾԱՌԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ — ՋԱԼԱԼԵԱՆՑ։

է 13 փետրվարի 1867 ամի
է Կ. Պոլիս.

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԷՈՐԳ Գ

ՈՒՂԵՐՁ

Անարատ Հարսին Քրիստոսի սրբոյ Եկեղեցւոյ Փեսայդ սրբանուէր, Հայաստանեայցս Առաքելական Եկեղեցւոյ Քահանայապետ գերերջանիկ, վայրաբաստին որդւոց Լուսաւորչին Հայր Համատարած, սրբոց նախկին Լուսաւորչացն մերոց և սրբոյ առաքելավաստակ խոստովանող վկային Գրիգորի արժանընտիր Ամոռակալ և Յաջորդ Տ. Տ. Գէորգ Գ ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս և Ծայրագոյն Պատրիարք Լուսաւորչին Մօր մերոյ Կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի։

Ողջունէ զողջամբ գալուստ սրբոյ Փեսային իւրոյ ամբիծ և անարատ Հարսն Քրիստոսի Կաթուղիկէ Եկեղեցի սուրբ, և մերկացեալ յանձնէ տխրագին զգեստ, պճնազգեստի անապական և լուսափայլ զգեստու ամբիծ կուսութեան՝ յողջոյն լուսագեղ Փեսայիդ։

Ողջունէ զողջամբ գալուստ սրբոյ Հօտապետիդ բանաւորն Հօտ Քրիստոսի, և ոչ ևս հարցանէ թէ՝ այս ո՞վ է որ գիմեալ գայ յԵդովմայ, զի ոչ բոստրային կարմրաթոյր ձորձովք, այլ տէրունական նշանաւ և անձեռագործ պատմուճանաւ արքութեան լուսափայլեցար. վասնորոյ գառինք Հօտի Ձերոյ ընդ առաջ ելանեն յողջոյն Աստուածայարդ Հովուապետիդ։

Ողջունէ զողջամբ գալուստ սրբոյ Քահանայապետիդ ամենայն դասակարգութիւնք ուխտի Մանկանց սրբոյ Եկեղեցւոյ, զի ի ճշմարիտ Քահանայապետէն աստուածային օրինօք պատուեալ, կանգուն պահեսցի Ձեօք քառանկիւն սեղան Խաչին ի մշտնջեան հատուցումն ճշմարիտ մարմնոյ և արեան Տեառն ի հաշտութիւն երկնաւորի Հօրն. վասնորոյ ողջոյն դասք պաշտօնէից Եկեղեցւոյ խմբին յողջոյն վայելչապսակ Քահանայապետիդ։

Ողջունեն զողջամբ գալուստ սրբոյ Հօրդ չորեքծագեան կողմունք աշխարհի, և որդիք Հայկայ տարագիրք և վայրավատինք ի սիւռուս Ասիոյ, Եւրոպիոյ, և Լիբիոյ և որ ի նոր աշխարհ, անձկակարօտ և խանդակաթ սիրով զրկախառնեն ի համբոյր Աջոյ և յողջոյն Հայրապետիդ։

Ողջունեսցէ զողջամբ գալուստ Վեհիդ անձկայրեացն Ձեր Այրարատ, և զնախնեաոյն առեալ ի բերան զնուագ հոգենուագ և ներդաշնակ, ի յելս արեւու արև ի յարևմտից մեզ ծագեցաւ, զյարմարաւորն և զարժանին գեղգեղեսցէ յողջոյն օծելոյդ ըստ կարգին Մելքիսեդեկի։

Ողջունէ զողջամբ գալուստ անարգամեծար Տեառնդ, և որ ժառեալ ի ներողամտութենէ Վեհիդ՝ սիրատարփ ըղձիւք յերիւրեաց զայս փանաքի բան յողջոյն և ի համբոյր սուրբ Աջոյդ։

Օրհնեսցի՜ պսակ քաղցրութեան ամաց Պսակելոյդ յԱստուծոյ, և եղիցին աւուրք Ձեր ըստ աւուրց Երկնից յամայր ամօք և բարեբաստիկ կենդանութեամբ։

Համբուրիւ Աջոյ Աստուածապատիւ Վեհիդ

Գերերջանիկ Տէր,

Ամենայն ազնուագոյնդ ծառայ

ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ

Ջուքան Էրմաղոս Վանայ։

Ի Վենետիկ՝ Յունուարի 1867

Ի Կոստանդնուպոլիս Մայրաքաղաքի։

Ի ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՆ

ԱՍՏՈՒԱԾԱՏԵՍԱԿ ԳԱՀԱՆԱՑԱՊՏԻ

ՏԵՍՈՒՆ ԵՒ ՏԵՍՈՒՆ ԳԻՐՈՐԳԱՑ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԳ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳԱՀԻՆ ԼՈՒՍՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ՈՒՂԵՐՁ

Ուրախ լեր յոյժ Դուստր վերին Սիոնին
Լուսանկար տաճար փառաց Մխիթնին։
Ահա փեսայդ ընտրեալ յԱջոյ Անեղին
Գայ պսակիլ ընդ քեզ օծմամբ սուրբ ուխտին։
Ընդհանրական Կաթողիկոս Հայ-ազգին
Եւ Պատրիարգ Արարատեան սուրբ Գահին։
Նստար յաթոռ Առաքելոյն Թադէին
Գրիգորի հոգւոց մերոց լուսատուին։
Բարբառեսցին անդուլ բերանք քեզ ներբող
Յաւէրժական արձան կանգնեալ և կոթող։
Ի Հայաստան աշնիւ բարուցդ պերճ համբաւ
Յանդամանդի ոսկի տառիւք դրոշմեցաւ։
Եւ ի Տփխիս կանաչագեղ սարդենեօք
Նարօտաճառն հիւսեն պսակ քեզ նորոգ։
Մի լռեսցէ երգոցս ի ճահ քեզ գեղգեղ
Զոր սուրբ Հոգին յերկնից ի սիրտ մեր եհեղ։
Մեր ի սրտին անշէջ հրատ բորբոքի
Փառաց ի փառս ըզքեզ հանել յեթերի։
Մի այս տենչանք ծաներ առ քեզ թուեսցին
Զփաւիաց սրտիս սիրոյն վառէ բոց ուժգին։

Մինչ ոչ տեսից ըզ Վեհդ եկեալ ի Դարիր
Ոչ ընանի տենչ բաղձանաց հոգեկիր։
Երանաւէտ օրն այն լիցի դարուց դար
Օծեալ ըզքեզ յիւղ սրբութեան ի տաճար։
Անդ նշողեն աստեղաց բոլոր լուսավառ
Անդ քո և մեր է հայրենեաց երկրին վայր։
Օ՜ն հաճեսցիս տալ ինձ պատիւ ի յաղոթդ
Եւ զալ ընդ քեզ, ուր կոխեն սուրբ ոտք Վեհիդ։
Տար զիս Հայր սուրբ, ուր հետք շաւղաց քոց կոխեն
Իմ իղձք իմ տենչք անդ զսիրտ իմ լցուսցեն,
Ընկալ սիրով զայս դոյզն նուէր բարկոյս
Վեհիդ իմում մատուցանեմ ի հաճոյս։

Ընդունէր Ծառայ Ա. Պէրպէրեան

1866 Նոյեմբեր.
Ի Կ. ՊՕԼԻՍ։

ՆՈՒԷՐ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳ

Զիմենեաց նուիրական աստ նուիրի անոյշ կիմաւ
Ընդ անմահ դիւցազնական առաքինի ընտիր գործոց,
Աստուածեղէն ի ձեռն հոգւոյ ի հրաճոճ կամարաց
Արդ սիրազեղուն Քեզ Վեհափառիդ։

Պիւռոսի բիւրականի զակն կրես ի գագաթ մտացդ,
Ի նպաստ քոյդ ցանկալւոյդ Թորգոմական վսեմ զարմին
Հոսես քրտունս ի գործ բարեաց կրօնական նախանձու
Քան զ'Ներսէս մեծ Հայրապետն։

Բոյս վսեմ՝ քաջի տնկոյ քաջաբոջբոջ քաջբերուն
Պողաբերես զարդիւնս առատ ի վայելումն Հայ որերոյն
Զ Աստուածաձիր զայն տաղանդն յանդաստանի քոց մնաց
Ի փառս պարծանաց սուրբ եկեղեցւոյս։

Միշտ կազմես սեղան սիրոյ պարս առնուլ վսեմ Ազգիս
Սիրալիր յայն սեղանոյ բոց ցոլացեալ զողաձիգ,
Սիրոյն չ.քնաղ սիրոյն անճառ սիրոյն անմահ հոգիս մեր
Լրումն օրինաց և Աստուածային։

Մանեսցե՞ն յաւերժ Պարկեանք զթել աւուրց քոց վսեմ
Ի պարծանս փառաց Ազգիս որ քեզ մնայ արդ յուսադիր.
Ոսկի Արձան քանդակեսցի՞ ի յիշատակ Վեհափառիդ
Տէր Գէորգայ սուրբ Քահանայապետիդ։

Ուստի Ակն ամենատես կարկառեսցէ՞ զիւր բաղուկ,
Որպէս երբեմն ի Սողոմն լիահանճար ի գործ իւր,
Նոյն ցուցանել զՏէրութիւնդ Հայաստանեայց եկեղեցւոյ
Իբր զՀայրապետն այն Պարթև։

Ա. Դրբ. Էկղ. Գրիգոր Քահանայ Ագէանց

1867 ապրիլ
Ի Բէյրութ Կ. Պոլսոյ

ՆՈՐԻՆ ՎԵՀ. ՕԾՈՒԹԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՈՒՂԵՐՁ

ՑՈՂԻՄՊԵԱՆ իսկ եղերաց
Ի գահոյդ սրբութեան
Ծիածան փայլեալ ի մեզ
Ո՛ Տէր մեր Վեհափառ։

Փոզիոզի շնորհք Հոգւոյն
Ի տեսիլ զուարթնոյդ
Փարեսցուք ի համբոյր միշտ
Ո՛ Տէր մեր Վեհափառ։

Դու պաշտպան անպարտելի
Եւ Հզօր մեր ախոյեան
Կրօնիս Յիսուսաւանդ՝
Ո՛ Տէր մեր Վեհափառ։

Ուս ի յուս սիրուն Հօտ Քո
Շուրջ զքեզ ի խնդիր կան
Ի գարման իւրեանց ցաւոց՝
Ո՛ Տէր մեր Վեհափառ։

Զինչ տացուք տրիտուր,
Միայն յաւերժական օրհնաբան
Յերգս անոյշ օծեալ Տեառնդ՝
Ո՛ Տէր մեր Վեհափառ։

Անմարմաւոր աչք մեր տեսցեն
Ի գահուդ Լուսաւորչեան
Զվսեմ Տէրութիւնդ՝
Ո՛ Տէր մեր Վեհափառ։

Ս. Եր. Էկ. Գրիգոր Վրահանայ Ամէնեանց

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵ՛Տ.

Բազմատխուր հրեշտակն Հայաստանեայց, որ երբեմն յիշատակօք բազմադարեան անցից մերազանց ձեռն ի ծնօտի ողբայր զՀայրապետականն որբացեալ թագ և գաւազան, ուրախազուարճ բերկրանօք և յուսապատար խընդութեամբ թռիչս առեալ ընիկ և տարաշխարհիկ Հայկազանց խրախոյս տալով եհաս ի Վաստիրեան ափունս. ուր գտանելով՝ զոր սիրէր անձն իւր զՇերդ Աստուածարեալ Վեհափառութիւն՝ և անտի խաղալով ի վերայ լերանց և խայտալով ի վերայ բլրոց կարապետեաց նորընտիր Գահակալիդ այսր վառելով զհեռացեալ որդւոցդ զսիրտ և զհոգի ընդառաջել Աստուածարեալ Վեհիդ, որոյ վասն սուրբ Եկեղեցիս այսօր իրրև զհարսն զարդուզարդարանօք, ժողովրդականք կանաչագեղ ձիթենեօք սիրոյ և մեծարանաց ապագայ ակնկալութեամբ ողջունեն զբարեժաման զալուստ Վեհափառ Հայրապետիդ, որում յանձնեաց Երկինք զՀայրապետական գահ մի. որ սոսկալի երկամբք լուսատուին մերոյ, արիւնարուղիս քրտամբք Ներսիսեանց, Հայրենանուէր, սքանչելի վաստակօք Մեծին Սահակայ և պաշտպանութեամբ այլոց քաջարթուն հովուաց հաստատեալ՝ իրրև մնացորդ կորուսեալ փառաց մերոյս Հայրենեաց տեւէ մինչև ցայսօր՝ և մինչև յաւիտեան. զեկեղեցի մի, զոր Յիսուս տնկեաց և Գրիգոր ջուր նա, որ իրրև զհարսն ողջախոհ արեամբ Նահատակաց իւրոց հաստատուն մնացեալ ի վերայ հիման առաքելական և մարգարէական քարոզութեանց՝ հնչեցուցանէ ի լուր համայն աշխարհի զձայն ուղղափառութեան իւրոյ, և զիւր նորատիպ ազ-

տեղութիւնս մաքրել մաղթէ յԱռաքելապատիւ Հայրապետէդ։ Ձեզ յանձնէ Երկինք զազգ մի, որ ի դարուց հեռէ տարեալ աշխարհասասան բռնութեանց և անթիւ հարուածոց և ցիրուցան եղեալ յանկիւնս տիեզերաց՝ դեռ ևս զազգութեան շնչէ զանուն, և ցանկայր զհոգի փրկութեան ծնանել. բայց կարօտ էր ծնուցչի, կարօտ էր բազմահմուտ երկրագործի, որ հերկելով զխոպանացեալ մտաց իւրոց զանդաստան՝ բարոյական և մտաւորական պտղովք աճեցուցէ. լուսաւորութեան և յառաջադիմութեան ցանկայր, բայց կարօտ էր Առաջնորդի, որ զազգային լապտերս մեր, զուսումնարանս ասեմ՝, իւղով բարեկարգութեան և ուսման լուցանելով՝ զխաւար ճանապարհի տգիտութեան ժողովրդեան իւրոյ փարատելով՝ առաջնորդեսցէ նոցա ի լուսաւորութիւն, ի միութիւն և ի սէր ընդ հովանեաւ Հայրապետական դրօշակի իւրոյ, որ այսօր ծածանի ի գագաթն Մասեաց՝ կրելով յիւր վերայ զԱզգ և զԵկեղեցի։

Զայսոսիկ բարիս աւետարանէ մեզ շնորհաբեր գալուստ Ձեր՝ Վեհափառ Տէր. սիրտք Հայկազեանց յուսով բաբախեն, աչք ի Ձեզ հային, լեզուք զՁեզ օրհնաբանեն, բերանք առ Ձեզ գոչեն. "Մեք ժողովուրդ Հայաստանի, զմայոյ սորա հասեալ է ժամ։ Օրհնեա՛ Տէր զՀայաստան՝ զժառանգութիւն Քո, հովուեա՛ և բարձրացո՛ զսա քաղաքակրթութեամբ, ուսմամբ և յառաջադիմութեամբ մինչև յաւիտեան"։

Ա՛ռաջնորդական փոխանորդ Գ՛որ՛ոյ և Իմաստասէր

ՆՈՒԱՍՏ ԳՐԻԳՈՐ Վ.ԱՐԴԱՊԵՏ ԱՂԱՓԻՐԵԱՆՑ։

Ի 5՝ Ապրիլի 1867 ամի

Ի Փոքր Գ՛օրի։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵ՛Տ

Համաբարբառ ձայնակցեալ փողոյն Տարսոնեան երանելոյն Պօղոսի զոչեմ աւանիկ, վասնորոյ և Աստուած առաւել բարձրացոյց զՔեզ և շնորհեաց անուն, որ ի վեր է քան զամենայն անուն։

Կրկին են Աչք և կրկին Աչք Աստուծոյ և Օծելոյ նորա, որք կան պաշտպան և հովանի Գլխոյ Վեհապետիդ. Տէր ընտրեաց և արար զՔեզ հանդիստ և բնակութիւն իւր յաւիտեան. նա հաճեցաւ ընդ Քեզ, սիրեաց զՔեզ, էջ ի Քեզ և փառաւոր հանդիսացոյց դարուց ի դարս ցկատարած աշխարհի։ Որոյ զկնի ամենողորմած Կայսրն Ռուսաց Աղէքսանդր Բ. ուշ և-

ԱԶԳ. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՖՈՆԴԻ
ԵՐԵՎԱՆ-ՍՈՐԱ.
Հայ. Ա. Մելիքյան

դնալ համազգային կոդկոդանաց և սխրալի արժանաւորութեանցդ՝ համբարձ զՔեզ ի Գահ Հոգևոր Նախագահութեան համօրէն Հայոց։

Ուստի և մեք ահա՛ մանկունքս առագաստի, հոգեծին որդիքս նորին իսկ բազմաջան քրտամբք հաստատեալ եկեղեցւոյ հրճուիմք մեծապէս ընդ շնորհաբեր երևումն Քո, և գոչեմք ընդ երգողին. Լսելի արա՛ մեզ զբարբառ Քոյ Տէր Գէորգ, այսինքն զողջոյնդ խաղաղաբեր. զի ձայն Քո քաղցր է և դէմք գեղեցիկ. զի արեգակնօրէն ծագեցար դու ի մայրաքաղաքէն Տաճկաստանի ի լուսաւորել զխաւար տգիտութեան Ազգիս Հայոց։ Քո առաջի կամք ո՛վ երջանիկ Հովսեպե՛տ թոթովաբանութեամբք մերովք և ըստ Աստուածային գրոյն գոչեմք և ոչ դադարիմք, գոչեմք ցնծալով և ցնծամբք երգելով. Ովսաննա՛ օրհնեալ որ երկիրդ. գովեալ և փառաւորեալ գալուստ։

Մեծ է օրս և արժանի յիշատակաց ժամն. երանի՛ աչաց, որք արժանի եղեն տեսութեան և փառաց գեղափայլ Արեգականդ Հայաստանի։ Ե՛կ և բազմեա՛ց ի սիրտս մեր ո՛վ Փոխանորդդ Քրիստոսի։ Ե՛կ և արբո՛ մեզ ծաբաւելոցս զջուրդ իմաստութեան։ Առ՛ զգաւազան իշխանութեան և սրի յօգնել մեզ հզօր բազկաւ. Հա՛ն զպէսպէս մթերս Աստուածաձիր շնորհացդ ի հանդէս թշնամիդ տգիտութեան և պաշտպանդ ուսմանց և ասա՛ քաղցբարբառ ձայնիւդ ցմեզ, թէ Հայր, Տէր և պաշտպան ձեր ես եմ. և մեք ի ծունկս խոնարհեալ առաջի երկնաւոր Արքային՝ կանխեսցուք հայցել ի նմանէ մեծապաղատ մաղթանօք մի՛ խզել զՔո թել կենաց մինչև ի գլուխ հանցես զսրտիդ Քո զամենայն բարի խորհուրդս, որոց ցանկայ և ակն ունի Ազգ մեր և Եկեղեցի սուրբ, որ ընտրեաց զՔեզ արժանապէս յայդ պաշտօն, որ թէպէտ Քեզ ծանր է, այլ մեզ անձնդիւրութիւն, Քեզ նեղութիւն՝ և մեզ մխիթարութիւն և յոյս բարեաց. ամէն։

Խոնարհ ծառայ Պէտրոս Պէտրոս քահանայ
Տէր Պետրոսեան։

Ի 5 Ապրէլ 1867 թ.
Ի Բ. Գօրք

62/2

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐ

Բարեպատեհ է ինձ այսօր վանել յինէն զհոգի վհատութեան, յորժամ ակներև տեսանեմ զաւետաբեր գալուստ Սրբազան Քահանայապետիդ. յորմէ խրախուսեալ նորաւարժ տկարութեանս՝ ըստ իմոյսանն ցուցանելով զվաղեմի գերօրինակ բարոյական երջանկութիւն Ազգանազեան տոհմի՝ յանդիման կացուցից զարդի բարոյական կարօտութիւնս նոցին. որոց կատարման սպասեալ մնան սրտակաթ փափագանօք ի բարերարութենէ քաջարթուն Հովուապետիդ։

Ցանկալի է ամենայն ազգասիրաց անձկայրեաց սիրով յիշատակել ըղսիրալի ժամանակն թագաւորութեան Արշակունի Արտաշիսի Բ-ի, որոյ խոհական հեռատեսութեամբ կառավար կալեալ զմիտս թէ՝ տգիտութեամբ և անուսումնութեամբ ծագեսցին զանազան ազգակործան հետևանք, և պարսաւելի լիցի համակ ազգ առաջի օտարոտի ազգաց. իսկ ուսմամբ, գիտութեամբ և լուսաւորութեամբ յառաջաբայլ դիմեսցէ ազգ յառաջադիմութենէ ի յառաջադիմութիւն, ուսմամբ յաջողեսցին, և ի գլուխ լրութեան ամբառնան բովանդակ ազգաօգուտ ձեռնարկութիւնք, և լուսաւորութեամբ թռուեսցի ի կարգս լուսաւորեալ ազգաց. յայնսակս ի լուսաւորութիւն Արամեանս Ազգի վաղվաղակի փոյթ յանձին կալեալ՝ սկիզբն էառ բանալ ի Հայաստան զզանազան գործարանս, բարգաւաճեաց զթագաւորութիւն իւր, եբաց յամենայն աւանս և ի քաղաքս զյոլով ուսումնարանս, որով նախանձելի եղև Հայաստան ամենայն ազգաց. և մինչդեռ այսպէս Հոգայր Ազգասէր արքայն մեր զլուսաւորութենէ ազգին իւրոյ՝ չև ևս հասուցեալ նորա ի ծայր կատարելութեան զգովելի հեռատեսութիւն և զնպատակ իւր՝ ահա՜ աղ՝ փութացաւ ի հանդիպաց յարևմուտս կենցաղոյն, թողլով զամենեսին ի խորին տրտմութեան և ի հառաչանս անլաւս։ Չ'կարեմ մոռանալ յիշատակել նաև զուսումնասէր թագաւորն մեր զՊուբենեանն Լևոն Գ. որոյ զգացեալ թէ՝ ուսմամբ ևեթ կարէ իւրաքանչիւր ոք հասու լինել պատշաճական պարտաւորութեան առ Աստուած և առ ընկեր, առ Ազգ և առ Հայրենակիցս իւր, յայնսակս յետ յարքայականն բազմելոյ ի գահ՝ ըղձակարօտ փափագանօք ձեռնարկեալ է ի բազում՝ տեղիս բանալ զՊպրոցս, և բարգաւաճել զուսումն ի սահմանս թագաւորութեան իւրոյ, որպէս զի այնու կարող լիցի գօսացուցանել զնզովեալ շառաւիղս տգիտութեան, նախանձու, ատելութեան և փառամոլութեան։ Եւ զի՞ մի մի թուեցից, որո՞ց արդեօք աշխատանք կարեն գերազանցել զ.քրոնավաստակ ջանիւք և զերկասիրութեամբք երանաշնորհ թարգմանչացն Թ-ողգոմեանս ազգի, իմա՛ մեծին Սահակայ և Սրբոյն Մեսրոպայ.

վասն զի յետ զամագիւտ լինելոյ նոցա կերբնական շնորհօքն Աստուծոյ սեպհական Ալիտիետիցն Հայոց՝ շնմանեալ քանքարաթագոյց ծառային՝ անդուլ հոգացողութեամբ գուն գործեցին, զկորդացեալ երկիր մշակեցին, բարգաւաճեցին յամենայն ուրեք զպարտէզս բանական ծաղկանց, գումարեցին զքաջուշիմ մանկունս, արբուցին նոցա զվարդապետական սուրբ կաթն իւրեանց, և զուսումնասիրութեան արկին զսերմունս ի սիրտս համօրէն Հայկազանց. որով լուսաւորեցին զՀայաստան։ Սակայն ուր իցէ խաղաղութիւն և յաջողութիւն, անդ ծագեսցի խռովութիւն և նախանձ. վասն զի թագաւորեալ ի սիրտս նախարարացն մերոց հոգի երկպառակութեան՝ սկիզբն առին այնուհետև ձեռօքն իւրեանց հիմն ի վեր կործանել զկայանն նախնւոյն մերոյ Հայկայ զցանկալին մեր Հայաստան. զփառաւոր և զյաղթող թագաւորութիւն Արշակունեաց անմիաբանութեամբ բարձին. զԱրքայն մեր Արտաշէս մատնեցին ի կերակուր սրախողխող երկաթոյն թագաւորին Պարսից. իսկ զբազմերախտ Հօտապետն Հայաստանեայցս զնուրբն Սահակ արկին ի բանտ, զայն՝ որ զիւր ախտացեալ ոչխարն ո՛չ կամէր փոխանակել ընդ առողջ գազանի, որ անձնանուէր արիութեամբ հոգայր զտիւ և զգիշեր զյառաջադիմութենէ ազգին իւրոյ. որ քաղցրաժպիտ զգուանօք ակնարկէր յազգն իւր. որ հայրօրինակ թեւարկութեամբ խնամէր զՀայկազունս։ Այսուհետև որպիսի չարիք իցեն յաշխարհիս, որոց ո՛չ վիճակեցան սիրելի Համազգայինք մեր, զորս անհնարին է առանց արտասուաց ճառագրել. վասն զի արիւնարբուշտ գազանք զամուր ամուր պարիսպս արգաւանդ իմանալի այգւոյ մերոյ ի կործան արկին, և գրոհ տուեալ սարսափելի կատաղութեամբ խաղացին ի ներքս, զոմանս յայգեպանացն յօշայօշ արարին և զոմանս ցիրևացան. զվայելչութիւն նորա յաղարտս վարեցին. զողկուզարեր որթս և զարգասաւոր ծառս արմատախիլ արարին և զքաղցրարոյր ծաղկունս գօսացուցին. որով չարաշուք արարեալ անարգեցին, և ընդ դարաւոր փոշեօք թաղեցին զքրտնավաստակ ջանս բազմերախտ թարգմանչացն մերոց. զորս ընդ յիշելն իմ յարտասուս համակեալ՝ ողբամ ընդ թշուառութիւն Ազգիս։ Եւ թէպէտ զարդիս անդուլ հոգացողութեամբ ոմանց ազգասիրաց գամ քան զգամ ծաղկի իմանալի այգին մեր, սակայն տակաւին ո՛չ է ընկալեալ զվաղեմի վայելչութիւն և զբարգաւաճութիւն իւր։ Արդեօք ո՞ր շնորհիւ կատարելապէս ծաղկելոց է, եթէ ո՛չ Ձերդ Վեհափառութեան. ո՞ արդեօք հաճեսցի թօթափել զդարաւոր փոշիս, և պայծառացուցանել զանդուլ երկասիրութիւնս քրտնաջան երանելի թարգմանչացն մերոց. ո՞ հիմնայատակ տապալեսցէ զդժոխս տգիտութեան և անուսումնութեան մերոյս Ազգի, և ո՞վ առաջնորդեսցէ Ապրանաղեան մանկանցս ի գիտութիւն, եթէ

ո՛չ երանաշնորհ աջ Ձերդ Վեհափառութեան. զոյր կեանս՝ զձեռս ի վեր ունելով ի մաղթանս՝ օրհնեմք և գովաբանեմք. զի և մեք հարազատ զաւակունք Ձեր հանդիսելով ընդ հովանեաւ Ձերդ Վեհափառ Հայրութեան զարգացո՛ւք ուսմամբ, զարգացուք գիտութեամբ և բարոյական կրթութեամբ յօգուտ Ազգիս և Եկեղեցւոյ։

Նախկին Աշակերտ Եկեղեցական Դպրոցի Հայոց Գրոց
Ո. Դպիր Լեռն Մեծոպլեանց

Ի 23 Յունվարի 1868 ամի

Ի Բ. Գորի

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵ՛Տ.

Մտաւորական բարգաւաճութիւն համօրէն ազգաց լուսաւորելոց արդարև է միայն արդասիք հանգամանաց ժամանակին, արդիւնաւոր օժանդակութեան յառաջամիտ ձեռնտուաց և մանաւանդ խրախուսանաց սոցա. զի ահաւասիկ Աթենական ոսկեղէն պսակն առաւելապէս խրախուսէր զԴիմոսթենէս ի հրաշարուեստ ճարտարախօսութիւն։ Ներբողական յաղթանակն ընծայեալն ի ծերակուտէն և յազատամիտ ժողովրդենէն Հռովմայ քաջալերէր զՍիկերոն ի հռետորական բանախօսութեան գեր ի վերոյ հանդիսանալ քան զՅոյն ճարտարաբանն։ Անմահական քերթուածն Էնէական Օդոստեայ քերթողասէր ջանիցն է շնորհ, քան ընտրելական հանճարոյն Վիրգիլեայ։ Եւ զի՞ է ինձ ի վէպս օտար ազգաց դիգերիլ, և ո՛չ յԱզգայինն իմ բնիկ պատմութենէ խնդրել զապացոյց բանիցս. ո՞ր հուր վառեաց զսիրտ երանելեաց մերոց Թարգմանչաց, զոհել զանձինս ի սէր Հայրենեաց, զանց զբնութեանն կարեօք առնել, ի հեռաւոր վայրս դիմել յուսումն իմաստից, և այնու զքանչելի կերպարանափոխութիւն իմն ընծայել գոյութեան ազգիս. ո՞, այլ ո՛չ ապաքէն հայրօրինակ խնամածութիւն և թեւարկութիւն Մեծին Սահակայ և անդուլ աշխատութիւն Մեսրոպայ էին. որք վառէին զնոսա ի փոյթ զրաւորական վաստակոց ի պայծառութիւն մերոց Հայրենեաց. յայն սակս և Խորենեան Ծերունին յորժամ իբրև զժրաջան մեղու յօտար աշխարհաց հաւաքեալ զհիւթս ուսումնական ծաղկանց, ակաղձուն թիկամբ դարձ արար յանձկալին իւր Հայաստան առ ի նուիրել զպտուղ

ուսման իւրոյ Համազգայնոց և մեծավաստակ վարդապետաց իւրոց, աւաղ իրև չեղիւ զնոսա, զսրամիտիչ գրիչ իւր, որ երբեմն ի կիր արկանէր յիմաստասիրական և ի պատմաբանական գրուածս, դարձոյց ի յօրինուած եղերական ողբոց յասելն. «ով այսուհետև զմեզ յարգեսցէ զուսումն, ով ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս։» Կարի իրաւամբ ողբայր Երանելիս. քանզի տեսանէր զիրախուսիչս ինքեանց զսիրասուն վարդապետս իւր մեկնեալ ի Հայաստանէ. և զքաղաքական դառն յեղափոխութիւն իմն. որ զուսումնական ծաղկազարդ դարուն Հայաստանի փոխարկէր ի նմանութիւն ամպի անապատաց։ Բայց զերջանկութիւնն, որում ցանկայր հոգի հայրենասիրիս և չեհաս, վայելէ այսօր աշխարհս Հայաստանեայց. քանզի խաղաղութիւն քաղաքական տարածի ի Հայս ի ձեռն Օգոստափառ Կայսերն մերոյ. և փոխանակ մեծին Սահակայ՝ Զեր Վեհափառութիւն ընծայի Ազգիս. արեգակն Հայաստանի, որ դարշեալ ի թանձրամած ամպոց փոխեալ էր զընթացս իւր յարևմուտս, այժմ վերստին ըղկինաւէտ ճառագայթս իւր սկսաւ արձարձել ի վերայ Հայրենեաց իւրոց։ Վասիրեան ափունք նուիրեն Այրարատեան Մայր Ամոցն արժանընտիր Գահակալ, Հօտապետ հանուրց Հայկազեանց և խրախուսիչ ուսմանց։ Ուրեմն յայսմհետէ եթէ քնարն Խորենեան ողբալով հարցանիցէ, «ով յարգեսցէ զմեզ ուսումն», ընկալցի զպատասխան, ահաւասիկ նորընտիր Ատուածաբնալ Հայրապետն մեր. ընդ որոյ Հայրապետական գրոշակաւ հաւաքեսցին ամենայն Հայկազունք և հասցեն բազմամեայ անձկայրեաց փափագանաց իւրեանց. վասնզի բողբոջեսցին այսուհետև ուսումնական սերմունք արկեալք յերանելի Թարգմանչաց մերոց ընդ ամենայն անկիւնս Հայաստանի, որք հալածանաց դառնաշունչ սառնամանեօք գոգցեալ խոպան ապականեալց էին։ Զարթիցէ Ազգային լեզուն և գրականութիւն մեր ի կորստեան դամբարանէն, որ յառաջ քան զամն ինչ սկսաւ խլրտել և պատառել զերիզապինդս իւր. և մնայ այժմ միայն ձայնի վերակոչողն։ Ահեղանացին վեհ գաղափարք ազգասիրաց. որք զօրաւոր ձեռի օժանդակութեան կարօտեալք, առանց խրախուսանաց գոգցեալ ի չարաշուք մահճի քնով յուսահատութեան թմբրեալ են։ Հայաստան սակաւամեայ երկամիւրեալ ծնցի յորովայնէ լուսաւորութեան զմանկունս լուսոյ և զիտութեան, և ընծայեսցէ զՀայկազուն Դիմոսթենէս և զՍիկերոնս անվկանդ ախոյեանս Հայրենեաց։ Վասն լեզու իմաստասիրին եթէ ցաւք սրտի առաջարկեսցէ, «ով մեր վարժարանք ի թագաւորական հաստատեալ հրամանաց» թող ընկալցի զպատասխան, ահաւասիկ ի Հայրապետական հաստատեալ հրամանաց։ Ազգային լսարանքք ուսումնարանք մեր լուսաւորեսցին իւղով ուս-

ման և բարեկարգութեան, և առաջնորդեսցեն Հայկազանց ի միութիւն և ի սէր. յայնժամ Հօտք լուսակիզք, և արօտք գալարեք ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի։ Ո՞վ այսպիսի և այսչափ բարեաց մատակարար և խրախուսիչ. ո՛չ ապաքէն Զերդ Աստուածարեալ Վեհափառութիւն. որ ցանկալի առնուն յածի այսօր ի շրթունս համօրէն Հայկազանց յուսապատար բերկրութեամբ. զոր զլուին հրեշտակն Հայաստանեայց Հայրապետական ոգենէ թագիւ. զոր գալուստ տօնեն Այրարատեան և Վասպուրական ափունք։ Իսկ մեզ, որ զայցելութեան Զերոյ վայելել զինեան վիճակեցաւ յերկնից, և զէմ յանդիման տեսանել զփառապսիսեալ Հայաստանի, զի՞նչ մնայ առնել, ըստ ուրախալից զգացման մերոյ փութալ շնորհաւորել զգալուստ Զեր. և զլսուղ սակաւամանեայ ուսման աշակերտելոց յանդիման առնել Հօրդ հասարակաց։ Բայց մի՛ վհատեսցի սիրտ Վեհափառիդ, եթէ զէպ լեցի նկատել զթերութիւն սոցա. քանզի սոքա են նորանոր բողբոջք տնկոց գօսացեալ այգւոյն Այրարատայ. սոքա են զաւակք ընդ գարս բազմաղարեան ընդ լծուլ զիտութեան ճնշեալ լեզուակորոյս ժողովրդեան ուրուք։ Վարժարանս ըստ զրութեան և ուսման իւրոյ խնամովք Հոգաբարձուաց իւրոց յետ ընծայելոյ Ազգի և եկեղեցւոյ զմեռասան աշակերտեալս ուսումնաւարտս յընթացս հինգ ամաց, ահա զսոսա ևս պատրաստէ. որք թոթովեն այսօր զմայրենի լեզու իւրեանց. որք շնորհիւ Զերով այսուհետև զարգասցին կատարելագոյն ուսմամբ և կրթութեամբ։ Հայրապետական երկնանուէր գաւազանաւ Զերով արածեսցին ի վայրի գալարուոջ և առ ջուրս յառաջադիմութեան, քաղաքակրթութեան և լուսաւորութեան։ Յայսմ հետէ զույտրգեսցես զուսմունս սոցա. և ուրախասցիս ընդ յառաջադիմութիւն սոցա։ Ուրեմն առ ընկալ զսոսա ի զիրկ սիրոյ Քո. օրհնեա՛ զսոսա. զի լեցին պիտանացու Ազգի և Եկեղեցւոյ։

Ո՜ սո՜ցէ՛ Հոգեւոր Դպրոցին Պ՚օրդ՜ոյ
Մ՚ոպատէս Պլտ՜ղէանց։

Ի ՅԴ տարէն 1767 թվ
Ի Գորի։

ԵՐԳ

Ի Վ.ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՏԷՐ ԳԷՈՐԳ

Աչք ի Հայաստան Անեղին դիտէ,
Բերան Հրաշալուր բարբառ արձակէ.
«Մինչ ցերբ խաւար, արփին ծագեսցի,
Իմոյ աշխարհին օ՞ն լոյս եղեցի»։
Կարապետ լուսոյն Վեհապետս արհի,
Յափանց Վոսփորեան ի Հայս առաքի.
Յարևուն մտից արփին Հայկական,
Ի Մասեաց այսօր գառնայ յարևան։
Զլոյս Հայաստան փուլթա՛ ողջունեա՛.
Եւ Կարապետիս թագ փառաց հիւսեա՛.
Որդւոցդ անընդհատ շարժեսցի բերան,
Մաղթել ի յերկնից յաւէրժ սմա կեան։
Սա նոր Գահակալ գահուն Լուսաւորչին,
Տածիչ ապաւէն Հայկազնեան Հօտին.
Ի լոյս դիտութեան մանկունք Արամեան,
Պանծալի վեհիս շնորհիւ զարգացին։
Ուստի է արփին համբրէն Հայոցն.
Ուստի վճիտ լոյս մեր Հայ որերոցն։

Մ. ՊլՈ—ՎԷԱՆՑ.

ԱՌԱՔԵԼԱՊԱՏԻՒ ՀԱՅՐԱՊԵ՛Տ.

Անցեալ երբեմն ընդ հրաշագիծ վէպս Աստուածային մատենագրութեան Նոյոյ Նահապետի ազգարար ձայն Կենարարին թէ՝ «Զազարէ՛ եկ արտաքս» խրախոյս արկանելով ի սիրտ իմ՝ տայր ինձ բարբառել «Զազարէ՛ յարեաւ, բայց ո՞ յարուսցէ զչորեքհարիւրամեայ մեռեալն Հայաստան ի մեռելութենէ տգիտութեան, ո՞ զորովեսցի ընդ աղեստս բազմաթախիծ որդւոց Նորա, որք զրկեալ ի սիրելոյ Մօրէ, ցրուեալ յօտար աշխարհս հեծեն որդեակս տգիտութեամբ։ Այո՛, ձայն Յիսուսի ազգեաց ի հինգերորդ դարուն ի սիրտ մերոց թարգմանչաց. որք անօրինակ աշխատութեամբ իւրեանց յաւուրսն զբա-

րոյական մեռեալս այս ի գերեզմանէ անուսումնութեան. սակայն զանազան հարուածովք վիրաւորեալ՝ կափոյց զաչս իւր ի լուսաւորութենէ եմուտ վերստին ի նոյն դամբարան։ Ո՛վ մեռելութիւն, զոր լայր Խորենեան գրիչն, զոր հնչելով ողբայր Աղաւնին Հայաստանի Եղիշէ։ Մինչ այսպէս ձայն արձակէի, ահա հնչեց ի լսելիս իմ համբաւ ուրախարար, ահաւասիկ հաճութեամբ համօրէն որդւոց Հայաստանի ընտրեցաւ Հօտապետ Տէր Գէորգ աւագաքեալական Հայրապետն, որ աւետէ Ազգին թէ՝ «Հայաստան բարեկամն իմ ննջեալ է, երթամ զի զարթուցից զնա»։ Ի լուր այսպիսի համբաւոյ անցին տրտմալից յիշատակք ի սրտէս և ընդ համօրէն ընկերակցաց իմոց մինայի անձկանօք գալստեան Վեհիդ, որում արժանանամք այսօր։

Ուստի տարածեալ զձիթենիս ուրախութեան մերոյ առ ոտս Աստուածընտիր Վեհափառութեանդ, հանգոյն մանկանցն Եբրայականաց օրհնեմք զգալուստ Ձեր, բարեմաղթեմք զկեանս վասն կենդանատուիդ Հայաստանի։ Ո՛չ յերկուանամք, այլ աներկբայ հաւատամք, զի Հայաստան շնորհիւ Ձերով զարթուցեալ ի մեռելութենէ տգիտութեան, և որդիք նորա ժողովելով ընդ Հայրապետական գաւազանաւ Ձերով, շնչեսցես զկեանս և զուրախութիւնն, ընդ որս և ես,

Ներքին աղախէրպ Հոգեւոր Դպրոցին Հայոց Գրոց—
Ընդակ Տէր Գ. աղաբէան Ընդակոնի։

Ի ԳԱԼՈՒՍՏ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՑ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՑ։

«ԼՈՒՍԱՒՈՐԵԱ՛Ց ԵՐՈՒՍԱՂԷՄ, ԶԻ ՀԱՍԵԱԼ Է ԼՈՅՍ ՔՈ։»

Ցնծա և ուրախ լեր Հայաստան աշխարհ քաղցրիկ Հայրենիք իմ՝, որ մինչև ցայսօր վասն մահուան Հայրապետին քո, և վասն ամայութեան Հայրապետական Աթոռոյ և Գաւազանին ի սուգ տրտմութեան նստեալ քուրձ զգլխով արկեալ կայիր անմխիթար։ Մի՛ և ես ասասցես ողբալից արտասուօք. ՀՐ են նախնի Հայրապետք և Լուսաւորիչք իմ՝ սուրբ Գրիգոր և Ներսէս շնորհալին հանդերձ այլովք. վասն զի յարոյց Տէր ի տանէս Թորգոմայ Հովուապետս և Տէրս մեր, որ բարձեալ ունի ի վերայ թևոց իւրոց լուսաւորութիւն, Հայրենասիրութիւն, և խնդութիւն տրտմեալ և թաղձեալ սրտի քո՝ դայ առ քեզ։ Սա ինքն է թանկագին պսակ ազգին. սովաւ եղեցի լուսաւորութիւն Հայաստանեայց աշխարհի. սովաւ ժողովելոց են ցիրուցան եղեալ որդիք ծերունի լերինն Մասեաց. ի ներքոյ սորին հովանաւորութեան

զարգացի յուսման Հայկազնեան նորաստեղծ մանկունք, որք պտղով.ք իւրեանց մխիթարեցին զ.քեզ. սա ինքն է պարծանք ամենայն Հայրենասէր Հայկազեանց, և .քաջարթուն Հովուապետ Հայաստաննեայց եկեղեցւոյ. սա է կրկին շինութիւն և պայծառութիւն Գահին սրբոյն Գրիգորի Հայրապետին մերոյ. սա ինքն է նորընտիր Աստուածարեալ Հայրապետ մեր Տէր Գէորգ։ Ուրեմն ուրախացիր գերասահման ուրախութեամբ սգազգեաց տունդ Հայոց, զի երանելի որդին .քո՝ բարձցէ յերեսաց .քոց զքօղ տխուր սգիտութեան։ Ող Գահ Լուսաւորչեան զարթո՛ զորդիս .քո զալ յայս տեսարան, զուարճանալ մեծաւ խնդութեամբ, որ մինչև ցայսօր սգայիր ասելով՝ ո՞ւր է իմ փեսայն պահապան անձին իմոյ։ Եւ ո՛վ դու .քաջարթուն Հովուապետ Հայկազնեան ազգիս, Հովուեա՛ զազգ Թորգոմեան իրրև զՄովսէս, ըստ մեծ զօրաւարին Յեսուայ, յաղթեալ թշնամեաց մերոց ա՛ծ զմեզ ի յերկիր խոստման. գիտութեան լուսովն պայծառացո՛ զմեր զեկեղեցիս։ Տացէ Արարիչն անդին կենաց ձերոց կեալ հանապազ ի խաղաղութեան ի մխիթարութիւն տրտմազգեաց ազգին մերոյ։

Էջմիածնէն։

Ի 5 Ապրէլի 1867 ամի

է Բ. Գ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵ՛Տ ՄԵՐ ՏԷՐ ԳԷՈՐԳ.

Հոգի՛ իմ բազմաթախիծ մինչ յե՞րբ ցաւիս, և մինչ յե՞րբ տրտմիս զիտեմ՝ յիշելով զ՚Ներսէս և զմեծ Սահակ տակաւին մորմնքիս, տակաւին անձուկ նոցին տագնապէ սիրտ .քո. բայց այժմ արի՛ և նստիր ի կառս մեատացդ, և արշաւեա՛ յաշխարհ զիւցազանց մերոց Այրարատ, և անդ կա՛ց վայր մի, և հայեցեալ յայսկոյս տեսանես զձիւնապատ գագաթն Այրարատայ, յորոյ վերայ ծածանի դրօշակն Հայրապետական կրելով յիւր վերայ զԿրօն և զԱզգութիւն մեր. և ապա հայեցեալ յայնկոյս տեսանես զմայր մեր Էջմիածին. որ երբեմն տեսանելով զիւեայն իւր հեռացեալ ողբայր զորբացեալ զամուռ և գաւազան նորա։ Իսկ այսօր ամենայն Հայկազունք որդւոց իւրոց և ամենեցուն ձայն խրախուսանաց արձակելով աւետէ թէ՝ ,,Ուրախ լերո՛ւք, զի զոր սիրէր անձն իմ գտի զնա, մուծից զնա ի տուն զինւոյ, և կարգեցից ի վերայ նորա զսէր. .քանզի ահա՛, որում ցանկայիք որդեակ իմ՝ և փափաքանօք խնդրէիք՝ կատարեցաւ ցանկութիւն մեր. ըստ Տէ-

բունական բանին բաղխեցիք և բացաւ ձեզ. Հայցեցիք և տուիք. քանզի նուիրեաց Աստուած ամենայն Հայոց զԱռաքելական զնոր Եպիսկոպոսապետն Տէր Գէորգ Սրբազնագոյն Կամենդիկոսն. որով ցնծացաւ և բերկրեցաւ սիրտ իմ և առաւել հոգի իմ։ Իսկ զկնի տեսանելոյ զայս ուրախաւէտ անսաբան, Հոգի իմ, մի՛ յապաղեր մեալ այդր, այլ ճեղեա փութա զալ հասանել ի Հայրենիս քո ի Գօրի առ ի ներկայանալ նորին Աստուածընտիր Վեհափառութեան։ Ահա զի՞նչ տեսանես, ո՞չ ապաքէն որում փափագէիր, և որում մեայ Այրարատեան մայր աթոռն մեր և բովանդակ ազգ Հայոց՝ ահաւասիկ է առաջի աչաց քոց։ Որ եկեալ է յայցելութիւն մեր, եկեալ է կթել զպտուղ ուսման մերոյ, յետ այսորիկ մի՛ և ս տրտմիր ընդ մահ Ներսիսի և Մեծին Սահակայ. քանզի ընդ նոցա շնորհեաց Աստուած մեզ զսորին Վեհափառութիւն, ընդ որոյ զաւաղանաւ զարդացուք և լիցուք պիտանացու ազգիս։ Այսուհետև մի՛ յապաղի՛ր մաղթել առ Աստուած, զի շնորհեսցէ Վեհափառ Հայրապետիս մերում զկարողութիւն ընդ յամայր ամս։

Ողորմեալ. աշակերտ Հոգ. Ղազր. Հայոց Ղ-օրբ-ոյ
Վ՝ահան Սերովբէեանց

Ի Գ. Գ-ՕՐԷ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ

ԲԱՐԵՐԱՐՈՂ ԱԶԳԻ։

Վաղակառոյց Գ-օրի քաղաքս այս՝ արժանացեալ շնորհաբեր գալստեան Ձերումդ Վեհափառ Օծութեան, զդաց և զգեցաւ զուրախութիւն մեծ. ի Ձեզ իսկ այսօր տեսանի զուգակշիռ զաղափար իմն լուսաւորին Հայաստանեայց. զի ի Ձէնջ բարձեալ լինի մթագնեալ ամպ ճախող վիճակի քաղցրիկ Հայրենեաց մերոց. վասն զի՝ որպէս Նա՝ յետ հնգետասան ամաց անտանելի տքնութեանն՝ ի Խոր Վիրապէն ելեալ լուսաւորեաց զազգ մեր լուսով Աստուածգիտութեան, նոյնպէս և Դուք՝ յետ բազմաժամանակեայ ուղեգնացութեան և յանխնայ աշխատութեանն ի վերայ լուսաւորութեան Ազգին բնակելոց ի Կոստանդնուպօլիս և ի Պուրսա, ծագեցայք մեզ այսօր նոր Լուսաւորիչ Հայաստանեայցս եկեղեցւոյ, արժանաւորեալ այսպիսի աստուածային ընտրութեան, ըստ բազմամեայ անքուն Հոգաբարձութեանդ,

Ուրեմն՝ ուրախասցի Մայրս մեր սուրբ եկեղեցի, զի եհաս փափագանաց իւրոց. ուրախասցի գերասահման ուրախութեամբ որբացեալ տունն Հայոց, զի որդի յերանաց իւրոց եկեալ բառնայ և բարձցէ զքօղ տխուր և սգազգեաց այրիութեան յերեսաց նորա։

Փառք Աստուծոյ՝ որ այց արար մեզ, փառք Ինքնակալ և Հզօր Կայսերութեանն Ռուսիոյ Աղէքսանդր երկրորդի՝ յիշեալ զհաւատարմութիւն և զարժանաւոր ընտրութիւն համօրէն Ազգիս, զհաւատարիմ Հայրապետդ հաստատեաց մեզ ի կառավարութիւն սրբոյ Ամենայն Էջմիածնի և Հօտի նորա։

Ուրեմն Վեհափառ Տէր, հանդիսացիր Տէրամբ, օր քան զօր հանդիսացիր, Դու ի մեզ հանգիր քաղցրութեամբ, և Սուրբ Հոգին ի քեզ հանգիցէ. Դու մեզ պաշտպանեա և փառաւորեա, և Տէր Աստուած Բարձրեալն յերկնից զքեզ պաշտպանեսցէ և փառաւորեսցէ երկարատև ամօք, ի պարծանս և ի փառս համօրէն Ազգիս, այժմ և միշտ և յաւիտեանս։

Ձերդ Վեհափառութեան

Ամենախոնարհ ծառայ

Գ. Էջմիածնայ Ա. Գ. Բահ. Փանէանց։

Ի 24ն յունվարի 1868 ամի

Ի Բ. Գօրի։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐ.

Զառաջին քայլն դէպ ի յաւիտենական և երանաւէտ կեանս, աւանդեալն ընտրելոց ի ձեռն Ճշմարտաքարոզ վարդապետութեան Որդւոյն Աստուծոյ, արարին ի միջի մերոյնոց սրբափայլ Առաքեալք, ոյք և զխաւարն անպիտութեան Նախահարց մերոց փարատեցին։ Տաժանակիր էր արդարև ի յայն պահու Խաչն Քրիստոսի, զոր անտրտունջ տանէին նախընթացք ձեր, հալածեալք ի խուժադուժ հեթանոսութենէ։ Բայց և այնպէս նոքա զինուք հաւատոյ վառեալք, զհուր և զսուր յընչաց քաղեցին, զկիրճս թշնամեաց ընդարձակեցին և վա՛շ վա՛շ կարդալով յերկիրն Աւետեաց ժամանեցին։ Ո՞ւր են այժմ սովալլուկ գայլքն, ոյք զբանաւոր խաչն Քրիստոսի գիշատէին. ո՞ւր անհետացան սանդարամետական որոգայթք, որով չարաշուք Նաբուգոդոնոսորք զերկնաւոսք որդեգիրս որսալ հայթայթէին. ո՞ւր են սուրք և սուսերք, ոյք զպարանոցաւք Սաղմոսասաց հարց մերոց շողշողային։ Գայլքն սատակեցան, զի հովիւքն հսկեցին. որոգայթքն խզեցան, զի զորսորդս խաչազգեաց արքայքն տապալեցին. սուրք և սուսերք կորզեցան, զի ճշմարիտ կոչնատերք յաղթանակեցին։ Երանիս տամք զոտէպինդ արանց, ոյք զամբիծ հաւատն, զսէրն, զկրաւունս և զուսումն թողին մեզ ի ժառանգութիւն։ Երանիս տամք և ձեզ Վեհափառ Հա՛յր, զի գայք Դուք ի Հովուապետել, երբ յերեսաց արեգական մռայլն հալածեցաւ, և անդորրու և աղատամտութեամբ հանդերձեալ է վարել զխաշն. ուրանօր գալարք խիտ և հոտ բուսանին. ուրանօր զովարար աղբերակունք խոխոջան. ուրանօր օդոյ բարեխառնութիւն տիրապետէ։

Ահա ասիկ բանաւոր խաշն, որ խանդակաթի առ հոգևոր Հովիւդ իւր զսուրբ օրհնութիւնդ խնդրելով։ Հսկեցէք յաղօթս և յօրհնութիւն վասն կենաց Ինքնակալի մերոյ Նորին Կայսերական Մեծութեան, որ քաղցրացաւ ի հովանաւորել զմեզ ընդ յաղթանդամ բազուկ իւր. հսկեցէք յաղօթս և յօրհնութիւն վասն կենաց Նորին Կայսերական Բարձրութեան Փոխարքայի մերոյ, որ զհասարակաց փափագն լցոյց բարեխօսելով ի հրաւէր առ Գահն Առաքելական. հսկեցէք յաղօթս և յօրհնութիւն վասն ամենեցուն։ Օրհնեալ եղիցի՛ գալուստ ձեր. օրհնեալ և պտղաբեր եղիցի՛ իւրաքանչիւր բարի սերմն, զոր ունիք սերմանել յապագայս. տացցէ ձեզ Հայրն երկնաւոր զօրավիգ Աջ ի յարածել զխաշինս նորա։

Ս. Բասմաջեանց

Ի 7 Ապրիլի 1867 ամի

Ի Տէֆէ։

ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ ՀԱՅՐԱՊԵՏ

ԴԻՏԱՊԵՏ ՏԱ՛ՆՆ ԹՈՐԳՈՄԱՅ։

Որ յետ խաւարամած և սգալից գիշերոյն փայլեալ յերկինս Այրարատայ՝ առաւօտ յուսաւէտ և զուարթագոյն ածեալ պարգևեցեր Անքանազեան սեռիս, ո՛ Արփիդ Հայաստանեայց, աղէ՛, լուսալ զդայլայլիկ մատաղերամ մանկտեացս շող յականէ ի բարձուէ գահիդ առաքելականի կաթեցո՛ ի նոսա, որք ի գոգոյ Մասեաց և ի ծոցոյ Սիօնի հեղաթևեալ առ քեզ առաւօտեն, զերթ մանկտին Սաղիմայ շիւղ աւետազուարճ ի շրթունս բարձրեալ՝ սէր նագելոյ մօրն Հայաստանի, և զանպարագրելի ցնծութիւն սգանուէր սրտից Լուսաւորչածին զաւակացն այսօր ի լսելիս Հօրդ մերոյ հասարակաց աւետարանեն։

Ի լրոյ համբաւոյ շնորհաբեր գալստեան Վեհափառ Տէրութեանդ, որ շրթանց ի շրթունս ընթացեալ յսիւրեաս Հայաստան աշխարհին տարածանի, Հովուապետ քաջ հօտին Քրիստոսի, բերկրեալ ոսկերք մեր և սիրտք ուրախութիւն զգեցեալ ի լրոյ համբաւոյ շնորհաբեր գալստեան նուիրական Առաքելոյդ՝ ի ձեռին զարմաւելիս անմեղութեան և ի թիկունս հանդերձ խնամատութեան՝ սիրաշարժեալ ի ճակատ սրբափայլութեանդ և խոնարհեալ օրհնութիւն և երգ ի խորագոյն սրտէ հնչեցուցեալ զոչեմք,—Օրհնեալ, որ ի խաղաղութիւն, ի խնդութիւն, ի լուսաւորութիւն, և յառաջադիմութիւն եկիր մեզ։ Օրհնեալ, որ լուսաշող գաւազանաւ Պարթևականին՝ սիրեցեր հովուել զհօտ Լուսաւորչեան՝ թռուք բիւրաւոր լուսակիզն գառանց։ Օրհնեալ, որ զթաշարժեալ ի բաց պատառեցեր զվարագոյրն սեւաթոյր ի դիմաց հարսին եկեղեցւոյ, և հոլանի զգլուխ նորին ի սեւաստուգ քօղոյն արարեր։ Օրհնեալ, որ ստանձնել հաճեցար զդժուարըմբեր վիշտս, զհոգս և զանձուկս տառապեցելոյ Հայաստանի։ Օրհնեալ, որ զեկավարել յանքոյթ և ի խաղաղ նաւահանգիստն հասուցանել զնաւակն Հայասաան եկիր, ի վերայ ալեսատ ծովու և ի չորեքկուսէ մրրկաշունչ ժամու։ Օրհնեալ, որ մշակել եկիր զբանաւոր բուրաստանն մատաղատունկ մանկտեաց և ցանկով խնամոցդ շրջապահել զայն, յորմէ և եթ ծաղկեալ բուսանիցի պտուղ երջանկութեանն հայրենեաց։ Օրհնեա՛լ և զարձեալ օրհնեալ, որ զաւերական Հայաստանի վերանորոգել և զեկեղեցի նորուն վերահաստատել եկիր։

Եղե՛ն, եղե՛ն մեզ յայսոսիկ մեծահրաշ աւուրս այլ ևս հրճուանք, կրկի՛ն հրճուանք այո՛ տիրազգեցիք սրտից մերոց, որով արդ և Դուք և հանուր Հայաստան և տիեզերք ողջոյն բերկրեալ բարգաւաճի, կամիմ ասել զհրաշալի Յարութիւն երկչին մարդկութեան Յիսուսի Նազովրեցւոյ, Նա-

զովրեցուցն այն՝ որ յեռանդեան աւուր դրօշակ խաչին ի ձեռին՝ յետ դժոխակործան պատերազմին յարեաւ յաղթական փառօք, որով ազատութիւն և կեան Ադամեանին շնորհեաց Իջի. ուրեմն ընդ շնորհաբեր աւուր գալստեան Վեհափառիդ խառնեալ և յեռանդեանն օր՝ վազվաղեմք զկրկնակի բերկրութիւն սրտից մերոց առաջի Հօրդ Հայաստանի զեղուլ և շնորհաւորել ընդ գալստեան Մեծի Քահանայապետիդ և զՑարութիւնն Տեառն։

Արդ՝ ընդ այսօր նոր և յուսաբուղխ, Սրբազնասուրբ Քահանայապետ, յոր հանուր Հայաստան բարգաւաճանաց առնու սկիզբն ի սիրտ, ի միտ և ի հոգի՝ յերեսս Դիտապետիդ Մեծի աղերս համաշունչ աղաչեմք՝ սիրընկալեալ զքաջուղէշ զոստ խոնարհութեան մերոյ՝ ծաղկամբ բերկրութեան զարդարեցելոյ, անձրև օրհնութեան ցօղեա՛ ի ճակատ մեր պարուն զՔև բոլորելոյ, զի արդէն շնորհաշատաւիղ ծագումն Վեհափառ Տէրութեանդ յերկինս Այրարատայ՝ ճառագայթս յուսաւէտս շողացուցեալ՝ զհոգի և զմիտ մեր ջեռուցեալ յարբուն զարգացման հասուցանէ։

Արդ՝ բարերջանիկ Հա՛յր, ճնայ մեզ ջրալիր շնթ օրհնութեան յամպոյ սիրոյ Հայր ականիդ՝ զի ծաղկեալ պտղաբերիցիմք պտուղս վաթսնաւորս և հարիւրաւորս ի փառս եկեղեցւոյ և յօգուտ ազգի։

Ի դիմաց
Սանկց Ներսէսեան Ո—սս—Ջոսքանի
սասց Սիսյոդքին

Ի 18 Ապրիլի 1867 ամի
Ի Տփխիս
Ի Ներս. Ո—սս—Ջոսքանի։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Ցնծայ երկին, յորժամ Լիշխանն տուընչեան քրքմաղգեաց եկանէ յառաջաստէ իւրմէ, և նաղաքայլ ճեմելով ի վերայ ոսկեփայլ ամպոց՝ անհետ առնէ զկաւար զիշերոյ։

Ցնծայ երկիր, յորժամ զուարթարար ամպք ցօղեն զանձրևս ի կենդանութիւն ամենայն բուսականաց։

Ցնծան հօտք, յորժամ լսեն զքաղցրաւաչ ձայն սրնգի հօտասէր հովուին, և առաջնորդեալ նոքաւ զիմեն ի պարարտարօտ դաշտ լնուլ զքաղց իւրեանց։ Ո՛հ, որպիսի ոգեշմայլ տեսարան է այն։

Ցնծամք և մեք, զի զա՛ւանգապահդ Ուղղափառ սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց տեսանեմք այսօր բազմեալ ի միջի մերում՝, և ներկայութեամբ ձերով փարատէ՛ք զխաւար տրտմութեան ի սրտից մերոց։

Սրբազնագոյն Տէր, երբ ի խորոց սրտի բղխին բանք, անդ չէ՛ք տեսանել զսահմանեալ կարգ բեմբասացութեան, զի զեղումն հոգւոյ առաւել հանդիսանայ անդ քան ոճ բանից. և ո՛ր ճարտար նկարիչ կարէ պատկերել զսերկեանս աւուր տեսարան ըստ ներքին և ըստ արտաքին կերպարանաց միանգամայն. յորում ուրախութիւն հոգևոր, ուրախութիւն ի պսակ բազմաց ակնկալութեանց տեսանեմք ի սիրտս առաւել քան ի դէմս ամենայն Հայկազանց։ Օր, յորում Մայրս մեր սուրբ Եկեղեցի զտխրութեանն ըզգեստ մերկացեալ՝ զհարսնութեանն զգենու զզարդ, և առ սիրելի Փեսայդ իւր ձայնէ ,,Արի՛, ե՛կ, մե՛րձաւոր իմ, Ս՛ղաւնի իմ, ցո՛յց ինձ զդէմս քո, և լսելի արա՛ ինձ զբարբառ քո,, (Երգ երգոց Բ. 10. 14)։ Օր, յորում ամբարձ զձեղ յաւիտենական Քահանայապետն ի վերայ յինքենէ հաստատեալ գահին մեծի Քահանայապետութեան ամենայն Հայոց։ Օր յորում Բանն յաւիտենական յարքայական գահոյից իւրոց խոնարհեալ յայս հովիտ արտասուաց հաճեցաւ ընուլ զնախասահմանութեան իւրոյ զխորհուրդ, զի ըստ սրբոյն Պաւղոսի ,,Զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինիլ պատկերի Որդւոյն իւրոյ, զի եղիցի անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց, և զորս յառաջագոյն հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց, և զորս կոչեացն՝ զնոսին և արդարացոյց, և զորս արդարացոյցն՝ զնոսին և փառաւորս արար (Հռօմ Ը. 29. 30)։

Ապաքէն՝ հասեալ ինձ վիճակ բեմբասացութեան յայսմ պատկառելի ժողովի, յատենի մեծի Քահանայապետիդ, չգիտեմ, զի՛նչ և ուստի սկըսայց և ո՛ւր դադարեցայց, ըստ որում ժամանակն սուղ է, իսկ պէտք խօսելոյ բազում յոյժ. ուստի աղաչեմ զձեզ Քահանայապե՛տդ Մեծ, թոյլ տալ ինձ սկիզբն առնուլ բանիս յայնմանէ, որոյ անարժանաբար եմ քարոզ ըստ քահանայական կոչմանս ընդհանրապէս, և ըստ ուսուցչականին ի մասնաւորի։

Իսկզբանէ անտի ծագման մարդոյ եղաւ ի նմա և ջերմաջերմ ձգտումն առ կրօնն, թէպէտ երբեմն եղծաւ զրոշմեալն ի սիրտ մարդկանց ճշմարիտ Աստուածութիւնն, այլ կրօնն ո՛չ երբէք։ Յայնպիսում խաւար ժամանակի ամենայն ազգ զհարկաւորութիւն կրօնի զերազանց համարէր քան զամենայն ինչ աշխարհիս այսորիկ. ծանեան քաջ, թէ առանց այնորիկ չէ մարթ պահել զամբողջութիւն որոյ և իցէ ազգի, և բովանդակ իսկ մարդկութեան. ամենայն ոք գիտէր, թէ կրօնն է միակ շաղկապ ազգութեան, որ

զամենայն անհատս ի մի մարմին յօդէ, և հակառակ այսմ, երկպառակութիւնն ի կրօնս է պատճառ սակաւամարդութեան ազգաց, և կորստեան ազգի և ժողովրդեան։ Երբ մեծ մասն մարդկային ազգի զրկեալ ի լուսոյ Աստուածպաշտութեան՝ շրջէր ի խաւարի և ի ստուերս մահու, և յայնժամ իսկ զկրօնն թէև մոլորամիտ ունէին ինքեանց առաջնորդ։ Թագաւորք ի ժամանակս պատերազմաց առ պատգամախօսս մեհենից զիմէին ի ցոյց և առանդեան իւրեանց առ կրօնն։ Քրմապետք և քուրմք էին պաշտպանք իւրեանց ազգային կրօնից, և զթագաւորս և զդատաւորս ի նոյն հաստատէին, և ընդ դէմ ապստամբիցն ի կրօնից զինեալ էին. և որպէս կրօնն է յաւիտենական, նոյնպէս և կրօնական պատերազմն է մշանջենաւոր, երբեմն զիցապաշտութիւնն մարտնչէր ընդ Աստուածպաշտութեան. յետ յաւիտենական Բանին քարոզութեան հեթանոսութիւնն սկսաւ զէն ամբառնալ ընդ դէմ Քրիստոնէութեան. ի զօրանալ Քրիստոնէութեան Մահմետականութիւնն եհաս զկնի վառեալ ի զէն և ի սուր. Քրիստոնէականութիւնն խաչիւ և մահու յաղթական հանդիսացաւ ի վերայ ամենեցուն, այլ ներքին կրօնական երկպառակութիւնն չլատեաց զզօրութիւն նորին, ապա թէ ոչ չլինէր արդէն թերևս յաշխարհի ժողովուրդ անքրիստոնեայ։

Հայաստան աշխարհ որպէս առաջին օրօրոց մարդկութեան յետ համաշխարհական ջրհեղեղին՝ եղև առաջին օրօրոց Քրիստոնէութեան ի մէջ հեթանոսաց ի ձեռն թագաւորին մերոյ Արգարու, որ նախ ի լրոյ, և ապա քարոզութեամբ նախկին Լուսաւորչացն Հայաստանի Առաքելոցն Թադէի և Բարդուղիմեայ հաւատաց յՈրդին Աստուծոյ։ Այո՛, յաւուրս յաջորդաց նորա կրկին տիրեաց կռապաշտութիւնն մերում աշխարհի, բայց կայծն Քրիստոնէութեան կանդաղեալ մնաց յամենայն գաւառս Հայաստանի մինչ ցՏրդատ, առ որով արծարծեցաւ քարոզութեամբ սրբոյն Գրիգորի Պարթևի, և ի հուր դատեցաւ զհեթանոսութիւնն հանդերձ մեհենիւք և պաշտամամբք նորին, և ճշմարիտ հաւատն քրիստոնէական իբրև զարեգակն իւրով բոցաճաճանչ նշուլիւք հալածեաց զխաւար կռապաշտութեան, և զօտարազգի գաղթականս և զգերիս ի Քանանացւոց, յԱսորւոց, ի Հնդկաց, ի Բուղարաց, ի Բասլաց, ի ճենաց, ի Քրդաց, ի Հրէից, ի Մարաց, յԱլանաց և ի Կասբեանց միաւորեաց ընդ հարազատ որդիս Հայկայ, եբարձ զմիջնորմն խտրութեան այլազգենութեան, և կազմեաց մի ազգ, մի Եկեղեցի և մի կրօն ընդ միով Հովուապետիւ։

Պանծայր Հայաստան իւրով բազմամարդութեամբ, և թիւ ամենայն գաւառաց աշխարհին էր 620 որպէս երևի ի թղթոյն առ Զենոբայ, զոր գրեաց սուրբն Գրիգոր հանդերձ թագաւորաւն և նախարարօքն առ Եղիա-

զար և Տիմոթէոս եպիսկոպոսունս. ուրանօր խօսելով զնուազութենէ եպիսկոպոսաց, որոց թիւն հասանէր յայնժամ աւելի քան զչորս հարիւր, ասեն՝ «Զի՞նչ են այսոքիկ առ վեց հարիւր և քսան գաւառս Հայոց»։ Այլ թերևս հարցանիցէ ինձ ոք, ո՞ւր են ընակիչք այդ քանեաց գաւառաց լցելոց խիտ առ խիտ մարդկութեամբ, և պանծացելոց անհամար կրօնական շինուածովք։ Այո՛ բազում են պատճառք վտարանդութեան ազգիս և աւերակաց աշխարհիս, այլ ըստ իս գլխաւորագոյնն ի նոսաւէ կրօնականի տրխուր ներգործութիւնն։

Քանզի հինգենեանն Պարսիկ, մոլեկրօնն Մահմետ, գոռոզն Յոյն, խաբեբայն Հռոմ ոչինչ կարէին ստնանել աշխարհիս և կրօնիս մերում, եթէ ձեռն օգնականութեան չէին գտեալ յոմանց ի հաւատուրաց նախարարաց և ի հոգևորականաց ազգիս։ Մարդք արտաքուստ ոչինչ զօրէին, եթէ կրօնական երկպառակութիւնք ի ներքուստ ոչ լինէին նմին օժանդակք։ Արտաքին թշնամիք առ ի գրաւել զաշխարհս մեր՝ խաբեբայ խոստմամբ փառաց և պատուոյ զթուլասիրտս և զպարզամիտս յիւրեանց կրօնս ածէին, որով զնոր ուսումն կրօնի ներմուծեալ յեկեղեցւոջ պառակտէին զմիաբանութիւն ազգի, և ի կուսակցութիւնս բաժանեալ՝ անզօրս գործէին։ Երանելի Հայրապետն Յովսէփ, որպէս գրէ պատմաբանն Եղիշէ, ի պատասխանի նամակին Միհրնէրսեհի զմարգարէական բանս ի մէջ բերէ «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են գառն հարուածք»։ Զայս ասէր սուրբն զարտաքին թշնամեաց, և զներքինսն թողոյր ընդ վարագուրաւ, որք զօղեալ կային ի մեզ, և յառաջնում իսկ նուազի եկին ի յայտ։

Նոյն պատմաբան կացեալ ի դաշտին Աւարայրի պատմէ զպատերազմէն Վարդանանց, զհետևանացն յիշատակեալ նամակին, և զբուն պատճառն առաջի դնէ, թէ ոչ վասն աշխարհակալութեան, ոչ վասն վերականգնելոյ զանկեալ թագաւորութիւնն, այլ վասն պաշտպանութեան հաւատոյ և Եկեղեցւոյ անկան յայսմ դաշտի քաջ նահատակք Քրիստոսի ոգիք 1036։ Յազկերտ ոչ կարէր տանել ի գլուխ զոր խորհէրն, և ոչ ձեռն արկանել յեկեղեցիս և ատրուշանս կանգնել, եթէ ի մէնջ ոչ թանձրէն իշխանն Սիւնի Վասակ, որ ըստ Կորեանն բանի զառաքինութեանց և զբարեպաշտութեանց զհանդէս բերէր յանձին ի մանկական տիս իւրում՝ չէր վերջացեալ ի բարեպաշտութեանց մասին, եկեղեցին ոչ հալածիւր. բայց խաբեալ ի սուտ խոստմանց անհաւատից՝ քերնաց յանձնէ զսուրբ օծումն մկրտութեան, եղև անօթ սատանայի, կերպարանեաց զինքն որպէս զառաջինն, և էարկ

զերկպատակութիւն ի կրօնս, եկեալ ի զօրութենէ զաշխարհն, և կրակապաշտից եղև առաջնորդ յամենայն չարիս։

Պակասեցան այնուհետև Վասակք, և Հալածանք և բռնութիւնք ի վերայ սրբոյ եկեղեցւոյ մերոյ։ Հայաստան եղև թատրոն կրօնական պատերազմաց։ Ելանէին ի միոյ կուսէ, քրիստոնեայք ի միւսմէ, և ի մէջ երկեալքն ի ներքուստ, այո՛ յոգիս ապաստան արարին զազգն և զեկեղեցի Հայոց, այլ ի զարմանս ամենայն աշխարհի չկարացին ընկճել զայն. ըստ որում հիմնադիր նորա խոստացաւ լինիլ ընդ նմա զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի. քանզի այնպիսի նգոք ամրափակեաց զնա, զի և զրունք դժոխոց չկարացին յաղթահարել զնա, զի ոչ իսպառ հլիք եմոց զնա, այլ խրախուսական բանիւ վստահ արար զնա ասելով ,,Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւնն,, (Ղկ. ԺԲ 31)։

Այո՛ անյեղլի էին խոստմունք Փրկչին, բայց մեզ պաշտօնէիցս եկեղեցւոյ չէր և չէ պարտ յայս միայն ապաստան եղեալ թողուլ զքանել զհօտն Քրիստոսի, զնալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի յԱստուածային սուրբ պատգամաց խրատիմք ,,հասանել ի ժամու և ի տարաժամու, քարոզել, սաստել, յանդիմանել, և զարձեալ միսիթարել,, (2 Տիմ Դ 2)։ Այլ մեք զմարդկային փառս և զանձանց զիւրութիւն նախապատիւ համարեալ քան զփառս Աստուծոյ և Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ՝ զանց զպաշտամամբ և զպարտուք մերով առնեմք հանապազ. և ահա ասի յայսմանէ ծագեցան յազգի մերում զանազան կարծիք նաև ըստ կրօնական մասին, և ի նմանէ շփոթք և տարաձայնութիւնք ի մէջ միոյ հօր որդւոց։ Այս ազգ ընդդէմ եկաց հրոյ և սրոյ հեթանոսաց և մահմետականաց. ի զերև հան զխորամանկութիւն Յունաց և մեծին Հռոմայ. որչափ չէր յինքեան կրօնական կարծեաց բաժանումն, և եթէ ի յայտ գային ուրեք՝ ի ձեռն անքուն հովուաց եկեղեցւոյ ոչ անագան բուժէին ի մտաւոր հիւանդութեանց։ Այլ այժմ աւաղ աղէտից. հիւանդք բազումք, իսկ հմուտ բժիշկք սակաւ. և այս վիշտ ծանր է քան զամենայն ցաւս. ասի յայսմանէ յառաջ գան չարիք, որոյ վախճանն հայի յատակս կորստեան ազգի մերում, և որչափ զօրաւոր լցեն ցաւք, այնքանեաց զօրաւորագունից կարօտին դեղոց և հրամտագունից բժշկաց։

Ունիմք այո՛ զԱստուածաշունչ գիրս և զհոգիաշունչ վարդապետութիւնս Սրբազան Հարց զեղ և զարման հոգւոց և մտաց մերոց, սակայն այնոքիկ կարօտին հմուտ ձեռին ջամբողի։

Ոչ երբէք կարաց վերաւորեալն յաւազակաց յիջանելն Յերուսաղէմէ Յերիքով ինքնին անձամբ բժշկել զանձն։ Եթէ զնովաւ զանց արարին Ղևտացին և քահանայն, սակայն կարեկից գտաւ Սամարացին, պատեաց զվէրս նորա, էարկ յայն ձէթ և զգինի, եբարձ ի վերայ զրաստու իւրոյ, ած ի պանդոկ և զարմանեաց զնա (Ղկ. Ժ. 30—35)։

Ցանմխիթար յայսմ զրութեան զտանէք Հօտապետ մեծ զազգ մեր և զեկեղեցի, ըստ նիւթականի՛ն արդեօք, օն անդր, զի շնորհիւ Ամենաողորմած Կայսերն Ռուսաց ըստ այսմ մասին վայելեմք ի բարօրութեան հաւասար նոյն իսկ որդւոց Ռուսաստանի. այլ անմխիթար է զրութիւն մեր ըստ մտաւորականին և ըստ այլևայլութեան կարծեաց, որ ծնողն է չարեաց։

Զեղ միայն ուրեմն, երկնառա՛ք Սամարացիդ, մնայ զարման տանիլ այսքանեաց վշտաց մերոց. զարձուցէք զաչս Ձեր ի խրթնատեսակ վիճակ ազգի մերոյ և եկեղեցւոյ, և օժանդակութեամբ մաղթանաց բազմաչարչար վկային Քրիստոսի և Հօրն հաւատոյ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ ցողեցէք ի վերայ ազգի մերոյ զձէթ շնորհաց և զգինի ուրախարար, որով միացեալ ի մի զօդ փառաց մեծին Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի, վերառաքեսցուք առ նա փառս և պատիւ յանսահման յաւիտեանս, ամէն։

Ո—սո—ցէ Հրամանաքեսոս—ԼԵՍ և Եկեղեցական պատրիարքն
Ամենայն սուրբ փառաց Աստուծոյ Մանրէնեանց։

Ի 25 Ապրիլի 1867 ամի
Ի Տփխիսոյ Ներսիսեան հոգևոր Դպրոցի։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ·

Ի սերկեան աւուրս յայսոսիկ՝ մինչ քանաւոր Հօտին Լուսաւորչեան փարախին անվեհեր վստահութեամբ զրոհ տուեալ յամենայն կողմանց, գայ խոնարհի զուարթադէմ ի համբոյր Աստուածարեալ Աջոյ Հօտապետիդ Մեծի, ո՛ վեհդ ի վեհից, ներեա՛ և մեզ մատաղերամ մանկանցս պարու զեղուլ, թափել ի գիրկս զորովագութ Հօրդ զսրտից մերոց զանկեղծ զգացմունս ցնծութեան, զյուսոյ և զերախտագիտութեան։

Վեհափառ Հայրապետ, ամ մի ողջոյն և առաւել ևս անց ի վերայ, յորմէ հետէ Եկեղեցին Հայաստանեայց համօրէն ի թախիծ տրտմութեան

համակեալ սգայր և հառաչէր զՀայրապետին իւրոյ առաջնոյ զանկասկածն կորուստ, մինչ ուր ուրեմն վերնախնամն Տեսչութիւն փութացց զթալ ի նա և յԱզգն առհասարակ կոչելով ի գահն Պարթևական զարժանընտիր Հայրապետդ, զՀայրդ մեր հասարակաց։ Եւ ահա՛ յեղակարծ իմն քողն սևաթոյր տխրադէմ Հարսինն եկեղեցւոյ ի զգեստ փոխանակեցաւ ծիրանի, անցին գնացին անդնդասոյզ աւուրք թախծութեանց և տրտմութեանց և դէմ եղեն մեզ աւուրք բերկրանաց և հրճուանաց. մերձեցաւ ժամն արդարութեան, ծագեցաւ արեգակն ի յարևմտից կուսէ բոցափայլ ճաճանչիւք. թագաւորեաց անդորրութիւն խաղաղաւէտ. տեղի տուեալ մերժեցան յերկնից Հայաստան աշխարհին ամպք միգապատք, և Մայր մեր համբէն սուրբ եկեղեցի, որ յառաջն տխրազգեստ, այժմ փառօք պանծացեալ բերկրապատար սրտիւ և զուարթ դիմօք և հարազատ Հայրապետն իւր և զցանկալի փեսայն ի մայրենի աշխարհին ընդունի յառագաստ, նոյն և ի զփեսաւիրէն երդելով զսիրելւոյ զերգս ուրախական։ Բա՜ռ է, որ լեզու մարդկեղէն բաւէ թոթովել զանպայման ցնծութիւն Հայաստան ժողովրդոց, որ շրթունք զօրեն ի բան բերել զանվկանդն նոցա յոյս ակնկալութեան ի քաջէն իւրեանց և ի մեծէ Հովուապետէ։

Զարթիր, ոգիդ Հայաստանեայց, զարթիր Մուսայդ նազելի, և երգեա՛ զԱստուածապսակ Քահանայապետիս զազգաշէն գործս, որոց արժանացաքս ցարդ և որոց արժանանալոցս եմք յայսմ հետէ և առ յապա. աւետարերեա՛ զդիպելոց մեզ ի Ղեկավարէն ճարտարէ զսէր և զմիաբանութիւն ամենուրեք արմատացեալ, զեկեղեցին Քրիստոսի ևս քան զևս պայծառացեալ և հաստատեալ ի ձեռն քաջարթուն Հովուաց և պաշտօնէից, զասպարէզս ազգի ազգի ուսմանց և արուեստից ընդլայնեալս և բարգաւաճեալս, որոց ըղձայ և ոգով չափ կարօտի բովանդակ ազգն Հայոց։ Այս իղձ կաթոգին, այս յոյս ակնապարար, Ավետիայլ Տէր, փայլեալ նկարի ի դէմս առհասարակ շուրջ զձեօք բոլորեալ որդւոց։

Ի դէպ իսկ է ուրեմն և քեզ, դուստր Սիօնի՝ Եկեղեցիդ Հայաստանեայց, որ ի հերուն հետէ ընդ սևաթոյր քողով վարագուրեալ ճնայիր, խնդալ ուրախութիւն մեծ. զի ահա՛ եկն քաջահմուտ Հովուապետն զաւազան արդարութեան և սրբութեան ի ձեռին, քեզ ի պայծառութիւն և մեզ ի յառաջադիմութիւն։ Հայեաց սեղան սրբութեան և արդարութեան և մերկացի՛ր ի քէն զքուրձդ տխրազգեցիկ. պատառեա՛ զվարագոյրդ սևաշուք։ Ցնծացէք աղէ և դուք դասք ժողովրդականաց և համազգի երիտասարդաց. քանզի այսօր զԱհակայն և զՄեսրոպայն արթուն հովուին և քրտնաջան հովուակցին կացուցանէ մեզ Աստուած զփոխանորդ և յաջորդ։

Իսկ մեք, Մեծ Քահանայապետ, որովք Հօրդ Հոգևորի՝ գողով ընձեռեալք յառատագութ Հովուէդ, զցանկալի ասեմ և զամենից փափագելին—շնորհօք, ձերով աղգասէր և վեհ բարերարութեամբ, ի տրիտուր այնց մեծամեծ բարեաց, մաղթանս սրտառուչ վերառաքեմք առ Հաստիչն ամենից Աստուած, որպէս զի՝ կեանս խաղաղաւէտս և բազմաբիւրս պարգևեսցէ Վեհափառութեանդ՝ ի փառս Աղգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ։

Ի դէմս Սանէց Ազգէց Ազգոյն
ասաց Ղ. Սահակեանց։

Ի 25ն Ապրիլի 1867 ամի
Ի Տէրէ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԵՐԻՑ ԵՐԱՆԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ։

Էր երբեմն զի Հայաստան աշխարհն ողջոյն, ի ձայն քաղցրահնչիւն փողոց, դիմէր ելանէր ընդ առաջ քաջայաղթ թագաւորաց և առաքինի նախարարաց, կայթս ցնծութեան հարկանելով։

Էր երբեմն զի քաջ ուշիմ մանկտին Հայոցի դիմաւորէր զաղգասէր Հայրապետս իւր և զերանաշնորհ վարդապետս ի գովեստս խանդաղատականս և ի դրուատիս անսուտս ներբողելով զանձնանուէր հովութեանց նոցին զանմահ սխրագործութիւնս։ Արքայական պերճութեանցն օգապար դրոշք և հայրենի փառացն շքեղ պսակք վաղ ուրեմն անցին գնացին անմխիթար և հայրենի փառացն շքեղ պսակք վաղ ուրեմն անցին գնացին անմխիթար զսրտաշարժ յիշատակն և եթ թողլով յէջս պատմագրութեան և յանձկայրեաց սիրտս Հայկազանց։ Թագ և գայլոն հայրենի մեծութեան ծածկեցան ընդ տխուր վլատակօք կիսաւէր Հայրենեաց։ Եկեղեցական տեսչութեան անկախ իրաւունք միայն և Հայրապետական գաւազանին հովուական շուք կացին մնացին ցարդ անընդհատ շնորհիւ երկնապարգև կրօնի մերոյ և բազմաչարչար եկեղեցւոյ։

Ա յսօր ազգս մեր համօրէն վարատեալն և ցրուեալն ընդ ամենայն աշխարհս, այո՛, յեկեղեցի իւր և եթ տեսանէ զմնացուածս վաղեմի մեծութեան և նովիմբ սիրոմի անձկաւէտ սիրտ ի բերան։

Փարի և զՀայրապետական գահու իրր զնուիրական նշխարաւ մնացելով Հայրենի պարծանաց։ Տաղաւարի նա ընդ հովուական գաւազանաւ իրր ի

կեղրոնի ազգային միութեան, և զվերջ իւր և զինդութիւն անգանօր միայն զնղու։ Այնր Հովուապետական շքոյն պատկեր, բազմագարեան նուիրական աւանդոյն աւանդապահ, դուք էք այժմ, Աստուածարեալ Հայրապետ, յորոյ ի շնորհաբեր գալուստ բաբախին ահա սիրտք մեր ամենեցուն։

Ի ձայն ցնծութեան և երախտապարտ գոհութեան ընդ առաջ ելին Վեհափառ Այցելութիւդ երամք ժողովրդոց և դասք եկեղեցական. ի տես ելանէ ահա և ուսումնատենչ մանկտին Ներսեսեան փարախին, ամենեքեան առհասարակ ի վսեմական միտս և յերջանկաւէտ խորհուրդս պատկերելով զկոչումն ձեր բարձր և զշնորհաբեր գալստեանդ զնպատակ։ Ժողովուրդն տեսանէ ի ձեզ զԱռաջնորդ իւր ի համազգական գործս և ի ձեռնարկութիւնս, զՀայր իւր՝ պահապան հայրենի ժառանգութեան և փառախնդիր ազգային բարեբաստութեան։ Ուխտ եկեղեցւոյն տեսանէ ի ձեզ զՏեսուչ բարեզարդութեան սրբոց սեղանոյն և զհսկող Դիտապետ ազատ իրաւանց մայրենի եկեղեցւոյն։ Իսկ մեք մանկունքս մատաղերամք ևս առաւել ըղձական տիպս փափագիմք տեսանել ի ձեզ։ Ընդ Հայրապետական քաղցր անուամբ ձերով ըղձանամք տեսանել զԱահակ Պարթև, զմշակն տառից Սատուծոյ և զպարագլուխն ոսկեղենիկ դարուն Հայկազանց։ Իսկ ի խորհուրդս ձերումդ այցելութեան զՄեսրովբ, զայցելուն վարժարանաց, զքարոզիչն ուսումնասիրութեան և զկանգնող նուիրական տաճարին Հայկական դպրութեան։

Ահա, այս են իղձք և փափագք նորաբողբոջ սերնդոցս Հայութեան, և սովին նուիրական խորհրդով և ի ձեռն արդար վաստակոց մեծախնամ Հայրապետիդ՝ ճգնիմք ի քիրտն մտանեմք բանալ, հանել ի շիրմաց և յարձանաց զժառանգութիւնս անմահ նախնեաց, կանգնել յարուցանել զնոր դարագլուխ ազգային լուսաւորութեան և դարձուցանել զքաղցր արև Հայրենեաց։

Այսու ըղձակամ տենչանօք ահա գամք ելանեմք ընդ առաջ որդեխնամ Հօրդ մերոյ հասարակաց և ձայնակից լեալ առաջնորդաց մերոց և դաստիարակաց գոչեմք միահամուռ. Օրհնեալ է գալուստ ձեր, Վեհափառ Այցելու, օրհնութիւն ի բարձունս։

Ընդանուանութիւն որդի յԵրս, երկնաւոր
աղաւնի Հոգեւոր Դարձոյցս
Դարձեալ Դ. աղաղակեանց։

ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ·

Հօտը կարօտում է Հովուէ. որդին կարօտ է Հօր խնամակալութեան. ազգը կարօտում է Առաջնորդի խնամակալութեան և նորա նուրբ և իմաստուն տնօրէնութեանն։ Աստուծոյ ամենակարող կամեցողութեամբը դէպ ի Հայոց Ազգը և նորա անհուն տնօրէնութեամբ, որ վաղուց յետէ ի խորոց սրտէ փափագում էինք տեսնել ընտրեալին Հայաստանեայց Եկեղեցւոյ Հովուապետին, ահա բերկրանօք սրտի, և ժպիտ ի բերան խոնարհաբար շնորհաւորում ենք Ձերդ Վեհափառութեան ընտրութիւնը և այցելութիւնը մեր Պատուարժան Թանդոյեանցի Մանկավարժարանին։

Խնամածու Հայր, Ձեր բարի տնօրէնութեան են կարօտ ուսումնարանները, Հայոց Եկեղեցիք. գիտենք, քաջ գիտենք, որ Ձեր անխոնջ աշխատութեամբ, և իմաստուն տնօրէնութեամբ շուտով կհալածուի խաւարը, և նորա տեղը կիշխէ Հայոց Ազգի մէջ մտքի և բարոյականութեան լոյսը կամ լուսաւորութիւնը։ Կկորչեն, կանհետանան Հայոց միջից խաւարապաշտները, կփլատակուին նոցա կանգնացրած բուրգերը և կոթողները. այն ժամանակ կասենք օրհնեալ է Աստուած, և օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

Այն ժամանակ Հայութիւնը Հայաստանի յաղթութեան դրոշակը համարձակ կծածանի լուսաւորութեան ասպարիզի մէջ. մտաբերելու է նոցա, հին Հայաստանի կեանքը, նորա սուրբ Հաւքը, Եղիշէ քաղցրաբան, Ներսէս Շնորհալի, քրտնավաստակ Մեսրոպը, Սահակ Պարթեւն, և այլք արժանաւորք Հայաստանեայց եկեղեցեաց Հովուապետք։ Եւրոպան կ'համեմատի Հայոց Ազգի հին կեանքը նոր կեանքի լուսաւորութեան հետ, և կտայ արժանաւորութիւն Ձերդ Վեհափառութեան ժամանակին արած անխոնջ աշխատութեանց լուսաւորութեանը։ Կպսակեն դափնիներով ժամանակը, և Ձեր գործը յետոյ, աւելի յետոյ. յաւիտեան յաւիտենից քանի կգոնուի Հայոց Ազգը երկրի վերայ, չի մոռանալ Ձերդ Արբութիւնը յիշելու, և Ձեր անունը՝ նոր սերնդի սրտումը դրոշմելու, ինչպէս կենդանի այժմ տպաւորուած է անցելոց շաւքումը և յաւէրժայիշատակ Աշտարակեցի Ներսէս Հինգերորդի ազգապարծան անունը։

աշակերտ Թանդոյեանցի սասունցի

Ի 25 Ապրիլի 1867 ամի
Ի Տփխիս։

Ի ՇՆՈՐՀԱՒԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻՈՆՆ ՏՓԽԻՍԱՑ

ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՑ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՈՒՂԵՐՁ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՓԱՌԱՆԱՑԱՊԵՏ.

Ի բազմաց հետէ ըղձակալթ սրտիւ ցանկայաք շնորհաւէր այցելութեան և հայրագութ օրհնութեանց Վեհիդ լինել արժան. և ահա ուր ուրեմն պսակեցան իղձք և փափագք մատաղերամ մանկացս զՁեզ բոլորելոց։ Մեծ է արդարև ընկրկապատար սրտից ցնծութիւն մանկտեացս՝ ընդ աւետաւեր զալուստ Հովուապետիդ մեծի, և զարթուցանէ ի սիրտս նոցին զյիշատակ անցելոցն ժամանակաց, մինչ Պարագլուխք դպրութեանց Հայոց, Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց, Ծերունին Խորենացի, Մանդակունին Յովհան այլովք հանդերձ անձամբ անձին ելանէին ի տես որդւոցն իւրեանց, և խրախոյս կարդային նոցա յառաջել յազգի ազգի ուսմունս և ի լեզուս, ի փառս Հայրենի Եկեղեցւոյ և ի բարգաւաճանս դպրութեան։ Զնոյն օրինակ ահա և Վեհափառ Տէրութիւնդ՝ յօրէ անտի զալստեան իւրոյ ի տիրանանամ քաղաքս՝ զցայգ և զցերեկ ճգնի բանիւ և խորհրդով քաջալերել զհամբակս տաճարին իմաստութեան վեհագոյն վարժապետաց մերոց առաջնոց լինել նմանող։ Եւ թէպէտ համբակացս լեզու թոթովախօս չը-զօրէ երգ գովական ճարտարել ժիր Մշակիդ ի վաստակ՝ խորհագգեաց խորհրդով ևս քան զևս զանդ մշակել բանական Հօտիդ. սակայն քաջայոյս ենք զի Օծեալդ մեծ ներողամիտ գոցի՝ խնայելով չափու հասակի մերոյ և ախորժ ընկալցի զդուշնաքեայ բանս երախտագիտութեան և շնորհակալեաց անկեղծ սրտից մերոց։

Կեցցես հնապա յաւիտեան, Վեհափառ Տէր պարծանաց, ի շուք հայրենի Գահոյն, նոյն մխիթար համազգեաց. երկինք զառատ հեղցեն ցօղ յերկարատև բաժակ ձեր կենաց. մեր սրտից ուխտ այս յաւէրժ բարձրասցի յԱստուած պատարագ։ Դարձցի ընդ կրունկն Ձեր կենաց զուարթ արև

տալ ցնծութիւն Հայ որդւոց լիւրուք բարեօք նորանոր։ Փառք Արարչին երկնաւոր, որ զՀօտապետդ մեծ ի Գահ հայրենի անդէն Հայոց բարձրացոյց. Օրհնութիւն ի բարձունս։ Օրհնեցէք և Դուք զՄեծազօր Ինքնակալն մեր զԱղեքսանդր Նիկոլայեվիչ, որ ցանդ քաղցր ակամբ հայի ի մեզ և զորոյ հայրախնամ հովանաւորութիւն վայելէ մասն մի Ազգիս Հայոց։ Օրհնեցէք և զվերատեսուչս և զդաստիարակս մեր, որ զուն գործեն կրթել զսիրտ և հրահանգել զմիտս մեր՝ լինել անդամս պիտանիս մարդկութեան և Ազգիս մերոյ առ հասարակ։

Ի դէմոց ազգակիցաց գիմոազիոնին քնազգիպական ասաց

Մ՝ԷՐՊԷՂ Պարպէրէանց։

Ի Տֆխիս

Ի 27 Ապրիլի 1867 թ։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Այսօր մեծապայծառ վայելչութեամբ զարդարեալ երգէ Մայրս մեր սուրբ եկեղեցիս օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի. զի այց եալ մեզ և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Քանզի շարժեաց զզթառատ սիրտ ճշմարիտ Հովուապետիդ շնորհաբերեալ այց ելանել սրբոյ Եկեղեցեացն, որք մատամբ և քրտնաշխատ ջանիւ բազմաչարչար Հօրն Հաւատոյ սրբոյն Գրիգորի և այլոց կառուցեալ կացուցեալ են, իսկ սրբութեանց խորանքն որք բարձրաբերձ Կաթուղիկէիւք ի յամպս ամբարձեալ գէղազարդէին զՀայաստան, և իբրև զոդիակոս երկնակամարի գեղապատշաճ վայելչութեամբ պայծառանային լուսաւորացն յոլովութեամբ. և քանզի ընդ երկարս անտերունչ մնացեալ՝ անագորոյն ձեռք տարերց զոմանս կիսակործան արարեալ և զոմանս բոլորովին ընդ երկիր հարթուցեալ, հիմունքն և եթ նշմարին արդէն. որք և տեսողացն սրտից՝ ածեն բիւր աղետս, մեծազօր բազկաց ակնկալնուն օգնութեան։

Աներկեան ցնծութեամբ կայթէ ժողով հաւատացելոցս նորոյս Իսրայելի. քանզի երկնային շնորհաց և փառաց արժանացեալ տեսանէ զԵհափառ Տէրդ և Աստուածարեալ Հայրապետդ. որ ծաւալմամբ բազմաղեղ շնորհացդ այց եալեալ մխիթարես զփոքրիկ հօտն Քրիստոսի՝ զորդիս իմա Գրիգորի. վասնորոյ ի հոգի ցնծացեալ կրկնէ, օրհնեալէ Տէր զի արար ա-

ղորմութիւն և փրկութիւն ժողովրդեան իւրոյ, նստուցանելով յԱթոռ Սրբազան Լուսաւորչացն Հայաստանի՝ Առաքելաշուք Տէրդ մեր։

Ուստի և անարժան որդիս Մօրս լուսոյ սրբոյ եկեղեցւոյս խոնարհեալ մատուցանէ երգս օրհնութեան, կեցցես Վեհափառ կեցցէ և քո Գահ ցորշափ արեգակն յերկինս և գագաթն Արարատեան կայ։

Ընդ նոցանց Վեհափառութեանդ.

Խոնարհ ծառայ Բարսեղ Պահանայ Տէր Վարդանեանց։

Ի Ցն Յունիսի 1868 ամի
Ի Մոսկվա ի Տփխիս

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՏԷՐ.

Եթէ եղեալ էր ըստ ասից առն ուրումն իմաստասիրի ի կուրծս մեր ապակի իմն պայծառատեսիլ, նկատէր արդեօք Վեհափառութիւնդ, թէ յորպիսի ուրախութեան և ի հրճուանս տարրանան սիրտք մեր յընդունելութեան յերկրի մերում զձեզ, և ի քանի՛ քանի՛ սրտից անքառնան բուրմունք անուշահոտ աղօթից յԱթոռ Աստուծոյ. Զի մեք որդիք և խաշն արօտի քո, մեք ցրուեալք ի լերինս և ի դաշտս կուրութեանց, իսկ դուք անդուլ Հովիւ և տածող ի վայրի դալարուջ և առ ջուրս հանգստեան, և ի մի փարախ միաբանութեան և սիրոյ ժողովող և ի լուսաւորութիւն առաջնորդող. մեք տգէտք ի կրթութեան և մոլորք ի շաւղաց առաքինութեան, իսկ դուք անխոնջ և քրտնաջան մշակ՝ տալ երկրի մտաց մերոց զկրթութիւն Աւետարանական, և Դէտ և Փող Աստուածային պատգամաց, և քանօն ուղղութեան մանկանցս ի ճշմարիտ ուսումն գիտութեան։ Երանի՛ է մեզ նորոյս Իսրայէլի զի հաճոյն Աստուծոյ ծանօթ մեր է։ Ներինք Հայաստանի ցնծան որպէս խոյք՝ և բլուրք որպէս գառինք մաքեաց. զի Հովիտք հոգւոց մերոց բազում արասցեն զցորեան և աղաղակեսցեն և օրհնեսցեն. որովհետև զանձրև կամաց և զջուր Աւետարանի իւրոյ նա Աստուած ուռոգանել զհոգիս և զսիրտս մեր։

Եւ արդարև, զի՞նչ քան զայս հրճուական օր. և ո՞ր առաւել փառք Հայաստանի քան զայժմեանս, երբ նա ի բազմաց անտի դարուց հետէ, յամենայն փառաց և ի մեծութեանց անկեալ, յամենայն հողմոց խռովեալ,

մեաց կենդանի զմի միայն նեցուկ պաշտպանութեան իւրոյ ունելով, զնա միայն զնելով միանգամայն իւր յոյս և սփոփիչ և զգլուղ իւրոց որդեկաց, զեկեղեցին ասեմ զամուր պարիսպ նորին ցարդ և լեզուի և ազգութեան. ոչչափ ուրեմն և ի տես նորին Վսեմափայլ Գլխոյ, սիրտ ի թունդ առնուլ նմա պիտի զէմ ընդ առաջ ելանել, զգարշապարս համբուրել, խնդալ և հրճուողական ձայն արձակել. կեցցէ՛ Հայոց եկեղեցի. կեցցէ՛ և Վեհափառ Կառաւարիչ նորին, տուողն որդւոց Հայկազնեաց մխիթարութիւն հոգւոց և քաջալերութիւն սրտից։

Վեհափա՛ռ Տէր, ի սոյն ահա՛ և մեր առլցեալ ցնծամբ և պարեմբ առաջի Աստուծոյ և շնորհաւորեմք զդալուստ Հոգևոր Տեառնդ. փառաւորեմք զմուտ ձեր յերկիր մեր. երանեմք վայրկենիս, յորում արժանացաք տեսոյ Գլխոյդ եկեղեցեաց և մանկանց Հայաստանի. և խոնարհակա՛ն համբուրիւ մատչիմք ի տուրբ Աջ Վեհափառութեանդ՝ մաղթելով զլիալիր օրհնութիւն ի զթառատ Հօրէդ, և խնդրելով ի Վերնատուղէն յերկարել և զկեանս ձեր ատտ, և պսակել զձեզ ի հանդերձելումն ընդ սրբոյ Լուսաւորչին մերոյ Տեառն Գրիգորի։

Վեհափառ Հայրապետ՝

Սրբազնասուրբ Տէր-Ներսէսեանդ

ամենախոնարհ ծառայ

Սարգիսեանս խահանայ Տէր Աստուածատուրեանց

Ի 6ն Մայիսի 1867 ամի

Ի Ղազախ։

ՕՐՀՆԵԼ Ի ԱՍՏՈՒԱԾ.

Այս նշանաւոր դար, յորում են և լինելոց են ազգօգուտ պարագայ, հան զիս ի հանդէս մի՝ ի հազարաց աւուրց ընտրեալ օր, որ ի շրջանի նշանաւոր դարուց արժանաւորն վկայաբանութեամբ անցուցանի ի յիշատակարանս նախանձելոցն ի ճանապարհս Տեառն զօրութեանց և այսրէն անջինջ կնքի ի սիրավառ սիրտս Հայազանց և այնց՝ որք զուղղիղն խորհին յօրէնս Տեառն։ Ուրեմն թո՛յլ տուք մեզ Տէր՝ զգենուլ զՔրիստոսազօր զօրութիւն. զոր և ածեալ ընդ մէջ՝ գոչեսցուք մեք որդիքս ի ձեր փառս ժողովեալ ի Տաճարի Տեառն փառաց օրհնել զորայարեր գալուստ ձեր և ասո՛ղ, օրհ-

ենայէ զձեզ Տէր։ որ արար զերկինս և զերկիր։ Հոգեշնորհ Տէր մեր, տեսանէ՛ք ահա ի Ձեր շնորհս համախմբեալ որդիք Հայկեան ոյժերոյ. սոքա ամենեքեան ակնունէին Ձեզ և հայցեն զկերակուր շնորհաց լուսաւորութեան զարդին ձեզ որդիացելոց մանկանց եկեղեցւոյ։ Հոգևոր Հայր մեր, բացէ՛ք սոցա զաստիատ առաքինութեան զարդարեալ ի կրօնական բարոյականութիւնս հաճոյիցն Աստուծոյ. որով՛ք յերկինս փառաց պսակք և յաշխարհի կրեսցեն զանուն արժանիս յիշատակութեան ի գիրս և. յօրէնս եկեղեցւոյ և ազգային պատմութեան։ Հայր Տէր, տո՛ւք սոցա ծծել զկաթնալիր զստինս իմաստից և գիտութեանց զարգացեալ հաւատով, որով՛ք պտղաբերիցեն ի ժողովուրդս Աստուծոյ զյոյժ առհաւատչեայ ակնկալութեան Աղդիս և զսէր խաղաղութեան ի պահպանութիւն լրման Եկեղեցւոյ սրբոյ։

Ո՞վ մեծի աւուր տեսութեան, ուր՝ ահա ժողովուրդք քո Տէր Աստուած, շուրջ պատեալ զՆՀ սրբութեամբն բոլորեն զպսակ նոր իմն տեսարանի և պատկառանօք ակնունին մեծամեծ բարօրութեան վիճակի իւրեանց ի յարաճնայ կեանս շնորհիւ ողորմութեան քոյ Ռուսի ամենակալ Տէր, տուր զօրութիւն սմա փայլել զփառս մեծագործութեան, որով և ճոխութիւնք հաւիրաւոյ սորա հնչեսցեն ընդ տիեզերս իւրով անձնանուէր պաշտամամբք եկեղեցւոյ և Աղդի։ պաշտաման ասեմ և շնորհին սմա, որ հաւատացան ի քէն ի վերուստ՝ շահեսցէ զկրաւունս, յոր և սեղանաւորեալ զհոգիս որդեգրելոց Եկեղեցւոյ շահեսցին և ևս զկրաւունս տասն քարաքաց։

Տէր Աստուած, տուր զօրութիւն, զի որ զկրաւունս ունի և ևս զիրաւասութեանցն զիշխանութիւն, որով պատշաճ և վայել են սմա հարկաւո՛ չ աչացն քոյն տալ և ո՛չ արտեւանացն նինջ՝ ժառանգել զկրաւունս ծառայի գործելոյ հանապազ ըստ հաճոյից կամաց քոց։

Տէր, տուր զօրութիւն սմա. զի որ զհոգեւորականն ունէր զքնուպ և զարդիս ընկալաւ զգաւազան հովուապետութեան իբրև քաջ հովիւ եղեալ զանձն ի վերայ ոչխարաց, տածել զնոսա ի ծաղկաւէտ հովիտս եկեղեցւոյ և ի վայրս դալարուոջ, ուր խոխոջին աղբիւրք ջրոց կենդանութեան։

Այս ամենայն յաջողութիւնք ի քէն Տէր, զի մեծ են գործք քո և յոյժ խոր են խորհուրդք քո. արդ՝ հայեա՛ մարդասիրութեամբ քով ի սորայս հաճոյական հնազանդութիւն և ի մեր իսկ խոնարհ տկարութիւն և լո՛ր պաշտպան բարեաց գործոց մասին սորա։ զի ընդ Տէրութեամբ Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ամենաբարեպաշտ և երախտաւոր մեզ Թագաւորին Ալէքսանդր Նիկոլայևիչի վայելեսցեն ժողովուրդք քո զխաղաղ կեանս և զբարեպաշտական կենցաղավարութիւնս. որոյ վասն և միաձայն դոչեսցուք, կեցցէ՛ Նորին Կայսերական Մեծութիւ-

նրն, կեցցեն և թագակալ ժառանգաւորք Նորին մեծազօր տան հանդերձ հաւատարիմ զօրօք և զօրապետօք՝ յորդւոց յորդիս միշտ անպարտելի թագաւորութեամբ. ընդ նմին և սորին Վեհափառութեան երկարեսցի թիկ կենաց ի պաշտպանութիւն Առաքելական Հայաստանեայց եկեղեցւոյ և ի պարծանս Ազգի, որում գահակալէ. ամէն.

ՄԿՐՏԻՉ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Յ9ն Մայիսի 1867ին
ՅԵրևան։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Այսօր թշուառ Հայոց ազգը հպարտ կարողացաւ դէն ձգել իրանից տրտմական զգեստն։ Վերին Տեսչութիւնն տեսնելով մեր ազգի անմխիթար դրութիւնն և արտասուալից աչքերն՝ ուղարկեց Ձեզ՝ մեզ համար՝ միակ մխիթարութիւն։ Վերջապէս Հայաստանը, Հայոց ազգը, և Արարատը հասին իւրեանց նպատակին. որովհետև մինչ ցայսօր տմպամերձ Աստուած ընտրեալ էր աղջամղջիւ, իրր պոյ քօղ տարածեալ իւր վերայ, նշան տալով Հայաստանի եղկելի դրութեան համար, այս ողորմելի և վշտալի վիճակն նկատելով որդիք Ձեր՝ շյապաղեցին տրտմակից լինել նոցա հետ այսինքն Հայաստանի և Արարատայ. այսու աղաչաւ անհամբեր սպասում էին Ձեր գալստեանը՝ իւրեանց ցաւից ազատելու համար։ Երբ տեղեկացաք, որ միակ Հայոց ազգի գլխաւոր փառքն և երկնատու առաքելական Աթոռն Ձեզ վերայ վիճակեցաւ, որն որ պահպանուած է դարէ ի դար թէ Ձեզ համար և թէ Ձեր Յաջորդաց համար, այն ժամանակ մեք Հայերս սերտ սիրով, ձայն ձայնի տալով Ռուսաց տէրութեան Հայերն — Օսմանեան տէրութեան Հայերին — Օսմանեան տէրութեան Հայերն — Պարսից տէրութեան Հայերին և այլոց, ձեռք ձեռքի մեկնելով ցանկացան մի մեանց ուրախ սրտիւ «ալէլոյա» ասելով բարձր ձայնիւ «Կեցցէ՞ Մեր Նորընտիր Կաթողիկոսն ամենայն Հայոց», և այնուհետև անհետացան մեր միջից առժամանակ մի Վասակներ, Մէհրուժաններ, և Վեստ Սարգիսներ ևլն, և բոլոր ի միասին մի սիրտ, մի հոգի, և մի անձն եղեն, ազգի ուրախութեան հանդէսն վայելելու և մինչև անգամ Մայր Եկեղեցւոյ դռներն արդէն իսկ բացեն և անհամբեր սպասում է ընդունել Ձեզ իւր գիրկն և յանձնել դաւազանն սրբոյն Թադէի և նստուցանել նորա Աթոռի վերայ. այդ Գաւա-

զանն մեզ համար լինելու է պատսպարան,—իսկ այլասեռ ազգաց համար յաղթահարիչ կամ ջախջախիչ դլխոց. այս Ձեր երկնատու Գաւազանն կը-նմանի մեծին Մովսիսի Գաւազանին. որ վասն ոչ դանդաղելոյ Հոգևոր քաղցր ձայնիւ «Ալէլուս», առաքել առ բարձրեալն Աստուած և երգելոյ ա-սելոյս «Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս»։ Թէ-պէտ և Հայաստանը միանգամայն զրկուած է իւր նախնական փառքից և կորցրել է Գահ Գայիսոնը, Գաւազանն թագաւորութեան և զօրութիւնն, իսկ կտրիչ սրերն արդէն իսկ ի վաղուց անտի փթած և ժանգոտած է հողի տակին. այսու ամենայնիւ ամենազթածն Աստուած չթողուց մեզ միշտ որբ և անտէր. այլև առաքումէ այնպիսի քաջ հովուապետներ, որով կարողա-նում ենք մխիթարուիլ, որ և ազգի միայն մնացած փառքն է. սապէս ևս մեծամեծ մխիթարութիւն ենք գտնում Ռուսաց Կայսերից և Հանգստա-նում ենք նորա թևի տակին. պահպանում է մեզ իբրև իւր որդիք. մի խօսքով գթայ մեզ վերայ այնպէս, ինչպէս Հայրն իւր որդւոց վերայ։ Դուք մեզ համար լուսատու Արեգակ ծագեցաք, այսուհետև մեր խաւար միտքն՝ ձեզանով է լուսաւորուելու, մեր վշտալի կեանքն՝ ձեզանով պետք է ուրա-խանայ, թմրելքներս՝ ձեզանով արթնալու ենք. թող այսուհետև Հայաս-տանի ոգին ձեռն ծնօտի վերայ չդնէ և չարտասուէ Հայաստանի անցկացած փառաց և շքեղութեան համար։ Մեք Ձեզանից մեծամեծ յոյսեր ունիմք՝ եթէ համարձակութիւն չթուի Ձեզ կամ Ձեր Վեհափառութեանը, հետե-ւէք ուսումն և լուսաւորութիւն տարածել թշուառացեալ ազգիս մէջ. եթէ ինչևիցէ ազգ՝ ուսմամբ ծաղկած լինի, այն ազգն երջանիկ կհամարուի աշ-խարհիս միջին. բայց մեր ազգն յետամնայ է եղել այլ ազգերից՝ ի պատ-ճառս տգիտութեան և անկրթութեան. որ վասն յաքմար է յառաջ բերել Սրբոյն Եզնիկի գրուածն՝ «Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք». մեր ազգն միշտ պատրաստ է օգնութիւն անել ուսումնարանաց հաստատութեան հա-մար, միմիայն ճանապարհացոյց տուող լինի. որովհետև դեռ ևս մանուկ է՝ հագիւ կարողանում է ոտքի վերայ կանգնել, տասն հազարից – հազիւ նո-ցանից մինն ուսման ճաշակ հասկանում է. վասնորոյ մեր ազգին հարկաւոր է լաւ դաստիարակիչներ, որ կարողանան ամենայն պակասութիւններն ուղ-ղել։ Ի՞նչով մեր ազգն ներկայ ժամանակումս կարող է յառաջ գնալ. ոսա-հաչ՝ ոսահաչ՝ Վեհափառ Տէր. այսու աղաչաւ կխնդրեմ որդիաբար գործ դնել աշխատութեան ջանքն կանոնաւոր ուսումնարանաց հաստատու-թեան համար. այն ժամանակ Ձեր Սրբասուրբ Անունն պաշտելի, խնկե-լի և անմահ յիշատակ կթողուք ազգիս մէջ. վասնորոյ համարձակապէս կարող եմ ասել ուսումնարանն նախադասելի՝ քան թէ եկեղեցի. որովհետև

ուսումնարանից դուրս են գալի հոնտորք, լեզուագէտք, աստուածարանք և փիլիսուփայք ևլն, մի խօսքով ուսումնարանն երեխայոց կրթում է և պատրաստում է ապագայ ժամանակի համար այր պիտանացու և լաւ ազգի անդամ, իսկ նեղութեան ժամանակին՝ հայրենեաց պաշտպան։ Տացէ Ձեզ Աստուած երկար կեանք առ ի մխիթարութիւն մեզ, և Ամենաողորմածն Աստուած՝ լինի օգնական ի գործս Ձեր, զոր ունիք ի մտի՝ ի պարծանս Հայոց ազգի։

Ո-ապայ ի Լ-ազարեանից Ն՚էմարեանի և այլոց վերին պաշտօն
Ո-ա-ցը-ին, և Օրհնո-ին Ձեր փափագող որդի Ձեր
Ա-ա-ա-ա-ը էջմիածնի Հովհաննէսեան
Ա-ա-ա-ա-ից Լ-ին-ի։

87ն Մայիսի 1867 տի
Ցերուսաղեմ։

ԳԵՐԱՄԵԾԱՐ ՍՈՒՐԲ ՀԱՑՐԱՊԵՏ.

Շնորհաւոր է Աստուծով այս բարեփառ մուտ ձեր ընդ նախագուռն Արարատեանս Աթոռոյդ. շնորհ կալարուք ուրեմն աղաչեմք զձեզ՝ շնորհել մեզ որդւոցն ձերոց հարազատից զլիուլի իրաւունս շնորհաւորել զբարեբաղդ գալուստ Աստուածարեալ վեհիդ, միանգամայն և հայցել ի վերնախնամ տեսչութենէ զերկարատև և զերանաւէտ կեանս ձեզ և զկատարեալ յաջողութիւն ամենայն բարենպաստակ ձեռնարկութեանց ձերոց յօգուտ և ի փառս ձեզ հաւատացեալ Միածնաէջ Աթոռոյ և ըստ հոգեկանին հօտի ձերոյ փոքու ընդ հզօր պաշտպանութեամբ և քաղցր հովանաւորութեամբ ամենաողորմ թագաւորի և Կայսեր ամենայն Ռուսաց։ Ակնունիմք լիակատար յուսով, զի Աստուածարեալ Տէրդ մեր հովուեսցէ զմեզ մարգասիրական զթութեամբ և արթուն աչօք, և մեզ ինչ ո՛չ պակասեսցի յետ այսորիկ։

* * *

69ն Մայիսի 1867 տի

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Այն ինչ Երևանայ Ժողովուրդը անհոգ դէմքով գիմումէ Ձեր Վեհափառութեան առաջը՝ ուրախութեան ձայներ թնդացնելով օդի մէջ, մենք մի քանի երիտասարդներ տխուր հայեացք ենք դարձնում Ձեր ուղևորութեան վերայ դէպ ի սուրբ Ամոռը։ Թո՛ղ ցնծայ Ժողովուրդը յանուն իւր հոգևոր Հօր. դա մի պարզ երեխայական ցնծութիւն է. բայց մենք քննելով, Ձեզ ներկայումս շրջապատող անյաջող հանգամանքները և այն սակաւութիւնը, կամ աւելի պարզ ասել չըլինելութիւնը հաւատարիմ՝ է գործունեայ անձանց, որոնց դուք պէտք է աջակից ունենայիք Ձեզ՝ Ձեր ծանրը պաշտօնատարութեան ժամանակ, չենք կարող մատնակից լինել այդպիսի ուրախութեան։ Մեր տրտմութիւնը անտարակոյս համակրութիւն պէտք է համարէք, Վեհափառ Տէր, համակրութիւն դէպ ի Ձեր ծանրաբեռնեալ անձն։

Հայոց Ժողովուրդը մեծ յոյսեր է դնում Ձեզ վերայ, հասկացող անհատները մեծ պահանջողութիւններ են առնում Ձեզանից և չեն կամենում մոռանալ թէ՝ «մի ձեռքը ծափ չի կարող տալ»։ Այո՛, դառն են, Վեհափառ Տէր, մեր այս խօսքերը, բայց տարաբախտաբար ճշմարտութիւն կայ դրա մէջ։

Արժանայիշատակ Ներսէս Կաթողիկոսի անունը տօնելի է դառել հասկացողների համար միայն այժմ, բայց իւր կենդանութեան ժամանակ այդ Վեհափառ ծերունին ի՞նչ վէրքեր չըստացաւ իւր անհարազատ զաւակներից, ի՞նչ անզգոյութիւններ չըտարաւ. ո՛վ ծանօթ է նորա կենսագրութեան հետ՝ պարզ կը հասկանայ մեր ասածը։ Շատ արգելակներ դիմացաւ դա և վերջը իւր նպատակները կիսակատար թողնելով և ազգի անմխիթար վիճակը ողբալով՝ փչեց իւր վեհ հոգին։ Ի՞նչ պէտք է առնել. այդպէս է եղել համարեա բոլոր մեր արժանաւոր անձանց ճակատագիրը։ Ահա այս տխուր անցեալը տագնապի ու տարակուսանաց մեջ է ձգում մեզ և ներկայումս, ըստ որում միևնոյն խոչընդոտներով է շրջապատուած Կաթուղիկոսական Ամոռը։

Մեր նուաստ հասկացողութեամբ, այս անմխիթար դրութեան մէջ, միայն յուսոյ մի նշոյլ կայ մեր ազգի ապագայ բարեկեցութեան համար, Վեհափառ Տէր, այն է՝ մոռաց սերնդի կրթութիւնը. միայն Ուսումնարանները կարող են ժամանակով փոխել մի, աստղ մեր Հայկական խաւար Հորիզոնի վերայ, բայց ոչ այժմեան ազգային Ուսումնարանները, որոնք դառել են կենդրոն վիճաբանութեան տգէտ և ինքնասէր կառավարիչների և բնա-

մուրեան գեղեցիկ սերնդի։ Ուրեմն՝ Վեհափառ Տէր, մեր կարծիքով, Դուք Ձեր ծանր և վսեմ պաշտօնը արդէն լցուցած կը լինէք՝ եթէ ապահովացնէք Ուսումնարանները նիւթականապէս, (թէև սուրբ Էջմիածնայ նիւթական կարողութիւնը օրէցօր նուազում՝ շնորհօք զանազան որոշեալնամոլ անձանց,) եթէ յիշեալ արգելառիթները ոչնչացնէք, եթէ տալք կանոնաւոր ուղղութիւն թէ իգական և թէ արական սեռի ուսումնարաններին՝ համաձայն լուսաւոր մարդկութեան գաղարներին, անցեալն անցել է և անմխիթար, զարգացած ներկայն պատկանում նոյնպէս անցեալին, և միայն գեղեցիկ ներկայն է ապագայի բաժինը, որի զօրութիւնը անտարակոյս կախուած է սերմանողից և սննդողներից (որոնք նոյնպէս շատ սակաւ են)։

Մեր այս աղքատիկ սուրբ Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանը, որը այսօր Ձեր այցելութեանը արժանացաւ, բացուել է 11 ին Ապրիլի 1866 ամի և մի քանի երիտասարդների հոգատարութեամբ կառավարուել մինչև ցայսօր մեծ դժուարութեամբ։ Ցայտնի է ամենեցուն՝ որ այս Ուսումնարանը մի որևիցէ հաստատ աղբիւր չէ ունեցել և քանի՛ որ ծողովուրդը չի հասկանում իգական սեռի նշանակութիւնը թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքում իւր Ասիական տգիտութեան պատճառաւ, անկարելի է յոյս ունենալ Ուսումնարանիս հաստատութեան վերայ. միայն Վեհափառ Տիրոջ իրաւունքը կարող է պատսպարել այսպիսի մի թանկագին Տաճար՝ որի նշանակութիւնը բացատրել աւելորդ ենք համարում։

Վեհափառ Տէր, այս մի տարին մենք չենք ունեցել Տէր և չենք ստացել նորանից լսմայ շահացնելու համար, բայց ճանաչելով մեր պարտականութիւնը, քրտինք ենք թափել և վաստակել ենք։

Ահա՛ հաստատանում ենք Ձեզ մեր վաստակը և յուսով ենք՝ որ սուրբ Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանը՝ Ձեր հովանաւորութեան տակ կազատուի խափանուելուց, նախանձի և կրքերի աղդեցութիւններից, որոնք սպառնում են սորա ապագային։

Տէրոնը Ողորմէն Ջալալեանց։

10 ին Մայիսի 1867 ամի
Եջմիածնում։

Գովք Ներքինողլուի յապաստան շնորհաբերէ Եկեղեցոյ-ին

Աղօթաշարքեալ Հայրապետի Տեառն Տեառն Գէորգայ Էջմիածնի Կաթողիկոսի ազգին Հայոց։

Բերկրեա՛ Սիօն՝ զշնոյ փառաց՝ մայր ուենչալի,
Դու սիրասանձ՝ հարսն լուսոյ՝ Հօր անմահի,
Ճիւ օրհնութեանն՝ ընտրեալ Տէր սուրբ՝ Գէորգ արհի,
Քոյդ յարմատոյ՝ շառաւիղեալ՝ բոզբոջ բարի։

Հանգոյն լուսոյ լուսաւորչին ի շրջան,
Ի կոյս կայից՝ յաճախութեան՝ խմբի մարդկան,
Գերապայծառ՝ փառօք պատուեալ՝ վայել շական,
Ի սուրբ յԱթոռն՝ վեհ բարձրացեալ՝ Լուսաւորչեան։

Ծափ զծափի՝ հա՛ր բերկրանօք՝ անտիրապատ,
Զնաշխարհիկ՝ Լեա՛ռն ձիւնափայլ՝ դու Ա. բարատ,
Եւ դու Տապա՛ն՝ բազմազարեան՝ ծերունազարդ,
Զերդ ի նուագ՝ հնչեա՛ գողտրիկ՝ հոգւով զուարթ։

Արիւնափայլ՝ նոր արշալոյս՝ Հայկեան տոհմի,
Յառաւօտեանս՝ պայծիկ ծագեալ՝ ի շող փայլի,
Ի նոր գարնանս դու վարդ փթթեալ՝ յոյժ խնկելի,
Գեղածիծաղ՝ փունջ մանուշակ՝ բուրաստանի։

Ցնծայ այսօր՝ մայր Հայաստան՝ որդւովք բերկրեալ,
Պերճ զոսկեհուռ՝ հանդերձ շքեղ՝ անձամբ արկեալ,
Զի յայս դար նոր՝ Լուսաւորիչ հանդիսացեալ,
Հայր մեր Գէորգ՝ վեհ Հայրապետ՝ Աստուածարեալ։

Ողկուզարեր՝ ուղէշ հէքեաղ՝ վարսաւորեալ,
Յորթն լերկրի՝ ըստ Տեառն բանի՝ իսկ հաստատեալ,
Որով՝ հոգեք՝ վեհ Հայկազանց յոյժ զմայլեալ,
Հրճուին սիրով՝ և ցնծութեամբ՝ ուրախ լերկրեալ։

Աշակերտացս՝ փոքու խմբի՝ ձայն աւետեաց,
Բարեյորդոր՝ խրախոյս ջանից՝ մերոց ուսմանց՝
Աստուածընտիր՝ երկրորդ Սահակ՝ վեհ ճոխպանձ,
Երկնապարգև՝ շընորհաձիր թագ պարծանաց։

Ոյր վասն և մեք՝ հապա մանկունքս՝ Թորգոմեան,
Ներհիւսեսցուք՝ ի յերփնագեղ՝ և կարմիրիեան։
Պայծառ ծաղկանց՝ պսակ փայլուն՝ և պատուական,
Ի գուխ յարդոյ՝ Հայրապետիս՝ վայել շքեան։

Եւ բուրեսցէ՝ մերոց սրտից՝ սիրոյ մաղթանս
Առ Բարձրեալն Տէր. զի շնորհեսցէ՝ զնապաղական
Զերկար կեանս՝ սրոյ Հօրս՝ մեր քաջահնամ՝
Առ ի զուարթ լինել պարծանս տանս Արամեան։

Հ. Աբրահամեանց աշակերտ Հոգեւոր Դպրոցի Հայոց Երեւանու-
Գրիգոր Պէր Ասոգեանց Սէրգիսեան՝

Ի 24ն Փետրվարի 1868 ամի
Յերեւան։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ՈՂՈՐՄԱԾ ՀՈՎՈՒԱՓԵՏ։

Եթէ կայ իւրաքանչիւր մարդոյ կամ ամբողջ ազգի կենաց մէջ այնպիսի պայծառ և մխիթարական օրեր, որոնք ապագայի քաղցր յոյսերով կուրախացնեն մարդոյ կամ ազգի ներկայ վիճակը և կրտան մոռացութեան նորա անցեալ վշտերը, այնպիսի օրը ահա ծագել է այժմ և Հայաստանի հօրիզոնի վերայ։ Անցան դարեր մեր սիրելի հայրենեաց վերայ՝ լի ալեկոծ մրրիկներով. անցան նորանով և ազգեր՝ լի ոսերիմ թշնամանօք. իսկ Հայաստանը, որպէս պարտէզ անպտրիպ և անտէր, անկաւ օրհասականի անողորմ հարուածների տակ. ասպալեցան ըբարեր մրրիկնել ից նորա վսեմաշքաք գարեւոր ծառերը, չորացան զառնաշունչ հողմերից նորա մատաղահաս տնկիքը, կարկտահար եղան նորա քաղցրահամ պտուղները և ծաղկանց տեղ բուսան ամենուրեք փուշ և տատասկ։ Թէև շնորհիւ բարեխնամ հոգատարութեան ողորմած Կայսեր Ռուսաց դադարեցան մեր սիրելի հայրենեաց հօրիզոնի վերայ մահատարած փոթորիկները, տեղի տալով կենսարեր օդոյ քաղցրութեանը և անդորրութեանը, սակայն մեր հայրենի պարտէզը տակաւին կը կարօտեր քաջալերութեան, հմուտ և փութաջան մշակի, որ նա կարողանար տալ նորան հոգեւոր կեանք և պտղաբեր առնել նորան իւր բնական ընդքերով։ Օրհնեալ է օրս այս, զի Ամենաողորմած Արարիչը պարգևեց արժանաւոր Տէր Հայաստանի պարտեզին. ահա մատաղահաս տնկիք Ձերդ Վեհափառութեան, որոնք զիմել են ուրախալի սրտով, որդիական սիրով փաթաթուելն իւրեանց երկնատաք Հօր ոտներով, համբուրեն Նորա շնորհաշէն սուրբ Աջը, որոյ խնամատարութիւնից սպասումն իւրեանց ապագայ բարօրութեանը։ Եղբա և սրանց պէս հազարաւոր Հայկազեան մանկունք, օրհնաբանելով Վեհափառութեանդ շնորհալի ոտնամուտն ի մեր հայրենիս, պապակեն բարոյական մատակարարութեան և յուսան, որ Ձեր Հայրական սրտումդ, ի մէջ այլոց հոգատարութեանց ազգիս՝ ծանր և դժուար կառավարութեան համար, կայ յարգելի տեղի խնամատարութեան և սրանց համար։ Ասացի ծանր և դժուար կառավարութեան. արդարև՝ վարել մի ազգ, որը անգամ պատմական կենաց անցաղող հանգամանքներից ցիրուցան եղած, իւրաքանչիւր գաւառում, նաև իւրաքանչիւր քաղաքում ստացած առանձին բարքառ, առանձին ծէս, սովորութիւն, ընաւորութիւն, և միանգամայն ազգային յատկութիւններով տարբերված միմեանցից, կապել այդ ազգը սիրոյ կապով, կազդուրել նորա հոգեւոր կեանքը, պահպա-

նելով նորա լեզուն և Քրիստոսաւանդ սուրբ հաւատք արտաքին թշնամեաց աղդեցութիւններից և բարձրացնել նորան յառաջադիմութեան ճանապարհաւ այն պատուաւոր աստիճանին, որ նա կարողանայ ստանալ մարդկութեան ընդհանուր գերդաստանի մէջ արժանաւոր և օգտաւէտ անդամի անուն. արդարև՝ վսեմ է և ծանր պարտաւորութիւնդ այդ, որոյ կատարման համար կոչել է զՁեզ Վերին Նախախնամութիւնը։ Ներկայ 19դ ըստաւորութեան դարը, ինչպէս կենդանի վկայ շատ ազգայնութեանց յառաջադիմութեան, ապատումէ հոգևոր վերանորոգութեան և մի հին, տառապեալ ազգի, որոյ հայրենիքն է եղել օրօրան մարդկութեան, որոյ անունն է եղել երբեմն յարակից շատ աշխարհահռչակ անց.քերի։ Օգոստափառ մեր Կայսեր առատագութ խնամատարութիւնը Հայաստանի մի մասնում և մարդասիրական քաղաքագիտութիւնը միւսում՝, յուսով ենք, կերաշխաւորեն Վեհափառութեանդ բարեգործութեանց յաջողութեան համար, որոց երախտեաց զգացմունքը, ինչպէս կենդանի յիշատակարան, կանմոհացնեն Վեհափառութեանդ անունը մեր ազգայնոց սրտերում՝, աւանդելով զայն մեր ապագայ սերունդին և պահպանելով անջինջ և անմոռաց յաւիտեան յաւիտենից։

Յովհաննէս Ղազարեանց։

յերևան

(Յաւուր գալստեան Վեհափառ Կաթողիկոսին է Ռուսաստան յերևան)։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Յետ յաւերժայիշատակ Հայրապետին Հայաստանեայց Տ. Ներսիսի, զոր անապատոյն մահու յափշտակեալ՝ զողջոյն զՀայաստան արդուսք իւրովք ի հառաջանս հեծութեան ընկղմեաց, ընդ նմին զամենայն յոյս և զսկնկալութիւն ազգիս, չեղև և չերևեցաւ զք երբէք արմնութեամբ խնամատար, ժրաջան գործակիր ազգային փութագանաց։ Այլ ո՞վ աստուածային զաղտնեաց. մինչդեռ Հայք, և որդիք նորին այսպէս յուսաբեկ սատանէաք, յանկարծ իբրև արփի նորանշոյլ գեղով ծագեաց ի մեզ զՁերդ Վեհափառութիւն առաւել քան զսկնկալութիւն մեր լուսաւորեալ ճառագայթիւք։ Քանզի Դուք, Վեհափառ Տէր, խսկզբան անդ ընտրութեան Ձերոյ՝ քաջ կշռելով զնրչանչութեան նժար մեր, զիտացիք զմիջոցն, որով իրՁ և բաղ-

ձանք Ձեր, և յոյս մեր ունի պտակիլ փառաւոր եալ նպատակաւ։ Դուք իբրև ճարտար ճարտարապետ տանս Թորգոմայ, հիմն բարգաւաճութեան գիտելով զուսմունս և զդաստիարակութիւն, այժմ առաւել խնամ տարայք, և մեզ որպէսզի Ձերոց, որ յայսքան ամն չկարացին ջերմացուցանել զեռանդն, ջանք բազմաց։ Դուք խոհական ընտրութեամբ յայն հիմն եղիք զմեզ, որով տկարացեալ մնաց մերոց բացան աստարէզք ազատ ընթանալ ի տաճար անդր իմաստութեան։

Այժ Վեհափառ Տէր՝ չեն երբէք չափազանցութիւնք և զառանցանք մնաց, զոր մանկական շրթունք մեր անկեղծ խոստովանին, տեսիք յայնժամ ի շնորհաբեր գալստեանդ յառաջնում զչափ և զաստիճան լուսաւորութեան մնաց մերոց, արդ տեսէք յայլ իմն յեղափոխեալ կերպարան, որդեզիրքս Ձեր, որ հազիւ ընթեռնուին և եթ, արդ իմաստասիրեն պանծանօք։ Այս պարծանք են Ձերդ ընտրութեան Վեհափառ Տէր, որ զարժանաւորն շնորհելով մեզ խնամածու և դաստիարակ՝ բեղմնաւորեաց ի մեզ ըզբաղձանս Ձեր։

Արդ զայս շնորհս մեծ վայելելով ի խնամոց Ձերոց Վեհափառ Տէր, հեղուք զերախտագիտութիւն սրտից մերոց յոտս Ձեր և աղաչեմք, առաւելուլ ևս զգութ խնամոցդ, զի առաւել ևս պտղաբեր լիցի այգին զոր տընկեաց Ամ քոյ։

Ամենայն Հոգեւոր Դպրոցի Տաղարանի
Հայրապետական Գաւազանաւորաց

(Ի շնորհաւորութիւն հիշատակարանքս մասին Հայրապետական Պատրիարքի Եաղուբեանի ասելոյ Ցեղաւոր Գանձարանի երբորդի և աստի Տաճար գիրքս Ամենայն Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի։)

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏ.

Անձառելի են խորհուրդք ամենիմաստ տնօրէնութեանց Արարչին Աստուծոյ, որ անդադար փոխանակութեամբ իրաց տրտմականաց և ուրախականաց յաշխարհի աստ՝ հանապազօր խրատեալ զազգս մարդկան՝ միշտ կամի ուղղել զնոսա առ վախճան գերագոյն առ երանութիւնն յաւիտենական։

Քանզի բազմիցս տեսանեմք, զի ըստ անսահման տնօրէնութեան նորին յետ ցրտաշունչ և մահատիպ ստունամանեաց ձմերան՝ գեղապուարճ և կենսաբեր գարուն ժամանէ. յետ մրրկածուփ ալէկոծութեանց՝ տիրէ հանդարտութիւն. և զկնի տրտմութեանց և սգոց՝ բերկրապատարն յաջորդէ խընդութիւն. ըստ այսմ ահա և Եկեղեցի Հայաստանեայց՝ որ ի շրջանս երկուց անցելոց ամաց համակեալ ի մուխս այրիութեան, և ձեռն ի ծնօտի նըստեալ անմխիթար ողբայր, պաղատանաւն աղօթիւք զայցելութիւն ի բարձանց երկնից հայցելով, այսօր լցեալ երկնապարգև խնդութեամբ՝ ի բաց մերկանայ յանձնէ զքուրձ այրիութեան, և ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ՝ ընդ առաջ ելանէ շնորհաշուք պատկերի երկնաւոր և անմահ Փեսային իւրոյ Քրիստոսի՝ Աստուածընտիր Քահանայապետիդ։

Եւ զմարգարէականն առեալ ի բերան անպատում խնդութեամբ երգէ ցնծալով, և ցնծայ երգելով ,, Ցնծացէ՛ անձն իմ՝ ի Տէր. զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան արդարութեան. իբրև փեսայի եդ ինձ զպսակ, և որպէս հարսն զարդու զարդարեաց զիս,,։

Ահա այսպէս Մայրս մեր սուրբ Եկեղեցի շարժեալ ի հոգի յերջանիկս ժամու, և հրճուեալ երկնաձիր խնդութեամբ՝ զհոգևոր հարսանեաց զպար բոլորէ, և փառաւորելով զշնորհաբեր զպարուսա Աստուածընտիր Հովուապետիդ՝ լուսածին մանկանցս օրհնութեամբ և բարեբանութեամբ ընդունի զցանկալիդ իւր ի լուսակերտ առագաստ հարսնութեան իւրոյ ի սէր խանդակաթ և յարտասուս ցնծութեան։

Եւ տուեալ սիրելոյդ զհամբոյր սրբութեան և սիրոյ անհամբեր տենչանօք, զգերահրաշ իմաստնոյն բարբառի զբան գերագոյն. ,,Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ։ Եղբօր որդին իմ՝ ինձ, և ես նմա, որ հովուէն ի մէջ շուշանաց։ Ընդ հովանեաւ նորա ցանկացայ նստիլ, և նստայ. և պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում,,. որում՝ երգակցեալ անպատում ցնծութեամբ և մանկանցս առագաստի նորին՝ միաբանական ձայնիւ կոչեմք ասելով, ,, Օրհնեալ, եկեալ յանուն Տեառն,,։ Բարձրացի՛ թագաւորդ մեր յըշտեմարանս և ի գահոյս մեր, երգեսցո՛ւք զսէր, և ուրա՛խ լիցուք։,,

Բարձրացիր ի գահոյս Աստուածընտիր Քահանայապետ և արժանաժառանգ Գահակալ երջանիկ Առաքելոց և նախկին լուսաւորչացն մերոց Թադէի և Բարդուղիմեայ՝ և քաղմաչարչար Նահատակի սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի և նոցին երջանկապարգ յաջորդաց ի կառավարել և ի պահպանել զառաքելական, զսուրբ և զուղղափառ Եկեղեցի Հայաստանեայց ամենայն լրութեամբ իւրով, ըստ առաքելական և հայրապետական սրբոց կանոնաց։

Բարձրացիր ի գահոյս Շնորհազարդ սուրբ Հայրապետս, և ընկալ ի գլուխդ պատուական զօրհնութիւնն Աստուածային և զօծումն սրբարար իւղոյն յիսմենարիեան շնորհաց ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, որոյ անեղեւոյթ ազդմամբ յաղդային և ի սրբագումար ժողովոյն ընտրեալ՝ յառաքելականն այսօր բազմեցար յԱթոռս։

Եւ մեք որդեգրեալքս Ձեզ շնորհիւ ամենակալ Հօրն երկնաւորի և մարգասիրի նուիրելով ի ժամուս սրբոյ Աջոյդ զհամբոյր ջերմեռանդական սիրոյ՝ որդիական պատկառելի խոնարհութեամբ մատուցանեմք ի պատարագ ընդունելի զբողոքանուէր սրտից մերոց զհնազանդութիւն, զհաւատարմութիւն և զմտերմութիւն աստուածահաճոյ կամաց Ձերոց։

Այլ և խնկելով հանապազօր ի բուրվառ աղօթից զաղերս մաղթանաց մերոց առ ամենաբարձրեալն Աստուած՝ հայցեմք յամենառատ ողորմութեանց նորին, որպէս զի զԱյր Ամենայն մեր զԱմենաղնիկ սուրբ Էջմիածին և զՀայրապետութիւն Հայոց հաստատուն պահպանեսցէ մինչև ցկատարած աշխարհի հանդերձ արժանաժառանգ Գահակալաց. հովանասցի՛ ի վերայ Ձեր ամենաշնորհ Աջ Բարձրելոյն, որով յիրաւունս և յարդարութիւն ուղղեսցի Ամենայն Ձեր, և ողորմութիւն և ճշմարտութիւն գնասցեն միշտ առաջի երեսաց Ձերոց։ Շնորհազարդեալ պայծառացուսցէ զդաւազան իշխանութեան Ձերոյ ի կառավարել և ի պահպանել զյանձնեալն Ձեզ զբանաւոր հօտն Քրիստոսի, և արածել զնա ի վայրի դալարոջ, և ի ջուրս հանգստեան սնուցանել ի շնորհս Աստուածային պատգամաց ուղղափառ վարդապետութեամբ։

Զհովիւդ քաջ բանաւոր հօտի և զՀազարապետ Աստուածային խորհրդոց հաւատոյ զլինու վառեալ՝ յաղթական հանդիսացուսցէ Տէր Յիսուս Քրիստոս յասպարիզի հոգեւոր ճգնութեանդ ընդդէմ երևելի և անեղեւոյթ թշնամեաց հայրենի Եկեղեցւոյ՝ նշանաւ կենդանարար սրբոյ Խաչին և կենսաբարբառ Աւետարանաւ իւրով։

Պարգևեսցէ Ձեզ զկարողութիւն հոգւոյ և մարմնոյ. որպէս զի սրբութեամբ, արդարութեամբ և աստուածպաշտութեամբ քաղաքավարեալ ի մարմնի աստ ի շրջանս ամաց բազմաց՝ զուարթեալս կացջիք առաջի Քահանայապետին Քրիստոսի ի տիեզերական ի հրապարակին համարձակապէս ասելով ։։Ահա ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած։։։ Որում՝ օրհնութիւն, գոհութիւն, բարերանութիւն և փառք յանվախճան յաւիտեանս, ամէն։

Ո—սս—ցէք Հայ գրականո—ղեան ի հոգեւոր Դպրոցէ
սրբոյ Պաղտ—ղիկէ Էջմիածնէ
Յովհաննէս Վարպետ Էրզրումեան։

(Ի Վերապատչին ի Ռոստոմեանէ)

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Որոց խորհրդագրածք են աւետարեր պարգևաց մեծի աւուրս, զոստս Արմաւենեացն ուրախութեան առեալ ի բերան փութասցեն, վաղվաղեսցեն յայս հանդէս նուիրական և խորին իմն զգացմանբ եռանդուն սրտի խառն, ընդ ներբողական դրուագից շնորհաւորութեան, Ակնաննայաբանեսցեն զբարերարն գալուստ Աստուածագուիթ Հօրս մեր Հասարակաց. որում Հոգեկան տենչանօք առլցեալ թերևս ի վաղուց ժամանակաց՝ սպասելով սպասէր ընդ իւրոց որդւոցն Հարազատից ալէգարդ Նահապետն մեր Հինաւուրց ծերունին Արարատ. Ո՜հ, երջանիկ է օրս և երջանկաւետեալք արդարև, որք զՍորին Սրբազան շնորհացն արժանացան Համբուրել զկատարումն. կատարումն ասեմ Սրբազան Ցեանքն, յորում այսօր աչք, երեսք, և սիրտք մեր ի Նորոյ կենսագործեալ շնորհիւ աշխարհաշէն Այցելուիս, և միտք և Հոգիք մեր զօրացեալք ի վաստակս իմաստութեան Սորին՝ Հսկայաքայլ դիմեսցեն յայսմ Հետէ ի Հնձանս ազգի ազգի մակացութեանց առ ի ճմլել զբարոյական ողկոյզս և պատրաստել զզուարթարաբն գինի իմաստութեան և լուսաւորութեան տառապեալ ազգի մերում. որ ընդ խորով խաւարի խարխափի գերթ երեխայս անրարբառ և անոտն. որոց բարելաւութեանց սակս՝ ամենայն դժուարինքն ի դիւրինս և առապարքն ի դաշտս փոխարկելով քաջարթուն Հովուապետս մեր՝ ոչ ինայեաց զանձն իւր ի փրկանս բազմաց տարժանակիր և քրտնավաստակ ճանապարհորդութեամբ ի սառնամանիսն Հիւսիսոյ, և ըստ Հոգերգողին Դաւթի գնալով գնացեալ ընդ ծով և ընդ ցամաք և անձամբ Հասու լինելով բանական անդից և անդաստանաց զաւակացն ասեմ ինքեան որդեզրելոց, ապա ի Հովուականն իւր բարձեալ ի յուս գնիւթական որայս առ բարոյական դաստիարակութիւն եկեղեցական ուխտիս մերոյ, իբրև զժրաջան և ճարտար մշակ գալով եկն ուրախութեամբ ի ցնծութիւն մեզ Հայրատենչ որդւոցս՝ առ ի սերմանել զայնս ի բանաւոր յանդաստանս Առաքելական ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց։

Եւ զի՞արդ ապա ո՛չ կոչեսցուք զսա զմեծագործ զՀայրապետս մեր Ա-բրուսեակ առաւօտեան, որ ըստ նախասահմանութեան վերին Տեսչութեան, ծագեցաւ ճառագայթարձակ երևմամբ մեզ Հանուրց Հայկազանցս, ո՛չ ընդ առաւօտս լուսոյ՝ որպէս անքակտելի սահմանք են երկնային բիւրաւոր մարմնոց, այլ ի մթութեան Հասարակ գի՛ երոյ, յորում խանձարրեցեալ ազգ

մեր ողբալի տպիտութեամբ կառնալ կասի յիւրոյն առաջնոյ նախանձելի յառաջադիմութեանց. որոց սակս՝ իրաւամբ տեղի տայ խոստովանել ամենայն լեզուաց և բերանոց, զի այսօրինակ ծաղումն նորոյս Արուսեկի, մեծապոյն իմն ցոյց և հրաշք են անհուն ողորմութեան և անհաս խնամակալութեան ամենազօր Աջոյն բարձրելոյ, որ յայսպիսում՝ տխուր ժամանակի՝ ցոյց, լիացոյց զմեզ աներկբայ յուսով ակնկալութեան. որ բաց ի նիւթական լուսոյն՝ լոյս իմանալի ծագելոց է առ յինքենէ յազինս սիրեցեալ. որև ոգևորեալ զհողեղէն խարխուլ միտս նոցին լուսով այնր գիտութեան, ունի ուռճացուցանել և բարգաւաճեցուցանել զբարոյական կեանս և զանդորրութիւնս՝ որոց հաւատացան ի վերուստ ընդ հուժկու գաւազանաւ Հայրապետական իշխանութեան իւրոյ՝ առ ի ճանաչել զպարտս իւրեանց որ առ Աստուած, առ Հայրենիս, և առ Աստուածարեալ միակ Հովուապետս քաջ. որ ըստ Տէրունական բանին, ո՛չ խնայեաց զանձն իւր դնել ի վերայ բանաւոր ոչխարաց.

Եւ զի՞նչ մնայ մեզ ասել Սրբազան Հա՛ռք և միաբան ուխտի սուրբ Եղբա՛ք, ո՞չ ապաքէն՝ պար բոլորեալ զմեծագործ Հայրապետաւս, Աստուածային օրհնութեամբ և ի ձեռն շնորհաւորական ներբողենեաց՝ ի հոչակ հանել զշնորհաբեր գալուստ չնաշխարհիկ Այցելուիս, բարեմաղթելով ի վերին Տնօրութենէ, զի զՍա զարժանաժառանգ զԳահակայս նախկին Լուսաւորչացն Հայաստանեայց Թադէի և Բարդուղիմեայ, և Լուսաւորին հոգւոց մերոց Պարթևաշնին Գրիգորի, իրև զմէմ հաստատուն և անդրդուելի պահպանեսցէ ի զլուխ անկեան ի Տաճարի փառաց սրբութեան իւրոյ, և ընդ նմին բազկատարած հայցմամբ աղաչեսցուք զամենատատ ողորմութիւն նորին, զի տարրասցի ի նշխարս հոգւոյ և մարմնոյ Աստուածարեալ Քահանայապետիս, առ ի կազդուրացուցանել զՍա յԱստուածամերձ առաքինութիւնս վասն բարւոքն տնտեսութեան, զի երկայնմտութեամբ դէմ եղեալ ամենայն դժուարութեանց՝ քաղցրութեամբ հոգւոյ մարթասցի զազգի ազգի բարոյականութեան զսերմունս ողբ ընդ ձեռն ժրաջան Մշակիս սերմանելոց են յանդաստանս մտաց միաբանութեան սուրբ ուխտիս և մերազնեայ մանկտւոյն՝ ատոքացուցանել զմիոյն վաթսուն և զմիոյն հարիւր բաշխելով ազգիս կարօտութեան, յորում՝ և ժամանակի ոգի իմաստութեան և գիտութեան, ոգի զօրութեան ընկալեալ՝ զօրասցի սա անաչառ մանկաղաւ մեծիմաստ հանճարոյն իւրոյ՝ ոստաքանց առնել զհաստարմատ ընձիւղեալ ըղդաղձն դալկացուցիչ նորաբողբոջ տնկոց, որք բուսեալք են ոչ միայն ի վնաս նոցին՝ այլև ամենայն անդամոց մարդկութեան, որ մի և գլխաւորագոյնն է յամենահարկաւոր պարտուց Հայրապետական սպասաւորելի պաշտամանց.

Ի վաղճան ամենայնի, ի տիրուոյ անչափ և զառն վաստակոց Սորին, զոչնցուք ի մի բերան եւ անդուն սրտիւ, Թագաւոր երկնաւոր, օրհնեա՛ և զահպանեա՛ ընդ երկայն աւուրս զՀայրապետս և զՀայրապետութիւնս մեր, զԱզգ և զԵկեղեցի մեր, զամենայն զՄիութեանութիւնս Կաթուղիկէ Էջմիածնի, որք մակաղեալ ընդ թեւ օք քաղցր խնամոց ազգայոյս Հռիփսիմեանց ի Համբոյր սրբազան Աջոյն ընծաեան։

Սարգիս Վարդապետ Մելքոնեան

Ի 28 Փետրվարի 1868 ամի
ի Ս. Էջմիածին

(Ի հանդիսի Մայրենեաց ասացեալ ՅՀ Հեղարանի)։

Ցանգի՛ աշունչն շարժեցարուք աւետարանին երանութեան
Ի սրտս սնեալն զեփիւռ հոգւոյս ամենուկ յարտօսր թեզք փանդեուան։
Վարժեալք թէև յողբերգութիւն, ի սուգ, ի լաց տխրահնչակ,
Այսօր ի խինդ շարժեցարուք զիրաշիդ թաւիեալ քրդ տխրութեան։
Լուռ ասասանօր՝ լուռ քնարահար լուռ դու Արիւս կաց քրդ յերդոց,
Լուռ Պարնասեան և Մուսայից դասք ասա կացցեն միահամուռ։
Զի իմ՝ ևեթ այսօր քնար առնու գեղգեղ մեծանուագ
Բիւր սրտից Հայ որերոց կացեալ թարգման յուսափարագ։
Զայն հապա արկեալ առ ձեզ Հայրենազուկ մանկտիք Հայկայ,
Զձեզ՝ որ յօտար ցրուեալ յերկիր զՁեր Հայրենեաց ողբայք զբաղդ,
Հրաւիրեմ՝ յերկնապարգև ուրախութեանս յայս ի կրկէս,
Բաղդ յերկնից մեզ հաս այսօր, բաղդ բարձրելոյն կնքեալ Աջով։
Զ՝Մեղմենեանն առեալ ի յուս քնար մանկունք վեհին Հայկայ
ՅԱրարատ անդ ի Մասեաց ձեզ տուք զգաթն լաստատակ,
Ձեր շարժեցին փափուկ մատունք Հայաստանին հնչել ցծագ
Զաւուրս մեծի զայս երկնաձիր շնորհին զաւետ գերփառունակ։
Եւ դու Ոգի՛ Հայաս ոանեայց ի գառն սուգ նստիս դու ցեղբ
Լիք զՆիդ, լիք զԵրուաշատդ, լիք և զՈստանդ Վաղարշակերտ,
Հրաւէր առ Հայկազունս փութա՛ կարդալ յայս վեհ հանդէս,
Ցնծութեամբ տօնել զայս օր զնորածագեալն յՆեղէ մեզ։
Տառապանաց մեր լցաւ չափ, օն փութացին յայս վեհ հանդէս
Զբարձրելոյն օրհնել զԱնուն, որ այցելու նոր մեզ նեղսէս

Գիւրիեան կշռեալ Աչով դառն արտասուաց մեր փոխարէն
Սփոփիչ տառապելոց եւ Հոգեւորապետ զՀայր Գէորգէս։
Ընդ որդւոցս եւ Քեզ Հրաձուիլ վայել է արդ ով Հայաստան՝
Մանկազուրկ Մայրդ Թշուառ զըկեալ ի քոց բիւր պերճ փառաց,
Գրիգորեանց և Ներսիսեանց, զի որոց ձեռք մշտավաստակ
Ա.լաղդեաց նախանձելի զայրիացեալդ յարդարէին.
Ի տեղի օն անցանէ Մշակ Արիւն Տէր Գէորգէ,
Մշակեալ ի նոցանէ ծնեալասէր Մօրդ ի ծոցդ.
Նոր որդիս Քեզ և ժառանգս արժանաւորս յարուցանէ
Ընդ քրտունս Երանելեաց սրբոց և զիւրն խառնելով։
Տրամուիթեանդ լոյծ զԹախիծ, անց ի Հանդէս զու պար յառաջ
Խրախոյս քոյինածին Հայազարմից վառեալ յոդւոջ,
Զի այդու՝ որ Հար վիրաք զ.քեզ Հանրավար բարձրելոյն Աջ,
Նոյն ահա քոց բիւր վիրաց Քեզ պարգևեաց զԲ·ժիշկս քաջ.
Եւ Դու ծնող Մայր մեր Սիոնի զտխրուիթեանդ ուրկ ի բաց քոզ,
Զակն ի ճակատ խուչապակ յառեաց վեհիս այս յուսաշող.
Ուր ցայսօր անձկակարօտ ճեպիր ով Հարանդ պանծալի,
Սա ահա տիրահրաւէր՝ սա այն Փեսայ քո ցանկալի։
Փեսայազուրկ Հարսիդ լուսոյ վազուց ի սէր սա խանդակաթ
Զ.Աչքուդդ փոխել զսուգն ի խինդ ի տար ծագաց դոյ աշխարհի,
Քեզ ահա սա նոր Գրիգոր, սա նոր Մեսրոպ և Խսահակ,
Զ.շնչ Հարսիդ վայելչասղէս սա պճնեսցէ ոչ անազան։
Եւ զու Հայր, որ Սիոնիս նորոյ ընդ զրունս գործես մուտ,
Որպէս երբեմն անդ ի Սաղիմ օծեալն յերկնից Աքբայ փառաց,
Ընդ ծերոց և տղայոց երկնաղղորդ սուրբ Ոգեաննայց
Ընկալարուք ըզմեր օրհնից երդ Ա.յցելուդ նոր Սաղիմեայցս։
Զեր օրհնեալ լիցի գալուստ ի խոնարհ յարկ Թորգոմազանց,
Օրհնեալ Զեր մուտն ի զրունս նոր Սիոնիս որբացելոյ,
Օրհնութիւն և ի բարձունս անեղ Աջոյ Հօր Բարձրելոյ,
Որ ուահահորդ որպէս երբեմն մեծ Մովսիսի և Զեզ եկաց։
Ողջոյն Քեզ նոր Փեսայիդ ձօնէ Աղրիս այս սուրբ Տաճար,
Ուր ցայսօր սիրտ ի կարօտ կայր և մնայր անմխիթար.
Արդ Քեզ բաց սիրահարուստ սիրոյ սորին՝ է առաջաստ
Արի, մուտ դու Արժանիդ սիրոյ սորին սիրուն Փեսոյդ։
Ողջոյն Քեզ սլազգեստեալն և Հայաստան ձօնէ ով Հայր,
Ոյր ոգւոյ յոտիցդ հպել լուծան թ խիստ բաղմադարեան։

Եւ ամբիծ ոսկերք սուրբ Հարց Թինդ ի խոլ ոչ առին շէրմանց,
Փառաղուրկ ի տանս Հայկեան ըզԳործակիցդ տեսեալ ինքեանց։
Մեր ի Քեզ մեծ են յոյս մեծ ակնկալեաց զու մեր Ղամբար,
Ի Քեզ՝ որ ի վիշտ ի ցաւ մշտամոլար Աղգիս Հայկեան,
Եւ սուրբ այս տանս տէրունեան վեհահանճար քաջ ղեկավար՝
Անեղին առաջնորդեալ մատամբք այսօր Դու կացուցար։
Քև Հայր սուրբ՝ Քև ակն ունիմք վաղուց ի մէնջ սրացեալն ի տար
Դարձ ի մեզ ոսկեզարեան երանաւէտն առնուլ շրջան.
Նոր Ներսէսք, նոր Գրիգոր, Մամբրէ, Կորիւն, Դաւիթ, Եղնիկ,
Նոր Յովհան, նոր Կոմիտաս վերածնելով Տանս Գրիգորի։
Գայք, խռնիմք առասիկ ի տար ծագաց Հայաստանի
Վաստակեալք ի զառն վշտաց ճնշեալք ցաւոց ծանր ընդ բեռամբ
Անտերունջ սերունդքս Հայկայ յուսով ի Քեզ գտանել դիւր,
զԱջ գթոյդ կարկառ մաղթեմք՝ զտառապեալս հանգուցանել։
Փոխան շքեղ ապարանից և հոյակապ պերճ քաղաքաց
Պճնեսցի մերս Հայաստան բիւր դպրոցօք պէս պէս ուսմանց.
Յընդհանուրս ծաւալ ի սիրտ վառակացին ուխտ գիտութեանց
Եւ զովասցին սրտից պատուք ուսումնատենչ մեր Հայորդեաց։
Տարացրուեալ ծագաց ի ծաւս Գրիգորեան փոքու Հօտի՝
Ի փարախս սուրբ տաճարիս ի Հայրենեաց քաղցր Հովանիս,
Նախնաւանդ սուրբ Կրօնիւք պատսպարեալ ի կարգ ամբիծ
Տալ մակաղիլ ընդ Հովանեաւ Հօրդ ցոյց Հովուականի։
Պարտեսցի Նենգ, անօրէն, խորտակեսցի աջ բռնակալ,
Եւ յընթանուրս երանաւէտ սուր ընթացցի՝ արդարութեան.
Տար ի բաց օ՛ն մերժեսցի խաւար մտաց, լուծ գերութեան,
Ուղղեսցին և մեր հոգւոց, սրտից գնացք յօժարութեան։
Այս ահա այս մեր վիճակ և այս ի քէն ակնկալիք,
Առասիկ այսուհետև Ձեր Սրբութեան և եթ պարտիք՝
Մնայ Հայր նոր մեզ անխութ հորդել շաւիղ արդարութեան
Ի պէս պէս լոյս գիտութեանց փայլեալ զաշխարհ մեր Հայաստան։
Համբարձեալ և Համիշխանդ երանելեաց մեր Հարց սրբոց,
Թէ նոցին համաշաւիղ ընդ ասպարէզն քրտանց երկոց
Ցանդուլ ի քիրտ բերիք՝ ի նոյն սէր վառելով և զՁեր հոգիս՝
Ի նուէր Աղգիս և Ձեր բոլորանուէր տալով զկեանս,
Եւ Ձեր Հայր նոցին պսակ բոլորեսցի ի սուրբ ճակատ,
Ձեզ՝ նոցին և ի յերկինս պատրաստեսցին փառք յաւէրժեան.

Ձեր անմահ յարերդ քնարաց զուարթնոց ի շար կացցէ անուն,
Ի յաւէրժ փառս մեծապանծ պարծեսցի Ձեօք Թորգոմայ Տուն։
Համբաւման և Մոսխիսի խաղաղութեան թէ զսուրբ պատգամ
Ցիմանալի սուրբ Սինայէ տանս առբերցես Ասքանազեան,
Եւ Ձեզ ուխտցուք Հայկեան մանկունս շքեղ անուան Ձեր յիշատակ
Ցերախտապարտ ի սիրտ յոգի զրոշմել անջինջ ցյաւիտեան։

Բազդատաբ Ա-ագ Սարգիս-ագ Մանուկեան։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՑՐԱՊԵՏ.

Բարեբաղդ համարիմ զիս այսօր ի հանդիսանալն իմ արտայայտող ամենայն սրտային հաւատոց և մտերմական սիրոյ համախմբեալ ընկերաց իմոց, որք զշնորհաբեր մուտ Ձեր յայս տուն մտաւորական լուսաւորութեան զարգացման մերոյ շնորհաւորեալ ի սրտէ որդիական հոգեհարազատ մտերմութեամբ և մատուցեալ զհամբոյր Տեառնաւոր սուրբ Աջոյ Ձերոյ՝ խնդրեն ի ձենջ Հայրապետ մեծ բարեհաճել ընկալեալ զայս անկեղծ սէր նոցին իբրև զբոլորապտուղ նուէր ի մատաղատունկ մանկտոյն և յարգել զայն շնորհիւ Հայրապետութեան օրհնութեանց Ձերոց. զի չիք ինչ առաւել ցանկալի և փափագելի քան զոր բերան Աստուածաբեալ Քահանայապետիդ ունի բարեմաղթել վասն մեր։ Օրհնեցէք ուրեմն Վեհափառ Հայր զհամազգայինս մեր զամենեսին մանաւանդ զծնօղս մեր, որք ճանաչեալ զօգուտ և զշահ մտաւորական կրթութեան հոգան զպիտոյս մեր շարունակել զընթացս ուսումնասիրութեան մերոյ։ Օրհնեցէք զմեծ Կայսրն մեր, որ հայրաբար խնամէ և քաղցր ակամբ հայի ի վերայ մեր, բանալով առաջի մեր զճանապարհ օրըստօրեայն յառաջադիմութեան և բարօրելոյ զապագայս մեր։ Օրհնեցէք զտեսուչսն և զուսուցիչսն մեր, որք ջանադիր աշխատութեամբք իւրեանց մատակարարեն մտաց մերոց զպարարտացուցիչ իւղն և զզուարթացուցիչ զինին իմաստութեան, և մշակեն սիրով ի մատաղատունկ անդաստանի մտաց մերոց առ ի զարգացուցանել զնա և զարգարել զանազան պտղով ազգայ գործունէութեան և այլ հասարակական ձեռնարկութեանց։ Օրհնեցէք, Արքունի Դիւանապետ, զմատաղերամ մանկտին համախմբեալն ընդ յարկաւ այսր կրթարանի, իբրև ի ծառաստանի ուրումն, ուր շնորհիւ քաջարթուն մշակաց բողբոջի և կանաչաղդեաց զարդարի յուսով բաւականացուցանելոյ և զայլ պտղով այնր մշակութեան. օրհնեցէք ու-

բեմն՝ դարձեալ աղաչեմ՝ օրհնեցէք զնոսա, զի զարդացեալ նոցա և բարգաւաձեալ ի պանծալին յառաջադիմութեան և ի գովելին բարոյականութեան հանդիսացին պիտանի, որոց ակնկալու են ի նոցանէ՝ մանաւանդ ազգի իւրեանց և եկեղեցւոյ։ Իսկ մեք Ամենակալ Հայրապետ՝ պանդխտեալ որդիքդ մօրն Հայաստանի զաչս ի վեր ամարձեալ ի զահ ամենից Նախախնամողին մեծապատիւ Հայցանօք մաղթեմք ի նմանէ, զի զգաւազան իշխանութեան Հայրապետութեան Հայոց անընկճելի պահեսցէ. զամս երկարս և բարօրս շնորհեսցէ Ձեզ առ ի հովուել զժողովուրդ Ձեր խաղաղութեամբ, առաջնորդելով զնոսա ցկէտ գովելին յառաջադիմութեան և ազգային լուսաւորութեան։ Ուրեմն կեցցի՛ք Ամենափառ Տէր՝ միմիայն առ ի միսիթարել զընտանձնեալն ձերում տեսչութեան ի վերուստ Հօտն Լուսաւորչեան, կեցցի՛ք անսասան առ ի անսասան պահել զազգ ի չար ոսոխաց. կեցցի՛ք փայլուն և շքեղ փառօք և բարեհամբաւ գործովք ի պարծանս ամենայն Հայոց մանաւանդ մատաղերամ մանկտւոյն այսորիկ և

ամենայն ոլորտեկի Ձերոյ

Աստուածապատիւ Աստուածանուագ

Ի 27ն Ապրիլի 1867 ամի

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Յայս օր դարանիշ՝ յայս օր այցելութեան՝ թևակոխեմք հոգեկան սուրբ ցանկութեամբ ընդ յաւաջ պարունակողնդ զբարոյական լրութիւն կենդանութեան ազգիս, զմեր բացեալ զսիրտ ի դէմ Ամենափառ Քահանայապետիդ, ընդ հին արմատենեաց և տերևեալ ձիթենեաց Երրայեցւոց՝ խնկեմք ի շնորհաբեր Սրբազան զալուստ Ձեր զԱրդարէականն օրհնաբանք երգ,, Սփռեցան շնորհք ի շրթանց քոց, վասնորոյ օրհնեաց զՔեզ Աստուած յաւիտեան,,։ Ո՛հ, զի՞նչ յարմարագոյն քան զայս ժամ օրհնաբանեալ, յորում գեղեցիկս վստահանայ Ճիրակ ընդունել զայցելութիւն Հօրդ հասարակաց։

Տնկեալն ի ճանապարհի՝ ի ձեռս աւազակաց վիրաւորեալն այր, թէ և կենդանի, այլ՝ ոգեպատ, եղկելին այն Ճիրակ, պանծացեալն ևեթ շնորհիւ Հրաշակառոյց Մենաստանին Հառիճոյ և հոգևոր Դպրոցի նորին կաձուցելոյ ի բարենպաստակ և յերջանկայիշատակ ընկերութենէ կուսակրաց վառե-

լոց Հոգւոյ Հայրենասիրական և ազգասիրական, այլպահասակ՝ է զի՝ աց-
ցելութեամբ Սրբազան ազգասէր Հոմուսակնոցս, և է զի՝ ձեռն ի ծնօտ
յանմխիթար Համակի ի վիշտ ի խոտիանման վիրաց մեծագործ բարեաս-
նութեանց յոխելիմ Աշնամեաց արդունակ Հեառնահաճոյ ընկերութեան.
սակայն յուսայ մեծաւ ակնկալութեամբ ընդունել զայցելութիւն քաղցր
ակնարկութեան Հօրդ Հասարակաց, յուսայ և ներկայօրէն պատկել զնուրբ
ակնկալութիւն նոյն Դպրոցի ի լուսաւորութիւն զեղջկանն մանկանցն։

Վանիշն գիշերոյ վայրենին եղիցի անրադրութեան, յորում պարու-
բեալ գոռանիւր երբեմն ազգիս Հայոց պարծանացն փոյլատոն, գնալով
յանդ և ի ննջարան խաւարգնալ լուութեան, նոցին Ազգասիրական ճգունք
կարեկցութեան Հայկազեանս սեռի ասեմ՝, երբ արթնացեալ տեսանեմք ի
սիրտ և ի Հոգի Ասուածընտիր Հայրապետիդ, մինչ այն Հանդիսաւոր գլ-
ուխանի ասել ըստ Իմաստնոյն՝,, Իբրեւ եղբօրորդին ի պարտէզ իւր, և կերիցէ
զպտուղս ի ծառոց իւրոց ,, ։

Զեմք յերկրայս՝ Սրբազան Հայրապետ՝ զեմք, թէ դուք զայնպիսի խնա-
մարկական յանձնառութիւն, և զնոյն պտուղն բարգաւաճ շնորհացն բա-
րեաւանութեան հոտանոյշ խնկոց, բոլորելոյ ի գլուխ բարեհոչակ համբաւով
ցանկալի պարծանք համեստոհմեայցս ի Ա. Եհատիաւութեանդ կրել ի սիրտ
անիջմի գտանիք, առ ի տարածանել յազգային սերունդս Հերոմեանն
քաղցրիկ ակնարկութեամբ. քանզի ըստ սրբազան առաքելոյն՝ ո՞վ է յոյս,
կամ խնդութիւն, և կամ պսակ պարծանաց Հարազատ որդւոց Մօրն բա-
ստ անարատի, եթէ ո՛չ Դուք ի Տէր. ընկալջի՛ք զսա ի Տէր ամենայն խնդ-
ութեամբ. ուստի՝ խնդրեմք յԱստուծոյ զօրացուցանել զկամս և զխոր-
հուրդս Ձեր ի մեծագործ բարեմասնութիւն, ի շինութիւն Եկեղեցւոյ սրբոյ,
ի լուսաւորութիւն մանկանց նորին և ի փառս ազգի Հայոց այժմ և յա-
պագայ, ամէն։

Ա. Ս. Հոգեւորական Ազգասիրական Ընկերութեան Ընդհան-
խոնարհ ծառայ Մինաս քահանայ Տէր Պետրոսեան։

Ի 13ն Յուլիսի 1867 ամի
Ի Հօրս գիւղի։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Գեղեցիկ յանդգնութիւն մը՝ կը վերոյէ պատանեկական ջերմ արիւն կրող սիրտս, երբև հոգաւոր ալեք թեւթեւասոյր նաւը ծովուն լայնատարած երեսին վերայ, կը վստահացնէ անզգօն գրչիս ամօթագրգաց՝ բայց և համարձակ զիմօք ելնել Աստուածարեալ Վեհապետիդ հանդէպ և աղաչել սոյն համախուռմբ ժողովուած Հայաղն եղբարց հետ, որ ակնարկելով առ իս անարժանս՝ Հայրապետական ամենաքաղցր զթութեամբ, զօրացուցանէք զիս անվեհեր սրտիւ շնորհաւորելու անպատում բերկրանօք Աստուածառաք այցելութիւնդ Շիրակաւանայ տխուր սահմանին՝ որ այսուհետև պիտի զարդարէ իւր բարձրարերձ լերանց անզարդ և ամայացած գագաթունքն ու զառիվայրքը կանաչախիտ մարգագետիններով Տէրընտիր Քահանայապետիդ՝ իւր վիճակին մէջ երջանկաւոր մուտ գործելով, որոյ ծոցին մէջ թէև այս ներկայ ժամանակին մէջ չկայ այն ոսկեղէն դարու քաջակիրթ Հայ Մատենագրաց շարը՝ ոչք ելեւէջ կընէին բարձրատիճան ուսմանց և գիտութեանց հրաշախօս բանախօսութեանց հանդէսներուն մէջ, և Վեհափառ Տէրութեանդ վայելուչ և արժանաւոր դրուատներ կը մարթանային երգել. սակայն այս միայն, Վեհափառ Հայրապետ, այս միայն նուիրելով երկնառաք այցելութեանդ, կը յուսայ թէ ընդունելու էք իբրև զիւղնաքնայ՝ բոլորանուէր ձօն և առաջնապտուղ խայրիք իւր ծոցոյն մէջ պարունակուող Հայաղն որդւոցդ, այս ևս քաջ յուսալով որ՝ բազմաժամանակեայ խոր թմրութենէն զարթնելով պիտի տեսնէ իր կեղրոնին մէջ կանգնած անդրդուելի արձան ուսումնասիրութեան ի պարծանս և յաւէրժական յիշատակ աշխարհահռչակ Անուան սրբազնասուրբ Հայրապետիդ՝ ի սիրտ և յոգի իւր արդի և ապագայ Հայկազուն որդւոց՝ և ոչ թէ միայն հին Շիրակաւան, այլ անոր հետ բոլոր Հայաստանեայց երկիրն ևս, որուն այս ներկայ օրուանս մէջ կեցութեան և երջանկութեան յոյս և ճար ընտրուած է՝ Վեհափառ Տէր։

Ըստ որում ապաւինած է Ձեզ Ազգ մը՝ որ բազմադարեան կարեկցելի կործանմանէն և դարաւոր աւերանաց դառնավիճակ օրեր տեսնելէ ետև, կ՚յուսայ անկարող և համարեա բոլորովին խորտակուած անգամներով դիմել դէպի ամենաողորմած Հայրապետիդ հովանաւորութիւնը, իբրև ժայռէ-ժայռ հարուած ջախջախուն նաւակ մը կարօտ ապաստանական օգնութիւն խոստացող նաւահանգստին, և այլ ուրիշ ոչինչ ունի ժառանգութիւն այն անցեալ օրերէն, եթէ ոչ հին ի վեր տապալած քարինք հրաշակերտ քաղաքներու կարեկցական արտասուաց արժանի տեսարաններու, որոնք յանդիման ձեր բերելով ողբերգական տխուր եղերերգներով, կը պաղատի ըղ-

Ձեր Վեհափառ Տէրութիւն ուսումնական ճարտարապետութեամբ կանգնելու դարձեալ. որովհետև չունի այնպիսի ապաստանարան հղօր և բժիշկ հմուտ իւր ցաւոց՝ որպիսի զք Ձեր Աստուածարեալ Վեհափառութիւնն է բոլոր հողագնդին մէջ։

Եւ կարո՞ղ է.ք, այո՛. ըստ որում զօրացոյց զՁեր Անձն՝ որ Ոզիմպոսին գթութեան երկնակամարէն կարկառուելով դէպի Հայաստան՝ և բաւական համարելով անոր ողբերգական մրմունջքն ու հեծութիւնք, գտաւ իւր Վեհափառ Գէորգ ծառայն և իւղով սրբով օծեց անոր, որով և այց եկաւ ուրաւ փրկութիւն իւր Հայազն ժողովրդեան. որով և ընտրելով զՁեզ ի Գահակալութիւն իւր սիրելի Լուսաւորիչ Գրիգորին, շնորհեց Ձեզ անոր գաւազանը՝ որուն Ընդհանրական և Ծայրագոյն իշխանութեան ներքոյ պատսպարելու և ժողովելու ի մի խումբ Հայաստանեայց տիեզերատարած, ցիրուցան հօտը, որուն երկարաձգութեան համար կգոչէ բոլոր Հայութիւն կեցցէներու ախորժ աղաղակներ և ջերմ արտասուքներ բազկատարած թափելով աչերէն, կը բարեմաղթէ երկնից հղօր Արարչէն զօրացուցանել զՁեզ ի հովուապետութիւն Առաքելական հօտին մեծին Թադէի և գործակցել Վեհափառ Հօրդ ամենայն ազգաօգուտ ձեռնարկներուն մէջ. որով օրըստօրէ երջանկութեան վիճակ գտնելով մեր փառազուրկ Ազգութիւնը, տեղիք ունենայ պարծելու քաջարթուն Դիտապետիդ Անուամբ, որպէս և երբեմն յաւէրժական յիշատակաց արժանի Վեհափառ Նախորդիդ ժամանակ, և օրհնէ զՏէր երկնից Աստուածակիր խորաններուն և զՁեզ երկրիս մէջ։ Կեցցես, Վեհափառ Տէր։

Յակոբ Սարգսեան Փոմէռ-Իզմէռից։

Ի 15ն յուլիսի 1867 ամի
Սմիւռնոյ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Դուք է.ք լոյս աշխարհի. Դուք է.ք աղ երկրի. եթէ աղն անհամ իցէ, ի՞նչ համեմեցի. չունիմ յաղքատ մտացս բարդել և դիզել զհատընտիր ածականս յընծայութիւն Ձերդ Հովուապետութեան, որպէս զՓարիսեցւոցն զարտաքին սրբել զպնակին. այլ ի տուրբ սրտէ և ի ճշմարիտ հոգւոյ ընդ Եբրայեցւոցն մանկանց, զոր տարածանէին Ովսաննային առաջի զոստս ծա-

ռոց արմատեցաց ի նշան ուղիղ հաւատոյ, և տուրբ սրտի. զի զհոգի խոնարհ, և զսիրտ տուրբ ոչ արհամարհէ Աստուած։

Աստուածընտիր Հայր, ընդ ամենայն տեղիս ճշմարտութիւնն է բացարձակ, վասն որոյ ի հարկէ ստիպեալ՝ հանարձակիմ ասել, թէ՝ զվէրս ծածկել ի բժշկէ՝ պատճառէ զմահ. չեն պէտք կիսամեռ հիւանդքն՝ ոչ այլ ինչ, եթէ ոչ՝ զվէրս տարածեալ առաջի՝ կենդանութիւն հայցել ի բժշկապետէն. վասնորոյ վիրաբէր և ի տկար անկողնոցս արտասուաթոր պաղատիմք Հոգւապետիդ առաջի Քրիստոսագին ժողովուրդք Լուսաւորչականս Ազգի. ոչ ըստ Ղևտացւոյն սրտացս զայցելութիւն, որ անօգնական գտեալ՝ յոտն եհար անկելոյն՝ անցեալ մեկնեցաւ, այլ զՍամարացւոյն պաղատիմք ի Ձերդ խնամակալ Վեհափառութենէ, որ կարեկցարար մատուցեալ՝ ցուցցես զինեամն Հայկազեան անօգնական Ազգիս. կիսամեռ եմք, արդարև կիսամեռ. քանզի անկաւ կործանեցաւ սարիսպ բանաւոր Այգւոյն, բայց ոչ՝ կործանողք նորին, եթէ ոչ վարձկանութիւնք մշակաց. զի խաղաղութիւն տիրեաց ի նոսա. և մինչ հանգեաւ սրացաւ հոգի Վեհափառ անձնապահին Ներսիսի, ընդ նմին և սրացաւ խաղաղութիւն ճշմարիտ ի մերս ազգէ։

Բայց արդ՝ օրհնեալ է Աստուած, որ կրկին այց եղ և արար զփրկութիւն ժողովրդեան իւրոյ՝ յարուցանելով զբ ժիշկ և զՀովիւ այցելու՝ զՁերդ խրնամատար Սրբազնութիւն ի բժշկութիւն կիսամեռելոյն։

Ուստի զօրացեալ ի տկար անկողնոցս փութամամեալ զվէրս՝ զոստս ծառոց արմատենեաց առեալ ի ձեռս՝ ի սիրտ և ի հոգի շնորհաւորեմք զբարեբասատ զարուստ Ձերդ Վեհափառութեան, ընդ նմին և վերատաքեմք ի բարձունս զպաղատանս բարեհամբոյրս, հայցեալ ի նմանէ տալ Ձեզ հոգի անապատութեան, հոգի սիրոյ և ներողութեան, հոգի վրէժխնդրութեան, ընդ նմին և հոգի ընտրութեան, զի մի՛ ի հնձել դրանն՝ ի բաց խլեսցէ ցորեանն։

Յովհաննէս Կէնոպէլեան։

Ի 16ն Յունիսի 1767 թ.

Կիպրոս։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Քայ գիտեմ, Վեհափառ Տէր, որ Ձերդ Սրբազնասրբութեան շնորհաբեր և երկնառաք գալստեան առթիւ իմ և մատաղահաս աշակերտակցացս սրտերու մէջ խորագոյց ուրախութիւնը և ցնծութիւնը սոյն այս պատկառելի վայրիս մէջ անկարող եմ նկարագրել, սակայն ստիպուելով սաստիկ նոյն անպատմելի ցնծութեան զգացմունքէն՝ կ'խստահանամ քակել իմ դեռ ևս խակահաս մտացս և թոթափախօս լեզուիս կապերը և ուրախական սրտիս իմ ուսուցչացս և միանգամայն բոլոր աշակերտակցացս հետ ի միասին Վեհափայլ Այցելութիւդ կ'սլուստը պատկառագին դիմաց շնորհաւորելուց զկնի՝ խնդրել աղերսանօք որ Ձերդ Աստուածընտիր Հովուապետութիւնը բարեհաճի մեր այս փոքրիկ Հայասեռ երամը արժանացնել իւր Հայրապետական քաղցր խնամոցը և սուրբ օրհնութեանը, որպէս զի զարգանամք բարի ուսմամբ և Առաքինական վարուք, և ապագային պիտանի անդամներ լինելով մեր սուրբ Եկեղեցւոյն, հասարակութեան և Ազգին, պատկենք թէ Հոգևոր և թէ մարմնաւոր ծնողներուս բարեմիտ ակնկալութիւնները և յոյսերը։

Աշակերտ Ա. դասատան Սոդնէն Դոդրոյի Եղբարց Աշրաֆլեանց
Ալեքսանդրիայ Աբբեկեանց։

Ի 10 Յուլիսի 1867 ամի
Ալեքսանդրիա։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Վերատաքեմք առ Ամենարթարձրեալն Աստուած զ'ջերմեռանդագին մաղթանս գոհացողական աղօթիկս մերոց, որ անհասանելի կամօք իւրովք արժանի արար զմեզ հասանել յայս երջանկաւէտ ժամ և ի բարեպատեհ ժամանակ առ ի տեսանել զՁեզ Տեղակալ ազգայոյս Կաթուղիկոսաց արժանաժառանգ Կաթուղիկոս։

Բարձրացուցանեմք զանուն սուրբ փառաց Նորա յաւիտեան, որ Նախախնամական զթութեամբ իւրով ոչ անտես առնէ զժողովուրդ իւր՝ շնորհելով նմա Հովիւ ըստ սրտի իւրում, որ հովուեսցէ զբանաւոր հօտ իւր ի վայրի գալարուոջ աւետարանական լուսապայծառ վարդապետութեամբ մատակարելով ի ջուրս հանգստեան Աստուածային օրինօք սնուցանելով։

Հուսկ ուրեմն շնորհաւորեմք զԱստուածատաք զալուստ Ձեր ի Հայրենի աշխարհ մեր ի բարձր Հայաստան Տայոց գաւառի, ուր գաղթական Հայքըս բնակիմք։

Վեհափառ Տէր՝ թէև ժամանակաց Տէրն զրկեաց զմեզ ի քաջալանջ Պայազատաց և ի Թագաւորդ Ինքնակալաց մերոց ի Հայաստան աշխարհի, այլ ո՛չ խսպառ մոռացաւ զմեզ փոխանակ նոցա պարգևելով ի դարս դարս զարիաջան Հօտապետս, զազգացաւ Առաջնորդս, զԱստուածարան Պատրիարգս առ ի հովուել զժողովուրդ իւր ուղղախոհ մտաւորութեամբ ի կրօնս Աստուածպաշտութեան և յԱռաքինազարդ կենցաղավարութեան, մանաւանդ յայսմ անզորրաւէտ և ի խաղաղական միջոցի, յորում երկրպլխեան Արծուոյն լայնատարած թեւարկութեամբ Ամենողորմած Կայսրն Ռուսաց Աղէքսանդր Նիկոլայևիչի՝ պատսպարեալ պահպանէ զմեզ Աղդովիմբս։

Առ որ մաղթեմք, Տացէ Տէր Սաբաւովթ Նորին Կայսերական Մեծութեան առաւել ևս զօրութիւն ի խնամարկել և ի շնորհաբաշխել Ձեզ զամենայն բարեյոյս նպատակաց Ձերոց զկարևորն օժանդակութիւն, միանգամայն և սրտացաւ խորհրդական Անդամոց Ձերոց և Աղդախնամ Առաջնորդաց զգօնութիւն՝ հաղորդակից գտանել յամենայն պարագայս բարեխորհուրդ առաջարկութեանց Ձերոց. առաւել քան զայսոսիկ չկարէ յոդյոդել լեզու իմ զայլ ինձն ճահաւորագոյն զրուագս գոհացողականս, միայն խոնարհ երկրպագութեամբ յանձն արարեալ զՁերդ Վեհափառութիւն յամենազօր պաշտպանութիւն Բարձրելոյն, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեան։ Եւ զմեզ զամենեսեան զհոգևոր և զմարմնաւոր ժողովրս Հայազգի երամոց յանձնեալ յԱստուածընկալ պաղատանս աղօթիցս Ձերոց՝ մնամք Ձերդ Վեհափառութեան հպատակ և խոնարհ որդիք։

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԳԻՆԵԱՆՑ

Ի 24 Յուլիսի 1867 ամի

ՅԱխալտալաքի

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ապաքէն՝ քանիո՞ն տարապայման բարեհեն՝ որ ի մեզն մեռաց յուզմունք, քանիո՞ն տրտմիւն և թնդիւն անզուսպ կրից հոգւոց, զի՞նչ կատարիւն և խինդ սրտի սատանօր, այո՛, իրաւամբ այս. զի՛ չէր յանհնարիցն, զգալ խլրտիւն յերակունս, և անթիրունդ կալ սիրտ ի ծոցի, սակայն և զո-

ելէ՞ն ազկազկ շրմունք թոմոմվել ինչ զԹարգմանութենէ Նեղբին մարդոյն, որ կանխէն ի նա յառաջէր քան զբարբառ. այլ զի խիստ է սրտի ընկլուզելոյ յանդունդս հրճուանաց ժուժալ լռել ինչ խապառ, ցոր սակս քան լռել, զելթ հրկատող բանիւք գիտցիկ հօտէս թոմոմվել յանգիման Աստուածարկելոյդ մեծի չէր ինչ անճահի, առ ի ակահ լինել Ձեզ, թէ զոյս ոմանս գտանէք առտ ի Լուսաւորչեանն ծերոց մանկտեաց։

Այս խուսմբ փոքրաքանակ, Սրբազնասուրբ Հայրապետ, զկարի կարևորն իւր ի Նախագիտելիս, զԱստուածականն ասեմ զհաւատ, կառուցեալ ոչ ի յաւազոյն կոյտ, որոյ անհրաժեշտ էր կորուստ ի խառնելն յորդախաղաց անձրևաց և գետոց, այլ հիմնեալ ամրապնդեալ զայն յանձեռնհատ վէմն, զոր տեսանողն նախագուշակէր, քամահէ զայնօրն, ոչք բաղխէին առտի և անտի, ընթանայ ի դէմ եղեալ նպատակ իւր անխոչ և անխուժ, զգալոնաքնին խորոց խորհրդոց Աստուածականաց, զանծանօթացեալ հաւատով քան խմաստութեամբ։

Այս խուսմբ փոքրաքանակ, քաջապէս ակահ եղեալ, թէ չէր ոք ի հազարաւոր և բիւրաւոր մահկանացուաց, ձգողաց զայս շունչ երկրաւոր ի յոնգունս, որ ընդպահկեալ զարտաքնո

ողջունելով, ժառել ժառէ խանդակաթ զօրհնութիւն Ձեր և զքաջալերութիւն ի խորհրդաւոր ժամուս։

Այլ աղէ՜, Վեհափառ Տէր, իցէ՞ Ձեզ չզրկապնդել Հայրական խանթաղատանօք զայս խումբ փոքրիկ, խումբ, որ անձկութեամբ սրտի զգրկովք փարի զԱստուածարելոյդ, որ բերանաբաց և ոչ ձունձ ընդ ականջ պընդեալ, անձկայր լսել ինչ և ուսանել զկարևորաց կարևորաց ազգային ձեռնարկութեանց. և առ այս զի՞նչ, Աստուածընտիր Հայրապետ, զառհաւատչեայ կամէիք սիրոյ մերոյ, ահա մէք, ահա սիրտք մեր. զորս խորին ակնածութեամբ տարածեմք առաջի Ձեր. ո՜հ, մի՛ իցէ Ձեզ քամահել զսակաւութեամբք սոցա, ում հաճեցաւ Հայրն տալ զերկնից արքայութիւնն. սերմանեցէք ի դոսա զԲանդ Ձեր կենաց, հաւաստելով յայն թէ սերմունք Ձեր չէին անկեալ ընդ առապար և ընդ խոպան, այլ ընդ պարարտ և պտղաւէտ յանդս սրտի, որ զիտէր ընդունել զՀունձն ատոքացեալ ի հասկին։

Եւ ինձ իցէ՞ ի ժամուս, Քահանայապետ Մեծ, որ տաբօրինակ իմն զգայի յանձին զբաբախիւն սրտի, զորպիսիս չէր իմ երբէք զգացեալ, համարձակել ընդ համախուռն բազմութեանս, զանձն և զսիրտ որդիական ակնածութեամբ արկանել առ գարշապարս Ձեր՝ անձկացեալ ընդ Հայրախնամ գգուանաց կարկառեալ յիս նկատել զպաշտպանողական Ձեր զԱջ և զշնորհ։

Մ՝ապրիէոս Տէր Յովհաննէսեան։

Ի 24 Յուլիսի 1867 ամի

ՅԱխուլփուլակ։

ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐՔ ՀՈՎՈՒԱՊԵՏ.

Ապաքէն քանի՛ տարտպայման ցնծութեամբ զմնալին հոգիք Հայկական ի սուրբ արբեցութեան, որպիսի իմ բնաւ չէր զգացեալ՝ զոր զգաման այսօր յարեան Ճապաղիս. այո՛, ցնծութիւն, որ ուշ ի կուրծս ջնուացուցեալ հանդէս տայ խակամիտ պատանւոյս, վստահութեամբ ի Հայրականն ներողամտութիւն՝ ելանել յայս վսեմ ատեան բերկրալի յայցելութեան մեծի Քահանայապետիդ և պարզել զմտախոհ բանս հոգւոյս։

Այս դար ցնցողական և սթափեցուցիչ ի մտաւոր և ի հոգեկան թըմբրութեանց, մինչդեռ թերաբաց աչք Հայրենասիրի յերկինս ի վեր պշուցեալ պաղատանս ի բարձունս ծառացուցանէին յԱթոռ Ամենակարողին՝ վասն յառաջադիմութեան և լուսաւորութեան ազգիս, և ահա կամք վերին ամենաբարի նախախնամութեան՝ բաբեհաճ գտեալ ի Հայկականն սուրբ

եկեղեցի, ծագեաց ի նա լոյս լայնածաւալ ի ծաղկաւէտ լիրանց Պուրսայի, և ետ նմա զՍիւն Հաստատուն նուիրական տաճարի ազգային շինութեան զԱստուածընտիր Հայրդ հասարակաց, միակ պաշտպանդ ազգային բարօրութեան և յառաջընթացութեան։

Այո՛, Վեհափառագոյն Տէր, այն ազնիւ հուր և սքանչելի սէր ուսումնասիրութեան, որ ի Քեզ պայծառապէս վառեալ նշմարեմք այսօր, է միակ յօդակապ ազգաշէն ամենակարևոր գեղեցիկ սկզբանց, այո՛, և գանձարան մտաւոր ճոխութեան և բանականութեան. և այդ իսկ է ամենաքաղցր երանութիւն Հայկական սրտից, մանաւանդ՝ այնինչ հետսխոյզ եղեալ, թէ առաջին և ամենակարևոր գործ և միտք Քեր զբաղեցուցեալ ի վսեմ և ի ծանրակշիռ գործ լուսաւորութեան և դպրոցական կառավարութեան՝ և զհետ է.ք անձանձիր հոգւով յառաջադիմութեան նոցին, ընդ որս բաղդաւորութեամբ արժանանայ և մերս այս դպրոց։

Հայրենասէր Տէր, այս Դպրոց, յոր այսօր դարձուցեալ է.ք զհայրական քաղցր ակնարկութիւն Քեր, բաւականացեալ սակաւաքանակ արդեամբք, որպիսին է շնորհ և առատաձեռն ողորմութիւն Հայկական սրբանուէր հոգևորականութեան և ապգասիրի ումեմն ընակողի ընդ օտար աստեղք Մոսկվայի՝ Պ. Յովհաննիսի Ստեփաննոսեան Յովնանեանց, վարէ զընթացս իւր, ջամբելով Հայ մանկտեաց զ.քաղցր կաթն բարոյական և մտաւորական կըրթութեան, յ՚ուրաքանչիւր ամի մատուցանելով Հայկական հասարակութեան զ.քանի մի մտաբաց անդամս. և այս մատեղերամ ժառանգաւորք դպրոցիս, որք ահա կան ի Քեր առաջի, և պատկառելի ակնածութեամբ յուսան հանդիպել սիրալիր ակնարկութեան Վեհիդ, որպէս միակ բարերարի իւրեանց՝ եթէ արդասաւորութիւն սոցա չ՚ելցէ բաւականացուցիչ լուսանունդ ուշադրութեան բարեխնամ Ոյցելուիդ, գէթ մատուցէ.ք սոցա զզորով և զհայրական խրախոյս և օրհնութիւն չ՚հայելով ի սոցս մտաւորական և բարոյական թերութիւնս, քանզի յուսաք ի տկարէն զփոքրն ընկալնուլ։

Ուստի Գահանայապետ մեծ, տարածեցէ.ք ի սոսա զբարերար թևարկութիւնս Քեր, հեղլով ի սոսա զՔրիստոնէական սուրբ հաւատոյ երկնաշունչ վարդապետութիւնս և շնորհ, որով զարգացեալք ի հրահանգս կրթութեան իւրեանց, դրոշմեսցեն յինքեանս զգեղեցիկ անուն Հաստատիդ, մինչդեռ հնչի յաշխարհի Հայկականն անուն։

Ողորմածդ Բարեկենդանց։

Ի 24 Յուլիսի 1867 ամի

ՅԱխալցխայ

ՎԵՀԱՓԱՌԱԳՈՅՆ ՏԷՐ.

Ամբիտան բարեբաղդ կհամարի զինքը, որ զՁեզ այսօր իւր փոքրիկ ծոցին մէջ ընդունելու կարժանանայ. իւր բարոյական ցաւերուն փրկութիւնը գտնելու տարակոյս չունի, որ Դուք . . . երկնաւոր Վարդապետին Յիսուսի օրինակին հետևելով Ձեր հիւանդները անձամբ անձին տեսնելու կփութայք։ Բանաւոր այդիդ՝ Հայոց ամբողջութիւնը շուտով ծաղկուած կտեսնէք, որ անոր ապականիչ միջոցները արդէն վերցնելու կաճապարէք։ Ձեր փառացը աշխարհաբարոզ արձան մի լինելոց է Հայուն սիրտը՝ մինչդեռ անոր յառաջադիմութեանը Ձեր ամեն հանգստութիւնները կզոհէք։ Ուրգայ ժամանակ, որ ինչպէս մեծն Ներսէս, սուրբն Սահակ և ասոնց նմանները մեր ազգին մէջ, և Վինկենտիոս Պաւլոյեցին Եւրոպիոյ մէջ, փառաւորիք Ձեր արժանայիշատակ գործքերով, երբ Հայը իւր բարոյական և ուսումնական կենաց ասկայծեալ ճրագը Ձեզմով պայծառանալը յիշէ։

Այս լինել Ձեզ մաղթեմք ի Տեառնէ ըսելով կեցցես, կեցցես, կեցցես Վեհափառագոյն Տէր.

Յարութիւն Ամիրզեան

Ի 25ն Յուլիսի 1867 ամի

ՅԱՄԻՐԶԻՈՅ

ՃԱՌ

(Հրատարակեալ ի փաղանգաւորէս ատոր երգեցողութեան գեղեցիկ Վեհափառ Գէորգիոյ Կաթողիկոսի ամենայն Հայոց, յոգեւորական դերոյ Հայրապետի պատուոյ գրոցմամբ, և գերբերգանիկ Յաղերգք Սրբոյ Աստուծոյ Էջմիածնի Վեհափառ Տէրը։)

Ծափս հարեալ խնդան դաշտորայք ամենայն. երփնազարդ ծաղկամիք, ոսկեթել դալարիւք հովիտք զարդացեալ դեղեցկեանան ի տես խրախճանաց. ոսկեզոյն բուսովք զարդարեալ բլրակք հրճուին ի միասին ի ձայն ցնծութեան. և լերինք ամենայն պար առեալ ընդ նոսին երգովք և սաղմոսիւք կայթեն և ցնծան։ Մինչ ակներև նշմարին զայս ըղձալի տեսարան՝ փառաւոր գալստեան Վեհագոյն Հոգեւորապետի ազգիս Հայկազեան։ Ո՞հ տե-

սարան, զու տենչալի տեսարան, ոչչափ շատ են շատ քոյդ վտակք մեզրաձորան, ոչչափ բազում են զգացմունք ի քէն ծագեալ ցնծութեան, մինչ զի ոչ գրով ձևանան ոչ բանիւ այժմ ի տեսիլ գան։

Սակայն ցնծա այսօր ցնծա զու Եկեղեցի սրբութեան. ինդա այսօր և ուրախ լեր զու տեղի փառաբանութեան Ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեան. բերկրեաց այսօր ի բերկրութիւն մեծ՝ զու Տաճար շնորհաց եօթնարփեան. երգեա այսօր երգեա բարձրաձայն զերգս ուրախութեան հանդերձ սրբախումբ մանկտեօք բանաւոր հօտիս Տէրունեան։ Եւ ձայնակցեալ ընդ մարգարէին ասա այսպէս. «Այսօր է, զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ լիցուք ի սմա»։

Եւ արդ լուարուք լուարուք ո՛ ազգ իմ սիրական, զուք իմ հարք պատուական. մեք ևս մերկասցուք ի մէնջ զհանդերձս մեր սխրութեան, և արկցուք զթիկամիք մերովք զձորձ ուրախութեան։ Քանզի ահա եհաս այն օր ուսեան, ահա մերձեցաւ ի մէջ այն երջանկաւէտ հոսումն յաջորդական վայրկենի կենաց մարդկան. ահա ժամանեաց այն աւետալի ժամ, յորում յայց ելանէ ի մեզ առաքելաշնորհ Տեսչապետն մեր ժրաջան, շնորհափայլ Դիտապետն մեր արիաջան, արթնամիտ Հայրապետն մեր խոհական, հօտախնդիր Հովուապետն մեր բանաւոր հօտիս մարդկութեան, և Աստուածընտիր նորատապակ Գէորգ Կաթողիկոսն տոհմիս Արամեան։

Եւ էր սակս այժմ տիրապարգև Կաթողիկոսն Ազգիս իրրև մեծն Ներսէս և իրրև Աստուածատես մարգարէն Մովսէս ըղձակալեալ տենչմամբ յայց ելանէ ի մեզ։ Եթէ ոչ զմանկունս սուրբ ուխտիս բնակեցուսցէ ի վայրի գալարուոջ իւր հոգեշահ խրատուց, զպատանիս արծարծեսցէ ի յուսմունս ազգի ազգի գիտութեանց. զերիտասարդս յորդորեսցէ ի քրտնահոս պողոտայն ազգօգուտ աշխատութեանց, զարս և զկանայս, զծերս և զտղայս անսայթաք և անմոլար ընթացիւք պահեսցէ ի կարգի ճշմարիտ աստուածպաշտութեան սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայցս։

Որով անթերի ի գլուխ հանելով զիւր տիրաձօն իշխանութիւնն և անպակաս ընդով զհայրապետաւանդ զիւր պաշտօնն, յոյր սակս ասելոց է առաջի ատենին Քրիստոսի. Տէր ահա ես և մանկունք իմ։

Ուրեմն եկայք ո՛վ սրբազումար ժողովրդականք, շնորհաւորեսցուք այժմ զփառաւոր գալուստն սրբոյ Հայրապետիս։ Օրհնեսցուք և գովեսցուք սերկեան ինդառիթ այցելութիւն Նորին՝ որ առ մեզ։

Եւ աղերսմամբ ժտեսցուք յամենախնամ Աստուծոյս, զի յաջողեսցէ զգործս ձեռաց սրբոյ Հայրապետիս. լցուսցէ զինդրուածս սրբոյ Հայրապետիս. կատարեսցէ զազգօգուտ խորհուրդս սրբոյ Հայրապետիս. պարգևեսցէ

զերկարատև կեանս սրբոյ Հայրապետիս. և պարգևեսցէ զերջանկափառ Հայրապետն մեր Գէորգ ևս քան զևս անսասան ի պայծառութիւն Ազգիս Հայկազեան այժմ և յաւիտեան։

Յովհաննէս Եպիսկոպոս Էջմիածնոյ

Ի 25ն Յուլիսի 1767 ամի
Ամիլցիոյ տուսի։

ԵՐԳ

Յայցելութեան Սրբազանագոյն Կաթողիկոսի ազգային Հայոց
Տէրն Գէորգայ ասացուածք։

Ահա պակ մեր պարծանաց՝
Յերկնից վերուստ մեզ պարգևեալ,
Այցելութիւն գայ մեզ բաշխել
Շնորհս Փրկչին մեծարեալ։
Կեցցէ Տէր մեր՝ կեցցէ յաւէրժ
Պարծանք և փառք մեր Հայրենեաց.
Տանն Աստուծոյ սուրբ Հովուապետ
Կեցցէ յաւէրժ յաւիտեանց։
Ի նուէր խոնարհ մեր այս տաղերգ
Շնորհեմք Վեհիդ արդ խուռներամ.
Հայեաց մաղթեմք քաղցր ակամբ
Յայս մեր խրախ երախան։
Օրհնեալ է սուրբ գալուստ մեծիդ
Տէր Վեհափառ Հայր շնորհազան.
Օրհնեմք զՔեզ կեանս անգին
Այժմ անմոռաց յաւիտեան։

Հ. Գալէր Էմինեանցեան Վ. Էջմիածնոյ

Ի 26ն Յուլիսի 1867 ամի
Զմիլցիոյ

ՈՒՂԵՐՁ

Ամենայն ազգաբնակաց երկրի պատասխանի Այրարատեան Հայոց Ամենայն Հայոց յայցելութեան և Հիսուսեան Ամենազգի ազգին Հայոց յայցելութեան Տեառն Գէորգայ Զորբորդի։

Ա.

Որքան Հայկայ ահա նոր ժամ
Իջցուք ի հանդէս երամ երամ,
Ոգեալ ատէն ուրախաւէտ
Տեառն մերոյ զայց վեհաւէտ։

Զի ահա Հայր մեր ազգախնամ
Լցեալ ի տենչ ի սէր Հայկեան,
Բաշխէ սանիցս Ազգանազեան
Զկաթ ուսման և գիտութեան։

Եվ պատր առ մեզ յայցելութիւն
Զխնամատութեան կանգնեալ գսիւն,
Երախայս կարդալ Հայ զաւակաց
Մերկացելոց յիւրոց փառաց։

Այսուհետև ձայն խնդութեան
Գութամբ խառնել ընդ սիւք Հայկեան,
Տանել սփոել մինչ ի յորրան
Մինչ փարելին մեր Հայաստան։

Շատ են աւուրք մեր պարծանաց
Մինչ տեսանեմք Հայրն մեր գթած
Բարձրացեալ ի գահ առաքինեաց
Շնորհէ մեզ սիրտ վեհ Հայրենեաց։

Շտապեմք ապա մաղթել ատէն
Ցանշուք մեր երդ ազատօրէն,
Պահել զմեզ ընդ ձեռամբ Հօր
Ցորչափ Հայ զանուն կրեմք յօրէօր։

Բ.

Լո՛ւր Հայր երկնաւոր զեղջ մեր խնդրանաց
Զոր սրտի մտօք Հայցեմք քեզ աստէն,
Պահեա՛ զազգախնամ Հայրն մեր գլխած
Հայկական զրոհի որդեկացն ապաւէն,

Ի 25 Յուլիսի 1867 ամի
ՅԱԼԷՔՍԻՈՍ:

Ընտրեալ յատուած գրագրութեան Վ. Էհատիսա Պ. Էսքիճ Պոլսոյ-ղէկոսի ամենայն Հայոց

Ո՞ւր եմ ես. յանուն սրբոց Վարդանանց եկեղեցւոյ Հոյակապ ուսումնարանի տաճարի մեջ, իմ Վեհափառ Տիրոջս և Հոգևոր Ծնողիս այցելութիւնը կ'շնորհաւորեմ. Ի՞նչ ուրախութիւն և որչափ ցնծութիւն. որովհետև քանի որ իմ ազգայնոցս ունեցած թշուառ վիճակին՝ այն է առանց Հովուապետի մնալնուս վրայ որ կը մտածէի, յիրաւի սիրտս կ'մորմոքէր և աշխարհս ինձ համար խաւար էր պատած. բայց այսօր կ'տեսնեմ որ փարատեցաւ իմ սրտէս մթութեան մռայլն ու մառախուղն, տրտմութիւնն ու վիշտը. Այսօր բոլոր ազգայինքս իրենց սրտի ուրախութեան ջահեր լուսաւոր վառելով կ'հրճուին իրենց մեծի Հովուապետին գալստեան վրայ. Այսօր բոլոր բնութիւնն ևս կարծեմ իմ հետս հրճուալիր ցնծութեամբ բերկրեալ կ'խայտայ. Ուրեմն աւետիս Հայոց ուսումնասէր մանկտեաց. որ ահա եկաւ, եհաս մեր Վեհափառ Տէրը իւր իշխանական գաւազանաւ, Հայոց Արարատայ ամպաճեմ լեռներէն թեթև ընթանալով մեր ասպարէզն է հասած. թող պատրաստի ունենան իրենց դասեր, թող ցնծան հոգենորոգ բերկրութեամբ և բարևեն իրենց վեհ ծնողին գալուստը, ինչպէս արծւոյն ձագերը իրենց մօրը. թո՛ղ ձայնակից լինին ինձ հետ օրհնելոյ հանելու առ բարձրեալն Աստուած, որ Վեհափառ Տեառնս անսասան պահէ իւր Աթոռոյն մէջ. ամենազօր Աջը հովանաւոր ամպի պէս սփռէ ու տարածէ իր վերայ. որպէս զի ազատ մնայ յորոտընդոտ շանթից և ի կայծականց հրոյ

թշնամեաց. տայ կարողութիւն հովուելոյ իւր սեպհական ժողովուրդը խաղաղութեան դալար վայրերու և դաշտերու մէջ. որում՝ պարգևողին փառք և գոհութիւն յաւիտեանս, ամէն։

Ղ. ՍՈՂՈՄՈՆ Բ. ԱՂԱՊԱՍԱՊԵԱՆ

Ի 27ն Յուլիսի 1867 ամի
ՅԱԽԼՅԻՍ

ՁԵՐԴ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՕԾՈՒԹԻՒՆ,

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Օրհնեա՛լ է Աստուած, դարձեա՛լ ասեմք՝ օրհնեա՛լ է Աստուած. վասն զի երջանիկս տեսանեմք զՀայկազեանս ազգ. զի ունի նա զՁեզ՝ զարժանընտիր զլուխ սրբոյ և ուղղափառ Եկեղեցւոյ իւրոյ, հովանի և պաշտպան նմին յամենայնի։ Երջանի՛կ են, արդա՛ւն, Արամեան ազգինք՝ բնակեալք ի Վրաստան, զի տեսին և տեսանեն իսկ այսօր զ'ի վերին նախախնամութենէ պարգևեալ զՁեզանման Հայրապետ, առաջնորդող յուղիղ ասպարէզս առաքինութեանց և լուսաւորութեան հոգւոյ և մտաց։ Ցիրաւի, ունիմք իրաւունս երջանիկս կոչելոյ ընդ նոսին և զմեր փոքրիկ քաղաքի Հայասեռ բընակիչս. որովհետև ի սերկեանս աւուր, ահա՛ ի Տաճարի փառաց Տեառն, ուր, ըստ Դաւթեան ձայնին, վիճակեալ է Ձեզ, տեսանել զվայելչութիւն Տեառն տալ ի սմին, բազմեալ տեսանեմք զքաջ և զարթուն Հովիւդ և զՀսկողդ ի վերայ հոգւոց մերոց զՍրբազնակատար Օծութիւնդ Ձեր։ Եւ չէ՛, չէ՛ ընդունայն շնորհաբեր այցելութիւն Վեհափառութեանդ՝ փոքու Հօտիս Քրիստոսի. այլ բազմարդիւն և բեղմնաբեր յուսամք լինիլ վասն մեր, ի շինութիւն պայծառութիւն եկեղեցւոյ, ազգի և Հայրենեաց մերոց։ Ապա ուրեմն պարտաւորիմք վերստին գոչել. օրհնեա՛լ է Աստուած, և օրհնեալ եղիցի շնորհաշաւալ գալուստ Ձեր, ո՛վ Սրբազնասուրբ Հայրապետդ մեր։ Վասն զի մշտարթուն հսկողութիւն Ձեր և այցելութիւն, ի միջի այլոց, յանձն եղեալ ի վերուստ Հայրապետական տեսչութեան Ձերում՝ ազգի և վիճակաց, և ի վերայ մեր, մեծայոյս զմեզ կացուցանեն, թէ ունին նոքա լինել առիթ մեծամեծ շնորհաց և խնամոց վասն հոգևորական և աշխարհական դասուց փոքրիկ մերոյ քաղաքիս. քանզի ի նմանօրինակ այցելութենէ Ձեզանման Սրհնաց եղելոց՝ ի հարուստ ժամանակաց զուրկ գտանէաք.

Ցիրաւի, մեք թէպէտ փոքր եմք թուով, այլ այնու ամենայնիւ որպիք եմք Հօրդ բարերարի. մեք թէպէտ նուաստաբար հանդիսանամք առաջի Ձեր, սակայն հարազատ և հոգեծին զաւակունք գոլով Մօրս մերոյ. Լուսաւորչակերտ սրբոյ Միածնարնչի, ապաւինիմք ի մարդասիրական ներողամտութիւն Ձ. Եհատիաւութեանդ, և այնու քաջալերեալ՝ վստահանամք գոչել բախճան ձայնիւ՝ Ձեզ սպասէաք, ով սրբազնասո՛ր Հայր մեր և Տէր, Ձերոյին սպասէաք փառաւոր և ուրախութիւն վասն մեր գալստեանդ, որ պարգևելոց է մեզ զբարեկենդանութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Այսմ շնորհաց արժանացեալ ի վերնախնամ Տեսչէն, որ ի ձեռն բարւոյ հրեշտակի իւրոյ առաջնորդեաց Սրբազնագոյն Տեառնդ ի մեր խնամատարութիւն, իրաւամբ ունիմք աղաղակել.—Այսօր փոքրիկ քաղաքս մեր Դուշէթ, Նոր Երուսաղէմ հանդիսանայ առաջի աչաց մերոց. զի որպէս Երուսաղէմացիքն ընդ սուրբ Գալուստ աշխարհաւիրկչին Յիսուսի ցնծալով խայտային «զՈվսաննայն», գոչելով, նոյնպէս և մեք այսօր ուրախութեամբ մեծաւ խնդամբ ընդ փառաւոր և շնորհաբաշխ գալուստ Սրբազնակատար Օծութեան Ձերոյ։ Եւ խոնարհեցուցեալ զպարանոցս և զծունկս սրտից մերոց առաջի զթառատ Հօրդ՝ աղաչեմք.—ծաւալեա՛ առ մեզ զերկնաւոր օրհնութիւն Ձեր առ ի արժանանալ մեր Աստուածային անքննելի շնորհաց, լինիլ բարի մարդ և բարի քրիստոնեայ, և այնու գտանել զփրկութիւն հոգւոց մերոց, ի փառս երկրպագելի անուան ամենասրբոյ Երրորդութեանն. ամէն։

Ձերդ Սրբազնութիւնդ Օծութեան
ողջունողս ծառայ
Գրիգոր Հայոց Գուշէթեան
Գէորգ Ա. աղ. Տեղապահ Տէրտէրեանց։

Ի 4 Օգոստոսի 1867 ամի
Ի Գ. Դուշէթ։

ԱՍՏՈՒԱԾԱԲՆՏԻՐ ՀՈՎԱՆԱՊԵՏ,

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Եթէ ի դէպ էր լերին Սիսուոյ ցնծալ և հրճուիլ ընդ ի նմա բնակումիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Հայկական ազգի, հապա կարի իսկ ի ճահէ, լերանցն Կովկասու զուարճանալ որպէս ընդ ազատումիւն իւրեանց ընդ հզօր ձեռն զմեռատ Կայսեր ամենայն Ռուսաց Ալէքսանդր Նիկոլայևիչի, որ զխոպանացեալ և զանմատչելի ծործորս նոցա, մարդաբնակս և աշխարհաշատս արար, նոյնգունակ ընդ այցելումիւն Ձերդ Վեհափառութեան, որում՝ ի դէպ իսկ է ի նոսա վտարանդեալ ազգս Հայոց՝ իբրև հովիւ քաջ կալեալ զձեռանէ յարուցանել ի գլորմանէ, ոլք հանգոյն լերանցն ցարդ զրկեալ գոլով ի մշակումենէ սայրասուր ակօսաց մերձ էին ընկղմիլ ի մէջ փշոց, զուրախութեանն հնչեցուցանել զբարբառ առ Հայրդ հասարակաց, բարութեան լեցի գուշակ այցելումիւն Ձեր՝ մեզ տառապելոցս. օրհնեալ է շնորհաբեր գալուստ Ձեր յայս տեղի նժդեհութեան մերոյ։

Բարեպաշտօն ժողովուրդք. ո՞ զումարեաց զՁեզ յայսմ վարկենի յայս յարկ սրբութեան. ո՞ լցոյց զձեզ այսպիսի անպատում և բերկրապատառ խնդութեամբ, զոր նշմարեմ ի դէմս ամենեցունցդ. ո՛չ այլ ոք՝ եթէ ոչ գալուստ Վեհափառ Հօր մեր հասարակացս։ Նախահարք մեր յակամայիցն բռնադատեալ թողին զՀայաստան և գաղթեցան յոլորտս տիեզերաց, յոյր սակս մեք զրկեալք գտանիմք ի քաղցր Հայրենեաց. այլ զանվեհեր յոյս և զջերմեռանդն հաւատ տպաւորեալ ունելով ի տախտակըս սրտից՝ ոչ երբէք յետնեալ գտաք ի շաւղաց նախահարց մերոց, թէպէտ բացակայ գտանիմք ի Հայրենեաց, այլ ոչ զուրկ ի Հայկական ջերմեռանդութեանց առ ազգս և առ եկեղեցիս. յամենայնում աւուր յիւրաքանչիւրոց ի Ձէնջ անդադար լսի անյագ փափագ ի կառուցանել զփառաշուք Տաճար ի փառաւորութիւն Աստուծոյ և ի պարծանս ազգի փոխանակ ազօթատանս այսորիկ։ Թէպէտ իւրաքանչիւրոք ի Ձէնջ պատրաստ է ի գովանի նուիրատուութիւն, թէպէտ նոյն իսկ գաւառապետն քաղաքիս յարգոյաշուք Ղեներալ Լէյտենանդ Լոռիս Մելիքեանցն՝ ստիպեալ ի նոյն Հայկական ջերմեռանդութենանց, թողլով զիւր ծանրաբեռն պաշտօն, քանիցս անգամ՝ խորհրդակցեալ է ընդ Ձեզ և խոստացեալ ձեռն օգնականութեան կառկառել Ձեզ ի շինութիւն Տաճարի Տեառն, սակայն ախուր ըն շարութեան գտանէ միշտ զիւր արբանեակս, և ընդ այն զի՞ զարմա-

նայք, ըստ որում յամենայն գարս, յամենայն տեղիս և յամենայն ազգս ոխակալութիւնն ունեցեալ է զիւր դեն, ատելութիւն զիւրն, և երկպառակութիւն զիւրն. այլ ո՞ յաղթանակեաց ի վերայ ոխակալութեան և ատելութեան՝ եթէ ոչ որդին Աստուծոյ մարդն Յիսուս Քրիստոս։ Զերկպառակութիւն ո՞ հանգարտեաց ի Հայաստան աշխարհի, եթէ ոչ Լուսաւորիչն Հայաստանեայց սուրբն Գրիգորիոս։ Իսկ այժմ՝ ի մեզ ո՞ կարէ յանձն առնուլ զայդ պաշտօն։ Ահա նոյն իսկ Փոխանորդն որդւոյն Աստուծոյ, ահա Աթոռակալն Լուսաւորչին Հայաստանեայց, ահա կատարիչն փափագանաց ամենեցունցս, սա միայն ունի զայդպիսի խոշնդակս բացէ ի բաց մերժել և հաստատել զսէր և զմիաբանութիւն ի շինութիւն Տանն Աստուծոյ. սա ունի սկսանել և մեզ թողուլ զկատարումն։

Հովուապետ բարի, ներեցէք յանդգնութեանս իմում, մերկապարանոց բացայայտել քաջ բժշկապետիդ զցաւ հասարակաց որ օր ըստ օրէ տարբանայ յայսմ թեմի։ Թէև մառախուղ տգիտութեան ընդ ժամանակս պատէր զԱրարատեան գագաթովք, ընդ նմին անընդհատք էին և մեղմահնչիւն զեփիւռք ի հալածել զիսաւարն, իսկ աստ ի վայրի պանդխտութեան մերում՝ ի վիճակս ասեմ Աստրախանայ՝ ի հաստատութենէ վիճակին ցայսօր թագաւորեալ կայ աշխարհակուլ խաւարն տգիտութեան, մի՞թէ այսոքիկ են մեզ վիճակեալ յերկնուստ, զրկիլ ի Հայրենեաց, խորթանալ ի Հայաստանէ, ընդ նմին ընկղմիլ և ի խաւարի տգիտութեան. ուսումնարանաց անուն դունուրէք Յիշատակի լեալ ի քաղաքս, ուսուցիչ բնաւ իսկ ոչ. անգութ մահն զՄովսէս զրաւէ ի կենաց. Յեսու յաջորդէ զնա, իսկ ողբալի հոգևորականութիւն տակաւին մնայ ի ծառաւուտ անապատի հեռի յԱւետեացն երկրէ, իւրաքանչիւր ոք մեծայոյս խոստմամբք փքուռոյցս առնեն զմիտս հասարակաց, այլ կատարիչ ոք չիք ի միջի. Զեզ մնան Հայր, զառաջս առնուլ այսպիսում անվերջանելի հիւանդութեան, և զդեղ առողջարար տալ ի միխիթարութիւն Ազգի, որով անմահասցի անուն Ձեր այժմ և յաւիտեանս, ամէն։

Մինաս Քահանայ Մինասեանց։

Ի 1867 ամի է 6ն Օքտոմբրի
Ի Վլադիմիր։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՄԵՆԱՈՂՈՐՄ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ ՄԵՐ·

Տուք ինձ զսիրտ արի և զանվեհերութիւն, Հայրդ գթառատ, ի ճառել առաջի ունկնդրաց զօրհնաբանեալ զալուստդ Ձեր ի Տաճար սուրբ. և զմեր համայնիցն ի սուրբ և յանկեղծ մտաց բղխեալ զբարեմաղթութիւնս և զՀրճուանս։

Այսօր ցնծայ եկեղեցիս և զուարճանայ ընդ շնորհաբեր մուտս Ձեր յայս հանդէս բերկրութեան, այսօր համարիմք մեզ զմեծ բարերաղդութիւն և զանպատմելի ուրախութիւն հոգևորականաց և բնակչաց քաղաքիս, սակաւաթիւ տոհմիցս Հայկազեանց։

Այսօր զնուազս հնչեցուցանեմք զցնծութեան ընդ տեսիլ Վեհափառութեանդ, և փառս վերառաքեմք Արարչին՝ զի վերստին կանգնեաց զգաւազան Հայրապետական իշխանութեան։

Աղաչեմք զԱստուած, զի զՎեհափառ Տէրդ հաստատուն և յաջող երջանկութեամբ պահեսցէ յերկար ամս ընդհովանեաւ բազկի իւրոյ, զերջանկութիւն և յառաջադիմութիւն տիեզերաբնակ Հայոց։

Այսօր ամենեքեանքս, որպէս երբեմն Երրայեցիք ի գալուստն Փրկչին, նոյնպէս և մեք աղաղակեմք և գոչեմք "Ովսաննա, Վեհափառ Տէր, օրհնեալ, որ եկիր այսօր յանուն Տեառն"։

Ը-ատ ուրիշ-ատ Գ-էորգ Մելիքեանց։

Ի 1ն Օգոստոսի 1867 ամի

ի Մոսկու։

(Ընտրեալ նոսր փոն ղեկնուրկէփն փոքրոց վերծանուն ի գաւառին Մոսկուայ Սոր-ըբ Ընդա-ատմամբ Ը-ատ Ներկեցոց ի Ներքինոյս-ընեան քաղաքն-ընեան ժողովրդոց)։

Ո՛Վ ԲԱՐԵՊԱՀՏՕՆ ՈՒՆԿՆԴԻ՛ՐՔ

ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ, ԺՈՂՈՎՈՒՐԴՔ

Զայս աստուածահաճոյ շինութեան հիմնարկէքը՝ զոր պատրաստեալ ենք այսօր կատարել, յայտնի է ամենեցուն, որ պատճառ եղև այսմ, այ-

գեղութիւն անելն ի մեր քաղաք՝ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ հրամանով. որոյ յորդորեն Զերում բարեպաշտութեան թէ Զեզ հարկաւոր է ունել երկուց Եկեղեցեաց զաւթոջ երկու ուսումնարան վասն մանկանց Զերոց, զիտէք առ ինչ միտք, վասն զի լուսաւորութիւն առաջասցի ազգի մէջ, և պայծառութիւն Եկեղեցւոյ մէջ։ Գիտեմք, զի յայնմ ժամու ընդն մեր, մեզ ամենեցունցս ցանկալի էր տեսանել այսպիսի բարի նպատակը և բարի խորհուրդը Վեհափառ Կաթողիկոսի կատարեալ լինել, միայն՝ ոչ ոք գտաւ յայնժամ կատարող և առաջացուցանող զայս մեծագործութեան խորհուրդը։ Բայց միայն և ազգու յորդորանքը նորա ունայն ևս չանցաւ, այլ ներգործեցաւ ի մէջ սրտի բարեպաշտ իշխանի Գրիգորի Թուշմալեանց, ասեմ՝, մտերիմ Երեցփոխանի Աւագ Եկեղեցւոյս Տիրամօր, որ ի սէր ազգի իւրոյ խոստացաւ Սրբազնագոյն Կաթողիկոսին՝ կատուցանել յինքենէ քարեայ վարժատուն, (այսինքն իւրով սեփհական գումարաւ), որոյ միջին՝ զետեղիցէն երկու հարիւր մանկունք և ձրի ուսանիցին աղքատաց որդիք. վասնորոյ՝ զայն յորդորանքը Վեհափառի միտ բերելով, և ըստ յաջողելոյ Տեառն մերոյ Յիսուսի, այսօր ժողովեալ մեր Հոգևորականաց միաբանութիւնը եկեղեցական հանդիսիւ օրհնէ և հիմնարկէ զայս վարժատունը, վասն ծխականաց Հայոց։

Արդ աղաչեցուք զԱստուած, նախ՝ ինքն օրհնեսցէ զհիմնարկութիւնս զայս վարժատան, հիմնաւոր և հաստատ վարժատուն արասցէ, յորմէ ելանիցեն ուսեալ որդեգիրք, զի պիտանի լինիցին ազգի և եկեղեցւոյ իւրեանց։

Երկրորդ՝ Օրատատիրաւ Կայսերին մերոյ Ալէքսանդր Նիկոլաևիչին իւր բոլոր տաքն օրհնեսցէ և բազմամեայ կեանս պարգևեսցէ։

Եւ երրորդ՝ պատճառին այսմ հանդիսի՝ և կացուցման այսմ վարժատան Վեհափառ Կաթողիկոսին մերոյ Տեառն Տեառն Գէորգայ՝ որ բազմեալ կայ յԱթոռն Արարատեան Սրբոյ Էջմիածնի, իւր բոլոր միաբանութեամբ, հաստատ եղիցի ի պարծանս մեր և Զեզ Մեծապատիւ Գրիգոր իշխանիդ, վաճառեսցէ Տէր աստ, և ի հանդերձեալն. և միաբանութեան մեր հայցուածք, ընդունեսցէ և օրհնեսցէ զամենեսեանդ, ամէն։

Ամէն հանդանոյ Յովհաննէս Խրատրվեանց։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏ.

Սէր Ազգային և զիտակաց հասարակաց լցեալ տեսանեմ այսօր յերկրիս, և մանաւանդ ներկայ ժողովելոցս հանդիսիս սիրալիր խնդութեամբ առաջի մեծի Հայրապետիդ։ Եւ սրտեռանդն զոհութիւնս մատուցանեմք Աստուծոյ և փոխանորդիդ։ Եւ ես իբրև զիտղահար Հայկազեան գնդին հնչեցուցանեմ յունկն լսելեաց որդւոցդ Մօրն լուսոյ Կամուղիկէ որբոյ Էջմիածնի, ով հանդիսակիցք, բարձրացուցէք զաչս Ձեր ի վեր, և տեսէք ըզբաղմեալն յաթոռ Հայրապետութեան Արարատեան աշխարհի, զէքնաղ և զկերահոչակեալն ի Հուլցն, զմշտավառ աշտանակն եկեղեցւոյ զՀայրն հանուրց տեսիցս ներդոցս Հայկայ, զՍրբազնասուրբ Կամուղիկոսն Տիեզերական և միակ պարծանքն Ազգիս Հայոց։ Ուրեմն ցնծացէք ով Ազգ Աստանեղեան, զի վերստին կանգնեաց Աջն բարձրիլոյն զԳաւազան հոգևոր իշխանութեան եկեղեցւոյս, զոր ի նախասահման Տնօրէնութեան իւրում պատրաստեալ, պարգևեաց մեզ այսօր տեսանել երկրորդ Լուսաւորիչ Աշխարհիս Հայաստանեայց։

Ով Հայրապետդ մեծ, ըստ տուեալն Ձեզ ի վերուստ հոգեկան զօրութեանց, յուսամք բարձրացուցանէք զպպս և զեկեղեցիս մեր ի պատիւ և ի փառս Լուսաւորչեան Սրբոյ Ամենայն Էջմիածնի։

Ա՛ռաջ Սարգիս՝ Լեւոնի Դոմանեանցն։

Ի 10 Օգոստոսի 1867 ամի

Ի Մոսկուա։

(Ա՛ռաջ գովեստանոսկեան ասացեալ ի վերջ հիմնարկութեան Մոսկուայ Հայոց Հոգեւոր Դպրոցի հաստատելոյ ի յերան պատուական վաճառականն Լեւոնի Սարգիսեանցն Դոմանցվէ)։

ԱԶՆԻՒԱՄԵԾԱՐ ՏԷՐ

ՈՂՈՐՄԱԾ ԲԱՐԵՐԱՐ։

Նախ և առաջ մի տուրը պարտականութիւն է դնում մեր վերայ ամենազգամ նախանձամարդն Աստուած, որ մենք այսօր որպէս մի ազգի անդամք առանց որևիցէ մարդահաճութեան ջերմ սիրով միշտ բարեմաղթենք Ձեր արժանապատուութեան համար, և նուիրենք Ձեզ առ ի սրտէ մեր խորին շնորհակալութիւնը. ըստ որում ապգասիրութեան կայծերը օրըստօրէ թափ-

վելով Ձեր բարի զգացող սրտի մէջ, յանձնառու էք եղել ըստ ազգու յորդորանաց Վեհափառ Արարատեան Գահի Գէորգայ Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց, հայրարար խնամելու Ձեր ազգի աղքատիկ և որբ զաւակներուն և նոցա քրիստոնէավայել բարի զարգացման համար՝ հիմնարկել այս հոյակապ ուսումնարանը, որ ամեն Հայազգիների սրտերուն անջնջելի յիշատակարան պէտք է մնայ այն Ձեր ազգասիրութեան երախտիքը։

Երանի՜ թէ այդպիսի բարի զգացողութեան սերմեր թափվէին մեր միւս ազգակիցների սրտերի մէջ, որ նոքա պատկերացնելով իւրեանցը այդ պարզուղիղ հայելու մէջ՝ անտրտունջ ոգւով աշխատէին դէպի բարին մտածել. ըստ որում մարդս ստեղծուած չէ աշխարհիս վերայ միայն իւր նիւթական շահուն համար ծառայելու, այլ թէ նոցա սրբազան պարտքն է նախ՝ հաստուցանել իւր ծառայութիւն Աստուծոյ, երկրորդ իւր ազգին և հայրենեացը. բայց ի՞նչպէս կարող են հայրենեաց որդիք լինել այն անձինք, որոնց ականջին անծանօթ իւրեանց հայրենի լեզուն և մանաւանդ երբէք չէ եղած օգնական իւր ազգին և հայրենեացը։ Վասնորոյ գովելի և բաղմաց նախանձելի կհամարիմ այս բարի ընթացքը, որ հակառակ այնպիսի անձանց ցաւալի օրինակին՝ հաստատապէս զլուխ տանելով Ձեր բարի դիտաւորութիւնը հիմնեցիք այնպիսի գանձարան՝ որ մեր մանկանց երջանկութեանը դիտութեան ասպարէզ կբանայ, և նոցա եռաւոր սրտերի մէջ կվառէ հայրենեաց սէրը, և կզարգանան Ազգային դաստիարակութեան ուսմամբ նորահիմն դպրոցիս մէջ, և հայրենեացը պիտանացու անդամներ կպատրաստվին։

Ուստի դարձնելով իմ խօսքս դէպի Ձեզ ով հանդիսակից՝ ահա հընչեմ Ձեր ականջներին այն ուրախութիւնը և այն աւետիքը՝ որ ապացոյց կարէ համարել այս օրվան Ձեր սիրաժողով ուրախառիթ հանդէսը. և երկրորդ որ այս քաղաքիս հասարակութեան մէջ ծագել է արդէն մտաւորական կեանք, որ ապագայումը կունենայ մեծ նշանակութիւն ազգի յառաջադիմութեանը համար, և այն բարերար Աստուածը տայ որ այդպիսի բարի զգացողութեան սերմը աճէր բոլորեցունցդ սրտերուն. և այս բարի գործը չմնար առանց օրինակի, որ ապագայ սերունդքն ունենան պատճառ իւրեանց նախնեաց այսպիսի ազգաշէն գործքերի վերայ։

Նկատելով մեր ազգի այժմեան վիճակը՝ բաղդաւոր կհանդիսանայ մեր ազգը, որ իւր անհուն աշխատութեամբը կը ջանար յառաջադիմութիւն գտնել միւս իրա ժամանակակից ազգերի առաջևը, և այն աստիճանին հասաւ աշխատութիւնը նորա՝ իրաւ որ գոհաւ։

Երբոր ուսումնական լուսաւորութեան և դիտութեան վարդակարմիր արեգական հոգանին պատեցաւ աշխարհիս արևմտեան հորիզոնին վերայ, և

Նորա բազմաթիվ ճառագայթներն ծագեցան այն բարբարոս ազգաց սրտերի մէջ, արդարև շմերժեց և մեր ազգն այն լուսոյ կենսատու ճառագայթները, որոնք վերին տնօրինութեամբ Հասարակաստաշխ առատութեամբ կընծայէր ամենեցուն. այլ փութացաւ փարատել իւր տգիտութեան խաւարը, որ շրջապատած էր Հայաստանի մթնոլորտը. զրկեց ողջագուրելով զուսումն ու գիտութիւն, իբրև Հարսն զփեսայն իւր Հեռացեալ երգելով. "Ես եղբօրորդւոյ իմոյ և եղբօրորդին իմ՝ ինձ"։

Ուստի մեր երանաշնորհ Թարգմանչաց ճնաշխարհիկ վաստակներն ունայն տեղը չանցաւ. ըստ որում՝ Հայաստան դարձեալ մի նոր երիտասարդական ոսկեծաղիկ հասակ զգեցաւ, և նորա քարոզութիւնքն իբրև սերմն սերմանեալ Արամեան սրտերի մէջ՝ ծաղկանման գիտութեան վարդեր բողբոջեց. և այնպիսի բարգաւաճ երկիր դարձաւ նորա սիրտն՝ մինչ անգամ չկարողացաւ բարբարոս ազգեր արմատախիլ առնել նոցա այն սերմանեալը։ Եւ ի՞նչու կը մոռանամ յիշատակելու այս տեղ մեր նախնեացը, որոնք կարողացան այն բարբարոս ազգերի մէջ պահպանել իւրեանց սուրբ եկեղեցին, կրօնը և լեզուն, որոնք որ գեռ խորին կուապաշտութեան գժուարակիր լուծին տակ կհնձէին, և համբերելով զանազան վիշտերուն և մանաւանդ այն արիւնածարաւ բազմախողխող պարսկական սրերուն դիմանալով անխախտ պահեցին իւրեանց սուրբ եկեղեցին ի դրանց գժոխոց, և սուրբ հաւատոյ դրոշակը ծաղկազարդ լերանց վերայ փայլեցին։

Կրկին դարձնելով իմ խօսքս դէպի քեզ ո՛վ ազգասէրդ աղա Գրիգոր, դուք այնքան գրաւեցիք մեր սիրտն այսօրեայ ջերմեռանդ հոգատարութեան ազգային վերաբերեալ օգուտներին համար, որ անգամ չի դադարում մեր լեզուն գովաբանելու Ձեր ազգասիրութեան անունը։ Եւս բնաւ դադարելու չէ առհասարակ Հայազգեաց շրթունքներն Երրայեցւոց մանկանց նման՝ բարեմաղթելու առ Բարձրեալն վասն կենաց նորին Ա. Եհսափիսատութեան Արարատեան Գահակալի Տեառն Տեառն Գէորգայ ազգասէր Կամրջիկոսի ամենայն Հայկական ցեղի, որ զմածարար խնամելով իւր Հայրական ցանկալի ծոցին դաղթուած զաւակներուն՝ սկսեց այցելութիւն առնել, այն ժամանակ մեծ ազգեցութիւն ունեցաւ Հայազգիների սրտերուն, երբոր սերմանելով շրջակայից բոլոր Ռուսաստանի օրհնեալ տէրութեան Հայաբնակ քաղաքները, հիմնելով այնտեղ ազգային ուսումնարաններ, նորին Ա. Եհսափիսատութեան նպատակն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ տարածել լուսաւորութիւն ազգի մէջ. ուրեմն ինչո՞վ կարող է լուսաւորվել ազգն՝ եթէ ոչ ուսմամբ ու ազգային դաստիարակութեամբ։ Նոյնպէս ազգելով նոյն սերմանեալը Ձեր ղգացող սրտի մէջ, և համաձայն Ձեր նախկին խոստմանը, կատարեցիք այսօր հիմնարկելով

այս հոյակապ շինուածքը, որ ամեն անկիւններէն օրհնութեան ձայներ պիտի հնչեն ամեն ազգակիցներու ականջներուն. և Ձեր ազգասիրութեան անունն օրհնութեան գործի պէտք է դառնայ ամեն Հայ մանկանց շրմունքներու ծայրերուն։ Փութացէք ուրեմն ըսել տալ Ձեզ նոցա թմոմոսխոս Հայկական ձայները, և ապա կ՚քաղեմք նոցա ոսկեփունջ հոնձերի նման սակաւամասնեայ ուսմանց արդիւնքը՝ և կը նուիրեմք Ձեզ կորսուալից քմաց ի կերակուր։

Ա-ապ ապրիա-ապ Գ-էորգ Տէր Յով. Թ-ոմանեանց

1868 ամ 14 Ապրիլ

Մ-ոլդ-ով։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵ՛Տ.

Ո՞տայր ինձ այսօր զՀարտարութիւն Ապեղեսեան ճիշտ նկարագրել զուրախական զգացմունս հոգեպարար ցնծութեան սրտի դասուց հոգևորականաց և Հայազգի Հասարակութեան Աստուածապահ քաղաքիս, համնխուելոց յայս Տաճար Սրբութեան, զորս տպաւորեաց ի մեզ շնորհաբեր գալուստ Մեծի Հովուապետիդ, վառեցելոյ ի սէր Ազգի և Եկեղեցւոյ, ըստ օրինակի երջանկայիշատակ Նախորդաց Ձերոց։

Զի ահա այսօր վերին Տեսչութիւնն հաշտ ակամբ հայեցեալ ի բարձանց, ,, սքանչելիս արար ընդ մեզ և մեք եղաք բերկրեալք։ ,, Քանզի ոչ երբէք ցուցաւ մեզ ցարդ տարապրեալ որդւոցս ի ծոցոյ Հայաստանի բնակելոց ի Կովկասեան սահմանի ընդ պաշտպանողական գայիսոնաւ ամենաողորմած Կայսեր ամենայն Ռուսաց, այսօրինակ դէպք բարեպատահք և երջանկաբերք, այսպիսում արժանանալ անբուզական շնորհի, տեսանել զանձնազիր և զքաջ Հովուապետդ այց եկեալ բանաւոր հօտիս, որով զիտեալ շրջանկատ հայեցողութեամբ զհոգևոր պէտս մեր ըստ ծանրակշիռ պաշտաման մեծի Քահանայապետութեանդ՝ ունիք անտարակոյս մատակարարել մեզ զհոգւոյ սպեղանիս մխիթարութեան. զի աչք ընդհանրութեան ազգիս ի Ձեզ յուսան և հոգեկան իղձք բարենպատակ գործոց և յառաջադիմութեանց ի պայծառութիւն եկեղեցւոյ և ի շինութիւն ազգի ի Ձերոց հայրախնամ շնորհաց սպասեն պսակաւորել և բարգաւաճեալ տալ զպտուղս լուսաւորութեան ըստ իմաստուն առաջնորդութեան Ձերոյ զերեսնաւորն զվանականաւորն և զհարիւրաւորն։

Ազատէն օրն այս Հրաշափառ բար բեր եկաւորութեան Ձերոյ կացցէ յաւէժ անմոռանալի՝ անջինջ զրոշմեալ ի սրտերսն որոց և Հայոց մեր ամենեցուն. ուրնմն բարեհաճեցէք Վեհափառ Տէր՝ ընդունել զբազդս ակնարկութեանսն զոր զնաքեաց բան տեղոյս մեզոց մերոց ի շնորհաւորութիւն երջանկացուցիչ այցելութեան Ձերոյ և արժանաւորեցէք զմեզ Հայրապետական սուրբ օրհնութեան Ձերոյ։ Իսկ մեք ուրաշեալ զանձինս առաջի Ամենայն շնորհաց Նախախնամութեան, մնացեալք ի բոլոր սրտէ երկրպագել ի խաղաղութեան զանն կենաց Աստուածընտիր Քահանայապետիդ ի պարծանս Եկեղեցւոյ և ի միխիթարութիւն լրութեան Ազգիս։

Ընդ՝ամ՝ վերջապէս Տէր Նէիողայոսեան

Ի 13ն Օքտոմբրի 1867 ամի

Ի Ղզլար։

ՁԵՐԴ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.

Տակաւին շատ փոքր ժամանակ է անցեալ, Ձերդ Վեհափառութեանդ միտքն հաւանութեանդ ազգիդ բնորոշեցնէն, ի կատարումն մի մեծ և բարձր պաշտօնի, որ արդէն ահա վաստակեալ է մի երևելի անուն սիրոյ և հոգեւորական ուսումնականութեան և լուսաւորութեան։

Աստուծի Հայրական ուշադրութիւնը, Ձերդ Վեհափառութեան, մեր վարժատան վերայ կզօրացուցանէ և կընդարձակէ մեր ուսուցիչքը, բարեխղճութիւն և աղնուաբար աշխատելու յօգուտ մանուկ ուսանողաց, որք զոլով՝ ըստ մեծի մասին, յաղքատ հասարակութենէն տեղւոյս քաղաքի, կյաւելացուցանեն իւրեանց պարապմունքը դէպ ի վաստակումն այն ուսումնական զարդ դիտութիւնքը, որով կկարողանան ապագայում օգտաւէտ լինել իւրեանց և իւրեանց ծնողաց համար, և ըստ այսմ կուսանին լինել հլու որդիք ազատիչ կայսեր Ալէքսանդրի և Հայ հայրենեաց։

Ընդունեցէք, Ձերդ Վեհափառութիւն, մեր ամենից, որ այս տեղ ժողովեալ կամք, մեր յանկեղծ սրտէ խորին շնորհակալութիւնը, վասն հոգեւորական այցելութեան և ուշադրութեան մեզ վերայ, և օրհնեցէք մեզ ուսուցիչքս, և մեր մանուկ աշակերտները բարի գործելու համար, նման Յիսուսի Քրիստոսի, որ կոչելով մանկունքը իւր մօտ կդրկէր և կօրհներ նոցա դնելով իւր ձեռքը նոցա գլխի վերայ։

Ի քաղաքն Ղզլար.

Ի 16ն Օքտոմբրի 1867 ամի։

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Վեհափառ Տէրութիւն Ձեր զիմագրաւ շահատակեալ խոչընդոտից անհուն ասպարիզաց ճանապարհորդութիւնս, քանի մի աւուրս յառաջ, ի պատկել զանժոյժ զօրտատրոփ ակնկալութիւն մեր, արժանաւորեաց մեզ գործել ի քաղաքս մեր, վկայ լինել սիրարարութեանդ և հոգելից հրճուանաց կարօտակէզ որդւոցս ընդ անօրինակ դէպս Ձերդ ողորմածագոյն այցելութեան։ Այցելութիւն դարուց ի դարս յիշատակաց արժանի, այցելութիւն արդարև յորդւոց յորդիս մեզ առիթ բաղդաւորութեան։ Թոյլ տուք ինձ Վեհափառ Տէր, ճշդրտագոյնս նկարագրել զաւուր հանդիսիս ուրախութեան. նոր ինձ Մեսրովբ և Սահակ հանդիսացայք Դուք փառաւոր կացուցանել զեկեղեցի և զբանաւոր հօտ Ձեր, ի վայրի դալարուոջ Աստուածային օրինաց հանդուցանել զնոսա, ոչ միայն սիրել ի նոսա զՀայրապետական երկնաձիր օրհնութեանց Ձերոց զշնորհս, այլ և հանրաշահ և առաքինի գործոց և խորհրդոց, յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ, ինքնին քարոզ և յորդոր լինել նոցա, ասպարէզ յառաջադիմութեան բանալ ուսումնասէր մանկտոյն, թարգման ազատագոյ երջանկութեան նոցա լինել և միանգամայն զեռանդն Աստուածպրութեան վառել, բորբոքել ի վաւելչան հոգւոց մեր ամենեցուն։ Յիրաւի Ձերոց լայնատարր և ընդարձակաձաւալ մտաց են արգասիք, Աստուածընտիր Հայրապետս, ի դաւթի երկուց եկեղեցեաց քաղաքիս կառուցանելի Վարժարանացն սրտեռանդն փոյթ և ձեռնարկն. կացցեն յաւիտեան սիրալի և անմոռանալի աւուրքս այսոքիկ երջանիկք, յորս յոչ այլ ինչ յաւէտ զուշ մտաց մերոց դարձուցեալ եմք, քան ի լաւագոյն խորհիլ և նկրտիլ ի բարւոք զարգացումն դաստիարակութեան մատաղ սերնդոց մերոց, ի բարգաւաճանս առաքինի վարուց նոցա, և ի բարեմաղթութիւնս մշտատև բաղդաւորութեան նորակառոյց վարժարանաց։ Կեցցէ յամայր ամօք Վեհափառութիւն Ձեր, արժանաժառանգ և երանաշնորհ Գահակալդ Մեծին Գրիգորի։ Կեցցեն զհետ Ձերոց առաքելաշաւիղ ընթացից հետևող բարեբաղդ Ազգի, Կեցցէ Ազգ Հայոց, կեցցէ Կրօն և Լեզու, անտեսելք հովանաւորեալ ընդ հովք պաշտպանութեամբ Մեծի Քահանայապետիդ։ Ապաքէն եղբարք ժամէ մեզ զարդիս մնաչել ամենախորին ակնածութեամբ յընդունելութիւն համբուրիչ Աստուածարեալ Աջոյ, և օրհնութեան մեծի Հովուապետիդ, զջերաջեր մ՝ զդացմունս երախտապարտութեան մերոյ հեղուլ առաջի Սրբութեանդ, ջերմեռանդն պաղատանօք Հայցել յԱռաջնորդէ կենաց և ի պարգևողէ խաղաղութեան ի Յիսուսէ Քրիստոսէ, զի ըստ առատագոյն ողորմութեան իւրոյ զհրեշտակ խաղաղ-

զութեան տացէ Ձեզ ուղեկից. ըստ Տօրնեմայն, անփորձ և անխոնջ հաստատեալ զՆ.Հայրապետութիւնդ ի կէտ զէպ եղեալ Նպատակին, յաջողութեամբ տացէ պտղաբերել յամենայն քաղաքս և ի շէնս ուր պանդխտին որդիք Հայկայ, զնմանօրինակ առաքինի և զաղգաշահ գործս, ի մխիթարութիւն Ազգի և ի պարծանս Եկեղեցւոյ։

Խոհակ փոհ. Տէր Սէրգէան Պոպովէանց։

Ի 20 Օգոստոսի 1867 ամի

Ի Ղշլար։

ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Անչափ ուրախութիւն է մեր քաղաքի Հայ Հասարակութեան համար, որ այսօր արժանանում է հիւր ընդունել իւր մէջ իւր Ն.Հայրապետ Հովուապետը, որը որ գորովալիր Հայրական սիրով կամեցել է այցելութիւն գործել իւր ասպնջական զաւակներին, որոնք որ՝ մարդասէր Ռուսաստանի քաղցր հովանաւորութեան տակ խնամարկվելով՝ բնակութիւն են հաստատած Կովկասեան այս կողմերումը։

Ն.Հայրապետ Տէր, անպատմելի խնդութեամբ՝ բաց են մեր սրտերը, Ձեր Հովուապետական քաղցր սէրը վայելելու, և Ձեր ազգասեր ակնածութիւնը ի կատար ածելու։ Եւ որովհետև գիտենք արդէն՝ թէ դուք վառված էք մեծեռանդ սիրովը Ազգի, և Ձեր մի հատիկ և անհրաժեշտ նպատակն է, որոնել ընդհանուր Հայոց Ազգի օգուտները. ապա ուրեմն՝ մեծայոյս ենք, որ և Ղզլարու Հայոց Հասարակութիւնը ևս, գոլով Ազգայնութեան ծառի մի ճիւղը, պիտոյ է համահաւասար միաս համազգի Հասարակութիւնների հետ, իրագործուած գտանեն իւրեանց ակնկալեալ յոյսերը Ձեր մէջ։ Մեծայոյս ենք, որ Ձեր Տիրական ազգասէր հոգունակութեամբ, բողբոջեն և վերընձիւղեն մեր մէջ այն բարի բարի մտաւորական և բարոյական սերմերը, որոնք որ մի ժամանակ ողջոյն Հայկազանց բարեկենդանութեան պատճառը պիտի լինին։

Բայց ես ըստ իմ քաղաքացիութեան սեպուհ պարտականութեամբս, ամենախոնարհաբար մատչելով Ձեր գթառատ Ն.Հայրապետ Հօր ոտքը, ահաւասիկ ի վերոյ իմ Հայ Հասարակութեան քաղաքիս, թարգման եմ լինում այն հոգեպարար զգայմունքների և խնդութիւնների, որ ունի սա այ-

որ դէպի Ձեր Վեհափառութիւնը, Ձեր շնորհաբեր այցելութեան պատճառով։ Ապա ուրեմն՝ շնորհ ունիմ՝ Վեհափառ Հոգևորականներ, Ձեր ցանկալի մուտքը շնորհաւորելու, և առ ի սրտէ նախախնամութիւնից հայցելու Ձեզ ողջութիւն. կեա՛նք երկար, և յաջողութիւն Ձեր ուխտեալ ազգաշէն նպատակների մէջ, և ս և մեր Լուսաւորչական Հայրապետական գահին յամայր ամն անսասան յարատևութիւն, ամէն։

Ի ԳՂԵՍՔ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Համեմատելով այսօրեան մեր ներկրապատար խնդութիւններին, և բացատրելիւն հրճուանքներին, որ հեղեղում՝ էք այսօր մեր սրտի խորքերը, որ և՝ որոց բացատրութեան մասին այս բոպէիս թարգման եմ՝ նշանակված Ձեր առաջև, յիրաւի շատ թոյլ է իմ խօսքը, բայց մի հատիկ բառով, կարող եմ արտայայտել Ձեզ Վեհափառ Տէր, մեր այսօրինակ զգացմունքների լիութիւնը, թէ այսօր, մեզ ասպնջական Վաղարշնակ Հայրիս հանար, մի նորանշան բաղդ, որ սուրբ Լուսաւորչեան նախամեծար Գահի, պաշտելի Ամենակալ Հայրապետը, և նոյն իսկ մեր ընդհանուր Հայրենիքս ապրեն արժանընտիր Գլուխը,—մեր հոգևանուռնգ Հայրը, և Տէրը, որ դեռևս դորովով անձամբ անձին, այցելութիւնէ դրծել մեզ, և հիւրասիրելով մեր մէջ, կամեցել է արժանաւորել իւր քաղցր և կամոգին սէրը, և շնորհաբաշխ օրհնութիւնը, վայելել ասալու մեզ։

Բայց և այնպէս՝ գիտենք արդէն Վեհափառ Տէր, թէ նախախնամութեան անքննելի և ամենահոլանի Աջը, Ձեզ մեր, և ամբողջ Հայոց ազգի գլխին պահապան նշանակելով, և դէպ ի Հոգևորականեան մեծ պաշտօնը վերակոչելով, ի՞նչ և որպիսի՞ ծանրատար պարտականութիւնների տակ է ենթարկված Ձեր անձը.—ի՞նչ բազմաղբաղ հոգսերի մէջ է ծփում և տատանում Ձեր սիրտը, և թէ դէպ ի ո՞ր է ճախրում այս բոպէս Ձեր զգայուն հոգին . . . Ա՛յո, հաստատապէս գիտենք Հայր, որ Ձեր ազգասիրեամ սրտի ալէկոծութիւնքը, ո՛չ այլ ինչ են՝ եթէ ո՛չ Հայոց ազգի ներկայ անյուսաւորեալ եմ և բազմաք պակասաւորվիճակը,—ո՛չ այլ ինչ են, Ձեր հոգու խղճը, և Ձեր պաշտօնի ծանրութիւնը, եթէ ո՛չ, անքուն աչքերով հսկելու և տարաւորելու Հայաստանեայց եկեղեցու բարեզարդութեան, և ամբողջ Հայկական ժողովրդի քաղաքական բարօրութեան, և նորա անմխիթար վրութիւնը բարեգրելու և յառաջադէմ կացուցանելու լուսաւոր ազգերի քաղաքակիրթութեան առաջնորդումը, որ որոց մասին, նոյն իսկ աղ-

պը, ինքը ընտրել և ընդունել է Ձեզ, միաձուն և համակամ կամքով։

Մեք գիտակից լինելով Վեհափառ Տէր, Ձեր այդ ազգասէր ճգնողական հոգացողութիւններին, և պարտքերին, պատրաստ ենք, բոլորանուէր սիրով Ձեր սուրբ դարշապարհը փարել։ Պատրաստ ենք մեք, և բոլորովին պատրաստ, ի սէր մեր ազգի և եկեղեցու, մեր բոլոր ուժը, կարողութիւնը իսկոյն զոհել Ձեր մի հատիկ հարևանցի առաջարկող ակնածութեանով. որովհետև փառք է մեզ համար, մեր ազգի ճշմարիտ և իսկական օգուտների մասին ծառայելը, և մանաւանդ թէ՝ թանգ է մեզ համար Հայութեանց և Ազգի փառքը։ Մինչև առաջարկեցէք մեզ Հայր, և այն ժամանակ՝ կարող էք տեսնել, որ շատ ունիք Դուք, ազգային պատուին և ամեն մի օգտին նախանձախնդիր այնպիսի գաւակներ, որոնք որ անձկայրեաց սիրով պատրաստի են քաջաբաջ յառաջ մղել, և որոնել Հայութեան անկողոպտելի, հանրաշահ միջոցները...։

Ապա ուրեմն, եկ, հանգիր մեր հոգու մէջ, մեր Գորովագութիւ Հայր և Տէր։ Եկ թեւարկիր մեզ, եղբայրութեան և միաբանութեան տաղաւարների տակ։ Եկ, շնչիր մեր մէջ մտաւորական և բարոյական ազդեցութիւններով, ազգաշինական կենդանութիւն և միաբանական ոգու զօրութիւն. ապա մեք իսկոյն ոգևորված կստանանք վերակենցաղութեան նոր ոյժ և նոր շունչ, և միահամուռ եղբայրակցութեամբ, ձեռք ձեռքի տուած, և սիրտ սրտի հետ շաղկապած կը իրագործենք այն հաստատուն խորհուրդները, որ այսօր թագաւորում են Ձեր լայնախորհուրդ սրտի մէջ։ Մեք մեծայոյս ենք Վեհափառ Տէր, թէ Ձեր շնորհքը կը իրագործվին այն ամենը, ինչ որ այս բոպէիս փափագում են իրագործված տեսնելու, մեր ցաւերը զգացող և դարմանող, մեր ազգի հասկացողը։ Մեծ է Հայոց ազգի յոյսերը դէպ ի Ձեզ, որ յետ սակաւուց, Դուք Ձեր ընդհանուր Հայկորեան գաւակների աջակցութեամբ պիտի լինիք մեր բարօրութեան հաստատուն Հաստատանը, և պիտի բացէք մեր համար նոր երկրորդ ծաղկազարդ դար ուսումնասիրութեան, համանմանելով Մեսրովբայ և Սահակայ և նոցա հետևող մեր մեծերախտ և խնկելի Հովուապետներին, որոնք որ իսկապէս առիթ դարձան մեր լեզուի և հոգեպարար գրականութեան բարգաւաճեցման, ազգի և Հայաստանեայց եկեղեցու լուսաւորութեան, որ այսօրս նոցա անզոյգ շնորհքով, հոգեպէս և մարմնաւորապէս ապրում է Հայոց ազգը։

Բայց այժմ Վեհափառ Տէր, մեք վերուղղելով մեր հայեցուածքը դէպի երկինք, նախ և առաջ մեր սրտի ծունրը խոնարհեցնելով վերուղղումենք փառք և գոհութիւն՝ դէպի Անսահման Նախախնամողի Աթոռը, որ պարգևել է մեզ մեր փափագանց համեմատ, իմաստուն Հովուապետ և

Տէր, որև վերահաստատել է Ձեզ այդ սրբազան կոչման մէջ, մեր պահպանութեան մասին, մեր ամենաողորմած Կայսր, Աղատասէր Ալէքսանդր Նիկոլայևիչը, որի քաղցր հովանաւորութեան տակ, խնամարկվում ապահով այս բոպէին, մեր Արամեան ազգի քառորդ մասը։ Եւ երկրորդ առ ի սրտէ կաղերսենք Աստուծուց, որ տայ մեր ամենաողորմած Կայսրին և Ձեզ երկար կեանք, որ հովանաւորուէք մեր վերայ. և մեր Լուսաւորչական Գահը, յաւէրժ անսասան պահեսցէ Հայոց ազգի համար։ Կեցցէ՛ ուրեմն, մեզ խնամարկող և հովանաւորող մեր Ռուսաց Կայսր, Ամենաողորմած Ալէքսանդր Նիկոլայևիչը, և ամբողջ Ռուսաստանը։ Կեցցէ՞ մեր Վեհափառ Հայր՝ նազելի անուն Գէորգը, մեր բարօրութեան համար։ Կեցցէ՞ և ընդհանուր Հայոց ազգը յաւիտեան և յաւիտեան, ամէն։

Ասացի

Յովհաննէս Քահանայ Քէչէանց

Վ. ԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Ի ներկայ յայսմիկ վայրկենի համարիմք զանձինս մեր երջանիկ, յորում տեսութեան Ձերդ Աստուածարեալ Վեհափառութեան արժանացաք զառաջինն. և թէպէտ ըստ տեղական դրութեան անյարմարութիւն ոչ սակաւ առաջի դնի, սակայն փափագ սրտից մերոց տենչանօք լցեալ հարկադրէ յառաջին իսկ ներկայութեան ձօնել դջերմեռանդ սրտից մերոց զգացմունս շնորհաւորելով զբարեյաջող մուտ Ձեր ի մեր Քաղաք։

Շնորհազարդ սուրբ Հայրապետ, ահա մեք և ժողովուրդք մեր ուրախութեամբ մեծաւ եկեալք այսր սպասեմք Ձերդ գալստեան, բարեհաճեցէք մուտ գործել առ մեզ, թէպէտ և չեմք ըստ անսուտ բանին արժանի՝ եթէ ընդ հարկաւ քաղաքի մերոյ մտանիջիք, միայն պսակեցէք զակնկալութիւն անարատ հարսին Քրիստոսի եկեղեցւոյ, որ խանդակաթեալ ի Ձեր սէր՝ սպասեալ մնայ Ձերդ այցելութեան. և յաւարտ մերոյս խնդրեաց հայցեմք ի Ձէնջ, Սրբազնասուրբ Հայրապետ, մի՛ անխայնիջիք ցօղել ի մեզ զերկնաձիր օրհնութիւն Ձեր, որ ցանկալի է յաւէտ վասն մեր. քանզի զայն և եթէ խնդրեմք, և այլ ամենայն յաւելցի մեզ։

Եղեալ Ա. Քահանայ Յովսէփ Մ. Բռանչիանց

Ի 22 Օքտոմբերի 1867 ամի
Աստրախան
Ի ջերմեռանդն

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Զի՞նչ արդեօք դրուատ շնորհաւորութեան յայսմ բարեպատեհ և ցընծալի ժամու շնորհազարդ գալստեան Ձերոյ, յորում տիրէ լուութիւն եղեռնական գուժի Խորենեան տխուր ձայնին, և հնչէ Մուսայն զերգս ուրախականս. յորում կարձին հառաչք սրտից համազգային ժողովոյ, և վերանորոգին փառք և շուք Տէրունեան սուրբ Տաճարիս՝ և բարեկարգութիւնք հոգևոր ուխտից՝ խրթնացելոց յառաջին բարեզարդութենէ, յորում մայր հաւատոյ սուրբ եկեղեցի՝ համակէ յուրախութիւն զհաւատացեալ որդիս իւր ի ձայն երգոց թէ՝ գտի զոր սիրեաց անձն իմ. գտի զսիրելին իմ՝ և խանդակաթ եմ ի սէր նորա։ Ձեզ մեայր այո՛ բառնալ ի յուս զծանր և զվսեմ պարտաւորութիւն վասն փառաց և օգտի եկեղեցւոյ. Ձեզ մեայր արտաքոյ առնել զանուսումնականութիւն Հոգևոր ուխտի և մատաղերամ մանկանց ամենասիրելի ազգիս, յանձն եղելոց ի վերնախնամ Տեսչութենէ Ձերում Հայրապետական խնամոց՝ շնորհաց՝ սիրոյ՝ և մխիթարութեան. Ձեօք փախիցէ անմիաբանութիւն ազգիս և մոցէ զուգութիւն. զի առաջինն իբրև ախտք և վերք մահահրաւէրք Ազգային փառաց և յառաջադիմութեան, և վերջինն միակ ծնօղ բարեաց՝ օգտի և երջանկութեան. և քանզի ժամանակն դիւրադարձ, և պէտք կարեաց անցեալ քան զչափն, վասնորոյ Ձեզ մեայ արդարև քաջալիթուն ոգւով հաստատեալ զմեզ և զազգ մեր ի ծայր կատարելութեան։ Ուրեմն Օրհնեա՛լ է գալուստ Ձեր և մուտ ի Տիրախնամ քաղաքս և ի ծոց սուրբ եկեղեցւոյս. Օրհնեալ են և փառք շնորհազարդ Վեհափառութեանդ. վասնորոյ ե՛կ Փեսայդ փառաց և միակ յոյս երջանկութեան և յառաջադիմութեան մերոյ, և հե՛ղ զտարաբեր երկնաձիր օրհնութեան Ձերոյ ի վերայ խղճալի որդւոց Ձերոց՝ վիճակեալոց բարեբախտաբար լինիլ ընդ հովանեաւ գաւազանի Հայրապետական իշխանութեան Ձերոյ, որով կացցուք և մնասցուք զօրացեալ ի պաշտամունս անսասան հաւատովք ի Յիսուս Քրիստոս Յոյսն բնաւից. ամէն։

ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱՑ ՅՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

Ի 22 Օքտոմբրի 1867 թվ.

Ս.Տարբերեան:

ՇՆՈՐՀԱՋԱՐԴ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Մե՛ծ է մեզ աւուրս բարեդիպութիւն, և մե՛ծի արդարև տրբերող ուրախութեան. մե՛ծ է՝ ասեմք, վասն զի տեսանեմք զՄեծդ մեր Հովիւ, ըզՎեհափառ Տէրդ մեր և զԱստուածակարդ Տեառչդ հոգևոր յայցելութիւն եկաւորեալ խաշանցս բանաւորաց՝ խաշանցս Ձերոյ արօտի։

Իսկ զի՞նչ մեզ ամենի իցէ ի ժամուս՝ եթէ ոչ, զբարեյաջողդ և եթէ շնորհաւորելով զգալուստ՝ փութալ յայտնել դուշնաքեայ բանիւս զոր ի մեզն է ուրախութիւն սրտի՝ հանդերձ ակնկալութեամբ Հայրականիդ հանդիպելոյ օրհնութեան։

Հաճեցարուք և Դուք, ո՛ խնամագութ Հօտապետ, կարկառել առ մեզ զշնորհալաւոր Աչ Ձեր, օրհնել զփոքրիկս Ձեր հօտ, օրհնել այնու օրհնութեամբ, որ ո՛չ անցանէ։

Ի Քրիստոս Աստուծոյ Հայոց Հաստատաբնակ

Ի 22 Օգոստոսի 1867 ամի

ՁԵՐԴ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ՕԾՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

,,Բայց Ոչ էրանի է ապաց զի պէտանէն,
և ականջաց Ոչոց՝ զի լսէն։
(Մատթ. ԺԳ. 16։ Ղուկ. Ժ. 23։)

Քանի անվստահանալի է իմն նուաստացեալ անձին յայս վսեմափառ կրկիսի առաջի պատկառելի դիմաց Ձերդ Աստուածարեալ Վեհափառութեան բանալ զաղկեալ զբուն իմոց շրթանց և արտայայտել զգացմունս արդարև մեծի վստահութեան արժանի գործ, սակայն հանապազ առաջի աչաց ունելով զընդունելութիւն թոթովախօս ոչխարնայական մատաղ ձայնարկութեանց ի գալստեան Երկնաքաղցի Փրկչին, զզուխտ այրոյն յընծայումն վերջին լումային, և զսովորականն այն ձայն թէ և Ստեղծիչն համայնից ի մարդկանէ հաճեցաւ ընդունիլ զօրհնութիւն, ապաստանեալ ի սոյնանման օրինակս զոյզն ինչ զգենում քաջալեր մերկանալ զիմ առ Ձեզ զգացմունս։

Երանաշնորհ Հովուապե՛տ. ի զանազան դարս և ի ժամանակս ո՛չ ոք գտաւ յերկրածնաց, որք մահկանացու վիճակեցան և հողազանգուած բնու-

թեան, ոչ գոտաւ ասեմ՝, որ անձամբ զանձն երջանիկ կարդայցէ. իսկ եթէ գոտան ևս գուն ուրեք՝ ծաղու արժանացան և զուարճախօսիկ առակաց յապաւնիս, բայց մի՛ լեցի մեզ դասիլ յայնպիսեաց կարգի. քանզի երանելն մեր զանձինս ոչ է ցոյց տնապարծութեան, որպէս Կրեսոսին առ Սողոնիւ, այլ այցելութիւն Հերդ Աստուածարեալ Վեհափառութեան՝ քաղաքիս, ամրարձ և եկն զմեզ յայն աստիճան գերակատար ցնծութեան, մինչև մոռացեալ մեր զցաւալից և զտարժանելի օդ աղցաւոր աշխարհիս, զոր ծծեմք հանապազ. թողեալ զկնի մեր զամբոխ կրից և զբաղմանց երանեմք զմեզ զի ծնաք ընդ քաղցր ազդեցութեամբ Երկնից յայնմ՝ դարու՝ յորում արժանացաք Հերդ այցելութեան, դա՞ր ոսկեղէն վասն մեր անմոռանալի, յաւէտ. երանեմք աչաց մերոց զի տեսանեն զՀեզ, և ականջաց մերոց զի պատրաստին լսել զՀայրապետական Աստուածարուղիս օրհնութիւն Հերդ Վեհափառութեան, քանզի. "բազումք ցանկացան տեսանել, զոր տեսանեմք, և ոչ տեսին. և լսել, զոր լսեմքս և ոչ լուան։"

Եւ զի՞ է մեզ երկարել զբանս. երջանկութեամբ տեսոյ Հերդ Վեհափառութեան պսակեցան աչք մեր ըստ վերնոյն Տեսչութեան. ուրեմն մնայ մեզ խոնարհեալ յաղաչաւոր ի ծունկս հայցել ի Հէնջ ի լրումն երջանկութեան լսելի զգայարանաց մերոց անձրևել ի մեզ զերկնաէջ ցօղ օրհնութեան Հերդ Վեհափառութեան. իսկ մեք ուրախացեալ սրտիւք միաբանաբար օրհնելով զբարեբաստիկ ժամ Հերդ բարեյաջող գալստեան՝ խնկեսցուք զաղօթս մեր յաթոռ խնամողին Տիեզերաց երկարել զարդիւնաբեր թել ազգաօգուտ կենաց Հերոց, Սրբազնագոյն Տէր. անվանելի և անշարժ պահել զՏեառնաւանդ Գաւազան Հայրապետութեան Հերոյ յամս ձիգս և յաւուրս անվախճան. որով առաջնորդեսջիք յաշխարհային ծովէս անթաց ոտիւք յիմանալին երկիրն Աւետեաց։

Բայց անհուն ուրախութիւնք մերոց սրտից լուեցուցեալ զայլ ամենայն բանս լեզուի, զայս և եթ տայ բարբառել պարծ ի պարծ թէ՝ "Բայց մեր երանի՞ է աչաց՝ զի տեսանեն, և ականջաց մերոց՝ զի լսեն. քանզի բազումք ցանկացան տեսանել՝ զոր տեսանեմքս, և ոչ տեսին. և լսել՝ զոր լսեմքս, և ոչ լուան։"

Ս. Էջմիածնոյ Էջմ Աղէքսանդրեանց
Մելիքսէթեկի Բահանայ Բազանչաչեանց

Ի 22 Օգոստոսի 1867 թվի
Պարսկաստան

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՀՈՎՍԻՍԱՊԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ·

Թէպէտև ժամանակն ոչ ներէ խօսել ընդ երկար, սակայն ի խորհրդաւոր ժամուս ոչ թոյլատրէ եռանդ սրտից մերոց և խապառ լռել, այլ գէթ դուշնաքեայ բանիւք յայտնել զզգացմունս։

Երանաշնորհ Տէր. քսան և երրորդ և քսաներիններորդ աւուրք Օգոստոսի տասն և իններորդ Փրկչական դարուս, անջինջ մնացին ի յիշատակարան սրտից մերոց քաղցր Հայրենակցաց, զորս յիշեցին պարծանօք յապառնիս, աւուրք երջանիկք, յընթացս որոց Ծայրագոյնն իւրեանց Հովուապետ, անտես առնելով զդժուարութիւն ուղեւոյ, արհամարհելով զլայնութիւն ծովու և զբարձրութիւն լերանց՝ այց արար իւրոյ բանաւոր Հօտի, որով և ճշգրտեցոյց յանձին զճշմարիտն բան թէ, "Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց"։

Որպէս ոմն ի տեսանողաց հնոյն Իսրայէլի ի վերանալն յեթերական գաւառ, եթող աշակերտին իւրում՝ ի մխիթարութիւն զմտաշկեաին, սապէս և Վեհափառութիւն Ձեր ի վերջին ժամու Տլից Ձերոց ի քաղաքէս, բարեհաճեցէք մաղթեմք ծածկել զմեզ ընդհովանեաւ շնորհաղեղ Աջոյ Ձերոյ. քանզի յուսամք ուռոգեալ Ձերով օրհնութեամբ երթալ և պտղաբեր լինել, որպէս ծառ ի գնացս ջուրց։

Ցաւարտ բանիս բուռն հարցուք զլարից Դաւթեան տասնաղեղոյն կոչելով միաբան, Սրբազնագոյն Հովուապետ մեր, "Տէր պահեսցէ զմուտ և զել Ձեր, յայսմհետէ մինչև յաւիտեան"։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն։

Ցամի Տեառն 1867 ի 29 Օգոստոսի.

ՅԱստրխան։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,

ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ·

Արդարև արժա՛ն է մեզ՝ ով Հայազգի ժողովուրդք՝ բնակիչք քաղաքիս Նորոյ—Նախիջևանի, որ էքդ Հպրազատ որդիք լուսանկար Մօրս մե-

բոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ ուրախանալ այսօր ուշիւս գալստեան Երջանկափառ Սրբազնագոյն Կաթուղիկոսի և Հայրապետիս ամենայն Հայոց։ Թէև մեք ի վաղուց հետէ հեռացեալ գտանիմք տաղնք և բնակութեամբք մերով յԱրարատեան Մայր Աթոռոյ, սակայն սիրտ մեր և հոգի միշտ մերձ և անբաժան կայ ընդ նմա։

Բազմաղեղուն սէր և հայրական գութ Ազգիս Հայրապետիս մերոյ առ Ազգս Հայոց՝ ստիպեաց այսօր գալ յայցելութիւն կողմանցս ցրուեալ որդւոց և զաւակաց իւրոց ըստ օրինակի Մովսէսի, Ահարոնի և Յեսուայ, որք հրամանաւն Աստուածային յայց ելանէին ժողովրդոց հնոյն Իսրայէլի՝ առ ի մատակարարել զպէտս և զկարիս նոցա։

Ուրեմն քանի՜ երջանիկ ենք մեք այսօր, զի Վեհափառ Տէր մեր բարեհաճեցաւ միսիթարել զմեզ շնորհաբեր գալստեամբ իւրով ի քաղաք մեր Նախիջևան, որ է իսկական քաղաք Հայոց երջանկացեալ առանձնաշնորհութեամբ և արտօնութեամբ մեծազօր Ինքնակալաց հկօր Տէրութեանս Ռուսիոյ։

Վասնորոյ ո՛վ Տէր մեր և Հա՛յր՝ ընկա՛լ աղաչեմք զմեր առ ի սրտէ ջերմեռանդն գոհութիւն հանդերձ որդիական հպատակութեամբ մերով օրհնելով զքաղաք մեր և զբնակութիւն։

Իսկ մեք ըստ գաստուց Սրբոյցդ ասացուք միաբերան ովսաննա՝ օրհնեալ է գալուստ քո։ և ըստ Դաւթի մաղթեսցուք առ Տէր ասելով. "Տէր պահեցէ զմուտ և զել քո յայսմ հետէ մինչև յաւիտեան"։

Ղ՝ոսաբ Ներկոյ Ա՝ռաջ Գոհանոյ Շ՝ աբշինէեանց։

Ի 1867 ամի յՅ Սեպտեմբերի

Նոր – Նախիջևան (Տան քեռուվ)։

Ի Շուքենաբին

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՈՎՈՒԱՊԵՏ

ՄԵԾ ԽՆԱՄԱԿԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Աստուածային անհուն նախախնամութիւն սերկեանս օր պատրաստեաց մեզ զայս հանդէս սիրալի՝ որ մնասցէ ի յաւերժական յիշատակ ոչ ևեթ մեզ, այլև ապագայ համազգի քաղաքացեաց մերոց։

Այո՛ Վեհափառ Տէր, մեծ է և անպատմելի զլեռվին բերկրութիւն սրտի մերոյ. քանզի այսօր արժանացաք այնմ՝ մեծի շնորհի Աստուածայնոյ՝ զոր հարք մեր խոզբանէ անտի հիմնարկութեան քաղաքիս ցանկացան տեսանել՝ զոր մեք տեսանեմք այժմիկ՝ և ոչ տեսին, և լսել զոր մեք լսեմք՝ և ոչ լուան։

Վասնորոյ օրհնեալ է Աստուածառաք զալուստ Վեհափառ Հօրդ մերոյ, կրկին օրհնեալ, Ազգանենա Բարձրելոյն զոչեմք առ հասարակ պաղատանսն փառաբանութեամբ, զի ացելութեամբ Հովուապետիդ զզրկեցաւ քաղաքս ամենայն և լցան ամենեքին հոգեզուարճ խնդութեամբ, ոչ ընդհատ քան զԵրբայեցւոցն ծերոց և տղայոց, որք յաւուր մեծի Ողոգոմէին յընդառաջել Փրկչին մերոյ Յերուսաղէմ՝, մեք փոխանակ նոցին արմատնեանց և ոտոց ձիթենեաց՝ ընծայեմք այսօր զջերմեռանդ և զամբիծ հաւատս առ Մայր Աթոռն մեր սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և զանենդ սէր անկեղծ հպատակութեամբ առ արժանաժառանգ Յաջորդ Նորին։

Ապաքէն զի՛նչ մնայ մեզ, բայց միայն բարեմաղթել զՊարգևատուն բարեաց Քրիստոս՝ հայցելով, Տէր բարձրացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետիս ի հովել զԱքանաղեանս զրոհ, և դարձեալ՝ զի երկարեսցէ զաւուրս Վեհափառիդ երջանիկ բարօրութեամբ ի բարեզարդել և ի լուսաւորել զՀայկազունս, փարատել զմառախղապատ ամպունս ի հորիզոնէ նորա և լինել վասն Ազգի երկրորդ Մաշտոց վաստակաւորէր՝ ընթացուցանել զմեզ ի լուսաւորութիւն ցանկալի, և պատճառ բարեբաղդութեան վիճակի առ հասարակ ժողովրդոց մերոց։

Արդ՝ Աստուածընտիր Հովուապետ, խոնարհեալ առաջի մեծի Տէրութեան Ձերոյ, հայցեմք ընդունել զջերմեռանդութիւն սրտի մերոյ և զոգեկան ուրախակցութիւն, և երես անկեալ աղերսեմք՝ արժանի առնել զանարժանութիւնս մեր Հայրական օրհնութեանց և տարածել ի վերայ մեր զքզանց մարդասիրութեան Ձերոյ, զի այս է միմիայն ցանկացեալ փափաք ստորագրելոյս ծառայից։

Յովհաննէս Բահանայ Տէր Գաբրիէլեան

Ի Եր Եմիէձնոյ

Վեհափառ Տէր,

Աստուածընտիր Քահանայապետ։

Մեծ պատիւ և մեծ պարծանք է վասն մեր, զի բարեհաճեցաւ այսօր Վեհափառ Տէրդ մեր բախտաւոր առնել զքաղաքս մեր իւրով շնորհաբերն այցելութեամբ։ Մեծ ուրախութիւն և երջանկութիւն է մեզ, զի արժանացեալ գտանիմք ընդ առաջ ելեալ այսօր Վեհափառութեան Ձերում՝ համբուրել. որպիսական ջերմեռանդութեամբ զլուսափայլ Աջ Օծութեան Ձերոյ և վայելել զՀայրական օրհնութիւն և բարեմաղթութիւն Ձեր։ Եւ որպէս պարզ և գեղեցիկ առաւօտուն նշան՝ է աւետիս տալ արևելեանն ծագման, և գալուստ Վեհափառութեան Ձերոյ ի քաղաք մեր՝ համարիմք նշան հանդերձեալ նորանոր բարեաց վասն մեր։

Ուստի և շնորհապարտ զանձինս մեր խոստովանեալ միշտ Ձերում Վեհափառութեան՝ վասն Հայրական այցելութեան Ձերոյ քաղաքիս՝ շունիմք մոռանալ երբէք զայս անմոռանալի օր, այլ անջինջ ունիլ միշտ ի սրտի մերում, իբրև ապացոյց առանձին իմն Հայրական սիրոյ և բարեհաճութեան Ձերոյ առ ժողովուրդն քաղաքիս։

Որոյ վասն խնդրելով ի Տեառնէ Աստուծոյ՝ պարգևել Վեհափառութեան Ձերում՝ զերկար կեանս և զառողջութիւն և զյաջողուածս ամենայն գործոց Ձերոց՝ մնամիմք ընդ նմին զՀայրական հովանաւորութիւն Վեհափառ Տեառնդ ի վերայ քաղաքիս և զբարեխօսութիւն Ձեր վասն մեր ամենայն ուրեք և յամենայն տեղեաց։

Օրհնեցէք ուրեմն՝ Վեհափառ Տէր զփոքրիկ քաղաքս մեր և զբնակիչս նորին, որք միշտ պատրաստ կան հոգւով շափ կատարել զայն ամենայն պատուիրանս Ձեր, որք միանգամ վերարերին յօգուտ ազգի և Առաքելական Եկեղեցւոյ մերոյ։

Ասոյ Պաղտասարեանք

63 Սեպտեմբերի 1867 ամի.

Նոր—Նախիջևան

Ա.Ռ.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆՆ

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ
ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՅՐ ԱԹԱՌՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՏԷՐ ԳԷՈՐԳ Դ.

Յառաջ գալեալ՝ Նոցին է Նոր — Նախկինեան յիշատակ
առաջ Սեպտեմբերի ամսոյ 1867 ամի։

Հայաստանեայց մեր մեծափառ վեհ Ազին
Վերամբարձեալ զպերճ գլուխն երկնային,
Լուսահրաշ Ազատն լեռնէ ձիւնապատ
Հայի ակամբ զոյգ՝ փայլականց զերդ տարափ։

Այրարատայ դաշտ կամենաբուղխ և մարմանդք
Եւ խնկաբեր Սօսեաց, վարդից դարաստանք
Լուսապաճոյճ իրր զնոր հարս զարդարեալ
Խայտան ի տես Ազոյն զուարթ լուսափայլ։

Յաւէրժական լեառն կենաց երկնաձեմ
Եւ կապուտակ՝ Այրարատայ սարք նրսեմ
Զվաղեմի նախնեացն փառաց զպսակ
Կապեալ ի գլուխ՝ պանծան ի նոր այս նուագ։

Այրիացեալն Աթոռ փառաց Գրիգորին
Ի բաց բարձաւ զսևաթոյր աքօղին.
Փանգի խնամողն բաղդին Հայոց աշխարհին
Նոր ընծայեաց զՓեսայդ սիրուն սրբային։

Սէր հաստատուն, խորհուրդք և յոյս ևս չքնաղ
Բացափայլեն ի յակնարկելն Քում խաղաղ.
Մեծահանդէս աստ քո գալուստ շնորհաբեր
Հանդարտագին աւուրց բարեաց է պատկեր։

Տէր, սիրայնոյ երկնապարգև քում սրտին
Այս հարազատ որդւոցդ խումբ ակն ունին.

Քեզ մեայ, Հայր, սանձել զահուր թեւս բաղդին,
Յարուցանել զառաքինեաց հարս նախկին։

Այս հարազատ որդւոցդ խումբ Հայրենի
Լիայոյս են քեւ զգենուլ զնոր հոգի.
Եւ ընդ զուարթուն Հայրապետիդ Հայկազեան
Առնուլ զլարս, զհաշտութեան երգել ձայն։

Նա, որ ասաց "եղիցի լոյս" և եղեն՝
Եւ գլուխ Ազգիս զքեզ ընտրեաց համօրէն,
Երկարեսցէ զթելս անգին քո կենաց
Յօգուտ, ի փառս և ի պարծանս Հայրենեաց։

Խոսքս՝ որ է Պօղոսեան Սարգիսեանոսեանց

Ի Նոր Նախիջևան։

ՔԱՋԱՐԻ ՀՈՎՈՒԱՊԵՏ.

Զի՞նք տեղի կասկածանաց, որ Ամենակալի բարձրացոյց զՁեզ յԱթոռ Քահանայապետութեանն Մեծին Գրիգորի ընտրութեամբ Հայորերոյն կրկին աշխարհաց զԵւրոպականն ասեմ և զԱսիականն։ Ուստի իշխանական գաւազան Հովուապետութեան Ազգիս ամենայն իրաւամբ տուան ի ձեռս Ձեր, որոյ զրաւականքն սիրոյ և մեծարանաց առ Վեհապետութիւն Ձեր արդէն հաւաստի եղեն ի ժամ հանդիսաւէտ գալստեանդ՝ երբ գունդագունդ տեսի՛ք ընդառաջեալս առ Ձեզ յամեն ուստէք յամենայն քաղաքս զՀայորեարն, որքմիով միով խմբէին ի համբոյր և ի տեսութիւն նորընտիր Հովուապետիդ։ Վեհափառ Տէր, իսկ՛ք հասարակութեանս յայնժամ միայն հանգեան ի կատար, երբ հարթ, հաւասար և վերջացեալ տեսաք ամենայն խոչ, խութ և առապարքն, որք ի յԱթոռ Քահանայապետութեանն տարպծանէին։ Ուստի և մեր լիարերան բանիւք գոհանալով զկրկնից ընդ անկշռելին նոր շնորհս, որ արարն մեզ, և համախումբն մաղթեմք ի նմանէն Ձեզ յամենայն զիմաստութիւն և զկարողութիւն ընդդէմ հնարիցն, որք զքահանայապետականն սովորն են դարել զաթոռով։

Հայորեարն Աստուածարեալ Տէր, ի հերուն հետէ կարօտէին այդպիսի իմաստուն և անձնազիր Հօտապետի, որպէս զի թերևս կարասցեն որպէս հոգեւոր բանիւք նորին յաղտոյ մեղացն բուժիլ, նոյնպէս և ընդ հովարկու-

թեամբ քահանայապետական գաւազանի նորին ի վերայ Ա. յրարատեան պատգամաւորներ լերանցն յածիլ, որ միայնակ ելեթ հնարն է ի փրկութիւն անդր։ Քաջայոյս եմք զի ամենայն յաջողեալք են մեզ։ Ամենապատիւ Տէր, թէպէտ նեղ և անձուկ կոպար բանից մերոց յանհնարեաց առնեն մեզ զամենայն, զոր միանգամ զգամք առ ներկայութեամբ Ձերդ սրբութեան, ի բան բերել աստանօր, սակայն քաջայոյս եմք, զի իմաստութիւն Ձեր սովիմք և զայնս գուշակեսցէ, զոր սղութիւն միջոցիս և մեծութիւն առարկայիցն յետս կաւուցանեն զմեզ զայնս միահամուռ յարաջ բերել աստանօր. և որ առաջնել պակուցիչն է, զահի հարկանեմ ես, զի մի՛ իմ տարաժամ կանխեալ ի խօսս զեղծուցից զբանս և կամ մնայլ ածից զնովիմնք։

Ի միջի այսունակ խառն ի խուռն ի կիրս, որով իբրև զծով ի հողմն ծփան և տարուբերին սիրտք հասարակութեանս, ի միջի այնքանից իրագործութեանցն, որով լցան տենչանք մեր, ո՞վ մեծի զժուարութեանս, այն ինչ ճիգն թափեմք բանալ զխորս սրտից մերոց առ ի զեղուլ և ծաւալել արտաքս զանչափութիւն արդահատանացս ընդ ընտրութիւն ընդ գալուստ, ընդ օծութիւն և վերջապէս ընդ վեհաւետն և անմոռանալին այցելութիւն առ մեզ Քաջափայլութեանդ, բանք մեր սպառին, միտք մեր պաշարին և հոգիք մեր շուարին. վասն զի ո՞ր գտցուք առ ամենայն զբանս բաւականս, երբ նոքա զսահմանաւ մտաց, և լեզուի բանից քան զչափն անցանեն զանցանեն։ Ո՞ր և զաչս յածես այսօր շրջինդն ահագին, ամենայն ուրեք ամբոխ անհամար, ի հեռուստ զարմանք և ի մօտոյ ափշութիւն։ Եւ ահա որպէս այր զարամբ՝ նոյնպէս և երկին և երկիր զմիմեամբ ելեալ առնեն շուք զարժանին հարկանել մեծափառ Հօտապետիդ. վեհաւէտ տեսարան։ Ցիշատակք նախկին լարենեն աւուրցն, տենչանք փառաւոր ներկայիս ազգաց ազգաց ծայրացելոց յասպարեզին քաղաքակրթութեան և խորին խորհուրդ Հայկական ազգին վառեցին զմեզ յայս հանդէս Ա. Հափառ Տէր, ուր մեք ի լրումն ամենայնի յիմաստութիւն և ի գաւազան իշխանութեան Ձեր ելեթ յուսացեալ՝ զՁեզք խոնիմք ո՛չ հանգոյն Հրէից զմեծի մարգարէին հետաքրքիր առ ի լսել զօրէնս ինչ և կամ զնոր պատգամն աստուածային, այլ զի ի գալարուջ բնակեցուցցես զմեզ և առ ջուրս հանգստեան սնուցանիցես։

Ո՞սոցին Հայոց Եկեղեցի Մէջտեղ Գ. Ներսիսեանց

յՏՆ Եկեղեցիէն 1867 ամի
Ի Նոր—Նախիջևան։

ՏԷՐ ԳԷՈՐԳ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ՄԱՅՐ ԱԹՈՌՅՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՌ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ՆՈՒԱԳ

Յարևելից ձայնք հնչեցին արփեղնաց.ք՝
Հանգոյն փողոյն Գաբրիէլեան ի բարձանց՝
Զգալուստ Վեհիդ մեզ աւետել զուրախարար,
Զ.գալուստ Քոյին շնորհաւորեմք Վեհափառ։

Ահա բարբառ քաղցրանուագ քնարաց,
Քան զՍրփեսի և զՇինեայ ձայնս վըսեմ.
Վեհափառիդ զերգս օրհնութեան անթափանձ՝
Ընդ հոգեւոր դասուցս երգէ սիգաձեմ։

Օ՛ն մեք ապա, օ՛ն պաշտօնեայ.քս Քրիստոսի,
Եւ դուք համայն ժողով պարկեշտ Հայազգի
Զերգս երախտեաց առաքեսցուք առ Ար էն։

Ընկալ ապա, ո՛վ Տէր, նըւազըս անդրէն,
Եւ տո ր մեզ ցանգ գոչել անդուլ աղաղակ.
Կեցցէ՛ Գ.էորգ, կեցցէ՛ Տէր մեր Վեհափառ։

Ներկին աղաչէրս Իւրոյ Էրանելեան Ո-սոս-Ճոսրանէ,
Պէտրոս Տ. Ներսիսեան Սպղիտեանց

Ի 1867 ամի 3 Սեպտեմբերի

Ներ – Նախիջևան

ՎԵՀԱՓԱՌ ՀԱ՛ՅՐ.

Հարկաւորութիւն չկայ այս բոպէիս խօսքերով յայտնելու Ձեզ այն մեծ ուրախութիւնը, այն անպատմելի և անհասանելի մխիթարութիւնը ու քաջալերութիւնը, որ պատճառեցիք մեզ Ձեր այցելութեամբը։ Արդարև, Վեհափառիդ գալուստը այստեղ ոչ սակաւ դիւրութիւն է ընծայում բաղ-

մամիշտ և փառազուրկ Ազգիս որդոցը։ Սակայն այս ներկայ ուրախութեանս շարժառիթ պատճառը միայն այն չէ, որ բաղդաւորութիւն ունեցանք Ձեր սրբութիւնը տեսնելու և Ձեր սուրբ Աջը համբուրելու, այլ և այն յոյսերն են, որ տուիք մեզ մեր ապագայ բարոյական և մտաւորական բարեկեցութեանց վերայ. այն յոյսերն են, որոնք մեզ ոյժ, զօրութիւն և միաբանութեան սէր հաղորդեցին, որոնցմով մենք միխիթարուեցանք առ այժմ և լիապէս քաջալերուեցանք։ Այո՛, Ձեր գալուստը այստեղ և մեր սրտանոյշ ուրախութիւնը չեն մի լոկ անցողական հանդէս. ոչ, բնաւ ոչ. դրա ունին մի վերին և ծանրակշիռ խորհուրդ, և ահա ինչո՛ւ համար ներելի է մեզ մի քանի խորհրդածութիւնք անել այդ մասին այս բարեմիտ և ազգասէր հայրենակցաց հետ և յայտնել Ձեզ Ազգիս, մասնաւորապէս քաղաքիս ներկայ դրութիւնը և կարօտութիւնքը։

Մեր ազգի դարաւոր խոցերը և ցաւերը քաջայայտ են Ձերոյին Վեհափառութեան, նորա անցած գնացած օրերը շատ դառն են և ամենայն կարեկցութեան արժանի. պատմութեան յիշատակարաններս անմխիթար և սրտաշարժ տեսարան են հանդիսացնում. յիշելով անցած և տեսանելով ներկան՝ ճշմարիտ հայրենասիրի սիրտը ճմլվում է, կտոր կտոր է լինում և արիւնով է լցվում՝, և ո՞վ է այն քարասիրտը, որ տեսանելով այս բոլորը, չթափէր մի քանի արտասուախառն կաթիլներ թշուառ հայրենիքի տխրագէմ աւերակների վերայ։ Բայց Վեհափառ Հա՛յր, մենք դեռ ևս խսպառ յուսահատուած չենք, յուսահատութիւնը մեռելութեան նշան է, ունենալով Ձեզ պէս գործունեայ և ազգասէր Հովուապետ, լինելով Ռուսաց Կայսեր հայրախնամ և մարդասիրական հովանաւորութեան տակ մեր մեռելութիւնից ի լոյս վերադառնալու յոյսը բոլորովին կտրած չէ։ Ծերացած ծառի ոտների վերայ շատ գեղեցիկ պատուաստներ կարելի է դնել։ Պատմութեան թերթերը այդ մասին անուրանալի և անհերքելի ճշմարտութիւնն՛ր են յառաջ բերում։ Եղեկիէլ մարգարէի թղթերից տեղեկանում ենք, որ մարգարէն անցանելով մի լանատարած դաշտից՝ տեսաւ անչափ և անհամար մարդոց ոսկորներ մէկ մէկու վերայ դիզած, մոռածողութեան մէջ ընկղմելով՝ ասաց. իցէ՞ թէ կենդանացեն ոսկերքս այսոքիկ։ Ասուած լսելով մարգարէի տխուր և յուսաբեկ ձայնը, պատուիրեց նորան, որ հրամայի ոսկորներին կենդանանալ, և ահա ոսկորները կենդանացան. չկարծեմ՞ որ Հայոց Ազգը այն չորացած և փտած ոսկորներից վատ լինի. իսկ մեր պաշտած Աստուածը նոյն մարգարէի պաշտած Աստուածն է անփոփոխ, որի վերայ պէտք է հաստատենք մեր բոլոր յոյսը։ Մեզ անվայել է երազել անգամ քաղաքական կեանք փոխանակ մեր ծաղիկները ոռոգելու դաստիա-

բակութեամբ. զուր է և անիսկբութիւն անողում մանգաղի տակ ձգելը։ Միմիայն ճշմարիտ կրթութիւնը պիտոյ է առաջնորդի մեզ դէպ ի բաղդաւորութիւն. այսուհետև մեր գալոց սերունդի բարօրութիւնը պիտոյ է պատրաստուի ներկայ մանուկների դաստիարակութեամբ և կանոնաւոր կրթութեամբ։ Ուրեմն Վեհափառ Հայր. Ձեր և մեր գործը պիտոյ է լինի ծաւայել ժողովուրդի դաստիարակութեան և կրթութեան. լուսաւորութեամբ միայն այսուհետև կարող պիտի լինինք պահպանել մեր ազգութիւնը և հաւատը այս կորստաբեր ժամում։ Մեզ հարկաւոր են, Վեհափառ Հայր, լաւ Ազգային հոգևոր և աշխարհային դպրոցներ, տպարաններ, գրատուններ կարդալու և սովորելու տեսակ տեսակ գրքեր։ Այս բոլորը անշուշտ, Ձեր Վեհափառութիւնը առանց ժողովուրդի գործակցութեան կարողանալու չէ լցուցանել, ուստի հաւատացած եղիք, որ մեր քաղաքացիք երբէք Ազգային գործոց դիմադարձ չեն եղած և չեն լինելու, ուրեմն և Ձեր վերին նպատակները, որոնք են և մերը, իրագործելու համար պատրաստ են ամենայն կերպ ձեռնտու և նպաստաւոր լինել։ Թող Ամենակարող Աստուածը տայ Ձեզ երկար կեանք և հզօր կարողութիւն այդ Ձեր Վեհ և Սրբազան կոչումը կատարելու Թող Աստուած լուսաւորէ ժողովուրդի միտքը և տայ նորան սէր լուսաւորութեան, և Թող հանգչի Հայոց ազգի վերայ Աստուծոյ ամենաառատ օրհնութիւնը։

Մէյոյէլ Տէր Գ-ջէգոջէանց

1867 ամի Սեպտեմբերի 7

Նոր—Նախիջևան։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՄԵԾ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼԱՊԱՏԻՒ ՏԷՐ

Բանաւոր այս փարախ Հօտին Քրիստոսի Ձերումդ յանձն եղեալ խնամոց ի Հոգւոյն Տեսչութենէ՝ ցնծայ ընդ եղբարց իւրոց, ընդունելով զՄեծդ Հայրապետս, որում այլք ի քաղաքաց վաղ ուրեմն եղեն արժանի։

Սիրտ մեր լցեալ բերկրութեամբ չբաւէ զխորին և բազմապիսի զգացմունս իւր արտայայտել բանիւ։ Այսպէս երբեմն և հին Սիոն ընդ առաջ եղեալ Երկնաւոր Հովուապետին, չգիտէր այլ ինչ գոչել, բայց ովսաննայիւք զնա բարեբանել։ Զնոյն և մեք առ Քեզ համարձակեսցուք աղաղակել ի

խորոց սրտէ "Ամենայն, օրհնեալ՝ որ գայդ յանուն Տեառն"։ Ա՛յո, Օրհնեալ է գալուստ Ձեր, բարեխնամ Հայր մեր և Հովուապետ. Հօտն այն սրբոյն Գրիգորի՝ զոր Ձեզ յանձնեաց Աջն Աստուածային առաջնորդել՝ գոչէ առ Ձեզ ինքեալից սրտիւ, օրհնեալ է մուտ Ձեր ի քաղաքս, օրհնեալ է որ ելից զիրաւիրակ սրտից մերոց։

Ընկալարուք ուրեմն Առաքելաշնորհ Տէր մեր զնուաստս բարերանութիւն, զոր որպէս պաշտօնեայ ի դիմաց բուսանդակ հօտիս Ձեզ մատուցանել համարձակիմ, քաղցրասցին ի լսելիս Ձեր Աստուածընտիր Հովուապետս, որոյ միմիայն է իրաւն հանդիպել Ձերումդ օրհնութեան։

Յարգոյ Ձերոյ Աստ խոնարհագոյն Ալեքսէոսոնց։

Ի 19 Սեպտեմբերի 1867 ամի

Ի Մոսկուա։

ՕՐՀՆԵԱԼ ԵԿԵԱԼՊ ՅԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ.

Վեհափառ Տէր. Հասեալ զանպատ տարածութիւն ուղղոյն՝ շարժառիթ ի սիրոյ ոչ ի վայելչութիւն Անձինդ, այլ յակնարանս զնութիւն վիճակաց Հոգեւոր զաւակացդ, առ ի գիւրել զառատարս բաղդի նոցա հանդերձեալ և ի գարմանել զպիտոյսն նոցա անհրաժեշտ, ահա կաս ժամանեալ ի սիրտ մեծին Ռուսիոյ՝ առ Ինքնակալ Կայսերութեամբ Օգոստափառ Թագաւորի և Հօր—բարերարի Աղեքսանդր Նիկոլաևիչի, և ի սրտի անդ իրոնեալ զքեզ տեսանես սիրով խանդակաթ զՀոգեւոր զաւակունս Քո. որք ի ներկրապատար խնդութեամբ փութան ողջագուրել զՎեհափառ Հայրդ և շնորհաւորել ուխտաւորիս զմուտ Քո հրաշափառ։

Օրհնեալ է մուտ քո, Ա՛յրդ Աստուծոյ, օրհնեալ և գարերանեալ Նուիրական ցանկութիւն քո վասն Ազգի։

Մի խուռնեցի սիրտ և մի՛ միտեցի Հոգի քո սուրբ իսկզբան յակնարկել ընդ այլատարազ տեսարան՝ տարանջատ սիրով անանջատ ի Հայրենեաց՝ ակնբեալ որդւոցդ ընդ օտար աստեղեաց, զի մի Հոգի և մի սիրտ յամենեսին ի մեզ բնակի սուրբ Հայութեան, մի և եմ թագաւորի ի Հայս սուրբ ցանկութիւն—ցանկութիւն միաբանութեան ի Հայութեան, ցորչափ հանապազորդեցի օրրստօրեական ծագմամբ և լուսաւորութեամբ իշխանն տուեալ անդ ի բացակայ թագաւորութեան կարելեացն։

Մի շփոթեսցին միտք քո, Վեհափառ Տէր, այլեւայլ վարանմունս թիւրութեան և խոտորման հոգեւոր զաւակացդ ի նախնաւանդ ուխտէն, զի սերունդք եմք Հայկայ՝ հոգեւոր ծնունդք Պարթեւի մեծի, և յերակունս մեր ամենեցուն եռայ մի և նոյն արիւն Հայկական, արիւն ասեմ՝ պաշտելի նախահայրց, որք հեղմամբ նոյն իսկ արեան, զՊարսկաստանն խորտակեալ զսուր անարգութեան, ձողապրեալ զՀաւատ և զապգութիւն, աւանդեցին սերնդոց ի ժառանգութիւն մշտնջենաւոր և ի պահպանութիւն անապականաբար, ցորչափ հոլովեսցի յարաշարժ շարժմամբ այս հողագունդ համաստարած ի քառածիր կառս բնութեան։

Նոյն իսկ եռանդեամբ ժողովեալ ասատնոր առաջի միակ Յուսոյդ Ազգի՝ հոգեւոր զաւակունքս պշուցեալ հպիմք ի քեզ սրբազան յարիշտակութեամբ. ի քեզ իբրև ի պարզ հայելւոջ ակնարկ տեսանեմք զառհաւատչեայ նորատնկութեան Ազգի մերոյ և աշխարհի ի լոյս ասուածային գիտութեան. ակն ունիմք անեղկեան յուսով, զի քեզ ծագեսցի նորոգ արշալոյս ի Հայաստան երկիր, պատերազմեալ ընդ խաւար տգիտութեան, յաղթեալ հանդիսացի ի լուսատուութիւն և ի պայծառութիւն աղօտացեալ Տանն Ազգիս որպէս առ Նեղոսեան, Սահակաւ և Մեսրոպաւ սրբովք. զի մանկունն Հայաստանի՝ յառաջագէմ՝ նկրտեսցեն շահատակեալ ազատապայծ զասպարէզ ուսման, ասոյնանեսցին ի վեր ընդ ամենայն զգ խնամատութեան և մանկացութեան. ծառ պտղաբեր հանդիսացին տնկողին իւրեանց Աստուծոյ, զՆեռն և զարարուածս Վեհիդ պատմութեան և սերնդոց աւանդելով հանապազորդ։

Կամ, Վեհափառ Հայրապետ, Տէրամբ, կամ և միսիթարեսցի զԱզգ մեր ոչն այս ասատուածահաճոյ բարեմասնութեամբ. կամ, Վեհափառ Հայրապետ, Տէրամբ, կամ և պայծառացի զեկեղեցիս շնորհազարդ գաւազանի իշխանութեանդ հաւատացեալ։

Ի լրումն մեր ամենեցուն այսքան յանկալի ակնկալութեանց, ամփոփեմ զՆՕ քո, Վեհափառ Տէր, և օրհնեմ օրհնութեամբ ասատուածային զՄեծնաբարեպաշտ Կայսրն ամենայն Ռուսաց՝ զԱզէքսանդր Նիկոլաեւիչ՝ զմեծ և զոգորմածն առ ամենայն ազգս, մանաւանդ առ Ազգս Հայոց. զի ընդ անդրանիկ հուսանաւորութեամբ Նորա աճեսցին և պտղեսցին սերմունք բարերարք, զոր հանդիպեալ է տիւսել ԵՕ քո օրհնաբանեալ յանդ մասաց ազգարծի մանկանց Ազգիս։

Ի միջոցս առ զԿաց քո, Վեհափառ Տէր, զԿաց — զասպաս էն փրկչէտ կենաց մերոց և օրհնեմ զմեզ զհոգեւոր զաւակունս քո հաւատքէն, զի զքարոզութիւնք և զաղօտեանս սիրով առ միմեանս և ի հաւատս հայրենի՝ ի պար-

ծանս Մօրն մերոյ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի և ի փառս և ի պատիւս Անուան Քում սրբոյ։

Օրհնեալ է դարձեալ մուտ Քո, Այրդ Աստուծոյ, օրհնեալ և բարեբանեալ նուիրական ցանկութիւն Քո վասն Արդի այժմ և միշտ։

Եղբէր Յոհաննէսոնց։

Ի 20 Սեպտեմբերի 1867 ամի։
Ի Մոսկով։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Ո՛չ շատ ինչ աւուրք են՝ զի նուիրականն Դաստակերտ Աւրդին Վաղարշայ նոսա զՀեղ յԱռաքելականն վերաբազմեալ յաթոռ՝ յիւրումն Կաթուղիկէին, ի վի հաւայր Տաճարի Միածնին Իջման։ Տեսանէ արդ զՀեղ և Մոսկուա հինաւուրցն քաղաքաւայր Ռուսիոյ, քաղաքամայր՝ որ յերկերիւրոց ամաց հետէ ամենաճոխ ասպնջականն է Հայաստանին վտարանդի ծնողաց։

Զքնաղ ինձ թուի պատահումն՝ զքնաղագունից զուշակ բարեաց մերոյնոյ ազգին, և ոչ միայն բարեաց զուշակ, այլ և մեծագունի՛ առբերող խնդութեան, մանաւանդ որոց միանգամ յաջողեցաւ Քահանայապետական կանիպ արժանի լինել տեսոյ, և նոքին իսկ զշնորհակիրդ վայելել զօրհնութիւն։ Ընդ այս չի՛ք յերկուանալ։ Այլ ո՞ զմիոյ միոյ ի տեսանելեացն կրշոնել առնուցու զարտին հրճուանս, կամ ո՞ թարգմանել զնոյն իսկութիւք ժամանակի։

Եթէ "որպի խնամատուն ուրախ առնէ զՀայր", որպէս որդին ասաց Դաւթի՝ յԱստուծոյ խնամատեացեալն, իրաւամբք ապա և որդիք առաւելուցուն ի խնդութիւն, հանգոյն և ի փառս և յերջանկութիւն, յորժամ խնամանոյ և կորովագունի հանճարով՝ հանդիպեցին հօր։ Զայս ասեմ, Տեր Վեհափառ, առ ի զէմն բերելոյ զէթ ի մասնէ և եթէ զմեծն զայն զուարճութիւն հոգւոյ՝ որ արդ յամենեսին ի մեզ առատանայ զնորոգ շնորհաբերդ նկաւորութեամբն։ Օրհնեա՛լ Տէր, որ հաճեցաւ զԱռաքելաշնորհ Հօտապետդ ի խնամակալութիւն պարգևել Հայաստանեայցս Եկեղեցւոյ՝ հոգևոր կարգելով զբլուխ հանուրց Հայասեռից։ Ծա՛մէ նոցա՝ իբրև արդարև հարազատ որդւոց ամենեարեան Լուսաւորչին միահամուռ պարել ցնծութեամբն. յապահովեալք յաւէտ ընդ Հովուապետական Գաւազանաւ նորուն Աթոռակալին։ Ցնծացե՛ն ամենքեան, զի գտին զԱյրդ զմեծ, զհո՛ւանախորդդ երանելեա-

ցըն մերոց Հարանց՝ Սահակայ, Մեսրոպայ, Գրիգորիանց, Ներսեսեանց։ Գտին նոքա զԱյրդ զՄեծ. որոյ հանապազորդեան փոյթ յառաքինի վաստակս, ծայրագոյն տենչ առ տարածումն և բարգաւաճումն շայեկանազունից զիտութեանց յայլգիս, անդողդոջ հաւատարմութիւն առ հայրենին Եկեղեցի և Կրօն, և յարատեւակ ճիգն և ջան յամենայնի վասն ազգային օգտի և փառաց, այլով.քն հանդերձ, միարան յամենեցունց վկայեալք են ի հերուն հետէ։ Գտին այր (դարձեալ ասեմ՝) զԱյրդ զՄեծ, որոյ միայն է յայժմուս ոչ միայն ամենայն բարեմասն լրութեանց և կարգաց տաճարաց սրբոց և կղերական վարժոցաց լինել հաստատիչ՝ նորոգիչ և բարեզարդիչ այլ և իւրովն համոզակեր իմաստութեամբ բժշկել զբեկեալս, զանկեալս յարուցանել, վհատելոց սրտից տալ միխիթարութիւն։

Իսկ մեզ առանձինն՝ ոչ վարկպարագի խորհրդով՝ այլ իմն համարելի է շնորհ և այլ իմն բարեդիպութիւն՝ այն, զի ամենատեսուչ Խնամակալութիւնն վերին հաճեցաւ զԱհդ մեր Այցելու յանդիման որդւոցս կացուցանել՝ առեալ ածեալ հասուցեալ ողջամի զՊատկառելիդ ծերութիւն ի գաշտէն Արայի մինչև ի բացական ծագս Հիւսիսոյ, և այս ի յաճախել թերևս զփառս Աստուծոյ ամենայն եկեղեցեաց Հայաստանեայց, և զԱթոռոյն Սրբոյ յոր ամբարձայ.քդ արժանապէս։

Զ՞նչ ուրեմն համախմբելոցս ասասէն առնել էցէ ի ժամուս, ո՛ Աստուածապարգև Հովուապետ, եթէ ոչ՝ սրտիւ գուարճացելով զբարեյաջողդ շնորհաւորել զգալուստ՝ օրհնութիւնաբաշխ Աջոյդ մատչել ի համբոյր։

Գ.....ապետ Արծրունեան ազգատոհմից և Հայկազեանաշունչ
ի Լուսաբերեան Մ՝ենատրան ի ազգաբնակեալ վերակացս
Մ՝ոնէր Մ՝ոնէրեանց

ի 21 Դեկտեմբերի 1867 ամի

ի Վենետիկ։

ԱՐԺԱՆԸՆՏԼՐ ԱԹՈՌԱԿԱԼ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ,

ՎԵՀԱԳՈՒՅՆ ՏԷՐ.

Բաղտաւոր է անձն իմ ի ժամուս, իբրև հաւատարիմ թարգման խորհրդոց և զգացմանց որոց շուրջն կան զինեալ, պատուելի պաշտօնակցաց իմոց և մատաղերամ բաղմութեան մանկտոյս, յանդիման եկեալ պատկա-

ռելի Տեառնոյ, ոչ զի քան զամենեսեան ընտելագոյն ինչ իցեմ կամ արդարաւորագոյն ի բանս, այլ զի, ըստ վիճակի պաշտաւանեան, հարկ ի վերայ կայ ինձ հնչեցուցանել զբարբառս իմ ի Վերհագոյնիս յոգւոյն ընդունելութեան ընդ հարկաւ տաճարիս զիտութեանց։ Յաւաչնոյն ի բերանոյ յանձն է ինձ առ ի սրտէ շնորհակալ լինել Զեզ ընդ Հայրապետականդ օրհնութիւնդ այցելութեան Հանդիսի ճգնութեանց բարեխիղճ աշխատաւորացն ի սրբազան գործ դաստիարակութեան և կրթութեան դեռաբողբոջ սերնդոց մարդկութեան։ Զ յետնոցն, մանաւանդ թէ զմանկտոյդ Հայաստանի, ընդ քաղցր հիւրասիրական յարկաւ դպրոցիս ժողովելոց և խնամելոց զերօրինակ բարերարութեամբ և հայրական հոգաբարձութեամբ քաջափայլ տոհմին Լազարեանց—որդւոցդ Հայաստանեայց զեռացումն սրտից ժամուս, զհոգեպայծառ ուրախութիւն ի տեսիլ նազելի եկաւորիդ ծրպէս և զիսրդ կենդանագրեցից ի նկարս բանից։ Այսօր, մանկունք նորոյս Երուսաղէմի տաճարածանելով առաջի Զեր զսիրաս իւրեանց, ի ձայն մեծ աղաղակեն և ասեն. «Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն . . . Խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս»։ Ուրախ լերուք և ցնծացէք, որդիք Հայկազեան Սիոնի. ահա որում Փրկիչ և մեք ոգասէաք անհամբեր հոգւով, Ասուածարեալ Քահանայապետ Քրիստոսեանս Եկեղեցւոյ, ահա Հայր Զեր, խանդակաթ ի սէր մանուկ Հայկազեանցդ, ահա բարեկամ Զեր, առ ի ջերմ սրտէ ցանկացող մնաւոր և բարոյական կատարելութեան Զերում։

Ուրախ լեր և բերկրեաց, Հայր պատուական, ահա ուսումնասէրք որդիք Քո, որդիք յազնիւ արենէ Հայկայ, յոյսք և ակնկալութիւնք ապագայ աւուրց Հայաստանի։ Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ Հօր սիրելոյ որդւոցս սիրելեաց հանդիպումն այսպիսի. և ուստի է մեզ այս շնորհ երկնային, այս օր բարեբախտ։ Ասա ուրեմն սիրելի է ինձ երախտագէտ մտօք դարձուցանել զդէմս առ երկրորդ մայրն մեր Փրկչաւոր, որդեգրեալն զմեզ հերում թագաւորութեան, պարգևեալն մեզ քաղաքական իրաւունս, ազատութիւն անձին և սեփականութիւն ընդ պաշտպանութեամբ օրինաց, ապահովութիւն կենաց յերեսաց արտաքին թշնամեաց, և որ մեծն է և գերագոյնն ճանաչի. ի բարեաց, բացեալն Հայկազանցս զիւր դպրոցս մտաւոր և բարոյական մարզեաց և զառատահոս աղբիւրս Եւրոպականն տպիտահալած, լուսաւոր գիտութեան. յորմէ՞ի բարիս վիճակեցաւ և ոչ երբէք վայելել մերոց անբաղդ նախահարց, մինչ ի սպասութիշաւաղեալոց ընդ երկամիտ գուշակեանս ասիական խաւար և խաւարեցուցիչ բռնաւորաց։ Եկայք ուրեմն, երջանիկ որդիք Հայաստանի, տօնախմբեսցուք զայս օր յաւերժական յիշատակաց արժանի, զպատրաստեալն մեզ աջով նախախնամականին ի ծոց հզօր տէրութեանն Ռուսիոյ, վերուղ-

զկրով առ Բարձրեալն զվասն կենաց և բարօր ելեան Օգոստափառ Կայսեր մերոյ Աղէքսանդրու Նիկոլայեվիչի զառ ի սրտէ աղօթս և պաղատանս, և ուխտեցան նեմ ուխտ անեարատ և հաւատարիմ ծառայութեան ըստ իւրաքանչիւր վիճակի պաշտաման յապագայ կենաց Զերոց։ Եկայք խնդրեսցուք ի Տեառնէ շնորհել և արժանընտիր Հայրապետիս մերում երկայն աւուրս խաղաղութեան, այլ և լուսաւոր միտս և զօրաւոր կամս խելամուտ լինելոյ մնաւոր և բարոյական պիտոյից Հայկազեան ժողովրդեանս ի մերումս ինն և տասներորդ զարու, և քաջ ընդ փոյթ ձեռն ի գործ արկեալ լինելոյ զամենեքին անշքացեալ աշխարհ Հայաստանեայց. ժրաջղութիւն և շնչահայեաց հոգաբարձութեանն տնկելով, սերմանելով և ջուր տալով զիտութեանն ծառոյ ի նոյն իսկ ի ծոց Հայ ժողովրդեան, որով միայն յուսալի է հարազատապէսն յառաջադիմութիւն Ազգիս։ Այլ և աղաչեսցուք զԱստուած զրել ի զպրութիւն կենաց զբարեաց յիշատակաց արժանի հիմնադիրս դպրոցիս, լի չափով շնորհել բարօրութիւն արժանի հարց արժանի զաւակին, անխոնջ հոգաբարձուի դպրոցիս, քաջափայլ Տեառն Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց։ Զայս տուն զիտութեանց, միակ և միակ պարծանս Հայկազանց ի Ռուսաստանեայս, օրհնեա Քոյով Հայրապետական օրհնութեամբ, ով Վեհագոյն։ Օրհնեա զկատարեալ տանս, զաշխատաւոր ուսուցիչս և զպաշտօնեայս, որոց յանձն է դաստիարակութիւն և կրթութիւն Քոյոց սիրելի զաւակաց. օրհնեա զվաստակս ձեռաց մերոց ի բանաւոր անդաստանիս այսմիկ, որպէս զի սերմնարկեալքն ի սմա, յիւրում ժամանակի ի վեր աճեցուսցեն արդիւն և պտուղս ի հարիւրաւորն թիւ, յօգուտ և ի պայծառութիւն Հայկազեան աշխարհի։

Ա—ատ—ցաղէտ Պարոնէ, Ընտիրացի և Հայկական դպրոցական Սարեփառնոս Լազարեանց։

Ի 21 Սեպտեմբերի 1867 ամի

Ի Մայրաքաղաքն Մոսկուա։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Մեք աշակերտեալքս Լազարեանս Ճեմարանի արևելեան լեզուաց, և հարազատ ծնունդքս Հայաստանեայց Առաքելական ուղղափառ եկեղեցւոյ, լի՛ անձկով սպասէաք յաւուրց հետէ շնորհաբեր գալստեան Մեծի Հովուս

ապեռիդ ի Հարիւսոնենչ յայս մայրաքաղաք Ռուսիոյ։ Եւ ահա ի շնորհացն Աստուծոյ ալիժանացաչ այսօր որում փառի սէրաքն։

Թէ ո՞րչափ ի մեզս ինչ ուրախութիւն ընդ այս, անկարանամք մերովս դէրոշմել ապաղօր զրչաւ. ուստի Ձերումդ աստուածատուր հանճարոյ թողլով զայս գուշակել, փութամք մեք հակիրճ բանիւքս զբնիկրապատար սրտից մերոց և եմ յայտնել զգոհութիւն յաղագս բարեհաճելոյ Քաջի Հովսեպեռիդ յայց ելանել հեւանակ որդեկացս, և միանգամայն հայցեմք զի և դուք, Աստուածակարդ Հօտապետ, օրհնեսջի՛ք զմատաղերամ հօտիկս Ձեր, որպէս զի և մեք ամենեքին զօրացեալ կարողացուք հուսկ ապա բարի՛ք զարդացմամբ յուսմունս օգտաւէտս ուրախ առնել ո՛չ միայն զծնողսն մեր և ճեմարանիս զբազմերախտ Հոգաբարձուն և զայժմեան բարեկարգ կառավարիչ, այլ և զՎերերջանիկ Հայրդ Հասարակաց, որ սիրողդ էք իմաստութեան և ջանադիր յամենայնի վասն ազգայնոյ օգտի՝ փառաց և յառաջադիմութեան։

Ընտիրդ Լաղարեան Դ՚ենդարանի
(ի հինգերորդ դասարանէ։)

Ի 1867 ամի ի 21 Սեպտեմբերի
և ի Ղրիմս Քաղաքիս

Ս. Յ. Զ.։

Ի Մոսկուա

ԸՆԿԵԼԱՊԱՏԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ.

Մեծ է մեզ աւուրս բարեդիպութիւն, մե՛ծ է, և որ յայնմանէն ուրախութիւն ի սիրտս մեր։ Մեծ են՝ ասեմք՝ այսոքիկ, և կարի իսկ իրաւամբք. քանզի տուաւ մեզ ահա ի վերնականն տեսչութենէ ակնյանդիման տեսանել զՄեծդ մեր Հովսեպեռ յայցելութիւն եկաւորեալ Հայասերուանդս մանկտոյ՝ տաւաղելոյ ընդ յարկաւ տաճարին իմաստութեան։

Եթէ քաղցր է մեզ և փափագելի՝ ըստ մարմնոյ ծնողացն մերոց Հանդիպել տեսոյ, և զնոցուն դարձեալ զգորովախառն բանսն լսել, քանիո՞ն ապա պարտ և պատշաճ իցէ միւսմ միւսմ ի մէջ խառնել ի ժամուս և ի ցընծութիւն զսիրտ իւր ընդարձակել՝ զլի քաղցրութեանմ զարկնարկութեամն ի

մեզ զիտելով զՀոգևոր Ծնողիս և զլի խրախուսանաք զիարելին լսելով բարբառ զՄեծի խնամակալիզ Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Այլ քանի մատաղատունկս մեր մանկութիւն Աստուածայնում յաւէտ կարօտի շնորհաց օժանդակութեան առ արիաբար ընթանալոյ յասպարիզին՝ յոր մտեալս եմք, հաճեցարո՛ւք և Դուք, ո՛ Ազնիւ Այցելու, տալ մեզ արդէն ի գօրավիգն՝ զՔահանայապետականագ շնորհաձիր օրհնութիւն, որպէս զի և մեք՝ որվնքս Ձեր ըստ Հոգւոյ՝ օր քան զօր ի յառաջագէմն նկրտեալ, մարթիցիմք զէ՛թ առ յապայ բազմապտուղ ի մեզ արդիւնացուցանել զպանծալին յոյս վեհիցն մերոց բարերարաց, և մանաւանդ զՀոգաբարձու Ճեմարանիս, զԱսեմանեալ Պայազատին Լազարեան, զորոյ զՀայրօրէն խնամն վայելենք հանապազօր.

Ընդունիցէք Լազարեան Տ՛էմարանիկ
(ի վերջերէ դասուցեալն։)

Յամի Տեառն 1867 ի 21 Սեպտեմբերի
և ի վերոյ նշանակեալ Ն. Յ. Ժ. Զ։

Ի Մոսկուա

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Եթէ բարեբաստութեան է մասն՝ արանց հանդիպիլ բարեաց, որպէս ասաց որ ասացն, քանիցն ապա բարեբաստիկս զմեզ պարտիմք վարկանել հետացեալքս ի բնականունդ զաւառաց՝ տեսանելով ի միջի մերում զԱյրդ բարի, զմատաղերամ մանկուցս զբարերջանիկդ Հայր, զհանուրց Հայկազանց զբարեփառդ Հայրապետ, զորոյ այսր զհամանուանն զքաջի Զօրավարին ասեմք և մեծի նահատակին Գամրոց — զիտաւորն յիշատակ՝ ուշնականաւ հոչակէ հանդիսիւ Սուրբ Եկեղեցի Հայաստանեայց։

Է՛ ապաքէն և այս՝ նորոյ իմն առիթ բերկրութեան Ձերոցս հոգեանունդ զաւակաց, որք զուարճացեալք ընդ այսանակ շնորհաց հանդիպումն ի վերնականն զոգցես Տիսչութենէ, համարձակիմք ահա վերստին յանդիման լինել Հոգևոր Տեառնդ մերում և Հօր ի պատիւ սերկեանս խոր հրդաւոր հանդիսիս։

Հաճելագոյնք ուրեմն և զուք Աստուածակերպ Հոգեւորպետս, վերսին կարկառել առ մեզ զպարգեւաձիրս զՆՀ Ձեր սուրբ, և վերսին հեղուլ ի վերայ մեր զկաղբուրիչն ոգւոյ՝ զՔ անհաւասարելիանդ զօրհնութիւն, որում կարօտիքս յաւիտեան ժամ։

Հոգեւորական աղաչիւրդ

Լուսակերտեան Մեծարգոյն Սարգիս

630 Սեպտեմբերի 1867 ամի։

Ի Մոսկուա։

ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱԶՆԱՄՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏՍ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀՕՏԱՊԵՏՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐԻՑՍ ԵՐԵՆԵԼ, ԵՎ ՕՐԳՆԵՏԻՐ ԵՒ ԿԱՀՅԱՆԵՐԱՊԱՏԻ ՀԱՒԱՏԱՄՈՒՊԵՍ,

ՍՐԲՈՅ ԱՓՈՍՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ ԾԱՅՐԱԳԱՅՍՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՕԾԵԱԼ

ԱՍՏՈՒԾՈՅՑ ԿԵՆԴԱՆԻՈՅ.

Յաւուրս յայսմիկ, յորում՝ սուրբ Եկեղեցին Հայաստանեայց ածէ զբոյսաղմանակ քաջամարտիկ Զինուորին Քրիստոսի՝ անուանակցի Ձերդ Առաքելական Պարտականութեան՝ Սրբոյն Գէորգեայ, եկեղեցին Քրիստոսի ածէ զյիշատակ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի։

Մեք յանենալքս ի ծառայս Ձերդ Աստուածարեալ Օծութեան՝ տեսանելով ի միում զպաշտպան Սրբազնակատար Գիտապետիդ, զոս Հաստատութիւն հոչակէ ուծնախմբութեանն Եկեղեցին և Ազգ մեր ընդ ամենայն տեղիս, և ի միւսում՝ զնախնին Ձերդ գահաժառանգ յաջորդութեան ի Հայրապետական գերակայ Գահի, որպէս թէ եկեալ յաթոռակցութենէ Քրիստոսի և Առաքելոց նորա ի ուծնակցութիւն մեզ և ի խնդակցութիւն, ոչ կարեմք կալ ի լռութեան, այլ այսու դուզնաքեայ բանիս մատուցեալ ի ծրնչարարական երկրպագութիւն և համբոյր երկնաձիր գարշապարաց, հաճարձակիմք ընդ ելմն և ի շնորհաւորութիւն անուանակոչութեան Ձեր, և բաղկատարած հայցմամբք աղաչեմք զվերնատուողն ամենայն բարեաց, բարեխո-

սուլթանատի սրրոյն Գէորգեայ քաջայաղթ վիպի անուանակցի Ձերոյ կազգուրել զմշակ անուն Տէրդ մեր, զի յանգաստանէ Հայաստան աշխարհի ոչ միայն ի բաց վնասակաջիք զամենայն մոլախոտս և զփուշս, այլ և զկորգացեալ հող նորա արօրապրեալ՝ փոխարկեսջիք յարդիւնաբեր պարարտութիւն, և զբուսեալսն ի նմին զօձս և զկարիճս և զիժս և զքարբս և զվիշապն ահաւոր՝ զեղարգեամբ ասուածապարգև զինու՝ հարջիք և առ ոտն կոխեսջիք, և զարժանաժառանգ զահակցութիւն Ձեր ընդ Գրիգորի և ընդ այլ սրբոց Հայոց այնքան պայծառացուսջիք յաստուածառաք մշակութեան, զի ազգ մեր՝ որ պարծի ցարդ ի մի Լուսաւորիչ իւր, պարծեսցի նոյնօրինակ և ի փոխանորդդ նորա, վայելելով յարդիւնս ճշմարիտ լուսաւորութեան ծագկոյն ի Ձեր անխոնջ և անձեռնմիր երկասիրութեանց։

Ձերդ Բարձրապատուութեան Խոնարհագոյն Ծառայ Ղուկասեանք Պատրիարք։

1867 Սեպտեմբերի 30։

Սանկտպետերբուրգ։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ

ՍՐԲԱԶԱՆ ՏԷՐ ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ։

Մեք՝ պատգամաւորքս ի կողմանէ Ս. Պ. Բուրգոյ Հայ ժողովրդեան՝ բերկրեալ սրտիւ և խոնարհեալ անձամբ ելեալք ընդառաջ Ձերդ Վեհափառութեան առ ի շնորհաւորել զբարեյաջող այցելութիւն Ձեր առ մեզ։ Այսօր, յորում՝ լցաւ բազմաժամանակեայ իղձ մեր փափագանաց և հանապազօրեայ ցանկութիւն մեր տեսանել զՁայրն մեր հանրական. այսօր անպատմելի է ցնծութիւն սրտից մերոց մերձենալ և յարել ի Ձերդ Սրբութիւն. վասնորոյ մաղթելով ի Ձէնջ՝ ով Սրբազան Տէր մեր Հոգևոր՝ հեղուլ ի մեզ զցօղ օրհնութեան լուսացնցուղ աջոյդ՝ հայցեմք ի Տեառնէ Տերանց, զի տացէ նա մեզ տեսանել զՓառնայապետական Գլուխն Փառնայապե-

տութեանց ընդ յամայր ամն նատեալ խաղաղութեամբ յԱմենեն սրբութեան՝ լուսաւորիչով Համասփիւռ զորդիս իւր ի փառս և ի բարձրութիւն Եկեղեցւոյն Քրիստոսի և ի պարծանս ազգին Հայոց։

Սրբազան Քրիստոս.
Երանեալս եւ յիշատակեալ ծառայք՝
Սիմէոն Լուսոլոյս — Շահէնից
Մինասեան Սանասարեանց
Պարսամեան Նոլեան
Գնէորգի Նազանդեանց
Գրիգորի Պատրիարքեան.
Պոլսեանցն Գրիգորեան
Աւետիսեան Շանլեանց
Յովսեփի Նուշեանց

Ի Ս. Հռիփսիմէի 1867 ամի։
ի Լիւբան էջեանի։

(Ասան սասցեալ ի գաղտնաբար ՀԱ Հիսուսեան Պատմութիւնն Գրիգորեանց, յայցելութիւն Հօրին Իւրոյ)։

«Մեծ ապար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք ցնծալք։»
(Սաղմ. գլուխ 125. հատած 3։)

Սուրբս հանդէս հոգևոր ցնծութեան ընդհանուր առ ձայնէ որդւոցն Արամայ։

Հայեաց և տես ընակիչդ Հայաստանի մտաւոր աչօք զեկեալ հասեալ ուրախութիւն քո, փութա՛ լինել պարեսաւոր Արարատայ մեծի, զառամելոյն յալիս սպիտակափառ յիւրում սուրբ գագաթան. զի ահա կենդրկաբոյր մաղթանօք լուսատուին հոգւոց մերոց՝ որոյն Գրիգորի Մեծի Պարթևի՝ Մեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, և մեք եղաք բերկրեալք։

Ահա առպարև՝ գեղեցիկ ստեղն իւր յոստոց նորին շառաւիղ ընձիւղեալ, վեհագոյն ի վեհից ընտրեալ Քահանայապետն մեր աջոյ նէաւորեալ յիւ-

բում Քրիստոսաէջ սուրբ Կայանէն, յայս Նիւթական յարկի արդուքեան, ի Հարենացեան ինքեան սուրբ Եկեղեցի, Փեսայ փառացի յԱմենոր բազմի, միմիայն ի Նպատակ Հոգեւորականապարտ այցելութեան բանեղէն փոքու Հօտին իւրոյ։

Յայսմ Հոգեզուարճ Հանդիսի յիրաւի՝ առնչութիւն ծուրբ յայտնի Ընկատի, որպէս Հայր և որդիք, խաչինք՝ և Հովուապետ, ընդ Հոգեկցորդ առնչութիւնն և առեւտրութիւն գեղեցիկ. զի յայսմ աւուր՝ բարոյապէս որդիք լոլորապտուղ ընծային արդարացեալ և գերափառ Հօրն Հարանց զսիրտս՝ լի արդեամբք յաւէրժ սիրոյ և մեծի յարգանաց։

Ով Աստուածանման խնամոզ զմոյ վեհատիճանեալ Քահանայապետս, զի որպէս իսկ և իսկ կնքեալ ի սուրբ Հոգւոյն՝ ի Հայրապետութիւն և ի Հովուապետութիւն, այսօր ըստ էական յատկութեան ոսկեփունջ առեալ, համասփիւռ ծաւալեալ ի լոյս իւր ազգասիրական՝ իրրև բաժակաւ բերկրալի հոգեղէն սիրոյ, յուսապինդ կազդուրէ զսիրտս որդւոցն իւրոց, յապայն և միշտ ի հոգեպէս երջանկութիւն՝ մեծավարժ զարգացման մանկանցն Հայաստանի։

Ապաքէն՝ յայսմ բարեպատեհ ժամու՝ ի յուշ ածեն ամենեքին՝ որդիք քո Վեհափառ Տէր, զյիշատակս նախնի վեհապունից՝ նախապատճառ Առաջնորդացն մտայոյս վարժից և ուսանց՝ սրբոցն Սահակայ և Մեսրովբայ։ Զի յիրաւի նոքա հիմն արկին՝ և հոգեշունչ աշակերտք նոցին, սոփերք Հայաստանի, Մովսէս, Դաւիթ, Մամբրէ, Կորիւն, ևլն, ի յանկ ածին. նոքա ծնան Մայրաբար՝ և սոքա սնուցին գայթակղաբար, միախորհուրդք նահատակեալք՝ իրր լծաբարձ ամօք և Աստուածազոյդ ակոսատարք՝ զանարօրաղիր անպատանս մատաղատունկ մանկանց հերկագործեալք։

Արդ առ հոգեկոչ Օծութեամբ Վեհափառ Քահանայապետիդ մերոյ՝ յիշատակատեալք երկասէր մշակք սուրբ եկեղեցւոյ՝ ի խրախոյս պնդեն զորդիս Հայաստանի, մեծաձայն բարբառին նոքա ի Հանգստեան իւրեանց։ կենդանի եմք մեք, կենդանի են և ոսկերք մեր ի մահուն, և անմահք ի բարութեան. քանզի ահա բարեգոյեալն Այր Հովուապետ ըստ սրտի սուրբ Լուսաւորչին, այն որ յաջոյ ձեռին ունի զծաղկեայ գաւազան նորին, այն՝ որ յոլովանեալ նաղարանեալ յԱհարոնեան սուրբ կարգի յարժանընտիր յԱմենոր նատի՝ և ընդ Լուսաւորչատիպ խաչանիշ դրոշիւ իւրով՝ տաւաղեալ ունի զորդեզրեալսն սուրբ հաւատով, մատնանիշ ցուցանեն երանելիքն։ Ահա նա է Մեկենաս ընտիր, որ զարթուցէ զյիշատակս մեր՝ և նորոգեսցէ զյոյս մեր ընդ նորոգութեան մանկանց Հայաստանի ի լոյս խնամատից, բարոյական, մաւորական և երանական կրթութեամբք։

Ի ժամուս ի Աստուածապատիւ Հոգևոր Տէր մեր, շուրջ զքեզ որդիք քո ծայրացեալ ծովացեալ յանխնդարդմանն ցնծութիւն սրտի և հոգւոյ՝ պարեալք զծնկովք Աստուածամեծար Քահանայապետիդ մերոյ՝ ի համբոյր Աջոյդ սրբութեան՝ շնորհաւորեմք զառաքելաշնորհ գալուստ Ձեր և զմուտ յայս յարկ սրբութեան, ի ըստ հոգւոյ սիրելիս հոգւոց սրտից և մտաց՝ լուսաւորչերամ սուրբ Հօտիդ։

Ի վախճան հոգեզուարճ հանդիսիս, օրհնեմք զոհաբան և գովաբան շարթամբք և զՕգոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց զԱլեքսանդր Նիկոլայեվիչն, զՀզօրեղ պաշտպանն ընաւից Քրիստոնէից՝ և սև Արամեանս զրոհիզն ի քաղցր խնամն նորին, երանաւէտեալք, զերծ ապահովացեալք յապահաւատից ընդնաբարութեանց, ազատաքայլ յուղղափառութիւն յամենայն հոգևորիչ յօրէնս, ի ծէս և յարարողութիւնս եկեղեցւոյ Հայաստանեայց, պարծեմք բարձրագլուխ։

Կեցցէ ի բիւրոց շրթանց վերօրհնեալ ինքնակալն մեր. կեցցէ և Աստուածընտիր և Ազգընտիր Վեհափառագոյն Տէրդ մեր, ընդ ձիգ ամն ըստ աւուրց երկնից ցանկացեալ բարօրութեամբք, ի յառաջադէմ միաբանութիւն հայրենի եկեղեցւոյ քում սրբոյ, և ի պարծանս համօրէն մանկանց Հայաստանի։

Ներքին Վարչական Ընդհանրից

1867 Հոգեմբերի 4.

Ի Ս. Պետրոս

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Թոյլ տուէք նախ շնորհաւորել Ձեր երկար, բայց յաջողակ ճանապարհորդութիւնը մինչև այս սառնամանեայ հիւսիսը, և ցանկալ նոյն յաջողակ ճանապարհորդութիւնը մինչ ի աթոռանիստն Ձեր սուրբ Էջմիածին։

Այդ բաղդաւոր ճանապարհորդութիւնը մեզ համար ցանկալի էր, որովհետև թանգագին է մեզ համար Ձերդ Վեհափառութեան կեանքը։

Ձերդ Վեհափառութիւնը, իւր երկար ճանապարհորդութեանը ժամանակ՝ Թոսիորից սկսած մինչև Երասխի ափերը և Երասխից սկսած մինչև այս հիւսիսային Նեւայի ափերը,—ականատես եղաւ և անձամբ միկայ այն զգացմունքներին, այն սիրոյ և յարգանացը, որ Հայկական հասարակութիւնները ցանազան քաղաքների շտապումէին արտայայտել և ցոյց տալ դէպ ի իւր սիրելի և ցանկալի Կաթուղիկոսը։

Միևնոյն զգացմունքը և սէրը շտապում է յայտնել և Պետերբուրգեան փոքրիկ Հայկական Հասարակութիւնը, ինչպէս Ձերդ Վեհութիւնը տեսնում։

Վեհափառ Հայր, երկու պատճառ են, որք դրդում են Հայկական Հասարակութիւններին շտապել և յայտնել իւրեանց զգացմունքները, սէրը և ցանկութիւնները։ Առաջին պատճառը առնում է իւր սկիզբը պատմութեան հետ դարերից, երկրորդն է այն յոյսը ապագայումն, որ ունի Հայն Ձեր վերայ և սպասում է Ձերդ Վեհափառութեան անխոնջ և աչալուրջ աշխատութիւնից և արմնութիւնից վերածնութիւն մտաւոր և բարոյական։

Հայկական ազգը երկար դարեր չընայելով պատմական դառը և աղետալի դեպքերին պահեց, և մինչև օրս էլ պահպանում է պինդ իւր կրօնը և լեզուն։ Այդ պատմական դառը և աղետալի դէպքերը՝ մինչև անգամ հուրը և սուրը ոչ թէ չը կարողացան Հայկական սիրտը խոովեցուցանել և քերել նորա սրտից այդ ազնիւ զգացմունքը, այլ ընդ հակառակը աւելի և ևս պնդացրին վերին աստիճան այդ սէրը դէպ ի իւր առաքելական և նախահարց եկեղեցին, դէպ ի իւր լեզուն և սովորութիւնները։ Նմանապէս ապագայումն էլ ոչինչ թշնամոյ դարան չի կարող Հային իւր շաւղից ծլոել։ Ուրեմն Հայն խորին սիրելով և յարգելով իւր եկեղեցին, սիրում է և յարգում է նորա Քահանայապետին. Հայն պատուելով իւր եկեղեցւոյ Քահանայապետին, պատրաստ է կատարել նորա ասածները և հրամանները, որպէս բարձր և սուրբ օրէնք։

Երկրորդ՝ Հայն սպասում է, ասացինք, ապագայումն Ձերդ Վեհափառութեան անխոնջ աշխատութիւնից և խոհեմութիւնից մտաւոր և բարոյական վերածնութիւն։ Այո՛ Հայն զգում է, թէ որքան հետ է մնացել մտաւոր զարգացման մէջ՝ ուրեմն և բարոյական զարգացման մէջ՝ ուրիշ կրթեալ և յառաջադեմ ազգերից այս լուսաւորեալ դարումն։ Հայն քաղցած է ուսումից և սպասումէ մի ազգու և դրդիչ զօրութեան, պէտք է, նորան դէպ ի լոյս տանի, ուրեմն և ճանապարհ ցոյց տայ դէպ ազգային լուսաւորութիւն։ Այսպիսի բռնած ճանապարհով անկասկած կըբարեւոքանա և կը կատարելագործուի մտաւոր և բարոյական զարգացման աստիճանը Նմանապէս և հոգևոր դասի, որոյ այժմեան դրութիւնը աննախանձելի և պահանջում է շատ բաներ ցանկանալու և որով Հայկական Հասարակութիւնը կը փարատուի այն խոովութիւններից և երկպառակութիւններից, որոնց պատճառը այդ հոգևորականներն են լինում և որ կըկարողանայ հանգիստ և խաղաղ զբաղուել իւր զաւակաց կրթութեամբը և դաստիարակութեամբը։

Ուրեմն Վեհափառ Հայր, մեք էլ կապասենք միւս Հայերի հետ, մեք էլ կը յուսանք բոլորի հետ այն բաղդաւոր ժամանակներին, և միայն կըկրկնենք պատմութեան հայեացքով՝ որում շատ տուաւ, շատ ի նդրեսցի ի նմանէ։ Իսկ այժմ և միշտ կաղօթենք, որ նախախնամութիւնը պաշտպանէ Ձերդ Վեհափառութիւնը, որ թանկագին է մեզ համար, և տայ կարողութիւն իրագործելու այն բոլորը, որք պիտանի են և բարերար Հայկական հասարակութեան, որով մնամք կարօտ այժմ և միշտ Ձերդ Հայրական օրհնութեանը։

Ո—ասանող Օ—տոպչի Գ—լէֆոչեանց

1867 ամի է 4 Հոկտեմբերի,

է Ս. Պ. Բ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Մեք Ս. Պետերբուրգի Հայ ուսանողքս, որ այս հեռաւոր երկրում կազմումենք մի փոքրիկ խումբ պանդուխտ Հայկազանց, հաւաքուել ենք այժմ Ձերդ Վեհափառութեան բարի գալուստը ողջունելու և զուարթ դիմաք Ձեր Հայկական Սուրբ աջը համբուրելու։ Մեր ուրախութիւնը չափազանց է, Վեհափառ Հայրապետ. քանզի այս աւէտաւոր ժամում մեք որ բաժանուած ենք հեռաւորութեամբ մեր քաղցր ծնողներից, մեր կամոգին ազգականներից, — տեսնելով Ձեզ այս հիւսիսային երկնակամարի տակ, յաղեցնումենք սրտ բիս տենչական կարօտը և մխիթարուումենք Ձերդ Սրբազնութեան օրհնութեամբ. վասն զի դուք էք մեզ և ցանկալի Հայր և գորովագութ Մայր և սրտակից ազգական։ Եւ որպէս պանդուխտ որդին երկար ժամանակից յետոյ տեսնելով իւր կարօտացեալ ծնողներին ընկնումէ նոցա բազկատարած գիրկը,—նոյնպէս և մեք, զթառատ Հայրապետ, դիմումենք այդ դէպ ի Ձեզ և դողդոջուն շրթունքով համարձակվումենք որդիաբար յայտնել Ձեզ սրտերիս խորհուրդը։

Սրբազնասուրբ Հայր. շատ դարերէ ի վեր մեր ազգի միակ պարծանքն և փառքը եղել է միշտ մեր Սուրբ Եկեղեցին. դա է եղել մեր միութեան կապը և ազգութեան հիմքը։ Զրկուած գոլով ամուր քաղաքական կեանքից, մեր տօնելի և երջանկայիշատակ նախնիքը առաքելահիմն եկեղեցւոյ մէջ են ամփոփել և մեր կրօնը և մեր ազգութիւնը, և ցվերջին կաթիլ նուրբ արեան մարտիրոսաբար նահատակուել են, այդ եկեղեցւոյ սուրբ իրաւունքը պաշտպանելու համար։ Եւ նոցա շնորհիւն է ահա, որ մեք մինչև ցայսօր՝ թէև զրկուած քաղաքական կեանքից, —փառք Վեհին Աստուծոյ — կենդանի

ենք գեռ մեր մայր եկեղեցւոյ սուրբ հովանաւորութեան տակ։ Եկեղեցւոյ շնորհիւն է, որ մինչդեռ մեր վաղեմի դրացի ազգերը ջնջուել են աշխարհիս երեսից և նոցա անունը անգամ իսպառ անհետացել է կենսական մրրկաշունչ ալեաց մէջ,—մեք դեռ կանք և կենդանի ենք մեր ազատ հաւատով մեր սուրբ եկեղեցւով։

Ուրեմն ի՞նչ տեսակ ջանք և ոգիսի աշխատանք պիտի յանձն առնենք մեք, որ կարանանք քաջապէս պաշտպանել մեզ աւանդուած այդ անգին գանձը, որ և է մեր ցրուեալ ազգայնոց միութեան սերտ կապը, ազգութեան ամուր հիմքը և լեզուի ճոխ պահարանը։

Դար ժամանակ, երբ արեամբ և զէնքով էին պաշտպանում կրօնը, նահատակուելով պատերազմական դաշտի վերայ և մարտիրոսական սրակ ժառանգելով. բայց մեր տօնելի նահատակները քաջ գիտէին, որ քան զսուր հզօր պաշտպան և ապաւէն կայ եկեղեցւոյ—այն է բարոյական ոյժը և իր վաղուց անտի զինուորվեցան անպարտելի ուսմամբ։ Եւ իրաւ, երբ ուսումը առաւել տարածուած է եղել մեր հայրենեաց մէջ, նոյնժամանակ և մեր եկեղեցին առաւել հզօր ու պայծառ է հանդիսացել. և ընդհակառակն՝ ուսման նուազած բոպէում նա ևս սև քօղ է ձգել իւր վերայ ու նշաւակ է դարձել թշնամեաց։ Ուրեմն կեցցե՞ն միշտ անմահ երանելի սուրբքն՝ Մեսրոպ և Սահակ. քանզի նոքա բարձրացուցին ուսման չահը մեր նախահարց հորիզոնի վերայ և սփռեցին ազգի մէջ աստուածաշունչ լոյսը գիտութեան։ Այդ անշէջ չահը՝ մերթ պայծառ վառուելով և մերթ աղօտ նշոյլներ արձակելով յընթացս երկար դարուց՝ հրաւիրում էր Հայերին ուսանելու, և Հայկազնորդիք յօժարակամ սիրով ընթանում էին դէպ ի աղբերակունքը գիտութեան. բայց ո՞ւր էին այդ աղբերակունքը գիտութեան. աւա՜ղ, մեր հայրենեաց մէջ չէին, այլ հեռաւոր աշխարհներում, օտար սահմաններում։ Սակայն մեր նախահարց սէրը դէպ ի գիտութիւն այնքան վառ էր և հզօր, որ հեռաւորութիւնը ոչինչ էր նոցա համար, և Մեսրոպեան ու Սահակեան արիասիրտ աշակերտքը քաջ ու հաստատ քայլերով գնում էին Ամէնք, Հռոմ, Ալէքսանդրիա և Բիւզանդիոն, Վերադառնալով զարգացեալ մտօք այդ հոյակապ քաղաքներից Մեսրոպեան ու Սահակեան կորովամիտ և ազգասէր աշակերտքը, ամեն իւրեանց նորագիւտ գանձերը նուիրում էին առատապէս նախ և առաջ. յօգուտ Հայրենեաց, և նոցա քրտնալից ջանիւք պայծառացաւ ահա մեր եկեղեցին, ճոխացաւ մեր գրականութիւնը և մշակուեցաւ մեր հարուստ լեզուն։

Նոյն ուսման սէրը երևում է և մեր նոր սերունդների մէջ, Վեհափառ Հայրապետ, բայց չէ երևում այլ և այն հայ։ենասիրական ։արժանիքը,

որ սահմանումէր Հայերին ուսանելու անցեալ օրերում, և կորել է այն սուրբ նպատակը, որով ողևորուած էին և առ որ ձգտումէին միշտ մեր նախնիք։ Եւ մեք ահա, որ ներկայացուցիչն ենք այսօր ուսանող երիտասարդութեան, թէև լուսաւորումենք միտքերս գիտութեամբ, բայց այդ առաջին քայլով միայն և եթէ կարանումենք նմանիլ Մեսրոպեան և Սահակեան նուիրական աշակերտներին, իսկ յետագայ գործունէութեամբ, որ ամենագլխաւորն է— իսպառ հեռանումենք նոցա բռնած ճանապարհից, և չենք կարող նոցա պէս ձօնել մեր ուսման արդասիքը ի սեղան մայր սուրբ Եկեղեցւոյ։

Այդ ցաւագին հանգամանքի պատճառը որպէս մեք ինքներս ենք, նոյնպէս և ճակատագիրն է Վեհափառ Հայրապետ, քանզի շրջան այլ ևս չմնաց մեջ Մեսրոպներ ու Սահակներ, որք ,, արդեղով զուսումն և ուրախանալով ընդ առաջադիմութիւն աշակերտաց,, ճանապարհ ցոյց տային մեզ և հայրապետ առաջնորդէին մեզ դէպ ի նպատակը, որ և մեք առանց վրիպելոյ և խոտորելոյ յաջ և յահեակ անսայթաք քայլելով կարանայինք հասանել ի կէտ նշանին և սահմանուած շրջէինէինք կրկնելու շնաշխարհիկ ծերունւոյ՝ Մովսէսի Քերթողահօր սրտառուչ խօսքերը, թէ ,, Ո՞ւր զուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն, ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց, ո՞ւր երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցանող։ Կորեաւ ժողովն, թագեաւ նաւահանգիստն, ելիք օգնականն, լռեաց ձայնն յորդորեցուցիչ"։

Բայց այս աւետաւոր ժամում, փոխելով տրտմութեան հառաչանքը ձայն անսահման բերկրութեան՝ մեք կոչում ենք։ Ո՜ ազգընտիր Սրբազնագոյն Քաջ Հովսեպ՝, որ հրաւիրուածդ է.ք ի ժառանգութիւն առաքելական Գահին Լուսաւորչի, Դուք եղէ.ք ուրեմն մեր Մեսրոպը, Դուք եղէ.ք մեր Սահակը և Հայրախնամ աջով ազգային ուսում մատակարարեցէ.ք մեզ, որպէս զի և մեք ըստ լուսապայծառ օրինակի նոցա յաւէրժաւիշատակ աշակերտաց կարանանք արժանի զաւակ հանդիսանալ մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ և թէ՛ բանիւ և թէ գործով նպաստաւորել նորա պայծառութեանը և անդրդուելի հաստատութեանը։

Զերդ Վեհափառութեան խոնարհ ոբդի

Փիլիպպոս դէր Յարութիւնեան Վարդանեանց

Ի 1867 ամի 8 Հոկտեմբերի

Ս. Պետերբուրգ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Յովհ. ԺԶ. Փոքր մի տեսաք զՔեզ. և փոքր միւս ևս՝ և ոչ տեսցուք զզ-
16. Քեզ. և ամենեքեան՝ որպէս երրեմն որդիք մարգարէից առ Ե-
Դ. Թագ. Բ. ղիսէ, ասեմք ցմիմեանս, եթէ գիտիցես՝ զի այսօր առնու Տէր
4, Ե. 12 զՏէրդ ի գլխոյ քումմէ. և կառք հրեղէնք և երիվարք հրե-
ղէնք անջրպետեսցեն ի մէջ մեր։ Զորօրինակ Կղէոպանք ի ճա-
նապարհին Էմմաուսայ ասէին ցՅիսուս, և մեք ասեմք առ
Ղուկ. ԻԴ. Քեզ, Տէր՝ առ մե՛զ ազիր. բայց դու Վեհափառ Տէր՝ պտտ-
29. 26 ճառես հեռագոյն ևս երթալ։ Գիտեմք՝ զի ելանես առ Հայրն
Յովհ. Ի. 27 մեր և առ Հայրն Քո սուրբ Գրիգոր Լուսաւորիչն, ելանես առ
Աստուածն մեր և առ Աստուածն Քո՝ առ Յիսուս Միածինն,
որ բնակարան ինքեան և Տուն արարեալ է զտեղին Իջման իւրոյ՝
Յովհ. ԺԴ. զԱթոռն հարազատին իւրոյ. գիտեմք՝ զի յորժամ երթիցես՝
3. ձգեսցես և զմեզ զամենեսին. ուրեմն երթ ի խաղաղութիւն և
Ղուկ. Ա. Տէր եղիցի ընդ քեզ։
26 Բայց գիտէ՞ք՝ Հոգևոր Տէր, զի ընդ Քեզ տանիք զսիրտս և
Դ Թագ. Բ. զՀոգիս ամենայն զաւակաց Քերոց, որք աղաղակեմք Հայր՝ Հայր,
12. կառքդ Իսրայէլի և հեծեալքդ նորա։
Տանիք ընդ Քեզ զսէր որդւոց Հայկայ և Արամայ, որք թա-
Դ. Նագ. Բ. խանձեմք, զի եղիցի կրկին Հոգի Քո ի վերայ մեր։ Տանիք ընդ
9. Քեզ զսրտեռանդ մտերմութիւն հոգեծին զաւակացս Թադէոսի
Մտ. ԺԷ. 4. և Բարդողիմէոսի, ոչ՝ ասեմք՝ բարեղք էր մեզ աստ լինիլ։
Տարէ՛ք ընդ Քեզ՝ Օծեալդ Աստուծոյ կենդանւոյ, տարէ՛ք զայն
ամենայն ջերմեռանդն հոգեհարազատութիւն, զոր ազգ Հայոց
ետ ի ձեռս Քեր իրրև աւանդ և իրրև առհաւատչեայ իւրոյ
Հայրենասիրութեան։ Մեզ այսուհետև այսքան մնայ ասել. Տէր
պահեսցէ զՔեզ յամենայն չարէ, պահեսցէ Տէր զանձն Քո։
Սղ. ՃԻ 6. 9 Տէր պահեսցէ զմուտ և զելս քո յայսմ հետէ մինչև յաւի-
Ել. ԺԴ 21. տեան։ Ինքն Տէր եղիցի Քո՝զ ճանապարհորդակից՝ որպէս եր-
Ժ-ոմ. աղջխ. բեմն Իսրայէլի։ Եղ՛ցի՝ ընդ Քեզ Տէր ի նստիլ ի տան, ի գնալ ի ճա-
նապարհ, ի ննջել և ի յառնել՝ զի մի՛ երբէք սասանեսցիս։ Ի թիկ-
Սաղմ. Ղ. 12 նամէջս իւր ընկալցի՝ զՔեզ. և ի Հովանի թևոց նոցա յուսասա-
9 ցիս։ Բարձրեալն եղիցի Քեզ ապաւէն . . . փրկեսցէ և փառաւոր
16 արասցէ, երկայն աւուրքք լցուսցէ և ցուցցէ զՓրկութիւն իւր։

Ի Պատրիարքանէ ի Գէոմոց Ժ-ողովոյ Քահանայ

Ի Պերբերոյ-ԷՔ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Բարեբաղդս Համարիմք զմեզ այսօր ներկայանալ առաջի բարձր Վեհափառութեան Ձերոյ, ասա, յերկիր Աւստրիոյ Պետութեան ի Ջերնովից Մայրաքաղաքի։

Մեք ի ծոցոյ Լուսաւորչագաւան Հայ Ազգիս Հասարակութեանց, ի շրջից Նահանգաց, այս է ի Պուգովինայէ, ի Կալիձիայէ, ի Մոլտաւիայէ և ի Պէսարապիայէ, որպէս ազգային պատգամաւորք, առնումք զՀամարձակութիւն դիմաւորել ասա ի Մայրաքաղաքիս զբարձր և ծայրագոյն Քահանայապետդ մեր և ամենայն Հայոց։

Ամենախոնարհ Պատգամաւորութիւնն մեր անպատում խնդութեամբ Հանդիսացուցանէ այսօր առաջի Վեհափառ Տէրութեան Ձերոյ՝ զկատարեալ Հաւատարմութիւն և զՀարազատ Հպատակութիւնն ամբողջ Ազգիս՝ զոր ունի աւանդեալ և օրինադրեալ ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ մինչ առ Ձեր Աստուածընտիր Հայրութիւն, որ Ճաշակորդն էք սրբոյ Լուսաւորչին և Ժառանգորդ առաքելական Գահի Նորա։

Պատգամաւորութիւնս այս Հաստատութեամբ ամբողջ Ազգիս և Եկեղեցւոյս մերոյ, խոնարհ երկրպագութեամբ նուիրէ ի վերայ բաղկաց Վեհափառ Հայրութեան Ձերոյ զլիաբերան բարեմաղթութիւնս և զբիւրաւոր բարեբանութիւնս ասելով. կեցցէ վեհափառ Տէրդ մեր. կեցցէ ըստ աւուրց երկնից առ ի հովանի. օրհնեալ և ի պայծառութեան պահել զպանծալի և ջերմեռանդ Ազգ մեր առաջի Աստուծոյ և առաջի Աշխարհի։

Ընդունելութեան պատգամաւորներ ընտրեցան Նահանգաց

Ի Ամենայն Հանդիսաւորութեան 1867 -ին

Ջերնովից

Խաչիկ Եշան
Անտոն Կոյլիվ
Սիմոն պարոն Գոբրի.
Աստուածատուր Պըրբիլիանց
Գէորգ վ. Ջուանը
Գաբրիէլ Յոհաննէս Սիմէոնեանց
Լուսիկ վ. Կոյլիվեանց
Մկրտիչ Ջուանդրեանց
Լուսիկ Ա. Կոյլիվեանց
Գրիգոր Կոյլիվ
Յոհաննէս Կոյլիվ
Յակոբ Բոբովեան
Սիմոն Ալտաջ.

Սուլտանի Հոյոց Բհ. Ղ. Ն. Մ. Բոբովեան
Կարապետ ֆն Բրանդուլ Շրիղիդեանը
Միխայել պարոն Գոբրի.
Աբրահամ ֆն Բրան ֆուլ
Տանիել պարոն ֆ. Գոբրի.
Նիկողոս պարոն Գոշրի.
Վարդերես պարոն Գոբրի.
Անտոն դրապատ
Աստուածատուր Գոբր. ֆն. Բրանֆուլ.
Եսայի Եսֆոպինց
Յարութիւն Ա.Ժ. ֆ. Բրանֆուլ.
Իլիա դրապատ
Աստուածատուր Ասիրիէ պօղանցուլ
Գէորգ Եսֆոպինց

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՎԵՀԱՊԵՏ.

Մեծ Հաւատն զայս ասէր՝ ոչ ոք ասանէ
նմանս զանձն իւր տալոյ ի վերայ քարեկամաց
մաց իւրոց։ "Յովհ. ԺԵ. 13։

Ս բասնունդ Հարանարան սրբոյ Տաճարիս ցնծայ այսօր Հոգևորն բերկրութեամբ ընկալեալ յառաջաստի իւրումն սրբութեան զփնտայդ երկնաւորէր, և որդիք իւր Հոգեծինք շուրջ զԱթոռով Աստուածատուչ զլխոյդ Հանուրց Հայկազեան, զԱստուածային գիտակ գերազանց սիրոյ լրութեամբ տեսանելով, ի Քրիստոս Յիսուս Վեհափառ անմեռունջ բարբառով կարդան զբանն Փրկչական. "Մեծ Հաս քան զայս սէր ոչ ոք ունի"։

Այցելուդ Վեհափառ, ջանք Ձեր և հիմունք սկզբնականք՝ զոր յօրէ վերաբերձի Ձեր ի Գահ Հայրենի՝ թ՝ցեալ ը՝դ սեպ՝ալան պարտուք Ձերովք և իրաւամբք Հաստատիմն առնեն զմեզ, զի դուք ջանադիր էք վասն Ազգի պատրաստել զնոր ինն ապագոյ բարեբաստիկ. և ներկայ ճանապարհորդութեան Ձերում բազմաքիրտն այս պատարագ՝ է առհաւատչեայ Ձերոց հոգեկան բաղձանաց, որով յաղթանակեալք ամենայնի, որք խափանարարք իցեն։ Եւ արդարև "Մեծ Հաս քան զայս սէր ոչ ոք ունի. զի անձնադիր էք յայս Ազգային բարեբաղդութիւն։

Մեծ Հաս քան զայս սէր ոչ ոք ունի, զգամք Հոգւով և ճանաչեմք եբրայեցատարտ սրտիւ, զի ըստ առաքողին բանի առ ի խնայամտութեամբ ճանաչել զանձինս խաչանց Ձերոց զփրկչականն Հետևելով զպողոտայ իբրև քաջ Հովիւ նչեալ զանձն Ձեր ի վերայ Հօտիդ, թողեալ զՀանգիստ, առ ոչինչ գրեալ զտաժանութիւն ճանապարհաց, ծաղը արարեալ զահեղաստաստ ալեօք ամէնի ծովուց, յաղթանակեալ ջերմին եռանդեամբ թանձրատարափ սառնամանեաց, սլացեալ ընդ բաղում ասպարէզս ծովու և ցամաքի, յարևելից ի հիւսիս և յարևմուտս զիմ՝ք ի խնդիր բարօրութեան Հօտիդ։ Եւ արդա՛րև մեծ Հաս քան զայս սէր ոչ ոք ունի։

Ի հանդիսի այսօրինակ Ձերում անձնանուէրն զոհաղործութեան և ահա՛ ընդ հորիզոնաւ Գալիցիոյ, Պուգավինոյ, Մոլտաւիոյ և այսօր իսկ Պեսարաբիան և նոր Ռուսական Կուսակալութեան արժանեանն շնորհաց Այցելութեան Ձերում որդիք Ազգի տարանջատք ի հայրենեաց, լաւ Հաս ասել՝ նշխարք ջրից տասանց յերուց վաղադարեան Անդամոց Հայութեան. որք ի սաստիկ բռնաւորաց և ի նախանձուէ աշխարհակալաց վտարանգեալք ցիր և ցան սփռեցան յաշխարհաց յաշխարհ. անցեալ ընդ հուր ընդ սուր և ընդ ջուր սատանօր ճիայն գսին զՀանգիստ։ Նոքա, նախանիք մեր զրկեալք

ի Հայրենեաց մոռացան զմեծամեծ վայելչութիւն իւրեանց. լաւ համարեցան աւանդել մեզ զհաւատն լուսաւորչաւանդ. ընտրեցին ի մէջ ճոխութեանց զնշխարս սրբոց տաճարաց անվասաւոտ հաւուցանել ի մեր ժառանգութիւն յայս երկիր յօտար. թէ և ի վիշտ մեզ տեսանելիք զտաճարս կանգնեալս յանմահ յիշատակ մեծագործութեան նոցին զերեալս ի ձեռս խոլեալ ազգաց Ազգութեան, ոլք յիջանելն ընդ ճանապարհ Երիքովեանն փորձութեան կողոպտեալ յԱզգային Կրօնէ և յԱստուածախօս բարբարոց, կարօտին այցելութեան արիական Սամարացւոյ ի դարձուցանել ի պանդոկ Հայրենի Եկեղեցւոյ. Եւ սակաւիկ միայն իրրև ճիռ օրհնութեան պահպանեալք ա-ներևոյթ հովանաւորութեաւն հրեշտակի Բարձրելոյն ի վարս Հայրենի, բարեբա՛ղդ գտանին զի տեսանեն զՀովիւդ քաջ, որ զանձն Զեր եղեալ ի վերայ Հօտիդ արծարծէք ի մեզ զյոյս երկնալոյս. Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի։

Զարմիցէ ուրեմն ծերունին Խորէնեան ի ջնջել յաչաց զարտօսր իւր բազմաղէտ. զի ահա ձեօք անհետանան ի մեզ դառնագին ողբոց նորին պատճառք վշտմիերքս. Ոչ ևս այսուհետև հովիւք անձնարածք, ոչ ևս և հօտ կուրընթաց, զի ուր Հայրապետ նախանձաւոր բարօրութեան Ազգի և պայծառութեան Եկեղեցւոյ, անդ և փառք Աստուծոյ փայլեսցին ի Տաճար իւր Սուրբ, և մանկունք նորին նորաբողբոջ սերունդք Ազգութեան մարգեալք ի կրթութիւն վայելուչս փայլեսցին իրրև որդիք արժանիք նախնեաց Համբաւատենչն ժառանգութեան և Զերն Վեհապանծ Հայրութեան աննսեմն որդիութեան։

Հնչեսցէ ուրեմն թագապսակ Սուրբ Մարգարէն Շաղիմայ զթիլ սաղմոսանուագ իւրում քնարի ընդ մերն հիւսելով ի կնիք բանիս և զիւրն օրհնութիւն. "Տէր պահեսցէ զմուտս և զելս քո յայսմ հետէ մինչև յաւիտեան։"

Ընդունողաբար ծառայ

Ա-ռաջ Քահանայ Յակոբ Սարգսեանց

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՏԷՐ

Քանի՛ անպատմելի ուրախութեամբ զուարճանայ այսօր երկնանման սուրբ Եկեղեցիս շնորհաբեր այցելութեամբ Վեհափառ Փեսային իւրոյ, որոյ իրրև ի յառաջաւորէն եղեալ զարդարեալ փառօք երկնաւոր շնորհաց մուտ գործեաց ի գիրկ նորին պսակել զմանկունս պէսպէս շնորհօք։ Այլ և ի դէմ կանգնեալ մեր այսօր ինդպինս գոչեցուք. Օրհնեալ բարեբեր Եկաւորութիւն Վեհափառութեանդ յանուն Տեառն.

Առ ի՞նչ երբեմն այրիացեալն Այրարատ բնադիր յիշատակաւք միայն յուշ ածեալ զերջանիկ զաւուրսն Ներսիսեանց աշխարէր զանցեալ փառսն իւր. վասն զի՝ գաւազանն Հոգեւոր իշխանութեան որ իպարծանս Ազգիս՝ ո՛չ պարզեալ զդրօշակ իւր հովանաւոր, ծալեալ ուրոյն ի մի կողմն կարր անշուք. բայց զարդիս՝ թո՛ղ, իմն ցանկալի Հայաստան խսպառ թաղեալ զտրտմութիւնն իւր ի մառացօնս ընդ փրփրադէզ ալեօք հինաւուրցն Երասխայ, փութացէ իթևս թեթև ամպոց պատսպարիլ ընդ հովանաւորութեամբ փառահեղ իւրոյ Խնամակալուին. զի ահա Աստուածային ընտրան հաճ և հաւան զոգցես առձայնէ ի հեղիկ շնչելոյ հողմոն "թէ պահեցի ինձ զԱյր՝ որ զշաւիղ կալնուցու ո՛չ ընդ ճանապարհ աստեղն անհաստատ, այլ ընդ պողոտայն անշարժ աստեղաց, և որ իրրև զարծուի հոլաթևեալ ունի տարածանել զթևս հովանաւորութեան իւրոյ ի գլուխ նորին։

Ո՛ Ազգ Թորգոմեան, իննեւտասներորդս այս դար ի շնորհացն Աստուծոյ բարեբաստիկ եղև Ազգիս Հայոց, յորում՝ աջ Ամենակալի ո՛չ ընդ պատառաւուն ամպոց հովանաւորի, այլ ըստ օրինակի վերնատանն գոգցես լիովին սիրով. ապաքէն՝ քաջափորձ ինչ է ամենայն արարածական բնութեան, եթէ յետ տխուր ձմեան յոյժ ցանկալի է գարուն գարձաւոր. յետ արջնաթոյր թաղծալի ամպոց գեղեցիկս փայլէ արև, և յետ նաւակոծութեան քաղցր է նաւահանգիստն. այսպէս և անցեալ գնայեալ թշուառութիւնք Մարգարէական իմն հուով գուշակք էին ազգիս բարեչաւութեանց և ապագայ երջանկութեանց։

Ե՛րկինք, տօնեցէ՛ք զտօն։ Համատարած ուրախութիւն ընթանայ ընդ ոլորտս տիեզերաց ձայն տալ, քարոզ կարդալ Ազգբանազեան Ազգին փրկիչ ընդ փրկիչ խառնընթաց բազմութեամբ ժողովիլ ի դաշտն Այրարատեան ի տես Փեսային փառազարդելոյ։ Որոյ զգեղեցիկ պատմուճան երկնաւոր Հօրն արկեալ զիւրև՝ զհաղաղութիւնն ասեմ՝ ի ծածան շողացուցանէ զդրօշակ լուսաւորութեան Ազգիս։

Թո՛ղ սփոեսցի ի ճակատ ձեր լուսափայլ՝ ո՛ Հայկազնեայք, ճառագայթ արփւոյն տունչեան, թո՛ղ փայլեսցին երեսք ձեր ի խրախոյս քաջա-

լերութեան. զի յաւուրս Մեծարար Վեհափառութեան լոյնարձակ ասպարիզ յուսոյ բացեալ է առաջի մեր օր քան զօր յառաջ խազալ ի լուսաւորութիւն և ի պայծառութիւն. գոյց է և ոչ յետրազմաց ինչ ժամանակաց զպարծանս մերազնէից բարձրագլուխ տեսցուք յաղթական զրօշակաւ քան զդատաթուն լերանցն Կորդուաց Քանզի ընդ բազմիլ յԱթոռ Մեծին Գրիգորի քաջ զիտացեալ Վեհափառ Տեառնս թէ ի պայծառութիւն Ազգի և Եկեղեցւոյ անշուշտ հարկաւորի ուսումն և գիտութիւն՝ զան ի գործ լինի կանգնել զՏաճարս իմաստութեան, և զնոցունց հոգացեալ բարեկարգութեանց՝ կարգ ի վարչութիւն այնոցիկ զարս խոհական և իրանմանս, որով ճշդոտեալ նմանաբերէ ի վերայ անձին իւրոյ զբան ուրումն իմաստնոյ, թէ՝ նմանն զնմանն սիրէ՝։

Է՛ջ Դու այժմ սիրոյ Աղբիւր, է՛ջ աղաչեմ Հոգի՛դ ի բարձանց, Դու որ ի հնումն զՄարգարէս և զԱռաքեալս առաջի Ատենից պատկառելի ցուցանէիր. նոյն և այժմ՝ պարկեալ զամս կենաց Վեհափառ Տեառնս մերոյ, զորացո՛ զՕծեալն քո. Որոյ յանձն է տեսչութիւն Հայկազնէից Համարնից. զի քո՛ին ամենազոր օժանդակութեամբ ընդ ամենի ալիս այսր աշխարհի նաւարկեալ Հմտարար՝ անձանձրոյթի կարասցէ յանձանձել զմեզ, ոչ յայսմ հետէ ընդ օտար աստեղաց ցօղել զմիտս մեր. և մեզ տո՛ւր զցանկալի միաբանութիւնն, որպէս զի և մեք համակամ կացեալ ընդ Գլխոյն մերոյ՝ մի՛ ի գերև հանցուք զաշխատութիւն և զքան Վեհափառ Տեառնս մերոյ՝

Ը. Վրդ. Գրիգորեան Դատէն Հանդիսանաց։

Ի 1867 ամի, 15 Դեկտեմբերի

ի Քէշան։

ՀԱՅԱՐԱԿԱԽՆԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ.

Անկար են լիզուք մեր առ ի թուել զբնակրաստատ ցնծութիւն սրտոյ մերոյ, յորժամ լուաք զի Վեհափառ Ծէրդ մեր մեզ նեալ ի Հրաշալեկեր Աթոռոյ Միածնաէջ Սրբոյ Տաճարին՝ եղեալ է յայցելութիւն Հայրենասէրն որոյ ի մեծատարած Պետութեան Ռուսիոյ, որպէս քաջահմուտ երկնառաք բժիշկ հոգւոց առ ի բժշկել զվարակի բարոյական ցաւս մաց սերնդոց Արքանազեանս գրոհի. բայց ի սերկեան աւուր անպատմելի ինն

հրճուանօք և անօրինակ բերկրութեամբ տրուփեցին սիրտք տիրասէր որդւոց Վեհիդ, զի բարեհաճեցար և զմեր ազարակ իրրև ժիր մշակ և անպարտելի երջանիկս առնել Քոյով հրաշափառ այցելութեամբ։

Բայց սիրտք մեր փղձկին յարտասուս Վեհափառ Տէր, տեսեալ զի ազարակն մեր ի վաղնջուց ուրեմն թողեալ գոլով անմինամ՝, ցամաքեալ է ի տապախառն խորշակաց տոհմութեան և ցտկեալ գոլով ի կենսարար ճառագայթից լուսոյ և արեգական՝ գտանի ի տխրատեսիլ զրութեան. մի այն յայնմ՝ է միխիթարութիւն մեր, զի այսօր արեգակդ շքեղ ծագիս ի վերայ մեր և ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք միահամուռ բազմութեամբ դիմեն պատսպարիլ ընդ նշուլիւք աստուածառաք Վեհիդ։

Դու ես, Վեհափառ Տէր, արդարև միակ միխիթարութիւն սերնդոց Հայկայ. ի քէն և եթ ըղխեցէ մեզ աղբիւր գիտութեան, յորում բուծեալ զդարաւոր ծարաւ իւրեանց մատաղերամ մանկունք Հայաստանի նորոգեսցեն արդարև զցանկալի ոսկեդար ել անաշնորհ Թարգմանչացն մերոց Մեսրոպայ և Սահակայ. անմահացուսցեն զյիշատակ բարեգործութեանց Քոց որ ի զարգացումն ազգի և եկեղեցւոյ, որով և կնքեսցեն զՎեհ անուն անզոյգ Հոմուապետիդ ի նախանձելի շարս ազգաֆնամ Պարունապետացն Մեսրոպ։

Վեհափառ Տէր, շատէ որդւոց Հայաստանի տեսանել զառաջինն՝ազգաւէր գործ Վեհիդ, զյանձնաժողովն ասեմ լուսաւորութեան առ ի պարարել ի խորս սրտից իւրեանց զյոյս և զակնկալութիւն. զի ամենայն բարեսէր ձեռնարկութիւնք Քո ձգտեսցին յօգուտ և ի բարգաւաճանս անտերունչ Հայաստանի՝ որ թափուր և ամայի գտանի ի նախկին վայի; շութենէ իւրմէ, իրրև աղետալի մայր ոմն զրկեալ ի զաւակաց և ի խնամոց նոցա։

Քաջայոյս գոլով Վեհափառ Տէր, զի ամենայն Հայրապետութեան Քո ժամանակ նորանոր սքանչելի բարեգործութեանց լինիցին աւուրք, փութամք այժմէն իսկ շնորհաւորեալ զմեծահանդէս գալուստ Վեհիդ, շնորհակալ լինել վասն փոյթեռանդն ջանից և վաստակոց Վեհափառ Տեառնդ՝ և յանձնել զմեզ ի խնամս Քո, որ միայն կարող ես բժշկել զցաւս սոսկիս և զաղջամուղջ տգիտութեան մտաց մերոց, և հարթել պատրաստել վասն մեր ամենեցուն զցանկալին զայն ճանապարհ, ընդ որ հսկաբայլ ընթանան քաղաքակիրթ աղինք լուսաւորեալ Եւրոպայ։

Բարեկամ Քոհամեանց Լուսաչաս Ճէմանց

Ի 1867 ամի, 15 Դեկտեմբերի
Ի Քէշէնէ

ՇՆՈՐՀԱՎԱՐԴ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Շնորհաւորեմք զդալուստ ձեր. բարեբախտ եմք այցելութեասդ առ մեզ՝ առ անտերունչ և խղճալի ազգն մեր. որ գտանիմք աստ ի Նահանգս Պարսպայ. երդեմք առ Աստուած հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող. որ յառաջ զիտութեամբ զիրկութիւն Հայաստանեաց սկզբնաւորեալ ի Պարթևական ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր. Ցիրաւի ըստ ասացելոց սրբազան վարդապետաց՝ թէ յորժամ աշխարհ հրաժարի օգնել, յայնժամ Աստուած արագապէս ի թիկունս հասանէ. որպէս այսօր տեսանեմք ակն յանդիման զի մինչ կայաք ի մէջ անմխիթար տխրականութեան, և խորին տրտմութեան, և ահա յայտնեաց մեզ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս զանհուն ողորմութիւն և մարդասէրութիւն իւր առ ազգն Հայոց. և զթացաւ ըստ անհուն զթոյ իւրոյ ի վերայ Յարութեան տոհմիս, և յիշեաց զերկս աշխատանաց քրտնաջան վաստակոց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, և հարեցաւ քաղցր ակամբ առ ազգս մեր. Շնորհելով մեզ զՀիր և Անհափառութիւն, հովիւ արթուն, և աղդասէր հայրապետ, հուժկու գաւազանաւ մեծի քահանայապետութեան Գրիգորի ասեմ Պարթևի Հայաստանեայց հովուել զմեր անտերունչ ժողովուրդս. և ձերոյին քրտնաջան վաստակաց շնորհիւն՝ Օծեալ սուրբ Հայրապետ, յուսամք ի կարճ միջոցի խաւարն տգիտութեան և անուսումնութեան որ դժբախտաբար բռնեալ է յազգս մեր, բառնան և հեռանան ի խեղճ ազգէ մերմէ և ի զաւակաց նոցին. և այնուհետև յաղթանակաւ լուսաւորութեան, ի վերայ աշխարհիս գտանեցեալ երևելի ազգաց պարծանօք նմանակցութեան զիրաւունս ունիցիմք և մեք. որպէս և էաք յառաջին դարս։ Այսօր յարոյց Աստուած մեզ զնոր Յովսէն առ ի խտիան՝ և բառնալ ժամանակիս զերկպառակութիւնսն, և զշահասիրութիւնսն։ Այսօր երևեցաւ մեզ նոր լուսաւորիչ օծեալ սուրբ Հայրապետդ Գէորգ հանգոյն Գրիգորի բազմերախտի, և սրբոց Ներսիսեանցն, սրբոց Թարգմանչաց՝ մերոց Իսահակայ և Մեսրոպայ. որք եղեն քրտնաջան աշխատութեամբն ի բեանց Ն տոդիչք և կարգաւորիչք սրբոյ ուղղափառ եկեղեցւոյ Հայաստանեայցս և զաւակաց նորին. այսօր և մեք ցնծամք ընդ գասլուստ Տեառնդ ո՛վ Աստուածարեալ Սուրբ Հայրապետ որ եկեր ի խնդիր մոլորեալ ոչխարին. վասնորոյ մեք ամենեքեանս արք և կանայք՝ ծերք և տղայք ի ձայն բարձր աղերսեմք ի Տեառնէ՝ կէցցէ՞ կէցցէ՞ կեցցէ՞ Սուրբ Հայրապետդ ի պարծանս ազգիս և եկեղեցւոյ ընդ երկայն աւուրս ի խաղաղութեան. ամէն։

Մատթէոս Ա. Յովհաննայ Յիշլայէանց

Ի 1867 ամի, 15 Դեկտեմբերի

ի Քէշնա

ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՏԷՐ ԳՈՒՅՈՐԳ ԿԸԹՈՂԻԿՈՍ ԸՍՊԵՏԵՑԻՆ ՀԱՅՈՑ

Ի վաղ հետէ իզձ ի սիրտ եղեալ Երջանիկն Հայաստան տունչայր մերկանալ զքուրձ սգոյ զարուարտ տրտմութեան իւրոյ, և ի նորոյ արկանել զիւրեաւ զքօղ ծիրանի նախնի վայելուչն հարսնութեան իւրոյ, և ընդ երամն ժողովրդոցն և ընդ մատաղերամ մանկտեսայն լի անպատում հրճուանօք յօրինակ ձագուց սոխակաց երամելին գեղգեղելոց քաղցրաձայն զերդոց նուագել զքնար ի գովեստ փառաց Աստուածապարգև Մեծի Այցելութիւն բանեղէն Սերմանահանիզ և Հօր ի հասարակաց։

Ի սերկեան աւուրս՝ ահա առլցաւ նոյն փափաք ակնկալութեան մերոյս Հայաստանի, քանզի Ազգասիրական Այցելութեանէն Քրիստոսափոխան Հայրապետիզ ի նորոյ յարուցեալ տեսանէ զգուժարտակս զուարթնոց զպարս հոգւոց որոց երկնաձեմ նախորդացդ Վեհիզ, զթագդէն ասեմ բազմարդիւն մշակն Տեառն այգւոյ, զԳրիգոր Լուսաւորչ անձնանուէր Հովիւն, զՍահակ Պահլաւիկն, զՄեսրոպէ բանիրուն Քերթողահայրն, զնարեկայն Հրեշտակն, զշնորհապերճ Ներսէսն, և զհամօրէն կաճառն հնաւորոց նոցունց շահատակութեանց. որք երբեմն ըստ յարմարութեան ժամանակին, և ըստ ներկոյ միջոցին՝ վառեցին ի սէր գիտութեան զաշխարհս մեր՝ որ գրէթէ վերջին էր համարեալ անուսումնականութեամբ առաջի այլոց ազգաց, սոքա պայծառացեալ արփիսիոյլ ճառագայթիւք քան զարեգակն լուսաւորեցին զսերունդս Քաջաբանջն Հայկայ։

Առաքելաբար ուսուցանէին և միօրինակ փոյթ էր նոցա, զի զՀայրենիս և եթե մշակեսցեն իսպէս պէս պիտանաւորութիւնս, և ի շաւիղս առաքինութեան բարձրացուսցեն զնա, որպէս և առատագոյն իսկ յաջողեսցեն ի զեղմունս շնորհաց քան զամենայն ազգիւրս ականակիտ գրոց, զո՛րս մի մի թուարկեալ ասասանօր յարտասուս փղձկիմ ապաքէն. այլ յոյլ ինն զարձուցեալ զբանս իմ՝, ցնծութեամբ սրտիս գոչեցից, թո՛ղ զարդիս յաստեղալից կամարաց երկնային բարձրութեան ի ստորև գարձուցեալ առ փոյր մի զաչս իւրեանց՝ գիտեսցեն ուրա՛խ, ուրա՛խ, եթէ՝ զկա՛րդ պաշտօնակից իւրեանց Վեհարտաւ Տէրդ ի նախանձ շարժեալ նոցին առաքինութեան. ի նոցունց մշակեալ զորոսանն մարդկութեան զՀայաստանն փութայք ազգասիրական ինն եռանդեամբ նախանձելի ցուցանել առչի այլազանց։

Մի՛, մի՛ իշխեսցէ յայսմ հետէ կոյր տգիտութիւնն խաւար արկանել զոգւով որդոցն Հայաստանի. վասն զի ձեռն Ամենակալի է՝ որ պատերազմի աստանօր. անարգել անցցին որդիք նորոյս Իսրայելի ընդ ծովն տգիտութեան. ահա Սիւն լուսոյ ի գիշերի և Ամպ լուսագոյն ի տունջեան առաջնորդ լինի մեզ յերկիրն Աւետեաց։

Ապաքէն ներեսցեն ինձ երկինք, ոչ աննման յօրինակէս ջան ի գործ լինիք Վեհափառ Տէր՝ զմեզ զորդիս Հայաստանի լուսաւորել իրրև զաստեղս երկնից, յորոց փայլս ի ճակատ իւր առեալ երջանիկն Հայաստան զարդարեսցի յիւր շքեղ ոսկեխայտ պատմուճան ըստ ոսկեղէն զարուն իրրև Հարան նաղելի։

Հանդիսացի՛ր ուրեմն, ո՛վ Արեգակնդ լուսաւորութեան, Հանդիսացի՛ր Տերամբ, հսկայաքայլ ընթացիր օր ՝քան զօր, և զամենայն հիահրաշ գործառնութիւնս Քոյ վազվազեա կատարել յօգուտ անմխիթար մանկանցն Հայաստանի, որք ի վաղնջուց ուրեմն թարթափին ի միտսխաւար տգիտութիւն, և ակնկառոյց ճնան ազգանուամ բարերարութեանց Աստուածապատիւ Հովուապետիդ, յոյր սակս և մեք ժողովուրդքս և խաշն արօտի Քոյ զինք անապական արեան երկնաւոր հանդիսարարին Քոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և քրտնաջան խոստովանողի նորա Մեծ Քահանայապետին Գրիգորի Լուսաւորչին հաւատոյ մերոյ վերամբարձեալ զձեռս մեր և զհոգիս մշտամուն աղօթիւք և պաղատանաւն արտասուօք աղաղակեմք առ Էական գերարքուն, զի մի՛ շինցէ կենդանութիւն Քոյ արի և մինչև ցլրիւ սրիուեալ տարածանիլ կենսարար և անմահ լուսոյ Քոյ ի վերայ անտերունչ սերնդոց Աղքատապետաս զրոհի, որոյ ապագայ յարատև բարօրութիւնն կախեալ կայ և ճնայ ի վերնանձն ակնարկութենէն Աստուածընտիր Քահանայապետիդ։

Ո-ԼՈՒՐԻԿԷ Գ-ՈՂԷ Գ-ԷՈՐԳ ԼՈՒՍԱՎՈՐՉԵԱՆ
Մ-ԱՆՈՒԱԿՈՆԷ Գ-ՈՒՂԻԿԵԱՆ ԸՆԴԼԱՎՈՐԵԱՆՑ։

Ի 15 Դեկտեմբերի 1867 ամի

Ի Փիշնա։

Ի ՄԵԾԱՀԱՆԴԷՍ ԱՒՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՑ Դ.

Ի ՔԱՂԱՔՆ ՔԻՇՆԵՒ.

ՈՒՂԵՐՔ

Ա.

Քնարք տասնաղեան ՝ն Հընչեցէք քաղցրանուագ
Զգալուստ բարի երգեալ վերհիս երկնառաք.
Ցայդ ձեր աւաչ պանդխտիկ Հայք սրտաթունդ
Ծնրք և մանկտի վաղվաղեսցեն գունդագունդ
Տեսանել զՀայր շնորհալի
Զյաջորդ Սրբոյն Գրիգորի։

Բ.

Ակ բարձրելոյն զայերձ խանձարուր մարդկութեան՝
Զոր Հայկազանց կարգեաց բաժին և որբան.
Տեսեալ անշուք և ի մրոայլ միգապատ
Ցանձանձանաց անզոյգ վերհիս ետ յաւանդ,
Զի իւր որդւոց նախածնունդ
Զհաշտութեան տարցէ ուխտ։

Գ.

Տրնրատեսիլ Մասեաց ճակատ ամպաճեմ
Ցայդ լուր ախորժ թմբաւիեաց զքօղ իւր Ներսեմ.
Բազմաղարեան ոսկերք Հայոց խայտացին
Եւ կենդանի սիրտք յուսատրուի ցընծացին։
Ի խինդ Եփրատ ընդ Տիգրիս
Գրախտին տարան զաւետիս։

Դ.

Բացան դրրունք Քրիստոսաշէն Տաճարին
Էն բազմեցոյց ըզՆեհդ յամեռ Պարթևին,

Եւ կարկառեալ ըզ խաչանիշ գաւազան՝
"Այսու" ասայ Հանցես զաղբիւր զիտութեան.
Արբուցանել յորդառատ
Հայոց ըզսիրտ անապատ . . . ։

Ե.

Եւ իբրև նոր Մեսրոպիկ Հայոց լուսակիր
Սրտաբխութեամբ տառից մերոց ի խնդիր,
Հայրենասիրակ որդւոց եկեր Դու ի տես՝
Ըստ եզանի շնորհել սրբոյն աղէկէզ,
Եւ զձմեռն ապառում
Փոխել յանանցն գարուն։

Զ.

Որդիք Հայկայ զիմաստութիւն բաղմաբաղձ
Քև ամրարեալ ի շտեմարանս միտաց,
Քան զՈրփևսի քնարին աւաչ հեշտալուր
Ոգեալ յաւէտ զվսեմ Ոգիդ ընդհանուր
Կընթեսցեն զՔո բարձր անուն
Մեր սուրբ հարանց ի դասուն։

Է.

Տարաբնակ Հայք հրճուեսցուք արդ միաբան,
Զի էն ծագեաց զլուսաճաճանչ ծիածան,
Ցածեան հողմունք, և բուրաստան մեր փոքրիկ
Լցցի տակաւ ծաղկովք պայծառ՝ զեղեցիկ,
Եւ Հայկաւանդ դաստակերտ
Առողջ ուսման լիցի բերդ։

Ը.

Ցերկնապարգև գալուստ Վեհիդ սրբոյակեաց
Քաջախրախոյս սրբութիւք զարտօսր ի յաչաց,
Եւ նըժդեհ սիրտք զարթնուն խրոխտ՝ մեծայոյս
Թորգոմական զրոհին ոգել զանշէջ լոյս,
Ըզհայր՝ որ մեզ անենախանձ
Ըզգիտութեան շնորհէ գանձ։

Թ.

Սակայն բաբէ, ըզմէ՞ մեկնիս ի մէնջ, Տէ՛ր,
Հի՞մ զոիւ չը.քնաղ փոխես ի մութըն գիշեր.
Բայց զի՞նչ ասեմք . . . զերդ արեգակ մըշտափայլ
Ճառանչք Քոյին հերձեալ զայերս անայլայլ՝
Ինձ և եղբարցս ապիկար
Սիրոյդ լեցին յայտարար։

Սարգիս Տէր Գ-էորգեան Մ՝արտ-ԸԷանց,
Նախկին աշակերտ և ս—ս—ցէշ է Իտալիոյէան Ս—ս—Հռոմայնոյ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱՆ, ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Սողոմոնեան կանխագուշակ բան ի դարաւոր ժամանակաց հետէ փութացուցանէին զորդիս Սիօնի ելանել յասպարէզ և ցնծալ ի շնորհաբեր գալուստ Գերաձայրեալ Քահանայապետիդ յաւուր ուրախութեան սրտից մերոց և յաւուր ուրախութեան փառաւորութեան Ձերոյ, որով փառաւորէք զՀոգեծին սիրելի որդեակս Ձեր։ Փութացուցանէին այսօր երգել ընդ աշակերտս իմ՝ երգել և ուրախ լինիլ ընդ մուտ Ձեր որ ի Ռուսիա։ Տային մեզ միխիթարել շնորհաբեր մուտք Ձեր ըստ նահապետին Յակոբայ, որ զամս բազումս դեզերեալ ի Միջագետս Ասորւոց արժանացաւ փափաքանաց՝ որով և զորդիս Իսրայելեան Տոհմին բազմացոյց յետ վերադարձին։ Ցուսամք և մեք ըստ օրինակի Նահապետի Վեհափառ Տէրդ իմ ի Սիօնն ասեմ Մայր մեր յԱրարատեան Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի զարգացեալ երկնաձիր շնորհօք ունիք սփռել ի սիրտս մեր և ի հոգիս հարազատ նորին զարծաթ բանին կենաց առ ի լուսաւորել և առ ի միխիթարել Առաքելական հոգեկեցոյց վարդապետութեամբ։

Այսոյսս մնամք զի ըստ Սողոմոնի զթերութիւնս Ատուածահօրն Դաւթի լցուցանել ունիք առաւել քան զմիտս մեր պայծառացուցանելով զեկեղեցիս, փառաւորելով զՈւսումնարանս, խրախուսելով զանտերունջ և զանօգնական Հայազգի ժողովրդականս յանձն եղեալս Ձերում յարաբերութեան Տեսչութեան ի վերնականն խնամոց։ Վասն որոյ և մեք ամենեքեանքս ժողովեալ ի Դպրոցս այս անշուք, առ ի ընդունելութիւն զԱռաքելաշաւիղ Քա-

հանդարտիցդ մեր նախանձելի հոգւով և փայփայելի սրտիւք յետ շնորհաւորելոյ զմուտ Ձեր և զայցելութիւն բանաւոր Հօտիդ՝ խնդրեմք արժանիս կացուցանել զմեզ աղօթիցդ օժանդակութեան, զի և մեք որդեգրեալքս Հայրական շնորհաց բարեգութ Տեառնդ Հասարակաց, շնչուք արտաքս առանց իւղոյ մաքրութեան, ըստ կուսանացն յիմարաց, այլ լապտերք մեր պայծառացեալք մոցուք ի յառաջատաս լուսոյ ընդ Հոլանեաւ, ամենազօր աղօթիցդ ներընդունակութեան։

Ո՜սոյնչ ժողովրդական Դպրոցին Հայոց
Ն. Դպիր Սարգիսեան Պարշամբեանց

Ի 20 Դեկտեմբերի 1867 ամի
Ի Փիշնև

ՁԵՐՈՅԻՆ ՎԵՀԱՓԱՌ ԲԱՐՁՐՈՒԹԻՆ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՓԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Օրհնեալ է արդարև Տէրունեանն բան՝ թէ" Ուր են եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի (Յ-Է. 12. 26.)։ Յոր հաւատացեալ մեր՝ կամք ահա միահաւաք առ տեղեաւս. ուր իսկական Փոխանորդդ է Քահանայապետին Քրիստոսի. կամք ակնածու՝ հոգեծին որդիքս Ձերոյին Վեհափառութեան, որք յԵրկնաւոր Վարդապետէն ի ձերդ յանձնեալ եմք ի խնամող Տեսչութիւն և հսկողութիւն. վասնորոյ և խմբովին դիմեմք ահա առ ոտս Վեհափառ Տեառնդ՝ առ ի յայտ առնելոյ զսրտից մերոց զմեծ խնդութիւն ընդ այն՝ զի աներկեան յուսով ակնունիմք յայսմհետէ յապահովանալ ընդ խնամօրէն թեւարկութեամբ Հօտաստէր Հովուապետիդ. նա՛ զի՝ վերաձնեալքս ի սուրբ աւազանէն, և դաստիարակեալք ի մանկութենէ Աւետարանական հոգեկեցոյց բանիւք՝ պարտ ապաքէն վարկանիմք անձանց, պարտ անհրաժեշտ՝ զԴաստիարակի մերոյ՝ զՍուրբ Աւետարանի զլուսաշաւիղ ընթացս ընթանալ անսայթաք. որ զհաւատացեալս ի կեանսն տանի յաւիտենականս, առ այն՝ որ ասաց", ուր Ես եմ՝, անդ և պաշտօնեայն իմ եղիցի"։

Զարդիս՝ ո՛ Հայր Վեհափառ, ի Ձեզ նկատեմք մեք հոգեծին որդիքս՝ զՆոյն ինքն զՏէր մեր Յիսուս Քրիստոս. յայն սակս և զՁեզք ըղձակամ

տենչանօք ըղձալ կամք և այս՝ ոչ առանց խորհրդոյ. զի ուր Են եմ, անդ և պաշտօնեայն իմ՝ եղիցի ասաց Փրկիչն մեր. և Դուք՝ ամենասիրելի ճշմարիտ պատկեր Հանդիսանայք Նորին Երկնաւոր վարդապետի, և մեք՝ Ձեր համարիմք պաշտօնեայք հաւատարիմք։

Դուք երթիջիք, և մեք մնօք պատճառ զհետ ընթացից Ձերոց՝ զիտեցուք ակնապիշ յոր կոյս և ուղղեսցին գնացք Ձեր։—Բայց յառաջ քան զայս ամենայն՝ խնդրեմք ի Քրիստոսատիպ Քահանայապետէդ մերմէ, զի օրհնեսջիք զմեզ օրհնութեամբդ Հայրապետականաւ. օրհնեսջի՛ք՝ որպէս և յերեկն և յեռանդն օրհնեցիք։ Օրհնեսջիք զփոքրիկ հօտս Ձեր՝ զքանեղէնս, ի միասին ընդ լուութեան հօտիդ Հայկազեանս զրոհիս այժմ՝ ասա, և յետոյ՝ ի տաճարի անդ սրբոյ Էջմիածնի. ուր հանդերձեալն է.ք զիմել Տեառն ուղեկցութեամբ։ Դուք երթիջիք, և ամենակալն Հայր, որ և ի ծոմս ճանապարհ ետ որդւոց մարդկան, և ի մէջ սլեաց շաւիղ զգուշաւոր, նա և զուղևորութիւն Ձեր զայս՝ անվտանգ արասցէ ըստ ամենայնի. և որպէս առ Մովսիսն ինքն առաջնորդէր Իսրայելի ի չուս իւրեանց, նոյնպէս և Վեհափառ Հօրդ առաջնորդեսցէ միշտ՝ եթէ ի ծոմս, և եթէ՛ ի ցամաքի. և ամենակար Աջովն իւրով պահեսցէ զՁեզ յարաժամ պանծալի հանդիսաւորութեամբ ի փառս և ի պայծառութիւն Հայաստանեայցս ուղղափառ սուրբ եկեղեցւոյ, Ամէն։

Յովհաննէս Ա. Պատրիարք Կոստանդնուպոլսոյ

Ի 28 Դեկտեմբերի ի 1897 թ.

յՕրէսատ

ՇՆՈՐՀԱՎԱՐԴ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի վաղ ժամանակաց բաբէ ի վաղուց անժոյժ ոգւով գէտակն կայաք երկնապարգև գալստեան Ձերոյին Վեհափառութեան յայոց մեզ և Հայաբնակ քաղաքաց մերոց։

Մեծ զոհութիւն, և լիաբերան օրհնաբանութիւն Ա՛յնմ՝ որ նստին ի բարձունս, և ակնարկէ խնամով զարարածս բոլանդակ. Ա՛յնմ՝ որ անհուն բարերարութեամբ իւրով հասոյց զմեզ յայս օր հանդիսաւոր, և արժանի՝ արար զէպ յանդիման զիտել ի դէմս ցանկալոյդ մերոյ. զորոյ ի շնորհաւորել եկաւորութիւն խսկ այնչաղ ահա հանդիսանամք միահոգեայն՝ հոլով ը,

Համօրէն ուխտ եկեղեցւոյ ժողովրդականք, ծերք, երիտասարդք, և տղայք, որք զԵրրայեցւոցն առնալ զերգս ի բերան, "Ո՞վ սատանայ ասեմք. Օրհնեա՛լ է, Օրհնեալ գալուստ Վեհափառ Հայրապետիդ, Օրհնութիւն ի բարձունս։

Զայս ահա Սրբազնակատար Այցելուդ մեր Ա. Դէտ, զայս և զսոյնպիսիս տան առ ժամն բարբառել մեզ զգայուն սրտից մերոց յորդութիւնք. քանզի տեսաք ակնարև որում ըղձակիցն սպասէաք, տեսաք ի միջի զվարդապետին տիեզերաց զՊատկերդ ճշմարիտ, տեսաք և միանգամայն լցաք հոգևոր ցնծութեամբ։

Վասնորոյ ի դէպ է մեզ զԴաւթեանն ասել. "Այս օր է՝ զոր արար Տէր. օր բերկրանաց և ուրախութեան, օր՝ արդարև արժանի համարելոյ յաւուրս ոչնից տարեկանաց. քանզի յիշատակ այսր աւուր մնալ մնայ ընդ երկար սիրտս անձնիւր հանդիսականացս ի մէնջ։ Օ՜ր ըղձալի՝ կրկնեմ վերստին, և ժամ բարեպատեհ, յորում առհասարակ հասակ՝ամենայն մեծք և փոքունք կամք աւասիկ առ տեղեաւս, և կամիցին սրտիւ ցանկամբ վայելել որդեպէս զՍրբազան Հովուապետիդ զՀայրատուր Օրհնութիւն։

Ա՛յս միայն նպատակ մեր. զայս և եմի խնդրեմք խնամակալ Հա՛յր՝ զՕրհնութիւն Ձեր առատացուցանել ի մեր վերայ, և զդեռ ապողբոջ զայդիս մեր զնահանգս Պեսարապիոյ երջանիկս առնել Ձերով աղչպանեամ հոգատարութեամբ, զի և ի նմա գտանին սերունդք նախահօր մերոյ Հայկայ, և որդիք բազմաշարշար խոստովանողին Քրիստոսի Սրբոյն Գրիգորի։ Օրհնեցէ՛ք աղաչեմք միապան՝ օրհնեցէ՛ք զորդիս Ձեր և զրեցէ՛ք ի համարի Հովվանաւորութեան պաշտպանող Գիծդ. զի յաւաջադէմ զարդասցին օր ըստ օրէ յուսմունս գիտութեան և բեղմնաւորեսցին միտք նոցա պէսպէս հոգեշահ խնամատիւք։ Փայլեսցի ի նոսա մնեաւանդ մերս գեղեցիկ լեզու Աստուածատուր Հայախօսութեան։

Ի վաղճանի ամենեքեան մեք, Ո՛ Տէր, և Պաշտպան, ամենեքեան զբարեմաղթութիւն ուղերձեմք առ ապենիազն Աստուած, և հայցեմք վասն պատուական Գլխոյդ մերոյ զբարօրութիւն, զկեանս յամսյրս և առողջաւէտս ի փառս Եկեղեցւոյ, յարգահատութիւն և խոփոխանս սրտի հոգեծին զաւակացս, ամէն։

Ներքինյոյ Էքրահամ խահանայ Տ. Գ. Մարտիրոսեանց

Ի 28 Դեկտեմբերի 1867 մի

յՕրեամ

ՅԱՍՏՈՒԱԾԱՊՍԱԿ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

Տ. ԳԷՈՐԳԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅԱՅՏԵԼՈՒԹՈՒԵԱՆ Ի ԽԱԼԻՐԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԱՆԻ

ՈԻՂԵՐՁ

Ո՞չ ևս իցե՛ն, թէ ո՞չ նըւազք զուարթագին,
Ո՞չ ևս հընչեն ըզհայրենեաց փառս ի վին,
Ծաղկապսակ զուք որ երբեմն ի կաճառ
Բամբռունք Հայոց նըւագէիք յոսկեալ,
Որ թեւաձեալ ի դաշտ գըժխեմ և փառաց
Ընդ ոգեղդ Հայոց ողկ ձայնիւ անմոռաց,
Դուք որ տեսէք ըզհայրենին զայն երկիր
Լուրջ ընդ բերկրանս ընդ արտասուս վը շտակիր,
Եւ ի դարիր մինչ ի պաշտօն Աստուածեան
Մատչէր Գրիգոր ըզսիրտ հօտին ի բրուան,
Ի սուրբ բեմիցն ընդ ծաւալեալ բոյրս խնկոց
Յերգս պարզէիք զուք ըզմաղթանս Հայոց.
Որ ի հընչեցէք շըրթունք բերկրեալ ի նըւագ
Ընդ նոյն աւաչ մէն մի տացին սիրտք հարագ.
Ձայն տուք բամբռունք, ձայն տուք, զի բաղդ մեզ ծագեաց,
Բաղդ ի ճակատ թախծեալ մերոց հայրենեաց.
Դու Հայրապետ օծեալըդ վեհ Աստուծոյ,
Բաստ մեծ յապայս պարգեւ ելեր համայնոյ.
Հի՞մ մեզ իցեն շնորհաց այս ձիր նորասքանչ.
Ըզյարկ խոնարհ ընդուս փառացդ ի ճաճանչ.
Յաղթող ի կառս ելեր Բանին Հաւատոյ
Ի հրեղէն վարեալ թևոց սուրբ սիրոյ.
Յաջմէ Սերսէս ընդ ահեկէ մեծ Պարթև,
Բարձրեալն յերկիր հարթ տապալէ խուժս ըղքև.
Սուրբք տանն Հայոց ընդ քեզ անյաղթ պահապան,
Ջանգուռնոս կոխեաս, սպասեալ խորոյ տեղի տան,
Քուժ՝ անձկալուոյ հօտին զիմաս այցելու.

Ընդ որ անցեր վայրք պերճացան ծաղկաւոյ
Երանելոյն ըզմ՛ զ ըզյարկս զայս խոնարհ
Ասպնջական բաւեալ ըզքո տանել փառս,
Մեծ այս տեղին քան զաշխարհն Սիոն
Գան զմարգարէն պատրաստս իւոս աստէն կայ.
Ուր հետ Հայկեան ի պար անցեալ ժան՛լոին
Ոգւոյ մլուոց յանմահ յիմնատոյս մարգին
Աստուածաւանդ եմ՝ անձկաւէտ շընորհաց
Օրհնութիւն սուրբ օրհնեա զորդիս Հայրենեաց
Զոք շարուարաց մի՛ կոփեսցեն անյաղթ վէմն,
Եւ ի քանդակս մի՛ յածեսցիս յանչուրջ գէն,
Այլ քեզ անդի անձնիւր սիրտք մեր համօրէն
Անեղծ յաւէտ ըզյիշատակ քո կապցեն։

Ի գինոյ աղանդերոյ Խոյնդեան Ուռուանդեանց
Ամենասիրելոյ Սիրոյ Սիրոյ Պոլսոյ

Ի 10 Յունվար 1868 ամ
Ի Թիֆլիս։

ԱՆՀԱՄԵՄԱՏ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՏԻՒ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՈՒՂԵՐՁ

Արնգակն արդարութեան յանպարագիրքն ծոցոյ,
Մինչ եօթնարփեան շողիր ծաւանչ արկեալ զերկրաւ ըստ սիրոյ
Հայաստանեաց ի խոր վըհին, պատեալ ամպրոպք Տըրդատեան,
Արշալուրշն իւր ծագեր զԳրիգոր արեամբ պըճնեալ վարդ գունեան,
Որով փարատ առնոյր խուն խուն տըգիտութեան թուխ զրշեր,
Ճշմարտութեան ցողութիւրմ այգ փաղփէր յաղիմ մըրգաբեր.
Ի յայն նըսեմ բարեբաստիկ երբ զարգանայր Հայաստան,
Սիրտն էական շարժէր ի խինդ ծրփէր սիրոյն Ովկիան։
Մինչ Միածին ի թևըս նուրբ արփայազնաց զուարթնոց,
Փառօքն իւրովք գայր ինքանէր բաղմեալ ի յամպս ոսկեզօծ,
Ադամանդեայ Ուռն ի Զեռին նախախնամող Մեծազօր,
Բախեր ղ՛բկիր զըղրդեալ զՀիմունս կանգնէր ըզգեր զայդ Ամուռ
Ուր Դու այսօր վերհամբարձար Աստուածընտիր Սըրբազան,

Էջմիածին բաղմեալ ի գահ կընքեալ մատամբ Աստուածեան.
Թուղ Հայաստան գանդ արձանեայ տացէ անդուլ հրճուանաց,
Մի լռեսցին շրթունք ՝ի կեց՝, մերս Հայկազուն մանկըտեաց.
Ոսկերք Քաջայ Թուղ զբրդեսցին ի խինդ տըխուր դամբանաց,
Զի Դու կացեր որդւոցն իւրեանց Հայր խանդակաթ և գըթածս
Արդ և իմ իսկ շարժեալ յոգի ջեռեալ արեամբ Թորգոմեայ,
Թէպէտ բաղէին աչեօքն ծըլիմ ի տար աշխարհս Տաւրիայ,
Ես ի կիլիաս իմն աղերսախ ոգեմ ի թել զիմըս սէր,
Արիւնական գնդ ընդ Մուսայն ըզիւնչ կապեմ բանից Տէր,
Հոգւովս ի թիւռ գամ ի սեղան Քոյ նըւիրեալ յարգանաց,
Ասուածատուն ի բուրաստան վարդունս քաղիմ ըզգաժմանց.
Ընդհակառակ ձեռօք սըրեալ ի քոյդ սեղան զանուշունս,
Եւ ի թանրթիկսըն բոստրակ ցօղեալ աչաց կաշաւունս,
Փարիմ զԷընգովդ քո Հայր, մաղթեմ զաւուրս անթիւ կեանս յոս Հայր,
Զարգեա զԷրզիսդ ընկալ զորդիդ զի գթեաստատ ես դու Հայր.
Պէցցես կեցցես Երիհապետդ երկարեսցի կենացդ թիւն
Այն որ կալ ի Մատանց հիւսեալ Էին յոսկւոյ նըրբաթիւն
Ընդ քոյ ոտիւքդդ սըրբատիտ բաղում գարունք ծաղկեսցին,
Քիւր լիւր անգամ ի գլ դարձցի գունդ մեր յիւրում սլտնակին,
Կազ յուզեսցես քաջ Ավագեան կոչեալ դու ընդ ամանակ,
Քիրտ ճակատուդ աղամանդեայ փառաց լիցի քեզ պըսակ,
Դու Գրիգորեան ի զէն ի զրահ, սպառազինեալ ամրակուռ,
Իբր ըզՊետրոս մեզ զօրապետ կացցես աշուղ քո Ներկուռ.
Երջանկասցի Քեզ Հայաստան որդւովքն իւրովք սըրազգեաց,
Դու պըճնեսցես ըզնա Ձեռօք արկեալ հանդերձ հրճուանաց,
Սէր Քոյ յորդւոցդ ի սիրտ կացցէ անջինջ արձան սըրբատաշ,
Եւ ճգանաց քոց փոխարէն երկինք հանցեն Քեզ ըզբաժ,
Տապանանիստ Մասեացն ի ծագ արցէ Աստուած Ծիրածան,
Եւ ցանգ կացցէ նիշ գերագոյն Աստուածային Հաշտութեան.
Ամ Դու Հայր Սուրբ երջանկասցիս միսիթարեալ զմերս Մարթ,
Եւ Քոյ Ձեռամբ փրկեալ ըզնջեսցին կաթիլք աչաց՝ վըշտահար . . .

Ընդ Հրատարակչաց Հայ-Գաղղիական Գիրատարածեալ

Ստորագրեալ՝ Գրիգորիսեան

Ի Տ Յունուարի. 1868 ամի
Ի Թիֆլիս։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ո՞րպիսի լեզու կարէ ասել կամ զի՞նչպիսի գրիչ զօրէ ճառել զանպատում ուրախութենէ սրտից բնակելոց ի գիւղն Աշտարակ. քանզի մինչ որբացեալ յարժանայիշատակ Կաթուղիկոսէ ի տէր Ներսիսէ Հինգերորդէ, որոմանցեալ սրտիւ ի սուգ վարանէին, թէպէտ ընդհանրապէս ընկալան զմխիթարութիւն. իսկ այսօր ի սիրտ և ի հոգի ցնծացեալ բերկրեցան ընդ երկնաւոր այցելութիւն Ձերդ Աստուածանմանութեանն՝ Պաղեստինեայն հրճուանօք ցնծացաւ Արարատն, և ըստ նորին փառազարդութեանն մեծապէս ուռնէ և Աշտարակ այսօր զուռն ցնծութեանն. զի ի նմա երևեցաւ Փրկիչն ազգի մարդկան, ի սմա տեսանելիք ճշմարիտ կերպարան նորուն խոկութեանն, տէրն ամենից և Հովուապետն ի Քրիստոսէ յանձնեցեալ հօտին, Աստուածընտիր յաջորդ Սրբազանից Առաքելոց և բազմաչարչար Հօրըն հաւատոյ Ապրանաղեանս գրոհի։

Բերանալիր հնչմամբ ի ծերոց դասուց մատուցանի օրհնութիւն և գոհաբանութիւն ձերում Սրբազնակատար Օծութեանն, և փոխանակ տերևազարդ ձիթենեացն բարձման, մանկունքս նորոյ սիօնի ջերմ սիրով տարածեմք զանձինս մեր և զսիրտ առաջի Վեհափառ Տէրութեանդ ձերոյ, բարեբանելով զշնորհաբեր գալուստն ձեր, որով լցեալ զչափ մերոց ուրախութեանց կրկնեմք՝ օրհնեալ է մուտն երկնաշու գարշապարաց բարձու Վեհափառութեանդ ի մերս գիւղ, և միաբանական ձայնիւ գոչեմք անընդել, կեցցես Վեհափառ կեցցէ և ձեր Գահ, որչափ արևն յերկինս ցորչափ Մասիսն յԱրարատ. ծաղկեսցի, խնդրեմք, Իշխանական Գաւազան Մեծի Հայրապետիդ մերոյ ընդ ամն երկայնս. զի այց Էլ մեզ արեգակն ի բարձանց, յաբուցանելով մեզ ամենապատուական եղջիւրդ փրկութեան. ընկալարուք աղաչեմք բազմախնամ Տէր, զերամ մատաղահաս մանկուցս, ընդ հովանեաւ շնորհաղեղ Սուրբ Աջոյդ, օրհնեա և պահեա՛ զմեզ որպէս բիբ ականի, որով գաւինքս փոքրիկ հօտին Քրիստոսի յաղթերակունս և ի մարգագետինս ուսման սնեալ երկիւղիւն Աստուծոյ և զարդացեալ Աստուածպաշտութեամբ՝ լինցուք հարազատ որդի մօրն լուսոյ Հայաստանեայցս Սուրբ եկեղեցւոյ և ճշմարիտ անդամ ազգութեան։

Հնոյն Աղամայ իսկական պտուղքեր,
Խոնարհեալ յերկնից, յերկիր իջանէր,
Որով ցնծացեալ բերկրէր Պաղեստին,
Փառաց պերճանայր Երուսաղէմ հին։

Երկնաւոր Փրկչի դպրոցաց օրհնէին,
Մանկունք ոսոց ծառայ մատուցանէին
Ի սրտէ բղխեալ ծերոց օրհնութիւն,
Ոմանց երգոց փառաբանութիւն։
Նմանող Փրկչին Տէրդ պատուական,
Այցելեալ բաւես 'ւ յԱրարատն,
Փոխանակ երգոց և ոստոց մանկանց,
Ընկալ զսիրտ մեր և զօրհն բերանաց։
Կեցցես Վեհափառ Տէր մեր և պաշտպան,
Կեցցես փառք Հայոցս, ի խաղաղութեան,
Կացցէ գաւազան և ձեր Գահ հաստատ,
Մինչ արևն յերկինս Մասիսն յԱրարատ։

Է-էջմիածին Յարութիւնեան Էրիտիանց Վանէցի

Ի 1868 -դ ի 6 Յունիսի

յԱշտարակ։

Դ Ր Ո Ի Ա. Դ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՄԵԾ ՓԱՀԱՆԱՅԱՊԵ՛Տ

Յեղեմարուղիս զնփիւռն անմահ, ի շունչ համեղ արդ հնչէ,
Ի հոտ անղոյդ բուրեալ ի քիմն, ցծաղ երկրի արշաւէ,
Ուր արդ ի սիրտս Հայկազանց, ծորեալ պարզև յԱղենայ,
Եւ փարատեալ ի մեծ ցաւոց, առնումք զտենչ զերակայ,
Ընդ ծաղ ի ծաղ աշխարհի, քեղ ակն ունին անձկալից,
Զաչն յաւէտ սևեռեալ, ի Վեհ օծեալդ բարձրից,
Զի դու տաճես ի խնամն ի բարօրութեան պատուել,
Ոբք ի խաւար զետեղին, ճրագ մշտավառ նոր կազմել։
Ուստանիշ հրաձգրան լոյսդ ի չանէ ի վերուստ.
Ցնդեալ զչոգս ի ճամուկ, սիսի յոլորտս ի բացուստ,

Ընտուսա ածնալ զսիւդ այգւոյդ, յերնոս ի սիրա որդիկա՝
Զատուհիանիշ կ.քող սգ ոյն հոլաւացնալ էլան ի բաց։
Կաճառք խմրից Հայկազանց, կայտին համակ նոր ի նոր,
Ցենուն ի սէր Արարչին, միանան ի սիրտ աստանօր,
Զօժիտս սրտից դուշնաքեայ, ադ փնուն ի ձօնել,
Ի սիրտ բոլոր խանդակաթ, ի դէմն խոնարհ ուղիրձել։
Ի շրջաստիւռ մթուլթեանս անաղօտ լոյսդ գայ հնուսա,
Արտահալած տարագիր բա՛ռէ, առնէ ի կորուստ.
Գոլ ի տարած յողջոյն ազգս, ուր ծածանի բաց ի բաց,
Ի գունատեալ խմբից մանկանց, ցայտոս զնշմարս առնէ կաց։
Ահեղապանձ շքեղ Արփիդ, յոլորտս երկրի արդ ցոլայ,
Արդ բարձրացո՛ զհանրափակ Աչդ ընդ որդիս քո յարակայ,
Ուր շատացուք բան ի գովեստ, և ի յօրհներգ յաւէրժել,
Ազատազանց արձագանգին ի Հայաստան իսկ հնչել։
Ի թինդս ահեղ, որ ի Սաղմոս, ուր զովսաննայս հնչէին,
Բա՛ռէ ահա՛ բացերակ, զայն աստանօր աւէտեն,
Երամք խմբից մանկական, արդ դաս իդաս պարս ելեալ,
Զինչեալ ի ծունկ զողջոյնս տան, Աստուդ ընկերշակեալ։
Ահա՛ սրտից խնդութիւն քո լցաւ այսօր Աշտարակ,
Երգեմն ի սուգ ընդ Ներսէս, որ կայիր իսկ դառնորակ
Ի բաձրելոյ եհաս քո բաստ, փութայ ի խինդ անհամբեր,
Սեղկեա՛ ի քէն զսգոյ հանդերձ, մկրտեա՛ յաւէտարեր։
Հապա՛ մատիք աստանօր, Հայրք ընդ որդիս ի փափագ,
Զի նշենեան մեծ Արեգն, ի լոյս անդրդ տայ զնուր փայլակ,
Զտաւիղ սրտից, ոչք վաղակոծ, յարուցանել ի նուագ մեծ,
Զի է ժամ մեզ անձկալի, ուր նուագել յոյժ փառունակ,
Ի դառնակոծ, յոր կոծէաք, փոխել ի խինդ յաւէրժից,
Շարժեցարուք ի թեոկրութիւն, օն յառաջել ի խոր սրտից,
Երկնարատ տօն արձանացեալ, ուստի տօնել ճահ ի ճահ,
Զտագնապ սրտից որերոց տալ ի հանգիստ յարակայ։
Արդէն եհաս ժամ գարնան, ձմեռն առաթուր անկանի.
Սառոյց սրտից համակաց, այսրէն ի վաղ հալեսցի,
Համածաւալ Արեգակն, սաւառնագեալ ախոյեան,
Ջանեալ զհողմ փքարեր, ճնշեալ զալիս ի կործան։
Օն մատերո՛ւք մանկունք Հայկայ, արդ հապ ի ճէպ յայս հանդէս
Ի զրուատել զնորհարեր Գաղուստ Վեհիս մեծապէս,

Որ զմանկտիսդ մատաղ՝ երամ, ունի ածել ի փարախ,
Ի լոյս ուսման գերազանց կրթել զձեզ Հայրապէտ։
Մատուցո՛ւք զայս աւէտիս Արարատայ որդե՛ւոց,
Ջ.ի զգաստութեան սուգ թափեսցին, զերծանելով ի վշտաց,
Ելերգ Մուսայիդ առեալ դաշնակ, յաւէրժացուք յարատև,
Առ ի ձօնել ի մեծ Տեառն, ի խոր սրտէ շուք փառաց։
Ի լոյդ մերժի արդէն իսկ, նսեմ գիշերն մթնդրակ,
Հուպ ընդ հուպ աստ ժամանեաց, արեգակն ընդ արուսեակ,
Վառեալ ի լոյս ընդ աստեղս, զերթ արփենի եթերեան,
Գոգեիս առնու զիւր վաղատնէշ, յայսմ Տեառնէս Հայաստան։
Ընդ խնդութեանցս՝ ի Մեծ Վեհէս, զի զմերոյն զվտակ,
Ջ.օրէն անհուն Ամկիանու, ի մեզ ծորեալ անքանակ,
Ջ.շնորհացդ ուղիս գետօրէն, ծաւալեա՛ ի սիրտ ի հո ի,
Մերս մանկա՛ց մակաղելոց, կարօտելոց Քոյդ շնորհի։
Մատերո՛ւք աստ ի համբոյր, շնորհարուղիս սուրբ Աջոյն,
Առնուք զեռ սնդս ի նեղքին, զտենչանս ասեմ զՀոգ՝ ոյն,
Կնեալ յուսամք անդորրաւէտ, և ի յաղատ ի բ՝ բոր,
Ջգենումք զնոր զօրութիւն, տաւաղեսցուք ի յարկ նոր։
Ուսարի և մեզ մնայ մաղթել առ Տէր Աստուած յարաժամ,
Ջ.ի զՇեկ կենաց երկարեսցէ Հայրապետիդ անթառամ,
Որով և մեք պճնեալ ի զարդ, յար հրճուեսցուք անպայման,
Ձօնել զփառս վասն սոցին, Տեառն Աստուծոյ յաւիտեան։

Մոնիվարդ Բարդուղիմեոս Տէր Յովհաննէսեանց։

Ե 7 Յունվարի 1868 թվ.
ՅԱշտարակ։

ՃԱՌԴ ՈՐՈՑ ՏԵՂԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԱՆՑԱՑՏՆ ԵՆ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Ո՜հ ամենաբարձրեալ Արարիչդ տիեզերաց անզննելի և անքննելի Էակ ամենից ընութեանց, արդ ձօնեա ինձ մատաղահաս պատանեկիս և նորա-

բողբոջ Համբարձիս բնրան պերճորան և քաջահոգի հանորի, զրիչ խմաստնալից և նրբամիտ մատենագրի, սիրտ քաջահաշակ և արիատենջ զինուորի, զի յայսմ երջանկատարաս ժամու ի խրախալի վարկենի, կարոզանայցեմ բատ իմոխանն կարի հանդերձ ազգասէր ժողովրդականաջք շնորհաւորել զմեծահանդէս գաղուստ Վեհափառ Կաթուղիկոսիս մերոյ։

Մինչ զի մեծ բարերաղդութիւն, անչափ խնդութիւն, անհամար ցնծութիւն և անթիւ ուրախութիւն է վասն մեր, որ ողջութեամբ և բերկրութեամբ արժանացաք տեսանել զԱստուածընտիր Հայրապետդ մեր։ Ապա օն եկայք որդիք Հայկազեան, այժմ միակամ և միաբերան շնորհաւորեսցուք զնոր գաղուստ Վեհական. քանզի այսօր էքնաղ գաղստեամբ իւրով իրև զլոյս լուսաւորեաց զսիրտ մեր։ Այսօր լուսածաւալ տեսութեամբ իւրով փարատեաց խսպառ զորտմութիւն և զտխրութիւն, զցաւ և զվիշտ անձանց մերոց. այսօր զիմնքն իւրովք քաղցրաժպտօք եղև պատճառ ուրախութեան առաջի օտար ազգաց. միով բանիւ սուրբ երեսամբն իւրով զգաստեալ մարմինս մեր լցոյց օրհնութեամբ և գոհութեամբն իւրով։

Ուրեմն համախոհ ժողովրդականք իմ բարձրապատիւ հանդիսականք արիք արիք նախ համբուրեսցուք զսուրբ Աջ Վեհիս մերոյ և յետ այնորիկ ընդ խոնարհ որդիկիս ձայնակից լերուք ամենեքեանքդ ասելով զայս բան։

Կեցցէ կեցցէ Հայոց Հովիւ Թորքոմեան
Զի հովուեսցէ զժողովուրդ Արամեան.
Կեցցէ հանապազ կենաց խրախճեան
Կեցցէ մնասցէ այժմ և անսասան։

Հարազատաբէս Մելքոն Արքեպիսկոպոս Պարսկաստանեաց

ՀԱՄԱՅՆԱՓԱՓԱԳ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԱՋԻՆ

Նախատահմանութիւն Տեսչութեանն նախախնամութեան՝ անհասանելի կամացն Աստուծոյ շարժեալ ի զրդիռ բատ ազգման Հոգւոյն շնորհի խաղաղեցեալ որ ի յանձնաւորութեանդ սեպհականութեանդ, զնախանձ մերոյս սուրբ և ուղղափառ հաւատոյ, նախ առ ի քանդակել ի սիրտս քոյդ սիրուն հօտիդ ակն յանդիման առաւել ի մօտոյ զմի միայնակ ազգումն ապատինութեան աներկրայ յուսոյ ակնկալութեանն լաւութեան փառաց վիճակի ըղ-

թարբառդ աւետեաց Նազելի բանիցդ՝ ապա տարածելով զբազուկդ ոլաց-մամբ հոգւոյն թևաւորեալ ժողովես ի մի զոգիս և զՀոգի ի կեդրոն արագընթացս աղբեր անսպառ արիականութեանդ ազգաշինութեան։

Ա. Հայրապետ Սուրբ Հայրապետ՝ ճշգրիտ Ի կարագիր գերամաքուր Փրկչին Քրիստոսի՝ զյարդ վսեմութեանն բարձրագոյն այցողութեանն քաջ Հովուողութեանդ հանգոյն զիւցազանց մերոյս Նախնեաց առաջնոց դարուց ոսկեզինաց զգամք լիսվին։

Ուստի ոչ առանց յատուկ իրաւանց կարէ պարծիլ բովանդակ Հայաստան և զմայլեալ դաս առ դաս զուարճանալ մինչև յաւուրս հեռաւորս ընդ անմահ յիշողականութեան։

Օրհնեալ եղիցի ի պարծանս ազգիդ Հայոց, և Ամենազոստափառ Ինքնակալ Կայսր Ռուսաց Աղեքսանդր Երկրորդ և բազմասցին ազգ և սերունդք Նորին իբրև զաստեղս երկնից և փառաւորեսցին մինչև ի կատարած աշխարհի։

Եւ արդ ես վերջին պաշտօնեայ Յովհաննէս Քահանայս Հայոց Եկեղեցւոյ Թերաշխատ և յետին ծառայ Քրիստոսակիր Հօտապետիդ ընդ մանկանցս Նորոյս Իսրայէլի զգայ առեալ անբաւելի խնդութեան հրճուանաց շնչմամբ և վառեալ եռանդեամբ ջեռուցիչ մաքուր հրոյդ բորբոքման խանդակաթ զգուանաց սիրոյ Սուրբ Հոգդ խստղական տեսութեամբ աչացս հայիմք յարշալոյսդ Հայկազանց և զոչեմք Ո՛վսաննայ՝ Օրհնութիւն ի բարձունս՝ օրհնեալ որ եկիր և օրհնեալ է դալուստ առաքելական արդասեօք հարստացեալ փեսայիդ Հայաստանեայցս Սուրբ եկեղեցւոյ։

Ամենախոնարհ Ա. Փահլանայ Յովհաննէս Թովմասեանց։

ՇՐԹԱԶՆԱԿԱՏԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ։

Բաղդաւոր եմ համարում ինձ որ կարող եմ այսօր պանծացուցանելով ընդ բոլոր ազգակիցս իմ, Ձերդ Ա. Հայրապետութեան սկզբնաւոր ազգաշէն գործունէութիւնը, լինել թարգման այն զգացմունքների, որ ի վաղուց հետէ ունեցել է մեր ազգը դէպ ի իւր ցաւերը ապաքինող բանիբուն Հովուապետը, որոց արժանայիշատակ անունները պահելով իւր սրտի խորքում, կտակումէ սերնդոց սերունդ առ ի փառաբանել այն ազգաշահ գործերը, որք եղել են գեղեցիկ ապացոյց նորա ազգային օգտի և սիրոյ եռան-

դով վառուած օրտերի, որք չեն դադարել մինչև ի մահն իւրեանց բղխելով մի զովարար ջուր ազգային վերքերի վերայ, յառաջ մղել ազգային գործի նաւը ուղղեւորելով նորան դէպ ի տենչալի, մարդկային բարօրութեան Աւետեաց երկիրը։ Որին անցուցանելով խոչընդոտալիր կենսական ծովը, ահա հասուցել են մինչ ի այս երջանկայիշատակ ժամանակը, երբ սուրբ Նախախնամութեան վերին տնօրինութեամբը, այդ մեծահոգս նաւապետութիւնը յանձնուում է Ձեզ Մեծիդ և Ձգօն Հովուապետիդ, որի ազգաօգուտ գործունէութիւնից ազգիս յառաջընթացութեան ապարիզումը, մեծայոյս կամի լինել մեր Համայն ազգը և նորա հետ ի միասին տեղւոյս Հասարակութիւնը։

Այո Վեհափառ Տէր, այդ իսկ ձկտողութիւնը ազգիս դէպ ի իւր բազմաթիւ վերքերի բժշկելը և այդ նպատակին յառաջադիմութեամբ հասանելու համար, ապաւէն է կացուցանում Ձերդ Վեհափառութեան յորդեռանդն գործունէութիւնը, իբրև ամուր ապաստան իւր անկողոպտելի իրաւունքների, նաև քաջագէտ լինելով իւր ընդհանուր դրութեանը, սպասում է մի Մեծիմաստ Հովուապետի, որի գործակցութեամբ ստանոյ միջոց կատարելագործելու իւր բարոյական և մտաւորական մեծակշիռ խնդիրները, և իրագործելու, երանաւէտ վիճակ ժառանգելու իւր մշանջենակեաց յոյսերը։

Այդ իսկ համազգային յոյսը Ձերդ Վեհափառութեան գործունէութեան վերայ, առ որն անտարակոյս եմք ամենևին, մանաւանդ ի միտ առնելով նորահիմն ժողովրդական նախակրթարանքը, որք լինելու են հնար ընթերցասիրութիւնը տարածելու մեր Համայն ազգի մէջ, իրաւունք են տալիս ինձ դասելու Ձեր սուրբ անունը ի շարս յաւէրժայիշատակ ազգապարծանք Հայրապետաց, որոնք իւրեանց կեանքի ապարիզումը բազմաշխատ են գլուխանուիլ ջանասէր հոգունակութեամբ ապաքինելու ազգիս բազմաթիւ ցաւերը և այնու ժառանգել են գեղեցիկ անուն ազգային պատմութեան մէջ։

Այո՛ լի են մեր կեանքի գնացքը այդպիսի պակասութիւններով, զորս առանց ուղղելու մեզ անկարելի է բարի վիճակ և յառաջադիմութիւն ստանալու քաղաքակրթութեան հանդիսումը, նա մանաւանդ եթէ ի միտ առնումք մեր այժմեան դարու մարդկութեան պիտոյքներին, որք լուսաւորութիւնը յառաջ դնալուն համեմատ, մի ճոխութիւն են ստանում, բայց համեմատելով այլ ազգաց հետ և նոցա արած յառաջադիմութեան հետ, ուր է մնում մեր վատաբաղդից ազգը, որ չունի տակաւին ապահովութիւն իւր մտաւորական, նիւթական և բարոյական պիտոյքների, չունի իբրև մի լուսաւորեալ ազգ՝ մայրեր, որք նման այլ ազգի կանանց կարողանային սնուցանել և դաստիարակել որ և իցէ պիտանի մշակներ հասարակութեան հա-

մար, որք կարողանային խմանալով անցեալ և ներկայ դրութիւնը իւր ազգի, և ըստ այնմ իւրեանց կարողութեան համեմատ, դարման մատուցանել նորան։ Սրտաբեկ և ցաւելի դրութիւն։ Թէ և կայ մեր մէջ այդ պիտոյքների վերայ հոգացող անձինք, որք ժամանակի հոգով շարժուած և համամարդկային ուսման գաղափարներով զարդարուած այն տքնում են որոնելու և գտնելու մի հնար այդ ազգային ցաւերը բժշկելու համար, և իւրեանց ալնիւ սրտերի ձգտողութեամբ ձեռնտու են լինում մշակելու և իրագործելու այն հիմնաւոր ազգաշէն խնդիրները մարդկային կեանքի. բայց ի՞նչ նշանակութիւն պիտի ունենան այդ սակաւամիւ թէ և ալնիւ անունները հաւասարարար այն միլիոնաւոր հասարակութեան հետ, որոց կենսական զլխաւոր հարկաւորութիւնները ապաւինած չեն բոլորովին։ Վաղն և ցաւելի դրութիւն։ Բայց որքան շատ են մեր պակասութիւնքը, նոյնքան և շատ պէտք է լինի մեր աշխատանքը այդ կարևոր պիտոյի թերութիւնքը ուղղելու համար։ Որովհետև իւրաքանչիւր զժուար ցաւը առանձին հոգացողութիւն է պահանջում բժշկից, ուրեմն և այդ ամենին ծանօթ և յայտնի պակասութիւնը պէտք է ջանասէր կացուցանեն մեզ օժանդակ լինելու այդ միջոցները զարմանելու համար, եթէ միայն կամենումենք մենք ևս մի նշանակութիւն ունենալ մարդկութեան մէջ։ Բայց ո՞վ է մնալու աննախանձ բարի միտքին . . ոչ ոք պէտք է ասենք մենք մեր գործով, նա մնանանք որ առաջին ճառագայթները լուսաւորութեան խոստանում են ազգայնութեան բարի օրը հանդիսացնելու մեր առաջև։ Վերհարիտոր Տէր, մեր ազգի ազգային վատթար դրութիւնը այո՛ շարժում խնամակալ մեր որդիական զութը, վասն որոյ ցանկալով նորան մի քարի ապագայ, և կոչեցեալ լինելով Ազատասէր Արքեպանդր Բ. բարենպատակ օրինադրութեամբը, որով ի հանդէս կ'հանէ նա վաղեմի բռնակալութեամբ ճնշեալ ազգային իրաւունքները, պատրաստ ենք աշխատելու ապաքինելով մեր ազգի վերքերը ակներև, յառաջադէմ դառնալ այդ լուսապայծառ կեանքի ասպարիզումը, չնայելով նորա դարուփոս ընթացքին։ Մեր յոյսերը Ձեզդ Վերհարիտորութեան ազգօգուտ գործունէութեան վերայ չեն մնալու առանց որ և իցէ ակնկալութեան բժշկուելու մեր կեանքի սովորական վերքերից։ Տա՜ցէ ուրեմն Ամենակարողն Աստուած Ձերումդ Վերհարիտորութեան երկար կեանք և յաջողակ գործունէութիւն առ ի պարծանս Հայոց Եկեղեցւոյ և Ազգի։ Ամէն։

Աստուած Ձերդ Վերհարիտորութեան անարատ ողջոյն
Ասողս՝ Ստեփանոս Պետրոս

ԱՈՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ընդ սփիւռս աշխարհաց վարատեալ և ցրուեալ Ազգն մեր, յԵկեղեցական Ուղղութեան իւրում միայն նշմարէ և տեսանէ զտխրազգած մնացորդս վաղեմի մեծութեան և շքեղութեան, վասն այսորիկ նոքօք սիրտի անձկաւէտ սիրտ ի բերան։ Փարի նա զՀայրապետական ամոռով՝ իբր զնուիրական նշխարաւ մնացելով ի Հայրենի պարծանաց։ Տաղաւարի նա ընդ Հոլովական գաւազանաւ՝ իբր ի կեդրոնի ազգային միութեան, և զվիշտս իւր և զինդութիւն անդանօր միայն զեղու։ Այսր Հոլովական շքոյն պատկերի՝ այսր բազմադարեան աւանդոյն աւանդապահ՝ Դուք էք այժմ Վեհասքանչ Հայրապե՛տ, յորոյ ի շնորհաբեր դալուստ՝ բարեսիրեն այժմ սիրտք մեր ամենեցուն։

Ի ձայն ցնծութեան և երախտագէտ գոհութեան ընդ առաջ ելին Հօտասէր Այցելուիդ՝ երամք ժողովրդոց և դասք հոգևորականաց. ի տես ելանէ ահա և երամ ուսումնատենչ մանկտւոյն, ամենեքեան առ հասարակ ի վսեմական միտս և յերջանկաւէտ խորհուրդս պատկերելով զկոչումն Ձեր Հայրապետական և զայցելութեան նպատակ։

Ժողովուրդն տեսանէ ի Ձեզ զԱռաջնորդ իւր ի համազգական գործս և ի ձեռակերտս, զՀայր իւր՝ պահապան Հայրենի ժառանգութեան և փառաբանիր Ազգային բարեբաստութեան։ Ուխտ եկեղեցւոյն՝ տեսանէ ի Ձեզ զՏեսուչ բարեզարդութեան սրբոյ Սեղանւոյն և զՀսկող Դիտապետ աղաղատիրաւանց մայրենի Եկեղեցւոյն։ Իսկ այս մատաղ երամ մանկանց, ընդ որս և նորաբողբոջ պատանիս՝ յեւս առաւել ըղձական միտս և. յարարս փափագիմք տեսանել զՁեզ ընդ Հայրապետական քաղցր անուամբ Ձերով։ Ըղձամք տեսանել զՍահակ պարթև, զՍշակն տառից Ատուծոյ և զպարագլուխն Ոսկեղենիկ դարուն Հայկազանց։ Իսկ ի խորհուրդս Ձերոյին այցելութեան, զՄեսրովբ, զայցելուն վարժարանաց, զքարոզն ուսումնասիրութեան և զկանգնողն նուիրական տաճարի Հայկական Դպրութեան։

Այս են իղձք նորաբողբոջ սերնդոցս Հայութեան՝ և սովին նուիրական խորհրդով և ի ձեռն արդար վաստակոց մեծախնամ Հայրապետիդ՝ ճգնիմք և ի քիրան մտանեմք բանալ, հանել ի շիրմաց և յարձանաց զժառանգութիւնս անմահ նախնեաց, յարդարելով զպարագլուխ ազգային լուսաւորութեան և դարձուցանել զքաղցր արև Հայրենեաց։

Այսու խանդաղատական տենչանօք և ահա ընդ բազմաշնաստ հոգաբարձուաց այսր նորաբաց Ազգային Ուսումնարանիս և ի տեղի Ազգաէր բարերարացն Յովհաննու և Աղէքսանդրայ Ստեփաննոսեան Օնանեանց և

այլոց, ի տես եկեալ որդեկնամ Հօրդ և Սրբազան Գործակցացդ՝ գոչեմք միաբերան, Օրհնեալ է գալուստ Քո վեհամատուց Այցելութիւն, Օրհնութիւն ի բարձունս։

Սրբազնագոյն Հայր, խնդութիւն մեծ է մեզ այսօր տեսանել զՔեզ ի տաճարիս գիտութեան ընդ բարեխնամ այցելուացդ։ Քաղցր է մեզ արտայայտել առաջի Հօրդ Հասարակաց՝ զզգացմունս մեր և զիղձս փափագանաց. իսկ ի լսելիս Վսեմապատիւ Այցելուացդ՝ թո՛ղ քաղցր ընծայեսցին բանքս, որ ի կողմանէ այսր մատաղ երամոյս՝ համարձակարար ելեալ ի հանդէս, մատչիմ ի գոյն ինչ ճառախօսութիւն։

Այս Վիրաբնակ Ազգասէր Հայրենակցաց բացեալ Ուսումնարանն, զոր պարտի լինիլ ապաստանարան լուսոյ և Ազգային զարգացման, յուսամք՝ զի շնորհիւ արթուն Հովուապետիդ, վաղվաղակի կայցէ կեդրոն մտածութեան և բանախօսութեան, յուսամք՝ զի տեղի տայցեն արհաւիրք անդորրաւէտ յառաջխաղացութեան. յաղթանակեսցէ ձայն ուսումնատենչ մանկանց, որք տաղտաւարեալ կան ընդ հովանեաւ դաստիարակութեան և ընդ հայրական խնամով Ազգասէր հոգաբարձուացս։—Ասն որոյ, կամիմք այժմ ի վաստակս և ի ջանս պատրաստիլ, ժրանալ, տքնիլ, հարցասէր լինիլ՝ կըրթելով զանձինս յերկս օգտակարս և ի գործս շահաւէտս, զի ի զէպ եկցէ մեզ ի պարտեզ ուսման մերոյ դարձուցանել զնուիրական տողն երգոց երգոյն Սողոմոնի և ի նոյն հրաւիրել զմեծախնամ Այցելուացդ։ ...«Արի՛. եկ «մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնեակ իմ. զի ահա՛ ձմեռն էանց, անձ«րևք անցին և գնացին. ծաղի՛կք երևեցան յերկրի մերում, ժամանակ հա«տանելոյ եհաս. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում, թզենի ընձիւ«ղեաց զբողբոջ իւր, այգիք մեր ծաղկեցան և եւոուն զհոտս իւրեանց։» Ա՜հա՛ զգացմունք սրտից մերոց. բայց լցա՞ւ արդեօք մեծախորհուրդ իղձ փափագանաց. ո՛չ տակաւին Աստուածարեալ Հայրապետս, դեռ զառաջին քայլափոխն յառաջդիմութեան կամիմք առնել յասպարիզս ազգաշահ նպատակաց նորաբաց Ուսումնարանիս։—«Ծաղիկք երևեցան յերկրի մերում»՝ ծաղիկ ուսմանց և զպրութեանց, բայց ժամանակ հասուն պտղոց չեհաս տակաւին։ «Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում»՝ Ձայն թոմոմախոս մանկանց, Ձայն Հայրենի բարբառոյն, Ձայն Հայրենասիրութեան, Ձայն ազգային զարգացման և վերակենդանութեան. բայց չեհաս տակաւին ժամն երջանիկ և օրն բարեպատեհ՝ Ազգաշէն մերոց նախնեաց նմանիլ և կենսաբեր շնչով դարուս այսորիկ՝ կենդանի հանդիսանալ ի կարգս քաղաքակիրթ ազանց։ «Այդիք մեր ծաղկեցան և եւոուն զհոտս իւրեանց»՝ Այգիք դաստիարակութեան, այգիք անդորրաւէտ ազգայնութեան և բարեկեն-

ցաղ կենաց, ազգի հոգեկան և մտայական պարարտութեան, բայց չնհաս տակաւին այգեւուրթ և ո՛չ զուարթացան սիրտք մեր զինեաւ բարօրութեան։—Սակայն եկեսցէ օր, եկեսցէ ժամ, զի փարեսցուք մեք զլուսով իմաստութեան՝ զոր նշմարեմք ի հեռուստ. ընդ որ սիրտք մեր ըղձակամք լինին՝ և առ որ ուղղեսցաք զգնացս մեր՝ շնորհիւ Արքունի Հօտապետիդ և անձնանուէր ջանիւք հոգեբարձուացս։ Քան զի ծանեաք մեք՝ զի Ազգային վարժարանս և ի զարոցս միայն դնին տարեալք վերակենդանութեան Ազգին, և յուսումնարանաց միայն ի բարձր դարձեալ Աշտարակի տեսանին վիշտք ժողովրդեան և անդէն քարոզին սիրոյանք։ Եւ ծանեաք մեք զմիութիւն, ծանեաք զաղբատութիւն և խոստովանեցաք զյանցանս. և այս իսկ է սկիզբն ուղղութեան, սկիզբն ճոխութեան և բարելաւութեան։ Բայց ո՞վ է գեղեցիկ և հիմնաւոր սկզբնաւորութեանս պատճառ, եթէ ո՛չ աներևոյթ և ամենակարող մատն բարձրելոյն՝ որ ի փրկարար հատուածս զմտութեան իւրոյ և սիրոյ, հարկանէ, զարթուցանէ զԱզգ մեր, ճանաչել զինքն և հոգալ զապագայից։ Ո՞վ է՝ որ ի սէր ժողովրդեան ճենճերեալ՝ հրաւիրէ զնա լուսով իմաստութեան մերկանալ զքօղ տառապանաց և զտրկութեան, եթէ ոչ բարեխոհ և յառաջընթաց մատն Ազգիս։ Ո՞վ է, որ պըատակէ զհանրաշահ ցանկութիւնս և զիղձս ամենայնուն, եթէ ոչ Հայրդ բարեխնամ՝ որ ի յաղերս որդւոց սիրով զինչանիս և առաջնորդիս ի դործս բարութեան։ Եւ արդ հայեաց ի խումբ մատաղ երամոյս Հայրական ակնարկութեամբ, քաջալերեա և օրհնեա զհամերոտ զաւակունս քո, զի լիցին տունկք տնչալնք ի մեծագոյն բուրաստանէն Հայութեան բողբոջեալք և ծառայք հաւատարիմք, որք անվեհեր եղցեն յասպարէզ պատասխանատուութեան և տայցեն զհամարն աւանդեալ ի Ձենջ քանքարացն, թէ ո՞զի՞նչ շահեցաւ, զի և մեք արժանի լիցուք լսել ի քանքարատուէն ամենայն բարեաց և շնորհաց "Ծառայ բարի և հաւատարիմ՝ որովհետև ի վերայ սակաւուդ հաւատարիմ՝ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քոյ։,,

Եւ վասն այսորիկ խնդրեմք ընդ ամին զկամիս շնորհաց մատդասիրութեան Ձերոյ անձրևել ի մեզ, և զհայրական գութ խնամոց՝ հովանի առնել ի տաճարիս գիտութեան, ի մխիթարութիւն և ի լրումն ըղձանաց Ազգիս։ Եւ ապա նախանձամութիւնն Աստուծոյ ի վերուստ, քաջ հովութիւնն Հայրապետական, (օգնականութեամբ Ազգանուէր անձանց) ի ներքուստ, միայն լիցին ապաւէն յառաջիսաղացութեան, վերակենդանութեան և փրկութեան Ազգին։

Իսկ մեր կարկառեալ զձեռս յաղթող անմահին, վերատաքեմք առ նա զպաշտպանս մեր բուրվառաւ աղօթից, զի երկարեսցէ զկեանս ճշմարիտ

Հայ Ազգասէր անձանց. և զիշխանական գաւազան Հայրապետութեան Հայաստանեայց շնորհազարդ պայծառացուսցէ ի լրումն պիտոյից սուրբ եկեղեցւոյ։ Իսկ ի մեզ ի Նորաբողբոջ տունկս Ազգութեան ծաւալեսցէ զցող քաղցրութեան շնորհաց իւրոց, զի լիցուք ծառք պտղաբերք, տնկեալք ի գնացս ջուրց Աստուածային զիտութեանց և ճշմարիտ լուսաւորութեան։ ամէն։

Ո՞սոցին Գ՝էորգ Աբբաքէանց

(Գոցէ յԱխալտալտ։)

ՎԵՐՋ։

[illegible]

Wenn Alfonse Dep. ist 5–2 Minuten, Abgangszeit
[illegible] Ankunftszeit [illegible] Dauer Reise,
[illegible] Geschwindigkeit [illegible]
[illegible] Zeit [illegible] Zeit [illegible] Zeit [illegible]
[illegible] Zeit [illegible] Zeit [illegible] Geschwindigkeit
[illegible]

Wahrscheinlichkeitsrechnung
Wahrscheinlichkeitsrechnung
[illegible]

«Ազգային գրադարան»
NL0172153